ՀԱՅԿ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՀ-Арм ССР
им. Х. Абовяна
Ա. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՏԵՆԱԳԻՐՔԻ
БИБЛИОТЕКА
Գ. Ա. ՀԱԼԱԹՅԱՆՑ
Г. А. ХАЛАТЯНЦА

101-ԱՀ

Գրադարան
Библиотека
ՀՍՍՌ-Ամ. ՍՍՌ
Ա. Ամ. Մանասյան
անվան գրադարան

41450-68

4931
891.99
Գ-89

ԱՄԲԱԿ

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Աբեղն Գրիգորի Նարեկացւոյ Հոգեկիր Հռետորի։

Բաշխեալ յինն սուն և հինգ բանս՝ հոգեսուն Աղաղթանաց։

Նորագիւտ ուրբաթբեալ հանիսարոբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց։

14384
ՀՍՍՌ-Արմ ԳՍՓ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի Պատրիարգութեանս Թադաւորական մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տէրն Կարապետի ամենապատիւ և վեհափառ Ազգ Եպիսկոպոսի։

1829 ՅՕՐԹԱԳԻՒՂ ՀԱՄՏԵՂ

Ի Տպարանի Պօղոսի արապեան ապուշեանցւոյ։

4991-ش

2004

Ողորմիութիւնք յոգնաթախանձ բանից օգտակարաց, ապաշաւանաց, հոգեշահ խրատուց։

Ընձին սգոտանաց. զղջականաց կանոնաց կենաց, կամաւորութիւն յանձնառութեց. աներևութից յայտնութեց, մեղանաց խոստովանութեց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւք թագուցելոց։

Պերճանիք զօրաւորք՝ վերաց անբժշկականաց. դեղք առդոտականք՝ գաւոց անտեսականաց. հաւաւորութիւք՝ բազմամասնեայ երկանց վանդից։

Դիմաց կորեայ՝ ամենից բնութեց, առիթք արտասուաց, պանծապոք աղօթից. Ի խնդրոյ Հայցմանց՝ Հարց միանձանց և բազմաց անապատականաց ասացեալ մատեան ողբերգութեան՝

ԳՐԻԳՈՐԻ

Նարեկայ վանից վանականի։

Դեւահարն Բ. ԺՂԵ։

Պաշակերտն վարժէ։

Ցեւամոր ոչնչացաւ։



Ի ԽՈՐՈՑ ՄԻՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ։

*Բան. Ա.

ՍՅՆՀԱՊԱ

ՀԱՆԱՑ ՀԵՆՈՒԹԵՆԱՆ

սրտի՝ ողջոց աղաղակի՝ քեզ վերընծայեմ տեսօղդ դաղանեաց։ և մատուցեալ եդեալ ի Տուր թախծութիւն անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ճենճերոյ՝ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Այլ հոտոտեցցիս հոյեսցիս՝ գլխաց, քան ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութիւն։ Ընկալ զսակաւաս

մանեաց բանիցս յօդուածՔ քեզ 'ի հաճութիւն, և մի՛ 'ի բարկութիւն. Եւ զՔ 'ի խորոց սատի զդայութեաց խոր հըրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութիւն ճարպոյ՝ որ յիսն է պարարտութիւն։ Լու 'ի դնելս իմ ընդ քեզ դատ՝ խառնեալ աղերսիւ հզօր, մի՛ ի բրև զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակո

որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ՝ զհանդերձեալսն ինձ կերպարանեն, ապա և յաւէտ մերձեցաւ 'ի վերս իմ արքայութիւն այ՝ մարմին եղելոյ, մեծապէս դտեալ զիս առիթ ինքասուց՝ բազմաց տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց։ 'Բանզի այն ընտրութիւն՝ ամօք չափեցաւ, իսկ պատուհաս խմումն պարտուց՝ առանց սաստման ունի զսահման։ Ա.՝ դուք՝ և որոգայթ անձողոպրելի, ըստ մարգարէին և առակողին, տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօթն մշանջենաւոր ասասէն դծագրել։ Օ՝ որ միայն քո՛ է հրաշագործել պատուղս դեղոց՝ 'ի ինարս կենաց՝ ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւիչ ամի՝ գովեալ 'ի փառս անճառս անասհմանելի բարձրութեանս, յաւիտեանս յաւիտենից։

Ա ՀԷՐՈՒԹԻՆ ՅԱՒԷՐԺԱԾ ԻՐԻՆ ՀԷԾՈՒԹԻՆ՝ ՆՈՒՐԻՆ ՀԱՅՈՂԻ, ԱՌ ՆՈՅՆ ՍՂԷՐՈ ՆՈՂԼԻԱՆԱՑ ԲԱՆԻ։ 'Ի ԽՈՐՈՅ ՍՐՈՒՑ ԽՈՍՔ՝ ԸՆԴ ԱՅ։

* Բան. Բ.

Զարդ՝ քանզի առ բարձրեալն ածք յօդաւորսկան շրթամբքն կարդաս, որ գործովքն միայն դրաւի, և ոչ սահեղծաբանութեամբ կաշառի, որ յԵդիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն, զինչ օրինակ առ այս քեզ նմանադոյն և յարմարական ասառնօր եդիր՝ անձն իմ պարտաւոր։ Պատմակիցս՝ կործանեցելոյն սոդոմայ. ընթերանեալ դատաստանաւ՝ նին-

նինուէի. անարի բարբարոսն՝ քան զտիկինն հարա-
ւային. վատթարագոյնս՝ քան զքանան. յամառեցեալ՝
քան զամալէկ. անբժշկելիս քաղաք՝ դրօշելոց, նշմար
մնացեալ՝ ապստամբութեան հինն իսրայէլի, յիշատա-
կարան պահեալ՝ ուխտազանցութեան յուդայ. Կիշտամ
բեալս՝ դեր քան զԾուր. տարամերժեալս՝ քան ըղ-
ծայդան. խորթաբարոյս՝ քան զդալիլեա. անհերելիս՝
քան զանհաւանն կապիառնայում. պարսաւեցեալս՝
իբր զքորաղին. բամբասեցեալս՝ ընդ բեթասյիթայ.
անպարկեշտ Ծաղկեցեալ ալիքս՝ եփրեմի. Ամենայն
զաւանիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտու-
թեամբ. 'ի կորեանց առիւծուց՝ անձնական օձս ե-
զեռնային. կերպս ձուոց քարբիից՝ լցեալ ժանտու-
թեամբ. պատկերս վերջին հարուածոյն երուսաղէ-
մի, ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձոյնի.
Տաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն. խոր-
տակեալ դրացս վատահարան, և կրկին ծրդեալ շին-
ուածս խօսուն. Թողեալ ժառանգութիւնս յարմա-
րական, մուտացեալ տունս ածակերտ, ըստ բանիցն նա-
խադրեցելոցն՝ մովսէսի դաւթայ և երեմիայի.
Յարիս բանական՝ ունօղս բորոտութեամբ, հարուածեալ
խրատու քերմանն՝ օրինին կազդուրեալ, օծեալ կա-
ռամբ՝ ողոքական հեղութեամբն. անճարակ դտեալ
յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին.
արտաքս ընկեցեալ՝ իրաւայի հատուցմամբ՝ հրամա-
նաւ հզօրին՝ 'ի տեղի անտուրբ. հերքեալ տարագը-
րեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնին առանց խնայե-
ցի. Ծածկեալ դրամս յերկրի ջարեօք, ըստ աւան-
դակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի.

2 Լ. Յլ դու ա՛ծ՝ ածդ հոգւոց և ամ մարմնոց, ըստ դաւանելոյ ածաշնորհին, երկոյնամիտ և բաղումղորմ, ըստ սբոյն յոմիանու ձայնին, շնորհեա կատարել ի քոյդ հաճութի օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութեան։

Լ. Ընդ լալով սերմանել բանիս՝ ի նախընթաց չուս աստիճանաց՝ օթևանաց պատրաստութե, ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերիլ ընդեցեալ լրութե քաւութե՝ պտղոյն երանութեան՝ որոյիցն բարութե։ Ա՛ի՛ տացես ինձ արդանդ սրտի անորդի՝ իբր իսրայելի, և ստինս աչաց ցամաքեալս՝ ոչ ամենագութ։ Լ՝ուր բանական մաղթողիս՝ հրկզոր և ողորմած, նախ քան երկնի՝ և երկին երկրի, և նա ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա իսրայելի։

Լ. Երկնաւորացն աղերս՝ որ առ քեզ հոգւոյս՝ աղ դեսցէ՝ քան թէ տարերաց ապականացուցաց։

Ղ. Ու ստեղծիչ՝ և ես կաւ, բայց տարակուսելոյս՝ ի մուտս մաղթանաց այսր հեծուե՝ կամս քաղցրութե՝ զբրանալ աստէն։ զի մի՝ ի բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ, իբր ընիւթ մոմոյ՝ սպառեցայց, ընչեալ ի միջոյ։

Ա՝դի զրկելոյս, ըստ մաղթանաց դոչման ասողին, և ոյժ թալկացելոյս, և կեանք մաշելոյս՝ մնացս խրոշիւ, այլ ոչ տաժանմամբ կրկոյ՝ աշխատութե զքեզ խնդրելոյ, սու զսանդ մաղթանացս, և տուր զողորմութի քո շնորհացդ։ ընկալ զիրաքրս՝ ի տկարէս, և շնորհեա զմեծդ՝ առ ի հզորէդ։ զբրացո զբանս զբղջման, առաքեալ ի մեզ հոգի ի բարձանց՝ ածաշունչ պատգամքս՝ ի սմս եդելոցս։ Պարգևեա բարերար՝

զառանն եսայեայ, լուսաւորեալ առ ճշմարտութիւն, մատուցանելով մաՀու արժանոյս, ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ զոսկի քո շնորՀի. ընդ անզարդուն երկաթոյս՝ սեւուն գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյցք առաքինութեան, Հրաշեկ լեբանանու. Ընդեր կարծ բացուցանես զսիրտ եղկելոյս՝ չերկնչել՝ ի քէն, ան ճառ և ահաւոր. Մի՛ եղէց անպտուղ՝ ի փոքր վաստակոյս՝ իբր ապաքէն սերմանող անբերրի երկրի. Մի՛ լեցի ինձ երկնել, և ոչ ծնանել. ողբալ, և ոչ արտասուել. խորՀել, և ոչ Հառաչել. տանջել, և ոչ անձրևել. ընթանալ, և ոչ Հասանել. ինձ ձոյնել, և քեզ ոչ լսել. պաղատիլ, և անտես մնալ. կողկողել, և ոչ ողորմել. աղաչել, և ոչ ինչ օգտել. զոՀել, և ոչ ճենճերել. զքեզ տեսանել, և դատարկ երանել. Լուր ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ միայնդ Հզօր. մի զանվՀար տանջանայն տոյժս՝ ընդ թուոմ աւուրց մեղաք կեցելոյս չարագործիս ինձ՝ Հատուցաներ։ Լեցո զիս դրախտ. լուր ինձ ողորմած. մարդասիրեա՛ ներօղ. խնայեա՛ երկայնամիտ. պաշտպանեա՛ մպաւէն. բարերարեա՛ Հրզօր. ազատեա՛ ամենակալ. կենսագործեա՛ նորոգող. վերականգնեա՛ ահաւոր. լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ Հրնարաւոր. քաւեա՛ անբիծին. պարգևատրեա՛ սուտ. շնորՀազարդեա՛ անանՀանգ. Հաշտեա՛ անսխտակիր. ընկալ՝ անոխակալ. արբեա՛ ՝ի պարտուց օրինեալ։ Եթէ յառեցից զաչս իմ՝ նայեցեալ՝ ՝ի Հայեցողաւածս երկուց վտանգից՝ յաւուր թշուառութեան, զբոյդ տեսից փրկութիւն՝ յոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից՝ ՝ի վեր յամենազբաւ ուղին սասկալի, Հրեշտակ քո խաղաղութեան՝

քաղց

քաղցրութիւն ինձ պատահեսցէ։ Յոյց ինձ տէր զի յելիցն աւուր՝ շնչոյս արձակման, մաքրութիւն ոգի՝ լուսով ամբարձեալ զի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևաք սիրոյ քոյ եկեալ հասեալ։ Զ։ յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանեցուսցես։ զանակնկալն բարի՝ ջարիս զի յուսահատութեանն աւուր շնորհեսցես։ Բա՛ւ լիցի քեզ բարեբանեալ՝ որ փրկութիւդ ես ամի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ դազան դժնդակ տացես ուղեկից։ մեղաք մեռելոյս՝ անախտ կեանք։ կործանելոյս պարտեաք՝ փրկիչ։

3 Զ։ ոդեաք մուսացին զբարերարելդ՝ ակնկալութիւն։ անտեսեսցեն զդթասիրելդ՝ խրնամող։ այլայլեսցեն զմարդասիրելդ՝ անփոփոխ։ նհանջեսցեն զկենագործելդ՝ անվախճան։ թողուցուս զողորմութիւդ՝ երջանիկ պտուղ։ Զ։ զաւաղեսցեն զքաղցրութիւդ բարեշնորհ ծաղիկդ։ անպատուեսցեն զնիւթ պանձանաց՝ քումդ ճոխութիւն։ յեղանակեսցեն զփառս հերաց՝ քումդ բարձրութեան։ ոչ պահեսցես զվայելչական զարդ պայծառութիւն՝ քումդ պսակի։ Զ։թէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն՝ լցեալ փափաքմամբ, ոչ զբոլորն պարգևեսցես փրկութիւն։ ոչ մատուցանիցես դեղ վիրացս։ ոչ սպեղանիս խոցուածոյս։ ոչ դարման տկարութեան։ ոչ ծագեսցես լոյս զի խաւարի յուսացելոյս զի քո զօրութիւդ՝ կենաց պարգևդ տիեզերից։ Զոր վայնդ ունիս փառս ինքնաութիւն իսկութիւն և յարակայ մշանջենաւորութիւն։ վկայեալ զի բնաւից։ օրհնեալ և փառաւորեալ յերիս յաւիտեանս։ և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից։ ամէն։

Ա ԷՐՈՒԹԻՆ յաւէլուածք էրէին հեծուրեբ՝ նորին հոգոյն, առ նոյն աղէբս ծաղկեանաց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ամ։

* Բան. Զ.։

1 Տէր իմ տէր, տուիչ պարգևաց. ինքնաբուն բարի. ամենից տիրող հաւասարապէս. միայն արարիչ զբնաւս՝ յոչէից. փոփոխեալ. անքննելի. ահեղ. ահարկու. սոսկալի. հզօր. սաստիկ. անտանելի. անմերձենալի. անըմբռնելի. անխմանալի. անճառելի. անտեսանելի. անընկնելի. անշօշափելի. անորոնելի. անակիզբն. անժամանակ։ Ընդհամանդաղ դիտութիւն. աներկեւան տեսուն. ճշմարիտ էականութիւն. բարձր՝ և խոնարհ օրհնաբանեալ գոյութիւն. անստուերծագումն. ամենափոյլ ճառագայթ. խոստովանեալ լոյս. անտարակոյս վստահութիւն. անտարտամ հանդիսատ. անյեղլի կնիք. անսահմանելի տեսիլ. վկայել անուն. ճաշակ քաղցրութիւն. բաժակ բերկրութիւն. հաստիչ հոգւոց հաց. օտար մթութեց սէր. աներկբայ խոստումն. ծածկոյթ ցանկալի. զգեստ անկապուտ. օթոց բաղձալի. զարդ փառաց. ձեռնկալու մեծ. ապաւէն գովեալ. աննուազելի շնորհ. անպակասելի գանձ. անապական անձրև. արփիացնող ցող. ամենատեղաց դեղ. ձրի բժշկութիւն. կրկնաձիր առողջութիւն. վերագոյն խրախոյս. անպատիր կոչումն. համօրէն աւետիս. տրկամեծար թագաւոր. աղքատասէր պաշտպան. մշտահարուստ տուիչ. անխափան դիմեցումն. աննահանջելի հրաման. անհամառօտ յոյս. երկար տեսողութիւն. անզգեստական տուր. ամենաբաշխ աջ. արդարակշիռ ձեռն. անաչառատես ակն։ Ա՛խիթարուք ձայն.

սիոփանաց լուր. բերկրութիւն բերումն. անուն կենդանի. նախախնամող մատան. անդայթագղելի ելք. անխարդախ ընթացք. կենդանարար կամք. անանեն գելի խրատ. աննախանձ պատիւ. լայնական հնարք. անձկական պայման. անդատանելի հետք. անբերևոյթ շաւիղ. անչափագիր պատկեր. ողբանուէ անսահման. աննմանական տիպ. անզուգական գութ. ողորմութի բազմաղեղ. խոնարհուէ տօնելի. համբոյր փրկական. Այս ևս քան զայս՝ աղդմունք վայելչականք՝ ճոխութեդ նոր իրելիք, օրհնեալ. գովեալ. բարեբանեալ. քարոզեալ. աւետարանեալ. հռչակեալ. հնչեցեալ. պատմեալ. անխաբելի կամաք աղաչեալ. և որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն՝ հոսմունք քաղցրութիւն, զոր հանդերձելոցն ճառիցս լուսաբանեն կերպաւորութիւք. որով զնարթ ցուցանիս 'ի փրկութենն իմ՝ երանութի, իբր 'ի պարարտութէ իմեքէ՝ ախորժ տենչանաք լցեալ. զի ոչ իմովս ինչ անտիապատուաստ փառատրիս երգով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝

մեծիդ փրկանաց.

2 Այս քանզի առ ամ հասակ անկեցեալ յերկրի աղգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի՝, որ զամենեցունց ունի ըստ կրկին պատահմանց՝ նշաւակեալ յիւրում պատկերի, իբր կցորդ մեծդիտակական կարեաց համայնից, առ բոլոր դումարս՝ բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից. Այս նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ ջափս արքունն, առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութենն. Այս պարարաւորս, և արդարս. առ ինքնարդոյ բարձրայօնն, և

սխալեալ անձնադատ գտեալն. առ բարիսն, և եղեռ-
նագործս. առ նկունս, և առ արիս. առ ստրուկս և
ներքոյանկեալս, առ սեպուհս և գերաշխարհիկս։
Ա՛ինքակցնոց՝ և պայազատաց. շինականաց՝ և տոհմա-
կանաց. արուեստաց՝ և իգաց. հրամայողաց՝ և հնազան-
դելոց. գեր եալոց՝ և նուաստից. վերիցն՝ և փոքրունց.
պատուականաց՝ և ռամկաց. ձիավարժից՝ և սոսկա-
կանաց. քաղաքականաց՝ և գեղջկաց. արքայից գոռ-
զութեանց՝ ի սանձս սհաւորին ըմբռնեցելոց։
Ա՛իսյնացելոց՝ վերնականացն խօսակցաց. մաքրակա-
նաց՝ տիրանուէր զգաստութեց. քահանայական՝ եր-
ջանկակրօն ընտրութեց՝ այցելութեց՝ բարեզգես-
տից դիտողութեց՝ աթոռակալութեց նախագահից՝
սրբանուէր տեսողութեց. որոց ոմանց աղերս աղա-
ջանաց, և ոմանց խրատ բարեաց, առ դէմն աղօթից՝
այսու մատեանիս մատակարարեցի, ձեռնարկեալ հոգ-
ւոյդ զօրութբ՝ կարգել ինձ մաղթանս բաղմադի-
միս, և ամենն սոցին խնդրուածս՝ դիւրութբ մեծիդ
յանդիման լինել առվաւ հանապազ։

3 Լ՝ուս արասցես զսոյն ընթերցողացն՝ ի սիրտս յըս-
տակս՝ բժշկութեի հոգւոց, և մաքրութեի յանցա-
նաց. թողութեի պարտուց, և արձակուրդ մեղաց կա-
պանաց։ Լ՝ուցցի բղխումն արտասուաց՝ սովաւ վար-
ժելոցն, և պարգևեալ տացի՝ ի ձեռն սորին ապա-
շաւ ըղձից։ Շ՝նորհեսցի՝ տէր և ինձ ընդ նոսին՝
առ՝ի քէն՝ զղջումն կամաց. և նոցա իմովս ձայնիւ՝
շունչս բարեհամբոյրս. նուիրեսցի՝ վա՛ խ՝ այսու մա-
տեանիս՝ պաղատանք նոցին, և բանիւս այսու հե-
ծութիւք նոցին՝ ընդ իմ խնկեսցին։ Ի՝նդ համբոյր

ձաշակման այսր ողբերգութեան, շնորհ լուսոյ քոյ մատեալ բնակեսցէ՝. եթէ ելցեն ինձ բարեպարիշոք ընծայիլ սուտ, ընկալ կենդանեաքն վա՜ քոյ գլխաձ՝ և զիս Ը նոսին. եթէ ախտս ինչ սրբանուէրս՝ կաթուածոց աչաց՝ սովիմբ բերիցի, եղիցի՝ 'ի քէն խրնամակալ՝ և յիս անձրևեալ. եթէ գրեսցի և 'ի փրկութիւն կարդեսցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարել. եթէ հեծութիւս ածահանոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի գաղտնեաց ուրուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քև բարձրեալ՝ և ես ընդ նմին. եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ՝ առ քեզ համբարձցի, հասցէ՝ միասցի՝ Ը իմն ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցել։ Եթէ պաղատանս բազմադիմս ընդ իմն երկնեսցի, լեցի՝ և ինձ քև՝ և վասն սորին կրկին նոսիրեալ։ Եթէ յարդեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ 'ի հաճութիւն, նախայրոցն՝ ընդ իս քև ընծայեսցի՝. Եթէ 'ի ախրանաց ինչ ձանձրութիւն՝ ոչ նոսաղեսցի, կանգնեսցի՝ վերատին հաստատանաւ այս հառաջանաց՝ 'ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վստահութիւն՝ մեղաց յատակի, այսու արձանաց պատկանեցերովք աշով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի՝։ Եթէ յուսոյն ձգարան՝ սուսերքն յանցանաց հատեալ կտրեսցի, կցեսցի՝ դարձեալ միասանգամ կամք ամենակալիդ՝ բարուք պատուհաստեալ. եթէ վերատանդ մահու՝ անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ, գոցէ՝ փրկութի սովաւ առ 'ի յայս կենաց՝ յաղթելն առ քեզ կենցուցիչ. եթէ տագնապաւ ոչ տարակուսի՝ 'ի սիրտ խոցիցի, քաղցրութիւն քո սովաւ՝ ապրեալ

ողջասցի։ Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց՝
յանդուգնդս ոք խորոց իցէ ընդլուղեալ, եկեսցէ՛ ի
լոյս՝ կարթիւ այս ինարիցն՝ քեզ պատսպարեալ. Եթէ
թմբրութիւն խաբիցն՝ խաւարին գործոց՝ իցէ ոք վնա-
սեալ, զօրասցի՛ անդրէն վասն քո միոյն ապաւէնն՝
ի քեզ ապաստան եղեալ։ Եթէ պահպանակն վստա-
հութիւն զանձն ուրուք լքցէ, ընկալցի՛ այսու միջ-
նորդիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ ի նոյն հաստա-
տութիւն. Եթէ ամայի ի զգուշութէ պահողացն ոք
դեգերեսցի, սպասեսցէ՛ սովիմբ՝ առ ի նոյն դարձ
նորոգողիդ։ Եթէ սարսուռ դիւային ջերման՝ դո-
ղութիւն ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի՛ ի սոյն յայս
նշան՝ խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խոր-
հրդոյ. Եթէ անօրէնութիւն մրրիկ՝ խորտակիչ հող-
մոյ՝ յանկարծ բախեսցէ զհաստուածս մարմնոյ՝ շին-
ուածոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի՛
անդրէն՝ ղեկաւ այս թևոց ի քեզ պատկանեալ։
4 Եւ արասցես լինել դեղ կենաց՝ առ ինարս ցա-
ւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց,
զայս կարգեալ սահման ողջոց մատենի սկզբնեցելոյ
յանուն քո՝ բարձրեալ։ Ո՛ սկսեալս իմ՝ դու կա-
ատարեա. եղիցի՛ հոգի քո խառնեալ ի սա. շունչ զօ-
րութիւն մեծիդ միասցի՛ ի քո ինձ շնորհեալ ստեղ-
ծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւն վհատեալ
սրտից, և ընդունիս փառս յամենեցունց.
ամէն։

Ալ Էրուսին յաւէլուածք ջրին հէծու�՝ նորին հակողէ, ասա նոյն աղէրս նաշխանաց բանի։ Ի խորոց սրտէց խօսաւ՝ ընդ ոյ։

* Լան։ Ա։

1 Լաւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան՝ հոգւոյս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ։ վասն զի ահաւոր և անտանելի, և ի սահմանէ բանի փախչելի, յիշատակ անճողոպրելի՝ անաչառդ քո աչեանի՝ ի կշռամբուն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի։ Ապաղի՝ և չիք իսկ բժշկութիւն բազմաւորանդ սատակութեան վերացս անողջանալի, խոյթմանց խածումածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որոշին զանձն իմ ի կորուստ։ Ամենաւանդ զի՝ ոչ դոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի։ և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկումաւ պատրպարելի, և ոչ դիմակաւ կեղծաւորելի։ ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանաւք երբեք խաբելի։ ոչ յօդումածովք բանից սաեալի։ ոչ արագմամբ ոտից փախչելի։ ոչ թիկանց դարձուցանելի։ ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի։ ոչ բերանով ընդ հող հասանելի։ ոչ ի խորս երկրի զօրելի։ Ապանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են անեղեալքն։ արդարութիւն իմ նոմանեալ՝ և խոստաւ ունայնացեալ։ մեղանքն յայտնեցեալ՝ և յաւէտ առաւելեալ։ չարիքն իմ մնացական՝ և ես կորստական։ իրաւանցն կշիռ պակասեալ՝ և անիրաւութիւն խոկոյն զօրացեալ։ բարեացն բերքն հալեալ՝ և սխալմունքն արձա-

ձանացեալ. աւանդն կորուսեալ՝ և դատակնիքն այժ-
մին դատեալ. մահուն մուրհակ գծեալ՝ և աւետեացն
կտակ եղծեալ։ Խարերարն տխրեցեալ՝ և բանսար-
կուն ուրախացեալ. հրեշտակաց դունդն թաղծեալ՝
և սատանայ խնծղիւք պարեալ. վերնական զօրքն ող-
բացեալ՝ և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մը-
թերք լցեալ՝ և պահողին դանձն կապտեալ. օտարին
կողմն կանգնեալ՝ և ստացողին պարգև մատնեալ.
հաստողին ձիր մռայացեալ՝ և կորուսչին հաղբքն պա-
հեալ. երախտիք փրկչին հենդնեալ՝ և բելիար զուր-
թայեալ. կենացն աղբիւր փակեալ՝ և գոռոզին
ժանգ՝ ժանդիս ժամանեալ։

2 Այս արդ՝ ոչ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կան-
խուէ նախաձայնելոյ, ոչ ատեղծանիին երբէք յար
գանդի՝ և ոչ նկարիչն ի յորովայնի. ոչ ի ծնունդ յա-
ռաջադայիլ՝ և ոչ ի լոյս կենաց հասանիլ. ոչ ի թիւս
մարդկան գրիլ՝ և ոչ ի հասակ աճման ամբառնալ.
ոչ ի պատկեր դեղոյ զարդարիլ՝ և ոչ բանին հանդեր
ձաւորիլ, քան ընդ այսպիսեաց սատակադունից և սար-
սափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վիմաց կարծ-
րութի բերէ, թող թէ մարմնոյ լուծականութի։

3 Այս արդ՝ տուր բարեդութ՝ աղաչեմ զքեզ՝ տուր
ինձ ողորմութի, որ զայսոսիկ դու ինքնին քե-
զէն քոյովդ բանին մեզ սահմանեցեր՝ ասելով, թէ
տուք զայդ նուէր՝ յանուն փրկութե ձերոյ՝ այլ, և
տուրք եղերուք. զի զողորմութի կամիմ, և ոչ զպա-
տարագ։ Զնա բարձրացիր վերստին խնկեալ այսր
յիշատակաւ, որ ունիս զամ, և ի քէն է ամ, և քեզ
փառք յամենեցունց. ամէն։

1 Այս

Ա Էրաբին յաւելուածք էրէն հեծուելէ՝ նորին հանդէպ, աւ նոյն աղէրա մաղխանայ բանի։ Ի խորոց սրտէց խօսք՝ ընդ ոյ։

* Բան. Լ.

1 Ա՛ւ արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկոյուն դոյին զբաղեալ, և յիմարութիւն պատրողականաւ գինեաւս՝ յիմանալ, որ ամենայնին ստեմ, և ոչ միով ինչիք ճշմարտեմ։ Բանզի որովք դիմաք վերադրեցելովք՝ նը շանակաց աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր անձառ՝ անպատում հզօր ածք բոլորից։ Բանզի դասեալ աստուսին ի սոյն՝ զապերախտութիւն մեղուցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զկրաւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւութիւս իմ յուէտ պարտաւորեալ։ Որ արարեր զիս ի քո պատկեր պանծալի՝ ի ձեռն վերհիդ տպաւորութեան, ըստկարս օժանդակելով։

2 Ո՛ արդարեցեր բանիւ. փայլեցուցեր փչմամբ. մնաք ճոխացուցեր. խմաստիւք ամեցուցեր. հանճարով հաստատեցեր. ի շնչականացն որոշեցեր. հոգւով խմանալեաւ խառնեցեր. իշխանականին գոյին պըճնեցեր. ճոնար հայրաբար. սնուցեր դայեկապէս. տածեր ստացողապէս։ Տնկեցեր զամբարիշտս ի քումդ դաւթի. ջրոմն կենաց ոռոգեցեր. աւազանին ցողով մաքրեցեր. կենացն վտակաւ արմատացուցեր. հացիւդ երկնայնով ջամբեցեր. ածոյին արեամբդ արբուցեր. անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր. զաչս երկրեղէն՝ ի քեզ համարձակեցեր.

լուսոյդ փառաց վերաձաձկեցեր. զՀողանիութիւն մա-
տունս՝ անմաքուր ձեռաց՝ 'ի քեզ մատուցեր. զմե-
խիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարդե-
ցեր. զՀայր քո Հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա-
պէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր. Ա՛ն կի-
ղեր զբերանս լցեալ նանրութիւն՝ 'ի ժառանգակիցն
կարդալ զքեզ. ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս՝ 'ի
քո կցորդութիւն. ո՛չ ստուերացուցեր զտեսիլ աչաց՝
'ի քումդ ակնարկութիւն. ո՛չ արգելանաւ կապանաց՝
ընդ մահապարտացն տարագրեցեր. ո՛չ խորտակեցեր
զդաստակ բազկիս, որ անմաքրապէս առ քեզ Համ-
բառնայր. ո՛չ մանրեցեր զոստս իմոյ մատանցս՝ 'ի շո-
շափելն զբանդ կենաց. ո՛չ պատեցին զլինև մառա-
խուղք՝ 'ի ձօնելն զքեզ՝ ա՛Հաւոր. ո՛չ փշրեցեր զպարս
ատամանցս՝ յըմբոշխնելն զքեզ՝ անսահմանելի. ո՛չ
դնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ
քեզ Հետեւօղս, իբր ընդ վրիպեալ տունն իսրայելի.
Ա՛ն խայտառակեցեր 'ի Հարսնարանիդ՝ զանարժանս
քումդ պարերդութե. ո՛չ 'ի գձուձ Հանդերձին տեսիլ՝
զանօրինեալս յանդիմանեցեր. ո՛չ կապանօք ձեռաց
և ոտից՝ յարտաքին խաւարն Հալածեցեր.
3 Օ՛ այս ա՜մ մատունս բարեաց՝ և զներելոյդ եր-
կայնմտութիւն ընկալեալ 'ի քէն՝ բարերար օրհնեալ,
և յամի միշտ երկայնամիտ, փոխադրեցի վնասակար
պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիս,
մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմաձուփ
խորհրդոց յուզմանց երկրպաքարշութեց. Օ՛ այսո-
սիկ քեզ՝ ա՜ծ իմ և ա՜ր, ընդ այսքանեաց բարեաց փո-
խարէրեցի. զայս քեզ՝ ինձէն Հատուցի չարիս, ըստ

մովսիսեան յանդիմանութեանն առակի, մոռացեալ զնմաստուն՝ և սիրօղս յիմարութիւն։ Օ այսց բարեաց երախտեաց կաճառս՝ ընդունայնութիւն դնացիք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութի շնորհաց անձառիւ՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խելագարութեանն ցնդեցի։ Լուսեղէն բազում անգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ, ըստ մարգարէին՝ որ զիսրայէլ ամբաստանութիւն. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին յոճն առաջին մատեայ, փշոցն մեզաց հերկեցի զանդաստան սրտիս՝ յորոմանն արդիւնաւորութիւն։ Արիս երանեն առածք՝ ածարեալ աբ մարգարէիցն, քանզի մնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի՝ պտղոյ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հողմոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի. 'ի վերս աւազոյ շինուածս յիմարութիւն կառուցի։ Այնատարրը հետովք խաբեցայ՝ կենացն անձկալեաց հասանել, փակեցի ինձէն զելիցն ուղղորութի, բացի կամաւ զկորստեան խորխորատն։ Ասցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանիդ կենաց ընդունելութի. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուածս՝ առ 'ի զկենացն դեղ նկատել։ Ոչ ընդոստեայ 'ի թմբրութեց լքմանէ մոռացս՝ 'ի պատգամ փողոյդ ահաւորութեան. ոչ դգաստացայ 'ի փողոցս դուժի՝

Գեղ. Գրքերի Գրադարան
Гос. Библиотека
Ереван
им. Г. Мясникяна
Ս. ՄԱՍՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
4145T0-68 1438

հրամարձական աւուրն ընտրութիւն. ոչ երբէք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ 'ի կորուստն կարապետէ. Այլ եւս հանդիստ քոյ հոգւոյդ 'ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ ընդ բնութիւն շնչոյս խառնեցի՝ զմասն շնորհաց քումդ պարգևի. իմոյս ձեռօքս կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհոգիս կենդանի մահացուցանել.

4 Այլ զինչ է ինձ սակաւս և նուազագոյնս յօդել սահմանս կսկիծելիս չափաբերականս, մինչ անցեալ է ըստ քանակութի՝ և վրիպեալ ըստ բժշկութի. Արդ՝ քո է ընձեռել կեանս՝ հոգւով մեռելոյս, և անոխակալութիւն մատչել առ այցելութիւն դատապարտելոյս՝ որդի՝ ոյ կենդանւոյ. քեզ փառք յաւիտեան. ամէն.

Ա էրոպին յաւելուած իրին հեծութիւն՝ նորին հոլոզի, առ նոյն ազիրս մաշկանայ բանի. 'Ի խորոց որոյ խօսի՝ ընդ աց.

* Գլուխ. Օ.

1 Դասկ արդ՝ զինչ բարութիւն գոյ առ այս, կամ որ օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայնիս հեծութիւն՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վերիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել. և կամ զծանրութիւն սրտիս՝ մթերեալ ցաւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութիւն, մատանամուխ զշնչանութիւն փսխել.

2 Այլ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս՝ ընդ աբգն դաս, որոյ լի են բերանք նց ծաղուս՝ և շրթունք խարեանց ցնծութիւն, ըստ առակողին և

սաղ

սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատակել համայն աստանօր. թէպէտ առ իմոմ թերութիւն բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւելն՝ քան զանապաշխարն. Տնեալն եղև մանասէ, առ իմոց պարտուցս առաւելութիւն. պատուհասեցաւ և փարիսեցին, առ դժնէիս ամբարշտութիւն. գովեցաւ անառակ որդին, առ անդարձիս ուխտազանցութիւն. յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն ամասեայ, առ անշնորհութիւն ապախտաւորիս. օրինաբանեալ եղև աւազակն, որ դատապարտեալ է անհաւատից. պատուհասեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամոլին ապաշաւողաց. Ո՛չ պակաս քան զփարաւոն՝ զատեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օրինակի խառնութիւն մրրկաց ծովու ծփեցայ, ո՛չ այնքան սարսեցի և պտկաւեցի 'ի սաստկութիւն քուսմդ հրամանի, որքան ալիք ծովուն՝ յեղեբայն. Ընդ թիւս չափուց կշռութիւն առ իմն գործոց՝ և աւազոյն կոյս սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն շեղջք, առ համբարս իմոյս անօրէնութեց.

3 Ի թէպէտ և յոյժ բազում են մանուանքն՝ 'ի յափուանս ջրոյն համանհաւասարեալք, այլ՝ ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց ածելոյ. իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնուլ 'ի միտ.

Ոմն՝ և ծնունդք իւր. ոմն՝ և շառաւիղք իւր.
ոմն՝ և բիծք իւր. ոմն՝ և արկածք իւր.
ոմն՝ և փուշք իւր. ոմն՝ և արմատք իւր.
ոմն՝ և հատուածք իւր. ոմն՝ և պտուղք իւր.
ոմն՝ և նշխարք իւր. ոմն՝ և ճուղք իւր.
ոմն՝ և ոստք իւր. ոմն՝ և արմատունք իւր.

ոմն՝ և Ճիրանք իւր . ոմն՝ և մատունք իւր .
ոմն՝ և խլրտմունք իւր . ոմն՝ և զօրութիւնք իւր .
ոմն՝ և աղդմունք իւր . ոմն՝ և նշմարանք իւր .
ոմն՝ և տիպք իւր . ոմն՝ և մնացուածք իւր .
ոմն՝ և ստուերք իւր . ոմն՝ և մթութիք իւր .
ոմն՝ և յարձակմունք իւր . ոմն՝ և հնարք իւր .
ոմն՝ և պատիրք իւր . ոմն՝ և դիտմունք իւր .
ոմն՝ և դիմեցմունք իւր . ոմն՝ և ջանիք իւր .
ոմն՝ և խորք իւր . ոմն՝ և գարշութիք իւր .
ոմն՝ և կայծակունք իւր . ոմն՝ և կիրք իւր .
ոմն՝ և մթերք իւր . ոմն՝ և դանձք իւր .
ոմն՝ և ցնցուղք իւր . ոմն՝ և աղբերք իւր .
ոմն՝ և գիւտք իւր . ոմն՝ և շանթք իւր .
ոմն՝ և հրդեհմունք իւր . ոմն՝ և պատկառանք իւր .
ոմն՝ և վիհք իւր . ոմն՝ և անդունդք իւր .
ոմն՝ և բորբոքմունք իւր . ոմն՝ և աղջութիւնք իւր .
ոմն՝ և ամպրոպք իւր . ոմն՝ և կայլակք իւր .
ոմն՝ և հոսմունք իւր . ոմն՝ և հեղեղք իւր .
ոմն՝ և սառնամանիք իւր . ոմն՝ և դրունք իւր .
ոմն՝ և շաւիղք իւր։ Հնոցն՝ և տապ իւր։ Հրատն՝ և գոլորշիք իւր։ Հալոցն Ճարպին՝ և Ճենճերմունք իւր։ Օշինդրն՝ և դառնութիւն իւր։ Կործանիչն՝ և հնաղանդեալք իւր։ Բռնաւորն՝ և յեղուզակք իւր։ Գոռոզն՝ և սպառազէնք իւր։ Աւազակապետն՝ և գումարտակք իւր։ Դաղանն՝ և կորիւնք իւր։ Խածանօղն՝ և ծակոտուածք իւր։ Ապականագործն՝ և նմանիք իւր։

4 Ուրդ՝ այսոքիկ պետք են դիւաւորութեց՝ ապականողաց ոգւոց համայնից։ Դասեալք ընդ ինքեանք նուաճութիւնք մասանց իւրաքանչիւրոք՝ ի

սոցանէ՝ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց։ իսկ զհամայնիսս թիւն՝ նա միայն զօրէ իմանալ, որ զառ 'ի մէնջ չէութիւն դրեալ՝ իբր զէութիւն դործոց տեսանել։ Լաւ արդ՝ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութիւնք վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի՝ ծանիցէ՝, զնախախնամութիւն մատուցանս, արկածիցդ վերադրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կամ զբնաւ իսկութիւնն սահմանեցի, որ 'ի մերս բնութեանս պատուիրի՝ ազգի ազգի վերիպականութիւն։ այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքաւք և զայլն իմաստասիրեսցիք, թէպէտ և ոչ բաւական դակապէս։

Ա էրոպին յաւելուած էրկին հիծուլնէ՝ նորին հոգոյ, առ նոյն ազէրս մաղնանաց բանի։ 'Ի խորոց սրտից ի՞օգ՝ ընդ ՅՅ։

* Բան. Լ.

1 Լաւ զի մի՝ զերկութեան վստահութիւն իսպառ կտրեցիս, և ապաշէն եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութիւց ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք՝ ինքնածին բուսեալք, զոր վերադրեալքդ սահմանեցին՝ զորքանութիւն պատկերին ձևոյ եղեալ, ահարկուս ցուցից առ սին բազմաբոյլ բռնութիւնս մարտակցդ՝ զօրեղ ախոյեանս ճշմարտանս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, թէ և կսկծելիս կիրս՝ և դժուա-

ցակութ պատուղս ծառոց անհասանելեաց, և անկոխս
ճանապարհաց երկիք և տաժանմունք։ Քանզի զայն
ամ գունդս չարութեան բանսարկուին զօրաց, սա-
կաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զճիս զե-
ռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլըտ-
մանց՝ անկեալ ի վերայ ծորումն ձիթոյ, կամ դոյզն
գոլ ինչ ստատակչական, ցամաքեցուցանէ։ և դոյզն մի
հառաչումն սրտի հեծութիւն՝ ելեալ ի յոգւոյ, իբր
ընչումն հարատոյին ջերմութիւն խառնեալ յարեւս,
զսառնամանեաց ստատկութիւն հալէ։ քանզի ըստ
միւսմդ նմանութիւն հեշտաձինք են։ և ըստ միւսմդ
դիմադրութիւն դիւրամեռք։

2 Ոչ ես ոչ երբեք կասեցից դատել զդատապար-
տեալս՝ բանից կարծմամբ։ զարբեալ զպարտաւո-
ղեալս՝ իբր զվնասակար անդրիկանաւոր անհամոզելի։
վա՛ զի զոմանս ստատակեալ ի յիմոց նեղջայն, ոմանց
զօրութիւն տամ կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ։
Տունկս դաւանոստեան, որ զգարշութիւն անառակ վա-
ղուց ծաղկեցի։ բարուանիս ապականաբեր և մահ-
ազկուզեան, որ զկորստեան գինին երկնեցի։ քանա-
նու զսուակ՝ և ոչ յոդայի, ըստ ասից մեծին դա-
նիելի։ որդիս գեհենին, և ոչ արքայութիւն։ ժառանգս
դժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց։ նիւթս տան-
ջանացն, և ոչ հանգստեան։ Պղերախտս՝ առ երախ-
տաւորդ։ ապաշնորհս՝ առ բազմապարգևդ։ միշտ մե-
զուցեալս՝ առ երկայնամիտդ։ դառնացուցիչս՝ քաղց-
րութիւնս բարերարիդ։ Ծառայս չար և վատ, ըստ
ակրունեան յանդիմանութեն։ իմաստունս՝ զչարիս
գործել, ըստ եսայեայ նախատացութեն։ ժիրս՝ առ

ժան

ժանդադրծութիւն զաղրութեան։ Ցոյթն՝ առ 'ի բարկացուցանել զերն։ մշտաշարժն՝ առ դիւաս սատանայական։ հանապազորդեան վիշտ՝ ստացողին։ Ցոյլն՝ առ բարեայն թռիչս։ ծոյլն՝ առ երանութիւն ընտրութեան։ դանդաղն՝ առ դիտմունս խոստացելոյն։ անարիս՝ առ կարիս պիտանեացն և օգտակարացն։ պաշտօնեայն՝ տիրադրութ երախտամոռաց։

3 Վայ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի։ վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեն ձիր մոռացայ։ Վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց, որ ոչ գոյ հատուցանել։ Վայ բեռնակրիս ծանրութեանն մեղաց դժնէից, որ չունիմ դառնալ առ հանդստարարն։ վայ վնասակարիս ուրուանեան պարտուցն, որ չիք ինար յանդիման լինել հզօրին։ Վայ եղեգնախուիւ կիզանողականս նիւթոյ, որ տոչորեալոց եմ 'ի դեհենին։ վայ ինձ առ ոյս յիշատակ, զի նեռք բարկութեան՝ այրեցելովք են գործեալ։ վայ յիմարութեան, որ ոչ մատաւեցի զծածկեցելոցն յայտնութեանն հանդէս։ Վայ ամբարշտիս, զի միշտ անդադար ոստոյնս չարեաց կկեցի։ վայ զմարմնոս պարարողի՝ կերակուր որդանցն անմահիկ, կատողացն թռնաւորաց զնարդ համբերեցիկ։ վայ ինձ առ արբումն՝ մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց։ վայ ինձ առ եւս անարժան հոգւոյս՝ յեղկելի մարմնոյս, ի՞նչ դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց։ վայ ինձ առ նոքաղուն՝ խղճոյն լաստերաց, զի անարժարժելի է աղօտանալն։ վայ ինձ առ ճեպ տագնապի՝ ահին պակուցման, յորժամ առաջատին մուտն փակեսցի։ վայ ինձ առ ձայնին

ահաւորութիւն դողացուցչաց և սարսափելեացն բա-
նից՝ երկնաւոր թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ
ոչ գիտեմ զքեզ։

Ո Ղորմին յաւելուածք կրկին հեծուրեն՝ նորին հոկողի, առ նոյն
աչերս նաշխանայ բանի։ Ի խորոյ որոց խօսի՝ ընդ ամ։

* Բան. Բ։

Զարդ՝ զինչ գործեսցես՝ անձն իմ կո-
րուսեալ, կամ ուր թաքչիցես, կամ զինարդ
ապրեսցիս, կամ որպէս ելցես 'ի մեղաց
բանդէ։ Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ
հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան
նախատինքն. անողորմ են հրեշտակքն, և անկաշառ
դատաւորն. հզօր առեանն, և անաչառ բեմն. քաջա-
ճեալն սպառնալիքն, և անողորմ հատուցմունքն. ա-
հարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանու-
թիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վը-
տակքն. թանձրամած խաւարն, և արտաքոյ սպեղրու-
թիւն մառախուղն. ապականութիւն է դուրն, և մշուրն
ջենաւորն է տագնապն. ամենադրաւ տարտարոսն, և
անզերծ սառնամանիքն։ Զարդ՝ արդարև քեզ են
գանձեալ դառնութիւնք այսոքիկ դժնդակք, և տարժա-
նելի օթևանք, անբմբերելեացդ պատուհասից, ոչ
անարժան անձն իմ մեղաւոր՝ ջարագործ՝ պոռնիկ՝
բազմաբիծ, և սահման անդաստանի՝ բնաւին ան-
մաքրութիւն։ Զհա զարդիւնս գործոց ձեռաց քոց
ժառանգեսցես՝ թիւրեալդ 'ի յողորմութեց, և զա-
ռածեալդ 'ի մաքրութեց. տարադրեալդ յարդարութեց,

և

և 'ի կարգաց պարկեշտութեաց. ունայնդ 'ի լիութեաց՝
հոգեպարգև հարստութեաց. նախանձաբիւր բարե-
բարին, և ամենակալ թագաւորին։

2 Եւ քանզի կառուցեր քեզ անել արդեալն՝ և
անփախչելի որոգայթ, խոստովանեսմ քեզէն
զանբժշկականդ քո վէրս, և զանօրինակդ հար�ած,
վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբու-
ժելիդ բեկուլն. ոչ չարդ 'ի բարեաց. ոչ դառնութիւնդ
'ի քաղցրութեաց. ոչ խաւարդ 'ի լուսազարդմից. ոչ
կապտեալդ 'ի պճնելոց. ոչ դարձեալդ 'ի գովելոց.
ոչ ամբարիշտդ 'ի բարեպաշտից. ոչ շնչականդ 'ի
բանականաց. ոչ անմիտդ 'ի մտաւորաց. ոչ անհան-
ճարդ յիմաստնոց. ոչ անմաքուրդ յընտրելոց. ոչ
մահացուդ 'ի կենդանեաց. ոչ խոհերականդ 'ի ոբց.
ոչ արբշիռդ 'ի պարկեշտից. ոչ կեղծաւորդ յարդա-
րոց. ոչ անպիտանդ 'ի պիտանեաց. ոչ անարդդ 'ի
փառաւորաց. ոչ նոճազդ յառաւելութեաց. ոչ դե-
ղինդ 'ի գերազանցից. ոչ նոճաստադոյնդ 'ի վեհից.
ոչ աղքատդ յընչեղաց. ոչ անարժանդ 'ի փրկութեաց.
ոչ անանկդ 'ի բարձրութեաց, և 'ի հոգևոր հարստութեաց.
և հատուցածեալդ յօրհնելոց։

---

11 Երդուին յաւելուածք ելին հեծութիւնք՝ նորին հոգոյ, առ նոցն
ալիրս մաղխանաց բանի։ 'Ի խորոց արդից խաչ՝ ընդ ՅՁ։

✻ Բան. Թ.

1 Եւ արդ՝ զինչ արժանաւոր ըստ քեզ բան-
բասանս շարադրեցից 'ի կտակ մաղթանաց
մատենի այսր ողբերգութեան, ոչ անձն իմ՝

թշուառ ամենապատկառ, և առ պատասխանիս բա-
նից անբարբառ, անպիտան այ և աբգն մասնակցու-
թեան։ Օ՛ի եթէ զլիճ մի ծովուց՝ 'ի յորակութի
դեղոյ յեղեղեցից, և զդաշտս ասպարիսաք բազմաք
սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութեաք քարտենի չա-
փեցից, և զպուրակս յոքանց անտառաց՝ շամբից ե-
ղեգանց՝ 'ի հատուածս դոյութեաք դրչաց կաղմեցից,
և ոչ զլիճս մի 'ի բարդեալոյն անօրէնութեց՝ զօրեցից
ընդ դրամ սահմանի դրաւել։ Ա՛յս զի՝ թէ զմայրս
լիբանանու՝ 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զը-
լեառն արարատեան՝ 'ի կէտ ամբարման նժարի միոյ
արդարութեան՝ միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ
այնր հարթութիւն համակշռագակեալ։
2 Ա՛ռաս ամբարձուղեշ սուռ՝ արասատեղն՝ տերեւա-
լից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւետ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր ասն դօսացոյց։ քանզի սա-
զարթօք վարսից։ այս է՝ արտաքին դիմաք բարեշուք
կերպիւ՝ իբր պտակաւ լիովք պաճուճեալ, բայակա-
նացն դոս բաղձալի։ իսկ եթէ մերձեսցի տնկօղն՝
խուզել զնդրեւ լեն, դայէ զքեզ ունայն 'ի բարեաց,
և դարշելի 'ի դեղեցկութեանց։ ծաղր աեսողաց, և
նշաւակուիք նախատողաց։ Օ՛ի եթէ ապաժամանն՝
յանդգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղակորոյս
անկենդան, որ դոյզն պատկերն է անպտղաստեղ,
եկն ընդ անիծիւք։ և կամ երկիր ոռոգեալ ցօղով,
և ոչ բազմապատիկ՝ զուանդս արդասեաց երկրագործ
ծութեաք՝ տածողացն մատուցանէ, լքեալ մնանի։
իսկ դու՝ ոմանձն իմ եղկելի, սահման բանաւոր և
աստնկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր,

իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակիդ։ Ա՛ զի զհամայնն ընկալար 'ի քեզ՝ անպակաս յառաջելութեանց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին՝ զբերս գործոց նանրութեց, և զդիւաս նորոգս՝ ատելիս և անախորժելիս հաստատեալն զքեզ։

3 Եւ զասն զի եդի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վնանք ձգելոց արձանաց բանիցդ՝ իբր զանընդել դաշանս վայրենի, անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանւոջ՝ իբր ընդ ասոխի ուսեան՝ ընդ անձին՝ յօժարամիտ կամաք ոգորիմ, ըստ խմաստութեանն բանի։ և զոյզս մտաց խորհրդոցս դաղտնեաց՝ իբր զգլխաւորեալ յանդուգնութիւն քարութիւնք գործոց խաստովանեալ, քեզ տարածեցիս՝ ա՛ծ իմ և աէր։ Օ՛ի որով չափով չափեցիս զանձինս ստգտանիք, 'ի քոցդ աննուազ դթութեց՝ այսրէն չափեցայց, ընկալեալ զնորհդ յաճախագոյնս՝ ընդ մեծագունեցդ պարահաց։ Եւ որքան վերացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեաք չափովք կրկին առ սմին՝ և խմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ՝ բարեհոչակեալ լուսաւորեսցին։ և 'ի պարտուցն առաւելութի, նոյնքան փոխատուիդ առատատրութիւն՝ բարեբանեալ միշտ պահեսցի, ըստ խնկաւորդ քումդ առակի։ Օ՛ի քո է փրկութիւն։ և 'ի քէն է քաւութիւն։ և աջով քո՝ նորոգութիւն։ և մատամբ քո՝ զօրեղութիւն։ և 'ի հրամանաց քոց՝ արդարութիւն։ և յողորմութեց քոց՝ ազատութիւն։

և յերեսաց քոյ՝ լուսաւորութիւն. և 'ի դիմաց քոյ՝
զուարճութիւն. և հոգւոյդ քո՝ բարութիւն. և օծմամբ
իւղոյ քոյ՝ սփոփութիւն. և ցողով շնորհի քոյ՝ զուար-
թութիւն. և դու տաս մխիթարութիւն, և մուաացուցա-
նես զվհատութիւն. և բառնաս զխաւար վշտաց, և
զկեծութիւն ողբոց՝ 'ի ծաղր փոխես։ Այս քեզ վայելէ
օրհնութիւն գովութիւք հանդերձ՝ յերկինս, և յաղագս
հարցն՝ և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւի-
տեանս. ամէն։

Ովերոպին յաւելուած էրէին հեծութիւնք՝ նորին հոյշի, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսի՝ ընդ ա՛յ։

* Լան. Յ.

1 Այս արդ՝ քանզի միապէս մատնէ կորստեան՝
և զողջումն ուժգնապէս, և մեղանչելն մե-
ղեդնաբար. զի թէև օտարացեալ լիմն են
'ի միմեանց այլայլութիւք նմանութեանն, սակայն ըղ-
կերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եղեալ,
զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն.
Զի մինն՝ զվարին ձեռն՝ իբր ապիկար՝ թերահա-
ւատէ, իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառոտանեաց
պաճարելինաց՝ յանդգոյս եղեալ, զյուսոյն առատան
խլէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝
հանապազ խնդոյ սատանայ. իսկ երկրորդումն՝ ըստ
նմանութեան լսելիզոյ դժոխորովայն դազանի, իբր
կերակրով՝ արեամբ պարարի։
2 Այս արդ՝ իբր զգանեալ բազմահարուածեան հե-
ծանաւ, և յաւին մահու ժամանեալ՝ դոյզն ինչ

դարձու�չնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ,
կազդուրեցոյց պատգարեցոյց կանգնեցոյց յար-
եայց յանկենդանականս կորստենէ. օժանդակեալ
քի ձեռամբն՝ որ գթածն է յամի՝ 'ի բարերար յերկ
նաւոր հօրէն՝ փրկութիւն և բժշկութիւն պտուղ ըն-
ձեռեալ ինձ մեղուցելոյս՝ ախտացեալոյս՝ և մահացե-
լոյս։ Լու սկզբնաւոր ողբերգութիւն այսր աղերսա-
նաց, զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն
'ի նախնեացն՝ սոքիմբք զինեալ, փոխեցաւ իսկոյն յան-
մահականն վիճակ վերին. զապաշխարութեանն դեղ
ընկալեալ, ապաշաւանաց թօշակաւն՝ զգրաւականն
անեղծութեան ստէն ժառանգեաց։ 'Ի վերջ քան
զորոց՝ առաքեալ՝ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն
մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկ-
նաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ճոխու-
թիւն փարթամացան։ Լսկ զկարեալոյս տրունի պաշտե-
լի բանին՝ յիշեալ առ սմին, զի ամ ինչ հնարաւոր է
այնմ՝ որ հաւատոյն։ Լ՝ զի՝ և զչարին ընտրակա-
նացն բարեմասնութիւն այ հաճելեացն՝ զնեալ աս-
տանօր, զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահ-
երէց, առ 'ի սրբութեցն մուտ՝ սովիմբ հանդերձել.
առանց որոյ և՛ չէ տրն փառաց՝ զիւրսն առ մեզ հը-
րաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ՝ լծակից
խնդրեաց բարերարութեն իւրոյ զհաւատսն մեր.
ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւա-
կանութիւն՝ առընդեր գոլով այ. քանզի հաւատք քո
կեցուցին զքեզ, օրհնաբանեալն այ բերան վկայեաց։
'Բանզի արդարև սեռն տեսութի, և կատարեալ
խմաստութի, և առ ամ ընտանութի, և բարձրելոյն

ծանօթութիւն՝ հաւատոյ մասն՝ երկնային և ընտրեալ անուն՝ որ յարաձգեալ մնայ անվթար և անփակելի, պատուական գոլով սիրոյ և յուսոյ։ Օ՛ի եթէ փոքր սերմանի գոյն՝ հատի մանանխոյ չափոյ նուազոյն հաւատք՝ ղերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու, ապա յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշխարհիդ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առաւծ, որ զապառնիսն և զծածկեալսն առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ, երրորդութեանն փառատրելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ։ Օ՛ի թէ՝ և զերիսն հատուածս առանձնաւորականս՝ 'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիտեացես, յաւէտ մեծասցիս նոքաք 'ի յաւծ։ քանզի՝ թէ հաւատաս 'ի նա, և սիրես։ որով և յուսաս անեղութիւնց պարգևաց նորին։ 'Ամ փառք յաւիտեանս։ ամէն։

Ս էրոբին յաւելուածք ի՛ր՝ հեծութեան՝ նորին հանդէր, առ նոյն ազգաբնակաց բանէ։ 'Ի խորոյ սրտից խօսի՝ ընդ ոյ։

* Բան։ Յ։

Ա՛ւարդ՝ ես յերկինս դասանողաց՝ ունայն 'ի բարեաց, նոյեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն իմ եղելութիւն՝ 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յի՛ քի՝ առնել զոր կամի։ Ղանգի հաւատացի, վա՛յ և խօսեցայ խրատեալ պօղոսի՛, ուսեալ 'ի դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նց՝ այլ ինձ արասցէ։ որպէս հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն

յարութեան նորա, ըստ առաքելոյ, և զհաղորդութիւն
չարչարանաց նորա, և որ զնոսին բերին ասացեալքն։
Այսորդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն խ-
կապէս և 'ի նորոգս այս փոխադրութիւն, որ 'ի մեղացն
'ի քաւութիւն, և 'ի չարագործութիւն յարդարութիւն, և
յանմաքրութիւն 'ի սրբութիւն, և յանքաւելեացս պար-
տեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանու-
թիւն, և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ա-
զատութիւն։ Զանգի զիարդ ոչ արդեաք չքնաղ քան
զբան՝ և 'ի մթութիւն երկնանութիւն խաւարի զտեալ՝
և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղա-
ւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հե-
ծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձ-
րութիւն գերագունիցն կայիս, ստորասուզեալ ծան-
րութիւն՝ յանդնդային վհին խորխորատ գբոյն կոր-
ծանման, նորագիւտ մեղքն անջրելեաք, ունի և նրշ
խար նշուլից՝ փրկութիւն կենաց հպաւոր, իբր կոյ-
ծանին լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի։ որպէս ըզ-
հուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հը-
բաշիւք մակարդեալ վերին հրամանի՝ 'ի յատակս ներ-
քին նիրհեալ ջրհորոյն։ Ուստի և մեղուցելոյն խ-
պառ թաղծելոյ, և ակնկալութի բարեոյն բարձելոյ,
և համարձակութիւն շնորհին լքելոյ, յուսալ վերբա-
տին անդրէն միւսանգամ նախապարգևիցն փառա-
զարդութեց դարձեալ հասանել։ քանզի և յաճուստ
անդուստ հանդերձի և այս՝ ներդործիլ առ սոյնս։
Վա՜յ զի սա զտուն՝ ողորմութի՝ ամենանոնար աւետա-
բանէ։ Զոր խունկ հաճութեամբ ծիծաղելս հոտոտի ՝ն՝ ծ,
քան յամ բուրումն անուշից, և քան 'ի խառնեալն

երբեմն աղացմամբ՝ 'ի սպաս խորանին, որ է կերպա-
բան անձանց խոնարհից զիջեալ բեկութեամբ՝ առ'ի
միութիւն նոյն նմանութեան։ Ապա որում հարցեալ
փրկչին ամենից՝ ցոմանս ախտացեալս տեսանելեաց,
հաւատոյք ասելով՝ առ այդ, թէ կարող եմ առնել
ձեզ զայդ, ոչ պարզևեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ
նախ զհաւատոցն դրաւ ընկալաւ։ Զանգի զինչ
քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ՝ առ կենդանու-
թիւն մեզ անյուսադոյն, առ որ կանանցն ժամանելոց
'ի յոտս արարչին՝ հաւատոցն հանդերձանօք, անյա-
պաղաբար զիառացն այ տեսին զհանդէս՝ 'ի յեղ-
բօրն կենդանութիւն։

2 Սակ աստուծին անկապուտ շնորհին մնացելոյ զինի
մեղանացն՝ հզօրագոյն են վկայք։ Ցախ՝ ենովք.
զինի ահարոն. յետ նց դաւիթ. դարձեալ և պետ-
րոս. ընդ որս և փոքրն եղիազար, որ 'ի մեծէն այ
ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ։ Աւելորդ է
առ այս և բանն առակի անառակ որդւոյն. թողում
զպոռնիկն՝ որ 'ի ոնէ գովեցաւ. և զմաքսաւորն՝ որ
'ի բարեգործէն յիշատակեցաւ. և զաւազակն երջա-
նիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն պը-
սակեցաւ. և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխա-
ւորն ընտրելոյ պօղոս՝ որ երբեմն նախանին էր անօ-
րինաց։ Զորոց ոմանք ծանօթութեամբ օրինին գլուխ-
բեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան գե-
ղազանցութեամբ՝ քան զնախակրօնիցն առաւելութիւն։
Սակ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն
պահեալ հայրենի, մերձաւորագոյն դոլ պատուիրանի

սկզբնահօրն դաւանութիւն, որ և զնախնեաւն պարտիս՝
ինքեան վարկուցեալ, զնորայսն՝ իւրովքն տուժեաց
կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի
յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով, բանականաց
բնութիւն կենաց կարապետ՝ յաղթող զորապէս բըռ-
նութեան մահու՝ փոխեցաւ։ Լոկ ոմանք 'ի բուսոյ
տհաս հասակին չարութիւն յերկարաձգեալ, 'ի կա-
տարեալ տիս ժամանակին, ոչ 'ի բարձրութեն կայից
հոսեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեց
դժնէից կենացս՝ 'ի կամարն երկնից համբարձան։
Լաւ թէ այն ժամանեաց կռնեաւ՝ զորացեալ 'ի չա-
րեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանա-
կեալ հոլոյս դոյութիւն, և պատկերն արքունի՝ 'ի պա-
տիւ կերպիս մերոյ՝ նկարել արքունականն քանդակ-
ուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթող
դաւաճանութիւն զմերս ենթադրեալ բնութիւն, ապա
առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւո-
րութիւն անքող և անվերարկու՝ տերամբ քրիստոս-
տեալ։ որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն
տերունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան
և կնիք հաստատութեան՝ առ հաշտարարն միջնորդ՝
երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարե-
խօս։ Այս ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտա-
դունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ
պայմանի, համբուրեմ հաւատոց շղթամբք՝ զպատ-
կեր բանիս, և ակն ունիմ փառացն շնորհի։ քանզի
արդարև յարդարացուցանելն զմեզ ՝՝՝

3 Ա. Մ յոյս անստուերագիր վստահութիւն ապաս-
տան, կամ կործանեալ՝ կանգուն. թշուառա-
ցեալ՝ յաղթող. վրիպեալ՝ 'ի դարձն կենդանական.
ամենաթշուառ չարադործ՝ 'ի յոյսն. մահու մատ-
նեցեալ՝ 'ի կեանսն. ընդ ապականութիւն վաճառեալ՝
'ի ձիրն. դժոխային գործովք դրաւեալ՝ 'ի լոյսն.
ստորնասէր անասնակենցաղ՝ յերկինս. կրկին դայ-
թակղեալ՝ 'ի վերատին վրկութիւնն. մեղաք կապե-
ցեալ՝ 'ի հանդատեանն խոստումն. անբժշկական վի-
բաք վարանեալ՝ 'ի դեղն անմահացուցիչ. ստամբա-
կեալ վայրագութիւն՝ 'ի սանձն հանդարտութեան. սրա-
ցեալ վարատական՝ 'ի կոչումն. ապառում դժբն-
դակ՝ 'ի հեզութիւն. ընդդիմաբան լուսացաղ՝ 'ի
ներումն. 'Ի քս յս, և 'ի հայր նորին հզաք և ա-
հաւոր, յանուն և 'ի կամս բարերարութեան հոգւոյն
Ճշմարտի. օրհնաբանեալ խսկութեան՝ և մի ՝ածութեան՝
զօրութիւն և արքայութիւն, մեծութի և փառք՝
յաւիտեանս. ամէն.

Ա Էրոպին յաւելուած էրկին հեծանուէ՝ նորին հանգէ, առ նոյն
ոգէրս նազիանոց բանի. 'Ի խորոց որոյ խօսի՝ ընդ ՝ոյ.

* Բան. Յոբ.

1 Եւ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում զըղձ-
մանն՝ յուսահատութեանն բանիւ լքայ, և
տարակուսանաց հեծանաւն՝ 'ի մահ ձաղկե-
ցոյ, ասասանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յար-
գահատել համարձակեցայց, զերրորդութիւն ՝ոյ կար-
գալով յօդնականութիւն ինձ մեղաւորի. Որ և

անդատին իսկ յօրինաբանելն և 'ի դաւանելն զկեն-
դանարարն բնաւից ՝ , իսկոյն և կոչումն ընտանի
ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն բարե-
բարի , մահացելոյս է կենդանութի , ըստ մարդարէին
նախաձառութե , թէ որ կարդայ զոր , նա կեցցէ ։
Իսկ ես ոչ միայն կարդամ , այլ նախ հաւատամ մե-
ծութե նորին ։ ոչ եթէ վն պարգևաց նր մատու-
ցեալ՝ յողոք դեղերիմ , այլ իբր զկենդանութի իս-
կապէս , և զնչոյ տուր և առութիւն հաւատի , ա-
ռանց որոյ ոչ է շարժողութի կամ ընթացութի ։ զի
ոչ այնքան յուսոյն հանդուցիւ , որքան սիրոյն կա-
զանոք բերիմ։ Ոչ 'ի տուրսն , այլ 'ի տուօղն յաւէտ
կարօտիմ ։ ոչ փառքն են ինձ անձկալի , այլ փառաւո-
րեալն է համբուրելի ։ ոչ կենացն փափագանոք , այլ
կենարարին յիշատակաւն միշտ ճեռնձերիմ ։ ոչ վայե-
լեցն տարփանոք հեծեմ , այլ հանդերձողին տեսչա-
նոք՝ յերիկամանց ստոր կականիմ ։ ոչ զհանդիսան
խնդրեմ , այլ զհանդուցչին ղերեսս աղաչեմ ։ ոչ
հարսնարանին ինձոյիւք , այլ փեսային անձկութի
մաշիմ։ 'Ի ձեռն որոյ զօրուն՝ վստահապէս ակնկա-
լութի՝ վերադրեցեալդ յանցանոք բեռանց՝ աներկ-
միտ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստա-
նեալ , ոչ քաւութե միայն հասանել , այլ զնոյն ինքն
տեսանել՝ յողորմութի և 'ի դթութի և յերկնիցն ժա-
ռանգութի , թէպէտ և յոյժ եմ տարագրելի ։
2 Զ արդ՝ բաղում պատկառանոք ամաչեցելոց դի-
մայ կորացեալ , զմիջնորդ ազգման կափուցմանց
երկակի շրթանցս՝ արժանաւոր աղեխի կարկելոց՝
առ անհատնրձակ լեզուիս շարժութի , նորոգեցից

'ի

'Ի յերդ հառաջման պաղատանաց յեղանակութեանց՝
աղերսողում հեծեծանաց՝ 'Ի բարձունս աղաղակելոյ։

Ա՛աղբանք զբաւորք՝ արհաւրաց վիճակաց։

3 Բնկալ քաղցրութիւն՝ տէր ամ հզօր, զդառնա-
ցողիս զաղաչանս. մատիր գթութեամբ՝ առ
պատկառելս դիմաց. փարատեա՛ ամենա-
պարդև, զամենայն տխրութիւնս.
բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւնս.
անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիւնս.
աւարեա՛ միշտ յաղթող, զնաբողին հաճութիւնս.
բացադրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ
կնքեա՛ կենցաղիս, զկորուսչին ընթացմունս.
ցրուեա՛ ծածկատես, զամբոնողին չար դամունս.
խորտակեա՛ անքննին, զմարտողին դիմեցմունս.
Տնազրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս.
պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս.
դծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս.
կերպացո՛ զքո նշանդ՝ 'Ի հետս ելից մաղթողիս.
ամրացո՛ քո աջովդ՝ զՀանդստեանս խշտի.
մաքրեսցե՛ս 'Ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս.
պահեսցե՛ս քո կամքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս.
անխարդախ արասցե՛ս՝ զքո շնորհել շունչ մարմնոյս.
կայուսցե՛ս շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ.
կարգեսցե՛ս 'Ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու։
Տո՛ւր հանգիստ բերկրութիւն մահահանդոյիս նիրհման՝ 'Ի խորութիւն գիշերիս, բարեխօսութիւն հայցաւ՝ ածոց սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։

Ի մտիտեալ պարուրեան զպատուհան տեսութեանց զդայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խոլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեան՝ ամենազգաստ արթնութիւն, հոգեներոյդ զմարթութիւն 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ՝ ամենօրհնեալ թագաւոր փառաց անձառից, փառաբանողաց երկնադումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Օ՛ի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Ո՛ Էրապին յաւելուածք կրկին հեծութիւնք՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց որոց խօսք՝ ընդ ես։

✻ Բան։ Յ.Գ.։

Յ՚ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի՝ ողորմութիւնդ շնորհի, որոյ անուանդ խսկ մեծիդ՝ զգթութիւն և զընտանութիւն աւետարանի քաղքր՝ դժնէից և անպտղացողաց։ Ընդ քեզ և որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ՝ ընդ արարչութիւնդ քում բարձրացեալ։ Եւ հոգիդ ՝ի ճշմարտութեան, բղխեալ առ 'ի քէն անապառութիւն, կատարեալ իսկութիւն գոյի, էութիւն մշանջենաւոր, հաւասար քո ամի՛ն, փառակից որդւոյ քոյ ՝ի՛ որութիւն։ Արարեակ անձնաւորութի՝ համայն անքննին, տրոհեալ

'ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ հա-
մազուդութիւն՝ նոյնագոյ բնութիւն տիրապէս՝ անշը-
փոթ և անանջրպետ՝ միով կամաւք և կցորդութիւն.
ոչ երիցութիւն ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի
ակն առ նոսաղութիւն միոյն ժամանեալ, քան թէ
զատառաջ սիրոյ երկնայնոյ անստուերք լուսոյ՝ որ առ
մերն է ծանօթութիւն, միով պատկաւ սրբասացութիւն
անսկզբնաբար ՝ի ծաբանեալ. Քանզի արդարև վե-
բաձայնեալս այս խոստովանութիւն՝ երեքփառատրեանդ
դատանութիւն զվէմն հաւատոյ պետրոս երանեաց.
իսկ զդատապարտելոյս անձն մեղաւ՝ բարեհրաման
քո ակնարկութիւն, ո՞վ խնդրողդ գերելոյս՝ հրաշա-
նոբոգ արդարացուսցէ. Քանզի թէպէտ և քո՛ ի-
ցեն պարգևք՝ և քո՛ ողորմութիւնք, այլ ո՛չ 'ի պար-
գևան եւ այնքան հռչակեալ, որքան յողորմութենն.
զի երկրորդն՝ զբոյդ յաճախէ զփառս, իսկ առա-
ջինն՝ զՀնաւորացն յայտնէ զգործս. զի պարգևք՝
վաստակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւք՝
մեղաւցելոյս բարերարութիւք.

2 Այլ արդ՝ մի՛ զօրասցին մարդկայինս գործք. ա-
ռաջի քոյոցդ շնորհաց՝ ա՛ծ գթութեանց, թէ և
անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց՝ բնաւորա-
կանս հոսմանց, այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայն-
մտութիւն, նո՛ւազ եղիցի առ քումդ մասին ընթացք
երկրածնաց. Քանզի և որ մաքրութիւնն պերճա-
նային օրինականացն վստահութիւք, 'ի լուսաւորել
քոյդ արդարութիւն գուշակ ներկայիս, ամենանո՛ւազ
անձկութիւն լքեալ հրեութենն՝ յեռանեալ, և յաւէտ
ընդտարագրական ողորմելոցն, առաւել նոքա գան

կա

կարօտեալ մարդասիրութեան։ Այլ քանզի ամ ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լուր պաղատանաց գոչ-ման հեծութեամ՝ որ կարդամն առ քեզ. ողորմեա, կեցո՛, և մարդասիրեա։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք յամենեցունց՝ յայսմեանց ազգաց. ամէն։

Ա Էրսպին յաւելուածք էրէին հեծուրեբ՝ նորին հանոզի, առ նոյն ազէրս ծաղնանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աչ։

* Բան. Ժ.Ղ.։

1 Պաղատիմ առ քեզ լուսոյ Ճառագայթ՝ արքայ երկնաւոր՝ գովեալ անպատում՝ որդի անՃառ մեծիդ աչ, խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ՝ կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին աստանօր ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս։

2 Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ ի ձեռն աւաղակացն սրոյ խողխողեալն, քանզի կարկամեալ էր. ո՛չ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի անկոնչէր. ո՛չ մատամբքն տատանելոց՝ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր. ո՛չ աչս կողչողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց, քանզի վնասակարս էր. ո՛չ ի պատգամ բանից մինչնորդի՝ զողորմածիդ կամն հաՃեցոյց, զի անայցելու էր. ո՛չ հայթայթմամբ խորտակել մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց՝ զգթածիդ զսիրա Ճնշեցոյց, վասն զի անյոյս էր. նա և ո՛չ ծննդովքն հաստատութիւն՝ իբր

գարշապարաւ ոտին՝ վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազէ 'ի մեռելութէ։ Պանաւանդ զի 'ի քոյոցդ խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութեամբ, և փառաւոր քո լուսազարդեալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ ստահակեալ ապստամբութիւն՝ յիւր թշնամեացն թիւն յաւելաւ. ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց առելեացն քոց։

3 Լսէ դու՝ բազմապարգև, բարերար, մնոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զբարգործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ոսն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զնեամն։ Ո՛չ քահանայապէս ըստ ահարոնեան տկար օրինին՝ զբարւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բանալիր քարանցն ձգմամբ՝ 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար. և ոչ ոչ զևտականն կարապետոյին անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց՝ հնոյն լրումն՝ և նորոյս սկիզբն, ապանայն 'ի հոգւոյ յաստաշնարանն հանդիսացեալ՝ զվերարարելոյն տեսեր զվտանգ, զի մի՛ սատակիչն օրինակուբ տապարաւն արմատակարաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջքան զվերջն առակայիցն սատակեսցի. այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն, որք 'ի հրեիցն ընկալեալ զօրինս՝ ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խառնուածբ զազատարարն գծագրեցեր զաւետիս՝ առ

օտարազգիսն։ և ածաբարդ ներգործութիւն անա-
պականաւ՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն
նախնի՝ մեղուցեալ 'ի մահ՝ իւրովքն ծննդովք։
Օ տրամեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհատեալն
հաստատեցեր, և զթշուառացեալն միանգամ՝ կրկին
զուարթացուցեր։ Լուսաւորեալն կենարար օծմամբն,
և բաժակաւն լուսոյ լցեր։ Հայրենիդ երկնայնով ա-
բարչականդ քոյին մարմնով՝ նոր յեղանակեցեր։
Վերակացութիւն երջանկացն ազանց ընտրելոց՝ յան-
ձանձեցեր, գրդեցեր, և խնամարկեցեր։ Հանդարա-
ւնթաց գրառուն տածողութիւն՝ անզգուշելի պա-
հեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ 'Ի ձեռն եր-
կաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց՝
առաջնոց կտակաց կենդանականաց, մարդասիրապէս
դարմանատրեցեր։ Լուսոպէս երբեմն ընդ մովսէսի՝
թէս տարածեալ արծուոյն օրինակաւ՝ ընկալար ըզ-
նա, և 'ի հանգիստն հանդարտութիւն՝ երկրին բարու-
թիւն առաջնորդեցեր։ և զբանին կերակուր՝ ջամբել
հրամանատրեցեր վարդապետութեց։
4 Լուսարդ՝ որ զբնաւն ծայրագունին բարութիւն
լուսոյ՝ յամի բովանդակապէս հրաշագործեցեր,
զոյժողին զբանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստաց-
ուածն առ քեզ դարձուցեր, կեցո՛ և զիս մաքրեալ
'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևեաս և անպատ-
րաստից։ ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշ-
կութիւն՝ բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ,
սիրաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից
յաւիտեանս։
ամէն։

Ի Երուսաղեմ յաւելուածք երկին հիւսուածք՝ նորին հանդէր, առ նոյն աղբիւր մաքրութեանց բանիւ։ Ի խորոց արարեալ խօսի՝ ընդ աչս։

* Բան. Ժա.

1 Եսկ դարձեալ ասասուստ վերստին առ նոյն հիւսուածք սրտիս վասնզի ինձէն մատուցեալ, սովին նուազաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգևեալ արդարատեցիս, տագնապեալ ոգւոյս վերասանդիւ խսպառ. Իբր մեռեալ՝ կենդանւոյ անմահիդ մաղթեմ այ, խոստովանեալ ընդ փառացդ քո՝ զիմն անարգութիւն, և առ չարեաքս խմիլք՝ զքոյդ բարուն. որովք յաղթեալ գոսոյ՝ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամուռաց։

2 Եսկ կրկին առակն որ առիս՝ որ ոչխարին որ բուսն տարացուցիս, որ յետին անդայութեն. և մատնեցեալ մոլորեալ, և 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութիւն, ընդ գազանականացն դիւաց՝ և կռոցն վայրենութիւն թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէի, որով և զցաւոցն աղէտ պատմէի. ոչ ձեռն ձգողական, որ համերցն է ազդողական։ Եսկ դու միայն գովեալդ յսկզբանցն յաւիտեանց՝ և յարդի ծնելոցս, գտեալ՝ ըստ մաղթանաց գոչման երդողին, զիս զմեղուցեալս՝ յանձնշոյն մոլորութիւն, խնամողաբէն տեսչութիւն կամաց՝ հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլև խնդրեցեր. և ոչ գտեր միայն՝ հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութիւն սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո

ժառանգութիւն։ Այս արդ՝ դու հոգի՝ կենարար՝ օրինեալ՝ այցելու՝ զթածդ յողորմութիւն՝ եթէ զնո՝ ընկալար զապաբանեալսն աղերսանաց, որ մինն՝ ի միջոց մահու սահմանի էր ջարշարեցեալ, իսկ միւսն՝ ըստ անբանիցն անզգայութիւն՝ վտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ, ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, ածային բարեխնամութիւդ տնաեսեցեր զտիեզերաշրջն խնամողութի՝ առ կորուսեալսն մեծ թշուառութի, յայտնեաց վերստին և արդ զթութիւնդ խորք և բարերարութիւնդ հոսանք՝ առ անօրինեալս առաւելութեամբ՝ վերադրեցելոյդ օրինակութիւն։ Այս բազմօրինակ մահու պարտականս։ առ որ ի բարութեց խառնիցն քաղցրութեց՝ յատուկ համն ջոր։ առ անդամն մարմնոյ՝ արժանաւորս համանն։ առ հաճմահարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր։ առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց։ առ օտարացեալս յընտանութէ խմասանոց։ առ աննմանս հանդուսակիցս բանաւորութեց։ Որ եթէ տարացոյց գոյր, ես ասէի։ թէ նմանակիցս գոյր իմ, պատմէի։ թէ հանդուսակիցս գոյր, ես ճառէի։ թէ հաւասար գոյր, ես գրէի։ թէ զուգադրած գոյր, ցուցանէի։ թէ օրինակ գոյր, ես ազդէի։ թէ յանցեալսն, հայթայթէի։ թէ ի ներկայումն ասա, ես յուսայի։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ ըստ նմանութիւն, զոր միայն քո է քաւել բժշկել և կենադրծել՝ կենդանարար համայն մեռելոց՝ նոր ոգութիւդ տիեզերաց։

3 Զի եթէ սրբոյն սրտի՝ տեսութեամբ երջանկին

դաւթայ, անօրէնութիւն չարեաց բարձրացեալ ասի քան զգլուխս, և ըստ ծանրութեց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց. իսկ որ առ իս կրին սը խալմունք, դերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ ամենասպառ ծովուն յորդութիւն, և գլխոց լերանց վերադրէ։ Այլ շնչեսցէ օդ քո քաղցրութիւն իբր առ նոյին, և որ զերինս հալէ զօրութիւն, յամաքեցուցանել զշիջս ջրակոյսս բազմակոհակ՝ և երկրակործան խմոցս պարտեաց, և լեռնակարկառ բարձրութիւն մեղայս ամբարձելոց։ Այս համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորութիւն, հակիրճ հատուցմամբ, արասցէս ահա եկս քաւութիւն, ըստ մարդարէին, առ երկարաձիգս անհորդենութիւն. և ներելով խմն յամառութիւն, ոչ երկայնամիտ ողորմած օրհնեալ՝ թողցէս միանգամայն, բարեգործեսցէս իսկայն, հատցէս բոլորովին զանվճարելի պարտուցս՝ զարժանահատոյց տոկոսեացս տոյժս առարժանակիրս։ Ա՛յս զի՝ և չիք իսկ առ քեզ ցաւումն սրտի, և կամ բորբոքումն բարկութիւն, ոչ ոչ կրին նեղութիւնք, և կամ նշմարանք մթութիւն. քանզի կեանք են 'ի կամաց քոց՝ և լոյս, և ոչ արքեր զմահ, և ոչ խնդաս ընդ կորուսեալ մարդոյ, ըստ դաւթի և սողոմոնի։

4 Այլ թէ մարդկան կարդեցեր զայս կէտ ոտհմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի բնութիւն ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս

ջարեաց՝ անհամար բիւրուց նորոդ յայտնելոց, որք ՀՐԻՆԱՒՈՐԻՆ երև ին յանդաստան սահմանի՝ ամենաբոյս փշածին բնութեաս, ըստ անստուտ քո վկայութե, որ թէ՝ միտք մարդոյ 'ի խնամս ջարի են արձանացեալ 'ի մանկութէ։ Օ՜ի՛ որ զկատարեալ մաքրութիւնն ունէր՝ աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս, և զինքն ընդ հաստակաց բնութե լծակցեալ, հաստատեաց զճշմարտութի քո՝ առ իմն ստութի յոյժ արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա։ Լա՛ արդ՝ կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի դլուխ ելեալ անպակաս 'ի ստուդութէ՝ առ իմն մոլորութի և դժնդակ անիրաւութի։ Ա՜ սան որոյ խնայեա՛ յիս ողորմութէ՝ քսղցրութեան ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն։

Ա՜ էրսին յաւելուածն էրէին հեծութիւն՝ նորին հոգոյ, առ նոյն աղէր նաղլեանոց բանի։ 'Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աւ։

* Լան. Յ.Օ.

I Լա՛ արդ՝ դու միայն ՀԱԾ ԵՐԿՆԱՒՈՐ՝ բարձրեալ՝ բարեդործ՝ քո է զօրութի, քո նեղրողութի, քո բժշկութի, քո առատութի, քո են պարգևք, քո միայնոյ են ձիրք ձրի, քո քաւութի, քո պաշտպանութի, քո հնարք անիմանալիք, քո արուեստք անդուտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն և դու կատարած։ Լանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտատութե. վասն զի ոչ ես դրաւեալ ընդ մասամբք

ախ

ախտից՝ 'ի վերդ քան զբան։ Պատկեր անպարագիր՝
անդր քան զորքանութիւն կշռութիւն. անչափ լայնութի
փառաց. անտարրափակ ընդարձակութիւն՝ հատու
զորութիւն. անամենոփելի առաւելութիւն բացարձա-
կութեան. անտկարանալի բարերարութիւն դթութեան։
Ոչ դարձուցանես՝ ըստ մարդարէին, յոյդ՝ զըստ-
ուերս մահու. որ ի՞նչ կամաւ 'ի տարտարոսն ներ-
քին արդելակիանացն բանտի, յորում և մաղթանացն
դուռն էր աղեսեալ, և դերեալ անտի զմթերիցն կա-
զուա՝ վտարանդելոցն հոգւոց, սուսերբ հրամանի
յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզե-
ցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր։ Ոչ՝ արձ առիս՝
որ զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասիզ դբոյս՝ յեր-
կաթս մեղաց, վերաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բան-
սարկուին նետից։

2 Ա.յլ դու յամի՝ արդ բարերար, լոյսդ 'ի մեջ խա-
ւարի, օրհնութեդ գանձ, ողորմած, գթած,
մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքննին,
անճառ. բաւական՝ ըստ սբին յակոբայ. անհնարիցդ
ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր
ծախիչ՝ զեռիւս մեղաց, ճաճանչ կիզանող՝ ընդհան-
բական թափանցանցութեամբ խորհրդոյ մեծի, յիշեա
զիս յողորմութեամբ քո՝ օրհնեալ, և մի՛ յիրաւունս քո.
'ի ներողութեամբ քո, և մի՛ 'ի հատուցման. յերկայնմբ
ողութեան, քան 'ի հաւասարութեամբ։ Ա.թէ կշռեսցես
զմեղանաց իմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեամբ քո՝
և մի՛ ընդ արդարութեամբ. զի առ սակ նախնումն՝ յոյժ է
նուազեալ, իսկ 'ի ներկայ վերջնոյս՝ յաւէտ
ծանրակիր։

3 Ա.ՐԴ՝

3 Ա՛յդ՝ մատիր առիս՝ բարութիւն, որպ յունկանն բժշկութի՝ հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութես, զի հանդիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան. Այ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Ա Էրարքին յաւելուած չրչին հեծութիւ՝ նորին հանդէր, առ նոյն աղերս նաղիանաց բանիւ 'ի խորոց որոնց խօսի՝ ընդ ինչ.

* Բան. Ժ.

1 Ա՛յդ աղաչեմ զենամակալդ վանդաւորաց առ ժանելեաց կրից թախծութեանց հոգւոց վշտացելոց. Ա՛ի յաւելուր հեծութեանս ցաւ. մի՛ խոցեր զվերաւորեալս. մի՛ դատապարտեր զպատժեալս. մի՛ տանջեր զչարչարեալս. մի՛ դաներ զհարճածեալս. մի՛ գլորեր զանկեալս. մի՛ կործաներ զդայթակղեալս. մի՛ մերժեր զհեռացեալս. մի՛ տարապարեր զհալածեալս. մի՛ ամաչեցուցաներ զպատկառեալս. մի՛ կշտամբեր զհարթուցեալս. մի՛ խորտակեր զբեկեալս. մի՛ խռովեցուցաներ զամբոխեալս. մի՛ ալեկոծեր զբքայեալս. մի՛ սասանեցուցաներ զդղրդեալս. մի՛ շփոթեր զմրրկեալս. մի՛ կեղեքեր զդիշատեալս. մի՛ ջաղջախեր զբեկեալս. մի՛ գոչեր զմորմոքեալս. մի՛ կուրացուցաներ զնաւարեալս. մի՛ զարհուրեցուցաներ զապշեալս. մի՛ խորովեր զնաւարշատեալս. մի՛ մահացուցաներ զհիւանդս. մի՛ բեռանց ծանրութե մատներ զակարս. Ա՛ի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս. մի՛ կրկնակի ողբումն դառն

հեծութեան. մի՛ ուժգնապէս վարեսցիս առ հողս. մի՛ սաստկապէս՝ առ մոխիրս. մի՛ անաչառապէս՝ առ ստեղծուածս. մի՛ ահարկութեամբ՝ առ փոշիս։ Այ՛ ընդ հարկանիր խստութեամբ՝ մեծդ՝ ընդ փոքրս. լայնդ՝ ընդ ստորնականիս. բնութեամբ բարիդ՝ ընդ 'ի բնէ չարիս. ողկոյզդ օրհնութեամբ՝ ընդ պտղոյս անիծիցդ. քաղցրութիւնդ խնկապէս՝ ընդ համայն դառնութեան. փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենեւին անարդիս. կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանդուածոյ. տերդ տերանց՝ ընդ տղմիս երկրայնոյ. աննուազ լիութիւնդ՝ ընդ չքաւոր ստրկիս. անկապուտ ճոխութիւնդ՝ ընդ անպատուական տառապելոյս. անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս։ Քանզի ոչ զոք հասեալ յառաւօտ, և 'ի ծագմանն լուսոյն խնթեայ մը թանալ. և կամ ընթերակաց կենաց, մահանալ. կամ ազատութեան, և պարտաւորիլ. կամ շնորհաց, և դատապարտիլ. կամ փրկութեան, և մատնիլ. կամ նորոգման, և եղծանիլ. կամ օրհնութեան, և տարապարիլ. կամ բժշկութեան, և վիրաւորիլ. կամ լիութեան, և նուազիլ. կամ յաճախութեան հացի, և քաղցնուլ. կամ գեղոց հոսանաց, և պակսիլ. կամ մոյրենի գրթոց, և նեղիլ. կամ խնամոց աստուածեան աջոյդ, և զզուիլ։

2 Այլ արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս՝ մարմնոյն բորոտութեամբ, հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ աչացաւացն նեղելոց՝ մշտագիշերն խարխափանօք՝ մեծակական ձայնիւն հառաչեմ. ոչ որդի անուանեմ դաւթի, այլ ծնունդ էիդ՝ դաւանեմ.

ոչ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պա-
տիւ՝ կարծողական զնակն դիտելոյ, այլ տէր երկնի
և երկրի հաւատամ։ Ոչ ձեռնադ միայն ձգմամբ
հպաւորութիւն, ոչ բարեգութ ասծ մերձաւոր, այլ
'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել
քո բանիդ՝ առ իմ բժշկութիւն։ Ոչ թէ ինչ խորոց
կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութենն կար-
ծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմու-
թեանն, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս
զարարիչ։ ասա բանիւդ, և բժշկեցայց։ Ընդ հա-
րիւրապետին հաւատոց՝ և ես լծակցեմ։ ոչ մինչ
անձուկ միայն բացակայութիւն հեռի լինելով խորան
'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ
յարութիւն և բժշկութիւն, այլ 'ի վերինն երկնի բաղ-
մելով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն
սքանչելութիւն՝ ոչ ունիմ հաւատացանել։

3 Շ նորհեա՛ ինձ, ոչ դատակնիք բանին քո վճռեց
առ պոռնկին ընդունելութիւն՝ հնգից հա-
րիւրոց դեռնարաց պարտուց շնորհաբաշխութիւն՝ ա՛ծ
բարութեց և տէր երանութեց։ որ յաճախն ընձ-
ռել՝ բազումն փառաւորիս։ և 'ի շատն մատուցանել՝
նուիրն ջաւ սիրիս։ և յառաւելն ողորմել՝ կրկին բար-
գաւաճիս։ և յայսքան բարիս՝ լուսաւորք գովիս։
և ա՛մի տէր գոլով՝ հաւատարդդ ճանաչիս։ և որ
զբոլորն ունիս՝ ընդ մերումն կշռիս։ և անճառե-
լեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս։ և ընդ երկրա-
ւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս։ և մեծադը-
րեալ քո զմերն՝ վեհս գոհաբանիս։ և 'ի սակաւուն
տուչութիւն՝ դոյզն փառաւորիլ ոչ ամաչատանիս։

Լ՝ բան և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զդործս ան-
համար պարտուց . զի և՝ ի ձառս երախտեաց քումդ
պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելն կարդեսցի . և
քեզ փառք յաւիտեան . ամէն .

Ա՝ էրոքին յաւելուած երկին հեծութիւն՝ նորին հոգոյ , առ նոյն
ոգերս խաղեռանաց բանի։ Ի՝ խորոց որոյ խօսի՝ ընդ աւ։

✻ Բան . Ա՝Ի .

1 Լրդ՝ ես ծնունդս մեղաց , որդիս մահացու
երկանց , արդարև անսահման բիւրուց
քանքարաց տուժիչ դող հատուցանող՝ ի
միում աւուր։ Լ՝սել ոչ թէ առ փոքրկութիւն
մարդկային մտաց հայցեմ ներութիւն , այլ առ անն-
հաղ լիութիւն փրկչիդ յիշ քի պաղատիմ մարդասի-
րութիւն . որ չէի երբեմն , և ստեղծեր . չմաղթեցի , և
դու արարեր . չև ևս եկեալ՝ ի լոյս , և տեսեր . ոչ
յայտնեցեալ իմ , և գթացար . ոչ կարդացեալ , և խը-
նամարկեցեր . ոչ համբարձեալ ձեռն , և նայեցար .
ոչ պաղատեալ , և ողորմեցար . ոչ կերպացեալ ձայնիս ,
և լուար . ոչ հեծեծեալ , և ունկնդրեցեր . գիտե-
լով զարդեան դիպուածոյս , և չանտեսեցեր . նա-
խահայեացդ տէջք նկատեալ զպատժապարտիս չա-
ղագործութիւն , և յօրինեցեր։ Լ՝սարդ՝ զքո ա-
բարեալս , և զքև փրկեալս , և զայպքանեաց խնամոյ
յանձանձեալս՝ մի՛ խպաս կորուցէ մեղայն հար-
ուածդ դիւտք բանաարկուին . մի՛ յաղթեսցէ յամա-
ռութես իմոյ մառախուղ՝ ներողութիւն քո լուսոյ .
մի՛ սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեդ .
մի՛

մի՛ մահացու մեղեաց՝ ամենակատարդ լրութեամբ. մի՛
տկարուիս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեամբ։
2 Զ.հա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս
յանուն քո՝ հրաման, արասցես ողջ իբրև զառա-
ջինն, մինչ ի դրախտին փափկութեամբ՝ զպտուղն կե-
նաց կիթէի։ Կաշկանդեալ գօսացեալ ի կոր կործան-
մամբ ընդ կնոջն տադնապելոյ՝ կայ անուղղելի հոգ-
ւոյս թշուառութեամբ, ընդ երկիր պշրուցեալ մեղացն
կքմամբ՝ ստնոյական բուռն կապանօք, զի մի՛ զերկ-
նայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց առիս՝ միայն
ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բա-
նաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես ի
բարի կրօնս վայելչութեան, ըստ ՅԾՒԱԲԱՆՈՒԹԵՆ ՅԲ
մարգարէին։ Ապ զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չու-
նիմ տեսարան, որով զստեղծչիդ նկատեալ զկերպ
մաղթեցից՝ հրաման բարեդութ, միայն դու պաշտ-
պան ակնարկեալ խնամովք անՀառ քոյ սիրոյ՝ ի շնչ-
չական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութիւն
լուսոյ հաստեսցես։ Ընդ երկոտասանամեայ չարեաց
չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ դեղովք մե-
ղանաց արեան հեղեղիմ, հայեաց ի բարձանց ան-
մատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ՈՉԷ քզանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծումն հրաշից՝ ամ ուրեք զօրացեալ։ Ոչ օծութիւն
իւղով՝ պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ
առ կենդանաձիր ոտից դարշապարդ՝ զկարթիլս աչացս
վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զսմբիծ հա-
ւատս՝ ամբարձմամբ բաղկացս՝ ստոյգ դաւանմամբ հոգ-
ւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ զերկիր համ-

բու-

բուրեմ, խառնեալ հեծութիւն աղբերցս արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ։ Ա՛մենեալ մեղանաց հոգւոյս դոյութիւն լուծեալ մեղկութիւն, և յերկուս կայից միայնակողմամբ անհաստատ հեստովք, զընթացիս գործին՝ նահանջմամբ չարին՝ ըղ հետևականն բարձողութիւն շինուածոյ մարմնոյս՝ առելս ծառայն կենսաւորի պաղոյն խափանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին՝ մնայն հնարաւորդառ 'ի փրկութիւն։ Օ՛ փառաբանարան հաստատուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրացոյց արգել հողմ բանսարկուին, հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութիւն, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեսցես բանդ կենդանի՝ ինձ խօսողութիւն անսպասելի։ Ընկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմումս թշուառութիւն՝ ողբականաց քքոնանաց ձայնից, ոչ բարերար որդի այ, օրինաբանեալ աչացդ ցօղով վերականգնեսցես 'ի կենդանութիւն, իբր զսիրելին 'ի յանշնչական մեռելութէ։ Ստոյդ դառնացօղս 'ի գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ սրև անսասներ որդի բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ աղերսողսդ թշուառութեան կականման ձայնի՝ այրոյն 'ի նային՝ մոր միամօրին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանաց տխրութէ դիմացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութէս, տուր յուսահատելոյս զբաջալերութիւն միխիթարութէ դթած քո բանիդ, ասելով և ինձ դովեալդ բարի՝ ստեղծիչ

աշխարհի, թէ մի՛ լար դերի՝ բազմաց ողբալի. որով
ընդ պատանեւոյն կենդանացելոյ՝ ի վշտացելոյ ծընո-
ղին սփոփանա՝ զամենապարտ ոգիս ընկալայց ի քէն
ընդ նմին կրկին նորոգեալ։ Ընդ այսպիսի անզգայե-
լոյն՝ դիւ՛ալլուկ և քարակոշկոռ հեղձամղձուկ եղ-
կելի անձանցն, քստմնելի գիսախաւի հերացն, վայ-
րենեբեռ բանդագուշելոյն՝ ի քէն ողորմեալ փրկիչ
բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցիս. հերքեալ
մերժեացես զգունդս չարացն ապականողաց՝ ի քո
խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն
հանդիցէ, լցեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս՝
զգեցմամբ անդամոց՝ զգաստ արասցես զկենդան-
ութեան ամենաթշուառ։ Ընդ գերեցեալ դժոխաբը-
նակաց վտարանդելոյն հոգւոց՝ արգելեալ կամ՝ ի
վտանգի, զճառագայթ ողորմութեան փառաց քոց
ծագեալ՝ լոյսդ իմ անձկութեամբ՝ ի կապանաց օցտողին
զերծեալ զկս ապրեցուցես։ Պաղտնորոգայթ ան-
երևութերակ վրիպակ արահետ գարշութեամբ մեղացս
ջրդողեցեալ ոգւոյս կերպարան՝ կայ՝ ի տագնապի,
զծածկեցեալն՝ ի տեսողութեան՝ զչարագործին նիւ-
թիցն պատուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութեամբ
ուրդի՝ ոչ, դիծաբար առողջացուցես։ Զ բազմա-
զան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեան
մահացուցանողաց՝ իւրականաբ կորստեան բերիւք՝
դժնդակարմատն շառաւեղաբ հաստատեցելովք՝ ի
յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեցես՝ ի
ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրադրեալ միշտ՝
և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց
արդիւնատուութեան։

3 Եւ քանզի անցեալ ըստ նմանութեան օրինակութեաց յանցուածոցս վէր, ըստ Ճարակօրէն քաղցկեղի, առ բնաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն, չէիք սպեղանի իբր խրատելի առ անչափութեան խարանացն մատուցանել. 'Ի խարսխաց բարձիցս՝ մինչև ցտին կառուցման լրութեան անդամոցս՝ չէ՛ առողջութիւն, այլ ամենևին անբժշկութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանաց արդահատութեան սրտիս վասանդի, որ կարդամն առ քեզ՝ 'Ի նեղութեան։

Ա էրոպին յաւէլուածք չէլին հեծութիւնք՝ նորին հոգոյն, առ նոյն ազէրս ծաղիանաց բանք։ 'Ի խորոց ոգոյ խօսք՝ ընդ սոյ։

* Բան. Յոգ.

1 Լայեալց՝ ամենահայեաց տեսութիւն կենաց բարութիւն յուսոյ, 'Ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց։ Ընդհաս մեծութիւն. անուն ահաւոր. բարբառ կենդանի. լուր ցանկալի. Ճաշակ ախորժելի. կոչումն պաշտելի. բարութիւն խոստովանելի. ազգումն խընկելի. խկութիւն դաւանելի. էութիւն փառաստրելի. գոյութիւն օրհնաբանելի, տէր յա՛ ընդ հօր քում դովեալ և երկրպագեալ, և ընդ հոգւոյդ սբյ բարձրացեալ և վերառաքեալ։ Որ միայն մարմնացար վասեր՝ ըստ մեզ, զի արասցես զմեզ վա՛ քոյ՝ ըստ քեզ. լոյս ա՛մի, յամի ողորմած՝ հզօր՝ երկնային։ Եւ այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ա՛ծ-

ածօրէն հրաշակերտութիւն , աղաչեմ գլխաած , նո-
րոգ հաստատեա։ Օ՜ քոյին պատկերս մեղաք հընա-
ցեալս՝ 'ի քրայս հաղոցաց՝ կոյծակամբ բանիդ , պա-
ղատիմ առ քեզ , վերստին ձուլեա։ Օ՜ խախտեալ
շինուածս քումդ հանգատեան խորանի մարմնոյս՝
պահպանաւ հոգւոյս , մաղթեմ բարերար , 'ի բընա-
կութիւն քեզ մաքրագործեա։ Ա՜մ' հատուցաներ
չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութիւն։ Ո՜ր-
բեալ եմ , ըստ մարդարէին բանի , և ոչ 'ի գինւոյ .
Թափեա զմրուրս անօրէնութիւն՝ թմբրութիւն մա-
հու բաժակիս՝ ազատարար հրամանաւդ՝ ամենակե-
ցոյց , զի մի' զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետ-
նում հատուցմանն։

2 Ո՜ւրդար ես յիրաւունս քո , և յաղթող 'ի դատաս-
տանի . եթէ մահու մատնես , ճշմարիտ են գործք
քո . եթէ դատապարտես՝ աստուստ տիսեալ զտան-
ջողականն կշտամբուի , ստոյգ են հատուցմունք քո .
եթէ յանդունդս խորոց սուզեսցես , թէ զկենդա-
նութիւն շարժմանս բարձցես , թէ զբանիս զօրութիւն
ունայնացուսցես , թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես , թէ զկենացն ճաշակ՝ 'ի քեզ ինքն ամ-
փոփեսցես , թէ զհասարակաց կերակրոյս դարմանս
բարձցես , թէ զաւուրցս հարստութիւն համառօտեսցես , թէ ընդ իջման քաղցրութեան ցողոյ՝ և հուր
աեղասցես , թէ 'ի լրութիւն բանի քոյ սովեցուսցես ,
թէ զանկանջացս դրունս խցցես , թէ զշնորհիդ ձիր
կարեսցես , թէ զգետին յատակի ոտիցս սասանեցուսցես , թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես , թէ 'ի հանրէն աշխարհէ ասի հեղբեսցես ,

թէ

թէ փայլատակմամբ հրոյ պակուսցես, թէ անբժըշ-
կական ցաւոք դատեսցես, թէ դիւաց չարաց մատ-
նեսցես, թէ գաղանաց ժանեաք մանրեսցես, թէ
հողմով ցամաքն հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ
արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան զտար
տաքոն, և սատիկ քան զգեհենն, թունաւորագոյն
քան զարդունեան, տարակուսելի քան զնաւարն, եր-
կիւղագին քան զնորխորատն, ողորմելի քան զմեր-
կութիւն, վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտապան
գոլ սոցա։

3 Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւք
փոխատրութեացն՝ առ ազգակցութիւն մեղանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշարիւք՝ նը-
շանակիչք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստո-
վանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ
ծանօթութիւն խնդրողին։ Որպէս զի ոչ ջերմն սիրով
առ ընկերին կարիս մատուցոյ, յիրաւի՛ նախանձն
վտանգին տառապեալ սառնում։ Եւ զի ոչ զցան-
կականն խրոխտականութի սանձեցի, յարժանի կրեմ
եղկելիս՝ զանզգվանալի զկիզումն։ Եւ քանզի ոչ
սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ՝ ի՛
մթութիւն ըմբռնողական միգին կորստեան՝ վըրի-
պեալ դանդաչեմ։ Եւ զի ոչ խորեցի զմանուանս
փոքունցն յանցանաց, իբր անվնասակարք վարկա-
նելով, պատկանապէս ի խածանողականացն զազիրն
զեռնոց՝ խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կար-
կառի՝ առ կիրս վտանգաւորին՝ այլ առնել նմին, ի՛
դէպ իսկ՝ ըստ դծագրութեան այսր օրինակի, ապա-
կանութեան դբոյ նոսիրեալ մատնիմ։

4 Եւ

4 Եւ որդ՝ ոչ յաճուստ ամենաբարի գանձուցդ՝
ջարիս , և ոչ ի լուսոյդ նշուղեց՝ խաւար , և ոչ
յապաւինութիդ՝ գայթագղութի , այլ ես ինձէն
կորատեան որդիս դոտի զայսոսիկ . մեղանք անօրէնու-
թիւն խնոյ դանձեցին նիւթեցին զայպքանեաց բար-
կութիւն մթերս հոգւոյ . իշխանին մոլորութիւն հընա-
զանդեալ , թողի զտեղի քո՝ նր , ըստ գրոյն խրատու-
յանդիմանութիւն . Եւ քանզի յայտնեցաւ յեռաւստ՝
գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց , և արբ-
կաւ զերեսոք կերպիս՝ անվայելուչ ստուերք ամե-
թոյս , ըստ մարդարէին առակի , տգեղս ցուցեալ զիս
ամենևին՝ իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռ-
նկի , ծագեա յիս զլոյս քաւութիւն՝ մրքայ երկնա-
ւոր , զի թօթափեալ զմեղաց փոշիս , ըստ աւետեաց
ձայնին դարձելոցն ի բաբելոնէ , նստայց վերատին
կանգնեալ ի հողոյ , և ի հատատուն յուսոյդ հիմ-
նացեալ անսասանելի , ըստ եսայեան բանին , զգե-
ցեալ զզօրութիւն բազկի կարութիւն նախնումանք-
րութեն , վասն մեծութիւն փառաց քաղցրութիւն՝ ամե-
նապարգև քոյ ճաշութիդ . օրհնեալ յաւիտեանս .
ամէն .

Ա Երեսին յաւելուած իրիցն հեծութիւն՝ նոքին հսկողք , առ նոյն
աղերս նաղիրս բանի . ի խորոց սրտէց խօսի՝ ընդ ՀՇ .

* Բան . Լ .

1 Տէր տէր՝ անոխակալ և երկայնամիտ . ներող ,
բարեգութ , հզօր , ողորմած . ահա ճշմար-
տութեամբ են գործք քո , և խոստովանեալ

դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւք քո՝ տե-
սողդ ծածկութիւց։ Ընդ երից երջանկաց մանկանցն,
որք կիզանողական բոցովն փորձեցան և ոչ վնասե-
ցան ի բաբելովնի, զնոցա թախծութիւն զերդն հա-
ռաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբե-
ցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի։ Լա՛ քանզի
մաքուր գողով ի վնասուց նոքա, և զայս խոստովա-
նութիւն դոչէին, իսկ ես ընդ նոցայն նովին աղեր-
սիւ ձայնակցեալ ամին ողբոց երգութիւն, և այլ յա-
ւելից՝ ամենապարտս մահու։ Ընդ դանիէլի երա-
նեալ և՝ աբ մեծ մարգարէի, որ ի՝ քում հարազատու-
թեան աղգականութէ տանն յուդայի՝ շառաւիղ
ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրա-
կան բանից պաղատանս, իմովս պատժականութեան
գոչմամբ հեծութեամ՝ և այլ կրկնեցից. ի մէջ դի-
տութեան՝ ոնպատշաճականս դնացի, զարտուղի սը-
խալեալ դժնդակապէս. այս է՝ ամի՛ ամ իրոք մեղանչ-
ելն։ Ա՛ստ սահման կշռութիւն կամայ քոց արտաքս
վազեցի. որ է հաւատի կերպարան՝ բասիր անօրէ-
նութեան։ Ընդխոյն չափոց՝ չարութիւն գործոց՝
լրումն յանձախութիւն նիւթեցի. որ է ճշգրիտ պատ-
կեր յանցաւորութիւն։ Պատուեցար, և ոչ զարհու-
րեցայ. արդահատեցեր, և ոչ երբէք լուայ. որ է ա-
պստամբութիւն յայտնի նշանակ։ Քեզ արդարութի
հանդերձեցեր՝ բարերար, և ինձ ամօթ և պատիկ-
ռանս պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և
ինձ նախատինս յարմարուորս. քեզ քաղցրութեան
յիշատակ, և ինձ մաղձ քացախեալ՝ ի կատարածի.
քեզ բարեբանութի անլռելի, և ինձ ձայնս ողբոց

աղա

աղաղակի. քեզ օրհնութիւն երգոց խնկելի, և ինձ մերժումն տարագրութիւն անյուսալի. քեզ իրաւունս բաղմարժանիս, և ինձ պատասխանատուութիւն ամենավարանս. քեզ բարձրութիւն անճառ դովեստից, և ինձ զանձիւն լիցելոյ՝ պատիժ ձաղանաց։

2 Այս արդ՝ ընկալար դու բարեաց ընտրութեանց անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրէր կաց պտղոց վերս առեալ ըստ քեզ, և ես զնմոյս աստէն առ սմին պարսաւանս յոգունս՝ կրկնակի բարդեալ ինձ ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն մաղթանաց՝ այս էր յանձնառութիւն, իսկ ինձ զոր հիւսեցիս շարս և տոգս բանից դարովականաց, որ քանզի՞մ դժնեայս՝ յաւէտ վերիպեցայ։ Ո՞՛ղորեցայ անառակ ընթացիւք՝ 'ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսիլ՝ 'ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի՝ 'ի պատկառելեացն գործոց։ Փքացայ, վերացայ, որ յեւ սակաւ մի ժամանակի՝ 'ի հող մահու եմ իջանելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ և ո՛չ զգրաւական հոգւոյս՝ տուր և առութիւն ընչայս՝ ունիմ 'ի ձեռին։ Ամբարտաւանեցայ՝ փոշիս ընչաւոր. ամպարհաւաճեցայ՝ կաւս ձոյնաւոր. հպարտացայ՝ հողս անարդութիւն. 'ի վերս ամբարձայ՝ մոխիրս մերժելի. բաղուկ կառուցի՝ բաժակս մանրելի։ Տարածեցայ առաւել իբր վեհ, և դարձեալ իբր զհեղքեալ՝ առիս ինքն ամիսոփեցայ։ Խարկութեն բոցով ցողացայ՝ տիղմս բանաւոր. իբր զանմեռ ոք՝ մեծամտեցի, որ ընդ քառոտանեաց մահու եմ փակեալ։ Զ՚իրկս արկի կենցաղոյս սիրոյ, և՝ 'ի քեզ թիկունս՝ փոխանակ դիմաց դարձուցի. 'ի թռիչս մտաց՝

ընդ

ընդ խաւար խորհրդոց սլացայ. զանարատ հոգիս՝
մարմնոյս փափկութիւն յաւէտ վտռեցի. զզօրութիւն
աջական կողմանն՝ տկար աթարի, ահեկանացս կայից
ուժգնութիւն տալով՝ յաղթեցի։ Օ՜ քեզ իսկ տեսի
հոգացեալ վա՜ խմ, զոր չէ՝ աստ դրեալ, և ո՛չ պատկա-
ռեցի. իբրև զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան
բանին առ Եփրեմ, 'ի նախնին իմ սովորութի։ Յաղթ-
թարանն վայրի՝ ընդ պատաղմունս այսր կենցաղոյս
շրջանակեցայ. ո՛չ կացուցի յոտին զերիվար մտացս՝
երասանաւ բանին։ Ընդ հին չարութեցն՝ նորոգ
ինքնաստեղծութիւս գտի. անուրս, ըստ յոբայ, ծա-
նուանս և անտանելիս՝ ինձէն ինձ սոսկացուցի.
առիւծ անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ
արարի. իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակ-
արկուին, 'ի մարդկանէ համարոյ եղծայ. իբր զհան-
դերձս ինչ ապահարիչ, ըստ եսայեան բանին, զոզ-
բացայ. որպէս զթրծեալ ման խեցեղէն՝ փշրեցայ ա-
նարծարծելի. ըստ բամբասանացն եղումայ 'ի մարգա-
րէէն, զոորբորդ չափն անօրէնութեան սատակման՝
ինձ պատրաստեցի։ Այս զինչ ստութի առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս, քանզի զվրանն իսկ դի-
ճանուէր մողբայ՝ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն
ժառանգութիւն, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ
ինն օրինակի նմանակիր ձևակերպութիւն, ոպ առակ
պատկերի սատեղն ռեփանայ բաբելականի՝ յիսրայե-
լէ պատուհեցեալ ցուցաւ 'ի սինայ։

3 Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակութիւն
դարձեալ՝ փոխեցայ, զրկեցայ, երայ, հեռացայ, բա-
ժանեցայ, և անպատուաստելի կտրեցայ, արդ ընկալ

զնս տէր՝ վերստին կերպարանել 'ի պատկեր հոգւոյ, զանարժանս կենաց՝ իբր զմահապարտս. իբր զբարգործս. իբր զպատկառեալ. իբր զկոխան եղեալ բանսարկուին. ոչ զանբժշկելի մանրեցեալ. ոչ զհասեալ յատակս մահու. ոչ զգարշեցեալ. ոչ զնոտան դառնալ քո կոչմանդ. ոչ միանգամայն 'ի կորուստ վարեալ. ոչ դեգերեալ. ոչ վանեցեալ. ոչ տարակուսեալ. ոչ թշնառացեալ. ոչ վհատեալ. ոչ կործանեալ. ոչ խորտակեալ. որպէս բեկեալ. ոչ զթաղծեալ. ոչ յոգի տրտմեցեալ. ոչ թշնամանեալ։ Այլ դարձեալ ակնարկելով քո՝ գլթած, մարդասէր, հրաշագործ, 'ի յաղբերս բանիս՝ որոյ զղջացեալ. ոչ խոստովանեալ. ոչ 'ի յոտս քո դիմեցեալ. ոչ զապաշխարեալ։ Որ կշռես՝ գրես՝ և մեծ համարիս զհառաջ հոգւոյ, և զազգումն շնչոց հեծութեան. զկսկիծ շրթանց, զպապքել լեզուի, և զտխրականուն երեսաց. զկամն խորհրդոց, և զյօժարութիւն խորութեանս սրտից։ Որ փրկութիւդ ես անձանց, և տեսօղ՝ ոչ գործեցելոց. և ստեղծիչ բոլորիցս, և բժիշկ վերացս անբերեալութիւց. պաշտպան յուսացելոց, և բարեխնամօղ՝ որ ամենեցուն։ Այս քեզ փառք յամի, յաւիտեանս. ամէն։

Ա Էրուսէն յաւէլու�ՀՐՄԷն հէծուրէ՝ նորին հանդէ, առ նոյն
աղէրս մաղԼանաց բանէ։ Ի խորոց սրտէց խօսի՝ ընդ սոյ։

✻ Լան. ԻԸ.

1 Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնա-
գրբաւ ի մահ՝ ոչ կացի երբէք ի յոտս
մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ
գրոյն։ Եւ քանզի ոչ փոփոխեցայ ի նախակարգե-
լոցդ, և ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդէր ոչ
զնոստորնական հետոցն խաւարայնոց զդէմս ցուցից՝
ի սահման կարգի այսր ընթերցուածոյ։ Զոր որս
ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի
բանիդ երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ՝ ան-
փոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին
գարձեալ աստանօր՝ զմնացեալ չարութեցն զբիծս,
զոր յաջորդաւդ է իմանալի։

2 Զատար ժանտագործս արժանապատիժս՝ անձեցուն
արարի գնացիւք անսաստութեամբ՝ զգունդն բե-
լեարայ։ Ապաւս կայթիչ՝ և ցոյցս վաղեց՝ խաղալ-
կացն դիւաց դարշելեաց ճարտար խաբողաց՝ ծու-
լութեամբ իմով շնորհեցի։ Զանս գաղտնիս՝ և խոց-
ուածս անյայտս՝ ի կործանեցելոցն դահճաց ընկա-
լայ։ Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն քի, քան թէ
անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի։ Զ՝ սան
իմոյ հիքոյս անօրէնութեան՝ անուանդ յի հայհոյի
ի մէջ այսականաց, ոմն վա՜ խարայելի՝ ի մէջ հեթա-
նոսաց։ Հարուածս հարուածոց՝ վնասակարս ապա-
կանութեանց ժանդոյ և թրթրոյ՝ և այլոց կերջաց
վատնողաց, զծաղիկ հոգւոյս, ըստ սրբոյն յովելեայ

հրա

հրաշական ողբոցն, որ 'ի ցոյցս երկրի վա՛ խորայելի՝ յառակս հինից և ջարաց հոգւոց, յիս ինքն անկեցի. ստեղծանել զնո՛ պատրաստեցայ, քան թէ սատակել. Բիւրս կուտեալ հաւաքեցի անձին իմում՝ մարտիկս մահազէնս. կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անիրաւս և անպատկառելիս. ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումն և անկուռելիս. դառինս ինձ առի մասունս՝ ընդ քաղցրաւենեացն ճաշակաց. առ ստացօղն՝ միշտ նենդաւորս, և առ բանսարկուն՝ յաւէտ հաւատարիմս. Աւա՜ղ աղէտիս, վի՜շտ վտանգիս, խաւա՛ր ամօթոյս, մո՛ւթ պատկառանացս, զնմրդ և առ բանիս յանդիմանութիւն համարձակեցայց. մեծ է ձայնս դուժի, և անբերելի բոլոքս աղաղակի. Բանզի թէ զհոգիս էր զնմ տեսանել, ոգեղջ՝ և նո՛ւազ՝ և ամենևին ներդեւեալս, ցաւովք հեծութեա՛ն՝ 'ի վերջինս վարեալ վարանումն, և մրճոտեալ աղաղեալ գունով զազրութեան՝ իբր զպաշտօնաւար մեհենի. վա՛ զի նոյն է սպաս տանել ճուլեալ պատկերի՝ և մեղաց ախտի. Ա՛յդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. եռու զբաժինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ, ըստ մարգարէին՝ որ առ քահանայն խորայելի ամբաստանութեան.

3 Ա՛ռ զնմրդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս. և իբր անոմանեցայց բանական՝ անբանիցն յիմարութե՛ կցորդեալ. և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՛ր համբաւեցայց զգայական՝ զնմանատիցս դրոնս փակեալ. կամ որովք ցուցայց ապաւորութի

նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մատչեալ. նաև ոչ շարժողական, և կամ շնչական ունիմ անուանել, թողթէ հոգեկան, կամ մտաց ընդունակաւ. անպիտանս՝ ի թիւս անօթոց. անարդս՝ ի քարինս ոսմոց. արհամարհեալս՝ ի կարգս կոչեցելոց. վատթարս՝ ի յաղագս հրաւիրելոց. արհաւրօք մահու պակուցեալս, անխրախուսելի ի բոլորեցուն՝ ցաւովք և տանջանաւքն երուսաղէմի, ըստ երեմիայի բանին խրատեցեալ. պակասեալ աւուրցս՝ ի հեծութէ, և ընթացք ամացս՝ ի հառաչմանէ, ըստ նոյ մարգարէացս երգողին. Իբր ասուի ի ցեցոյ՝ և փայտ ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, ի խիթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդոյ մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան դատոյ. իբր զանպառաւօտեայ՝ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ճշմի, սպառեցայ։ Ա՜յլ ոչ՝ ի մարդ ոք ունիմ զյոյս, եթէ անիծեալ՝ ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ, այլ՝ ի քեզ՝ տէր իմ ոգեսեր. որ ընկալեալ՝ ի քոյդ դթութեանց բարեաց անբաւից, և՝ ի բեւեռելոյն ժամու՝ ի խաչին՝ մաղթեցեր մեծդ ողորմութեամբ առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Ա՛րդ՝ շնորհեա՛ ինձ յոյս քաւութեան՝ կեանք և ապաւէն. և՝ ի տուր շնչոյս թշուառի, առեալ զոգիդ քո բարի։ Ա՛յս քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ զորութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Ա Էրոպին յաւէլուշած կրկին հէծուլէ՝ նորէն հոկողէ, ու նոյն
աղէրս մաղխանաց բանի։ Ի խորոց սրտից ելօր՝ ընդ ոչ։

✻ Բան. Լ.

1 Զարձեալ ոյրաբանեցիլ՝ ի նոյն շարունակ
բարդեալ զկշտամբանացս եղանակ՝ դարձ-
վեալ անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին
կացուցեալ նովին պատկերաւ ի նոյն պայմանի. թէ-
լուս գրեսցէ ինձ ամենագեղն՝ զոյս յանդիմանու-
թեան դատակնիք՝ կարծեցուցանողականս բանի՝ ճշգ-
մարիտ խոստովանութի հանայնից գործոց՝ դաղա-
նութեանց չարեաց։

2 Զոմն ձիս խօսնական՝ կարծրերեսիս սանձակուսոր
արձակերատան. յովանակս անհամբոյր՝ վայրենական
և անկրթական. երինջս առողական՝ անուղղական և
անվարժական։ Զարդս մեղեգնական՝ տարտղրական
և կորստական. մանուկս մեղանչական՝ անխրատական
և վարատական. տնտեսս մահապարտական՝ տարտա-
մական և անգործական. բանականս անասնական՝ գա-
զանական և անմտաբրական։ Զիլթենիս ամբարական՝
անպտղական և կործանական. մարմնոս հոգւոյս իմ
թախծողական՝ դատողական և տանջողական. խո-
ցեալս անբժշկական՝ անխնամական և անկանգնա-
կան։ Զակի շարս կայսերական՝ արդ վատնական
և անգտական. ծառայս սխալական՝ փախստական և
թշուառական։

3 Զհա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն
և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտախաբ,
կամակոր իսկ՝ և սրտաբեկ. ուշամոռաց և հանձա-

բազում։ զգայազիրկ և խմաստասպառ։ յայրատատես
և եղեռնալուր։ Լաս աստուստ և անդուստ բընա-
ւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք վնասեալ,
ոչ միով ի՛ւիք տեսութիւն 'ի գործ ընտրութիւն քեզ
պիտանացուս՝ տէրդ բոլորից, ողբամ զորովայնն, որ
երկնեացն զիս։ աշխարեմ զատինան, որ դիեցուցին։
ընդէր ոչ մաղձ մակաբդեալ ընդ կաթինն ձգեցի,
և զիարդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեան՝
ջամբեալ մատուցաս։ Օ՛ի եթէ ես ինձէն անձին
խմամ դժնեայ դառախաղ համբարձայ այսքանեաք
բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութեանս
անխոնարհելի, ոչ ոք 'ի յերկրածնաց ասի՝ զիս ո-
զբեսցէ։ զամ խայտառակեցիս։ զբնաւ էութիւնս
դառեալ տուժեցիս։ զհամօրէն զվնասակարացն ըզ-
դունդ՝ դանեցիս։ զնոցողացն զենոհորութեց դա-
տախազեցիս։ զգայականացն գլխաւորութիս կշտամ-
բեցիս։ Ո՛եղայ ամի՛ յամի, ողբմեա գթիած։ ոչ
նոր ինչ դտեր յիս զյանցանացս պարտեաց մառա-
խուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պար-
տաւորութեան՝ անկցելի ձորձով սխալեալ առաջի
քոյ անփոփոխելի։ և դու միայն իսկապէս գթած
օրհնեալ մարդասէր, ընդաջմէ խնայս փրկութիւն կան-
խեալ ներութիւն անայլայլելի։

4 Ընդ՝ մատո խնամակալ՝ հղօր՝ երկնաւոր՝ բարի՝
ամենից հաստիչ յոչէից՝ զբանիդ զօրութեան
խմաստից կայծակն՝ 'ի գործի ազդման լեզուիս շար-
ժութիւն, առիթ մաքրութիւն յամենուստ զգայակա-
նաց գոյաւորութեց յիս մասնաւորելոց՝ քո ձեռա-
կերտից։ սոքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք,

կը-

կրկին հանդերձանքդ , անպակաս ձայնիւ , անհատ բարբառով , քեզ վերընծայել դոհաբանութիւն 'ի փառս մեծութեան հօրդ քոյ՝ այլ մերոյ , յաւիտեանս . ամէն ։

Ա ՀԷՐՈՊԷՆ ՅԱՒԷԼՈՒԱԾ ՀՐԿԷՆ ՀԷԾՈՒԹԷ՝ ՆՈՐԷՆ ՀՍԿՈՂԷ , ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՐՈ ՆԱՂԼՈՒՆԱՅ ԲԱՆԷ ։ 'Ի ԽՈՐՈՅ ՍՐՊԷՆ ԽՕՍՔ՝ ԸՆԴ ԱՅ ։

* ՐԱՆ . ԻԳ .

1 ՏԷՐ ԱԾ ԱՄԻ , ՁՕՐԱՒՈՐ ՅԱՄԻ . ԱՆՊԱՐԱԴԻՐ ԵՎ ԱՆՎԱՅՐԱՓԱԿ ՏԵՂԻ ԱՄԵՆԵՑՈՒՆ . ԲՈԼՈՐ ԻՍԿՈՒԹԵԱՄԲ ՀՈՒՊ ՅԱՄԵՆԵՍԻՆ . ԱՆՈՒՐԷՔ ՎԱՅՐԻՑ , ԵՎ ՉԷՔ ՍԱՀՄԱՆ ԱՌԱՆՑ ՔՈՅ ։ ՈՉ ԵՐԵՒԵԱԼ ԵՐԲԷՔ , ԵՎ ՈՉ ՏԵՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՔՈ ԾԱԳՄԱՆ՝ ԼՈՒՍԱՒՈՐ ։ ՓԱՌՔ ԱՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ . ԱՆՈՒՆ ԱՆՀԱՍՈՒԹԵԱՆ . ԿՈՉՈՒՄՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ . ՁԱՅՆ ԱՆԲԱՒՈՒԹԵԱՆ . ԻՍԿՈՒԹԻՒՆ ԱՆՔՆՆՈՒԹԻՒՆ ։ ԱՆՄԱՌՉԵԼԻ ՀԵՌԱՒՈՐ , ԵՎ ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ ՄԵՐՁԱՒՈՐ ։ ՏԵՍՕՂ ՀԵԾՈՒԹԻՒՆ . ՆԵԼԿԱՏԻՋ ԹՇՆԱՌՈՒԹԻՒՆ . ՄՕՏԱԿԱՑ ԹԱԽԾՈՒԹԻՒՆ . ԱՄԵՆԱԲՈՒԺ ՀՆԱՐ ԱՆՃԱՐՈՒԹԻՒՆ . ՀԱՅՐ ԳԹՈՒԹԵՑ . ԾԱԳՕՂ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ . ԱԾ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ։

2 ՅԱՅԵՍՑ ՏԷՐ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ՝ 'Ի ՊԱՏԿԵՐ ՎՇՏԱՑ ԴԱՌՆՈՒԹԻՒՆ՝ ԲԱՂՄԱՎԱՆԱԿ ԿՐԻՑՍ ԿԱՐԵԱՑ , ԶԸՐ ՀԱՆԴԷՊ ՔՈ ՏԱՐԱԾԱՆԵՄ . ԿՑՈՐԴԱԿԻՑ ԼԵՐ ԲԺՇԿԱՊԷՍ , ԵՎ ՄԻ՝ 'Ի ԽՈՅՂ ԸՆՏՐՈՒԵ ԿՈՉԵՐ ԴԱՏԱՒՈՐԱԲԱՐ ։ ԱԲԴԱՐԵՒ ՄԵԾ Է ՎՏԱՆԳ ՏԱՐԱԿՈՒՍԱՆԱՑ ՅԱՒՈՑ՝ ՅՍՕՐ ՎԱՐԱՆՄԱՆ , ՅՈՐԺԱՄ ԻՆՁ ՄԱՐՄԻՆՆ՝ ՄԵՂՔԸ ԳՐԱՒԵԱԼ , ԵՎ ԱՆՁՆ՝ 'Ի ԳՈՐԾՈՅ ՉԱՐԵԱՑ ՈՉ ՄԵԿՈՒՍԱՑԵԱԼ . ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՆ ԳՈՐԾԻ՝ ՍՈՎՈՐՈՒՔՆ ԿԱՐԵԱՑ ԿԱՊԵԱԼ .

ՁԱՆԴ-

զանգուածն հնդերձանաց՝ մինչցու կրիւք շաղախել.
զգայութիւն արտին խմաստից՝ խեթիւ խոցոտեալ.
ակնկալութիւն բարեացն՝ բնաւին բարձեալ.
և 'ի բանականութենն՝ ընդ անասունս դասակարգեալ.
և զաղէր գարշութի՝ ընդ գոյութենն շարամանեալ.
և տեսականացն ողջ եղով՝ խմանալիքն վիրաւորեալ.
Այլ 'ի սատկուէ յանցանացն յշակի՝ յաւէտ յուսահատեալ.
և տաղնապաւ նախադորձելոցն՝ միշտ տարակուսեալ.
և յստակութիւն աղերսին՝ խպաւ պղտորեալ.
և խղճիւ մտացն յուսմանց՝ կրկին ճենճերեալ.
Այլ ձեռն 'ի մանի գործոցն՝ զլեռնոցն հեռազօտեալ.
և կերպ 'ի յոգի դիմեալ՝ ոսք 'ի վերջ կոյս յետահարեալ.
Այլ գիտութեամբ էիցն՝ 'ի չէիցն միշտ խաբեցեալ.
և 'ի մտացն մարտ՝ 'ի փոքունցն յաղթահարեալ.
Այլ 'ի թառանչ սրտին՝ հաղագին դուռն հրդեհեալ.
և խոնաւ զօրութիւն քմացն՝ ամ ուրեք տոչորեալ.
և անարև միդով՝ յամենայն մասանց պաղփակեալ.
Այլ լայնուի ակնկալուենն՝ ամենևին խպաւ ամփոփեալ.
և անբերելեացն ասյժ՝ 'ի զգաչիսն տպաւորեալ.
և եղկութիւնն կորստեանն՝ 'ի յուշանդ եկեալ.
և դատակնիք հատուցմանն՝ 'ի դիւանի մտացն դրեցեալ.
Այլ բարերարին ակն՝ 'ի ցասումն իմն երևեցեալ.
և լոյսն բնութիւն՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ.
և ահաւորութի էին՝ ը փոքրկութի բնութեան ընդ հարեալ.
և միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկացեալ.
և իրաւանցն վիմգ՝ զարժանիս մահու կոչկոճեալ.
Այլ որ իմն է տաղանդ՝ յանառակս՝ ասէին կորուսեալ.
և պատուական իրին ստացուածք՝ իբրև անարդ՝ յերկրի թաղեալ. և տաժանմանցն արդասիք՝ ծուլութենն

մթամ ծածկեալ, և իբրև զ'ի բաց բարձեալ նշմա-
րան ճրագի՝ չերևեալ։ Եւ պատասխանարան լեզ-
ուի՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ. և անհամբոյր
շրթանցս դրուի՝ օրինաւոր դատմամբ պապանձեալ։
Եւ յուզմունք մտացս՝ 'ի զանազան մասունս ցրն-
դեալ. և զկեալն 'ի վր օդոյն՝ ոչ ինչ դիտացեալ.
և 'ի կշռութի բարւոյն ընտրութե՝ յիմար երևեալ.
և ընթացք ելիցն՝ նհանգմամբ չարին խափանեալ.
և վառարան իւղոյն՝ ածիւնովն հնոցի լցեալ։ Եւ ան-
ուանս գիր՝ 'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամ-
բանք ընդ երանութե՝ անդ արձանացեալ։
3 Եթէ զենուորս տեսանեմ, մահս ակն ունիմ.
եթէ պատգամաւոր, խստութե. եթէ մատենա-
գէտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անի-
ծից. եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափ-
մանն. եթէ բարեկրօն, յանդիմանութե. եթէ ապա-
ռում, կսկծման։ Եթէ ջրոյն ընտրութե փորձիմ,
խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատա-
կիմ։ Եթէ բերս նկատեմ բարութե, 'ի կարծեաց
չարեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կո-
րանամ. եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ
սակաւ մի թնդիւն, ընդոստիմ։ Եթէ 'ի խրախճանս
ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդի-
մանն լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցուն բանի կը-
չիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ։
Եւ ըդ՝ սյաքան ամենաթշուառ և ողորմագին տարա-
կուսանացս՝ 'ի վր միմեանց բարդելոց, որք զստորև
զդայականաց սրտիս գոյութեան՝ 'ի ներքուստ ան-
տուստ անբժշկական ցաւոք՝ անհրաւակի նեռիւք խո-

յոտեալ, անարտաբերելի մշտակիր յարամնաց հանապազամուխ բևեռեալ աստուստ ընդ հոգւոյս, լը-
ցեալ շարաւով կրկին հարուածով, վասնզ սատակման մահու դուշակեն։ Զարարիս մթերիցս պատեալ
զերկաթով դաղտնեացս ծածուկք՝ ազգեն ինձ սադնապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս՝ ընդ ելս շընչոյս տուր և առուքեա։ յորոց նեղութեց՝ չարաչար ձնշեալ աղաղակ ձայնիս՝ խառնեալ արտասուօք, կողկողագին թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հընարաւորութեան, յերկրաստեղծիցս նահատակաց՝ ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութիւնս և ես ընդ նոսին՝ արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրողք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի սորնայնոցս աստի՝ յերկինս առաքեմ։ Շնորհեա տէր անդորրութիւն կենաց հանգստեան՝ ողորմելի վաստակեցելոյս՝ 'ի յընդունայն երկրագործութիս։ Համայնդ յամենայնում։
Ամի՛ն ստացեալ քեզ փառս։

Ա Երուսէն յաւելուածք կրկին հեծութիւնք՝ նորին հանգուցի, առ նոյն ազգրս նաշխանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աց։

* Բան. ԼԱ.

1 Լսարդ՝ որոց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ աղերսել, արքայութեանն՝ յորմէ վրիպեցայ, եթէ փառացդ վայելչութեան՝ յորմէ զրկեցայ, թէ կենացդ անմահականաց՝ յորմէ հեռեցայ։ թէ ընդ հրեշտակին պարակցութեան՝ յորմէ տրոհեցայ, թէ ընդ արդարսն մասնակցութիւն՝ յորոց ձեղքեցայ։

թէ

Թէ ՝ուռ որթոյն կենդանւոյ՝ յորմէ քանցեցայ ,
Թէ ոստ մանկոյն բերկրութեան՝ յորմէ գօսացայ ,
Թէ ծաղիկ փառացն շնորհի՝ յորմէ թափեցայ .
Թէ պանձանացն ժառանգաւոր՝ յորմէ կորացայ ,
Թէ հայրենի ծոցոյն հարազատ՝ յորմէ ընկեցայ ,
Եթէ զգեստուն լուսոյ պարծիմ՝ յորմէ մերկացայ ,
Եթէ 'ի ստացօղ դուրձին յուսացայց՝ յորմէ խորթացայ .
Եթէ 'ի լուսոյն խղճս դիմեցից՝ յորմէ մեկնեցայ ,
Եթէ յիսուսի յոսկերան յօդիմ՝ յորմէ մերժեցայ ,
Եթէ 'ի թևս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ .
Եթէ յապաւէնն ապաստանեցայց՝ յորմէ խեթացայ ,
Եթէ 'ի փրկութենն նորոգութի՝ յորմէ մահացայ ,
Եթէ 'ի զգաստութենն զուարթութի՝ յորմէ էս լքայ .
Եթէ 'ի կանոնն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ ,
Եթէ 'ի սահմանն հաստատական՝ յորմէ սահեցայ ,
Եթէ յանշարժ վիմին պնդութի՝ յորմէ սասանեցայ ,
Եթէ 'ի շարս գումարտակին՝ յորմէ հոսեցայ ,
Եթէ 'ի քաղաքն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ .
Եթէ հանապազորդեան հացին աղօթեմ՝ զոր ո՛չ վատակեցայ , Եթէ փոխադրութի երկանցն խընդրեմ՝ յոր ո՛չ քրտնեցայ , Թէ պարգևաքն պսակեցայց՝ յոր չհանդիսացայ . Թէ արձան ինձ կենաց գըրեցից՝ յորմէ ջնջեցայ , Թէ զերախտեացդ ձիր յիշեցից՝ զոր միշտ մոռացայ :

2 Ո՛հ՝ հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն . տիրեցայ 'ի բորոտութեանն գարշութենէ , Համոյն ախտացեալ՝ ամիւ սպառեալ մարմնոյ՝ ապականութենն շրջապատեալ՝ մեռայց ես : Ոչոյզն պալար՝ փայլունակ տգեղ ընացեալ , մնացուցած ինչ պա-

պահեալ նախանակ երկրիմի կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ, պարծանացն նշոյլ՝ ամենևին ինձ շինեալ. փրկութիւնն մատնեցաւ. բարին ստոնեցաւ. ելք կենացն՝ բնաւին փակեցաւ. մըխիթարութիւն բարձաւ. դատաստանին ատեան մերձեցաւ. թոյնք մահուն ինձ արծարծեցաւ. սպանեալն՝ կրկին ինձ կենդանացաւ. լաստին դադարք՝ վիմոք խցաւ. շաւիղն յուսոյն՝ կուրացաւ. շնորհին ծածկոյթ՝ յինէն մերկացաւ. փառացն վայելչութիւն՝ ստոնեցաւ. հանճարն առաջնորդական՝ խափանեցաւ. կշտամբանացն փուշ՝ բազմացաւ. անօրէնութիւն ուղէշ՝ ծաղկեցաւ. բոց դեհենին՝ ինձ բորբոքեցաւ. ծառայութեն լուծ՝ սաստկացաւ. տարկութեն կապ՝ զօրացաւ. ունօղն յարկին կառուցման՝ ահա անկաւ. բարձրութեն վստահարան՝ կործանեցաւ. ընտանութեն միաւորութի՝ անջրպետեցաւ. սրբութեանն սիրօղ հոգին՝ տրամեցաւ.

3 Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութի, տանջանս՝ խեթս՝ տխրութիս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելս, տարակոյս անյուսադրելս, ամօթանս անպարուրելս, խայտառականս անվերարկելս, պատկառանս անհամարձակելս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն ուղևորութե՝ ապաձեռն անթոշակութիւնս, իսկ դու փրկութի զօրութի և օգնութի, ողորմութի լուսաւորութի քաւութի և անմահութի՝ տէր յա՛ք, որդի՛՝ կենդանույ, արարիչ երկնի և երկրի. որ ընձեռեաս ջուր պասքելոցն՝ 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր,

եր-

երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու. պաշտպան աննախանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լուսթիւն աննուազ, երանութիւն տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո՛ քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատս ըստ պատուիր քո հոգի, զի քև վերստին հաշտեալ՝ յիս դարձցի։ Այլ՝ ի ձեռն քո՝ խրոմն կամաք մնքուր նուիրեալ՝ զօրեղն ինքնութիւն զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին՝ նովնիմբ միշտ՝ ի քեզ՝ շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ ի քեզ միանալ անբաժանելի։ Այ՜ քեզ՝ ընդ հօր քում՝ հոգւովդ սրբով՝ երրեակ անձնաւորութեդ՝ ի միում բնութեանդ՝ ի մի ՏԾՈՒԹԵԱՆ՝ փառք, և՝ ի ստեղծականաց էից՝ գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից։

ամէն։

Այ Էրոպէն յաւէլուածք էրէն հեծու�՝ նորէն հոլոզէ, առ նոյն ազէրս մաշ Լուսոյ բանէ։ Ի խորոց որոց խօսէ՝ ընդ այ։

* Բան. Իգ.

1 Բայց քանզի՝ ի վերոյ այսքանեաց գերութեց ամենաթշուառ վտանգաւորիս՝ մի զմիով եկ և էլս առնելոյ, զոր զկերպարանս անցիցն՝ ի մասնէ վերաձառեալքդ նախագրեցին, ուստի և փոխեալ զերանակ բանիս՝ այլ՝ ՚ջ զերկութիւն աղէտիս։

2 Այն զի ծոմէ ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք՝ յոյժ նմանագոյն. յորում կոհակք բազմք անթիւ

գիմեցմանց՝ տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝
մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի։ Զոր ե-
սայիաս մարգարէ՝ զյանկարծադէպ կատարածն, որ
'ի պարսկականն հինից՝ երուսաղէմի և սամարիայ կոր-
ծանմանն, նմանութիւն այսր օրինակի կերպաւորե-
ցոյց։ որ և առ իմն հոգևորական խորտակումն զու-
դաձայնել՝ ոչէ սխալական։ Քանզի մինչդեռ չը-
հէի ես յանհոգութիւն՝ անտարակոյսն վստահութիւն,
դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով առ խորոց
փոքր միջոցին, որ 'ի մէջ հանգստեանն և աշխատու-
թեան, իբր այն թէ հասեալ լցէ ձմեռն՝ յամարայնի,
բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքալեանն դիմակ-
ցութեամբ, ամբոխեաց զհանդարտութիւն։ Ուստի
նաւն՝ 'ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտակեցաւ։
Թևոցն ձեռնարկութիւն՝ քայքայեցաւ։ կայմն ամ-
բարձման՝ 'ի կայից իւրոց խլեցաւ։ առագաստին թըռ-
չարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ։ շին-
ուածոյն շուք՝ անզարդեցաւ։ առասանք ձգողակա-
նացն՝ խզեցաւ։ տեսարան գլխոյն դիտակի՝ խոնար-
հեցաւ։ ապաւանդակին պարան՝ կտրեցաւ։ ապա-
ւինութիւն խարսխին՝ լուծաւ։ լուծք ստուարք ա-
մոլեցն կցորդութիւն՝ բաժանեցան։ սամիք ուղղացն
հեռոց՝ գալարեցան։ լաստ հիմանն հաստարանի՝ ըն-
կղմեցաւ։ ղեկացն կառուցմունք՝ անդրէն սուզան։
ջրոցն յարմարուն՝ պակասեցան։ ողնափայտին պա-
տապարան՝ խակոյն բեկաւ։ կապարանք զրստին հաստ-
ուածոյ՝ յօշատեցաւ։ դոգք ամիոփման ծոցոյն կազ-
մածոյ՝ անարդեցան։ խելք շրթանցն եղերաց՝ խախ-
տեալ ոստեաւ։ պաղպաջունք բազմականացն՝ անկեալ

բար-

բարձաւ. Վանդակապատին վայելչութիւն՝ յատակեցաւ. գահաւորակին հանդստարանն՝ շինութեցաւ. մածմունք տախտակաշարք՝ 'ի միաբանութեց միմեանց անջատեցան. հեղոյսք պնդման բևեռացն՝ քարշեցան։ Ա.ղբասիք իրին՝ յիշատակարան ողբոց ինձ նը մանեցաւ։ 'Լաւուղիղն՝ հանդէպ նաւին դեգերեալ ողբոյ, ձեռն 'ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ 'Լշմարք սակաւ մնացուածոցն՝ 'ի ծայրէց ծփմանց ազդելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ։ Վա՜ղ ի թէ զբարի նաւապետն՝ երկնաւորօքն զօրօք՝ յաշխարհիս ծովու առ 'ի զխորտակեալս իմ տապան իմանալի դոյութեանս՝ առցէ աշխարեալ բանիս յարմարութիւն, ոչ ինչ վրիպեսցէ 'ի ստուգութէ։ Վրանցն արդարև երայ բարեգութն տէր՝ յառակ մարդկութես՝ զթաղեալ ազգակիցն. երայ առ նմին և զերուսաղէմ մոլեալ, և զյուդաս մոլեգնեալ. յորոց երկուցն՝ կորեաւ վստահութի՝ յօրինակ նմանութէ աղաւոտեալ նաւի. իսկ միւսն՝ հասեալ յատակս անդնդոց, առասան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանքոյթն արտաբերեաց խաղաղութի։

3 Ա.ղբ՝ իցէ՞ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ՝ նորոգեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զնշրեալս նաւ ողբալի հոգւոյս՝ ողջացեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զյոքնաթախիծ սիրտս վշտացելոյս՝ բերկրեցեալ։ Ա.ղբ՝ իցէ՞ ակն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութեան՝ կրկին հանդերձեալ։

Իցէ՞

Այլ արդեաք թէ տեսից զքակտել տաղաւար թըշ-
ուառացելումն՝ միւսանգամ կանգնեցեալ։ Այլ
արդեաք յուսալի նայել զտարամերժեալ գերիս՝ ա-
զատեալ։ Պաքէն գուցէ՞ ակն ունել՝ զանկեալս 'ի
շնորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ։ Արդեաք
տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութիւն՝
յողորմութիւն ինձ երևեցեալ։ Թէ տեսից երբեք
զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժպտեցեալ։
Արդեաք լուցայց ընդ ձայնի գուժիս՝ աւետեաց համ-
բաւ՝ ինձ առաքեցեալ։ Արդեաք տեսից զբիւրա-
կործան վնասեցեալս անօթ՝ կազմեցեալ։ Այլ թէ
տեսցեն պատուհանք աչացս իմաստից՝ զմուրհակ պար-
տուցս իմոց՝ պատառեալ։ Թէ յայտնեսցի՞ օրն
իմ անձկութեան՝ շնորհին քաւութեամբ բարոք ինձ
ծագեալ։ Արդեաք մտից 'ի խրախճանութիւն խո-
րանին լուսոյ՝ քև առաջնորդեալ։ Այլ թէ կեն-
դանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիելի, ցամաքեալքս
'ի կենդանութեց՝ եկաւորութիւն ազդողական շնչոյս՝
զօրացեալ։ Այլ թէ յաւելից հայել 'ի տաճար աբ-
քո, աղաղակաւն մարդարէին 'ի պորտոյ կիտին, հեր-
քեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ։
Թէ լինիցի խաւարանունդս մթացելոյ՝ ծագ-
ման առաւօտ։ Թէ հասցէ տեսանել զտագնա-
պեալս մշտասառոյց՝ յերդանակս դարնանն մօտ։ Թէ
տեսից զցօղ անձրևոյն՝ կանաչացուցանօղն հոգւոյ՝
ինձ արօտ։ Թէ իցէ՞ արդեաք նկատել զգազանա-
բեկ հերքելի ոչնարս՝ վերստին կամաց դթութեան
քո հօտ։

4 Եւ քանզի ըստ բանին յոբայ, շուրջ պատեալ են

չարեացն հնարք՝ ընդ որ ոչ կարացիս անցանել, իսկ եթէ ըստ ողորմութեան բարերար կամաց քոյ՝ ցուցցի. դիտութիւն քոյ դուռն՝ բացցի. Ճառագայթ փառաց քոյ՝ ծաւալեսցի. խնամք ձեռին քոյ՝ յայտնեսցի. արեգականդ կենաց օր՝ տարածեսցի. առաւօտիդ ըղձալի տեսիլ՝ մերկասցի. առաւուտ քաղցրութեան քոյ՝ աղբերասցի. վտակ արարչիդ կողից՝ հոսեսցի. ծորումն անապակ սիրոյ քոյ՝ հեղցի. ծագումն աւետեաց շնորհի քոյ՝ երևեսցի. պարգևիդ քո ծառ՝ ծաղկեսցի. մասունք օրհնեալ մարմնոյդ՝ բաշխեսցի. համառօտեալն ակնկալութիւն՝ հանդիպեսցի. հատուցեալդ ծայն ողջունի քոյ տէր՝ լսիցի. հեռացեալդ խաղաղութիւն՝ մերձեսցի։ Յայսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանելեանաւ՝ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատանոյ, ապաւինեալ 'ի հոգիդ քո նոր, որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեամբ՝ ընդ քեզ փառաստրեալ 'ի լոյս անմատոյց, որով կեանք և երանութիւն քաւութիւն հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս։ Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով՝ առհաւատչեայ Ճշմարիտ յիշատակի. 'ի ձիր անեղծութեան՝ անուամբդ անճառելեաւ ահաւորութեան՝ հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տերութեան երբեակ անձնաւորութեդ. որ եսդ յիսկուե յէուեն և յարարչայութեանէ բարձրութեան՝ քաղցրութիւն ողորմութիւն և մարդասիրութիւն պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ։ Ա՛յո՝ առ ամենեսին, ամի՛ ամի կարօղ ես՝ գլխաց. և քեզ վայելէ փառք յայսմ յաւիտենի, և 'ի հանդերձեալ մշանջենաւորութի յայտնութեանդ աւուրն մեծի, յաւիտեան. ամէն։

Ս Էրապին յաւելուած է էջին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս։

* Բան. Ի.Օ.

1 Եւ արդ՝ սուրբ դպիրս և իրաւաբար, ընդ որս ոչք ըստ ձայնից կողկողանացն՝ և զբանիցն յարմարութիւն հանդերձեն, ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքել ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից՝ առ արտասուացն բղխմունս. ուստի և բազմեալ իմ ի գլուխս պարու՝ ակմբից դասու՝ այնր երախանաց, որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութիւք՝ աւաղական ձայնարկութիւք զանձինս տարածանեմ զվիշտակրութիւն։ Որ ոչ բնաւին մեռեալ աշխարհի, և ոչ խսկապէս կենդանի այլ. ոչ ջերմ սոսկ, և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ գրեալ ի յայտնութեան. երիցս ատելի՝ երրեակ տէրութեան, և ամենատես արարչութեան։ Եւ այս են պատկանեալ թախծականացն կերպագրութիւք, կրկին ողորմելի այսու երևեցեալ, որ ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զիշոնառութեցն զօրինակ, այսպէսի կցորդութիւք շաղկապեալ։

2 Պարտուցն ժխտել՝ ողանդացն՝ ճեպով մեծաւ ի տու ժի. ես ապիկար մատնել՝ անարժն գործովքս յիրաւի. վատնիչ արքունի գանձուց՝ կրկնադատ և անթափելի. պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի. բիւր քանքարոց ինդիր՝ ՀԵՍ չունիմ կշիռ մի ունկի։ Ընդարեւիսօս կապեալ՝ ի պահեստ՝ դառն արդեալանի,

հե-

հեծումն և վաստակ ցաւոց ճաշակեալ՝ յանձնշոյլ բանտի,
անապատէն տանջեալ անթոշակ՝ կամ ողորմելի.
այլ յեղանակ ինձ ողբականաց՝ ասատուստ կնքեցի,
փոխատրեցի սովին բարբառով՝ կոծ կսկծելի,
կարդադրեցի շրջաբերութեամբ՝ 'ի նոյն պայմանի,
անհատական թիւ խորհրդական՝ երկեակ տասնեկի։
Աղքատութեանն հնոց՝ յամենուստ մասանց մրրկի.
անպատասպար թշուառ՝ վտանգեալ սրտիւ 'ի դրաւի.
տարակուսեալ հոգւով՝ ապաշնորհ այր 'ի վրիպակի.
անինամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի։
Սեղաց և մահու զինուք՝ զդայարան գաղանեցս խոցի.
անփրկելի մատնեալ բռնութեամբ՝ չարեացս գերի,
սուր սուսերաւ ստստից՝ դոյութիւն բնութեան յոշատի։
Յիշատակաւ բեմին՝ ատատին 'ի դատաստանի,
անծագելի մեայլ՝ չարատես աչացս երևի.
անձեռնկալ կապեալ՝ երկիրս 'ի տարակուսի,
ահարկութիւն դիմաց՝ պատկերի վերնոյն տեսանի։
Յոյժ անարև՝ և անվերարկու 'ի տարտարոսի.
անապատէն մոլար՝ մորմոքեալ 'ի հուր դեհենի.
անյայտանելի կորուստ՝ կործանեալ 'ի մեղաց վհի։
Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբեք յարդի,
և ոչ ընդունի և կամ համբարի՝ 'ի դանձ տերունի,
հայցուածս պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի։
Այլ բեկել սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առել
դարձի, զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ՝ մօրդ յի.
բարեխօսեան մաղթեան քաւութի՝ ինձ մեղաւորի.
դու զօրաւոր փրկանակ կենաց՝ խնդրեցի երկնի.
քեզ օրհնուիք ձայնիւ և բուրմունք՝ խնկոց 'ի յերկրի,
և անուշեց իւղոց մատուցու՝ մեն յամենայնի։

3 Լ.ՐԴ՝ յատացեալ ողբոցս հիւսուած՝ այլ մասն յա-
ւելի, բարերարին շնորհաց արտասուաց պտուղ
մատուցի. զկորստեան խորս չափելով՝ զորքանն եր-
բէք ոչ գտի. մասնաւորագ բանիւք ի հանդէս՝ նո-
րին ջանացի. զմտացս արագեալ զթիւս՝ յերկոյթ
իրին ոչ հասի. զուշին պարտութիւն յանլթարելեացն՝
բաժակ բարկութիւն ի ձեռն իմ առի. զտարտամուն
տարակուսանացս՝ իբր ճաշակումն մահու արբի.
Լ.ու այժմ զյանցիցն յաճախութիւն՝ ողորմելի ձայնիւ
յերգ արկի. աներևոյթ կրակարան տապոյ՝ բորբոք-
մամբ մեծաւ անդրմանալի. անտեսական ինն քրոյս
հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշինանելի. պղաս նե-
տից պատկանեալ գեղովք՝ ի շտեմարան խորութիւն
սրտի. խիթք ցաւոց խոցոտման մահու՝ ի գնացս ե-
րակաց գոյութեան լերդի. կիրք երկանց անճարակ
ճեպոյ՝ ի պատուաճաճ աղեացս անելանելի. անզօրելի
դեղոց ջերմուն՝ ի յերիկամանց մասունս երկակի.
անհնարաւոր դառնութիւն մաղձի՝ ի նախադուռն
լմոյս կոկորդի. Լ.ուաղս ձայնից լքուցանողաց՝ ի
փողս շնչոյս խոշորս հնչի. բազմահատուածաճ հութի
բնութիւն՝ ներհակք միմեանց ի պատերազմի. երկ-
չոտութիւն կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ ի
վտանգի. հարազատաց դաւաճանութիւն՝ անհաշտելի
ի կոտորուածի. ոչ մեռեալ և ոչ կենդանի՝ թա-
ղեալ ի մեղաց դարշութեան տղմի. կասկածաւոր
պատժապարտութեամբ՝ վերակնարկելով քեզ բարե-
բարի, յանակնկալս կենաց վՀՀ՝ արտաբերել ի լոյս
անձկալի.

4 ՀՆ ինքն որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ եր-

Ջանկա՝ցին պատկեսցի. ակնարկելով քո ողորմութիւն, անարատի՝ցին հաղորդեսցի. վասն զենման ոչ բանիդ, բարեգործեալ՝ քեզ կենդանասցի. օրհնութիւն՝ գովեալ քո շրթանց՝ 'ի գլուխ բաշխողի՝ այսր մատենի. հաստատեսցի ըղձականութիւն՝ սողոմոնեան բանիս առակի. նկարագրեսն հոգւով քո՝ բարձրեալ, 'ի նորոգումն անեղծանելի։ Օ՛ի դու միայն ես երկայնամիտ, նեղոյ՝ քեզ փառք յաւիտեան. ամէն։

Ա՝ էրուսին յաւէլուածք հրէին հեծութիւն՝ նորին հանդէր, առ նոյն ողբոյ մաղթանաց բանիւ։ 'Ի խորոց արտէր խօսի՝ ընդ ոչ։

* Բան. Իգ.

1 Զ՝ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զդրութիւն թուոցս յարմարեցի կսկան և հեծութեան, հառաջանք կողկողագինք, դառնութիւն լալումն և արտասուաց երդ, դարձեալ սկսայց զնոսա պաղատանացս՝ խոստովանաւորէն զղջականաբար, զդաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութիւն սկզբամբն՝ և վերջաւորացն բառիւք, զնոյն համաձայնութիւն 'ի միթախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խոնարհութեան՝ աստանօր երգից։

2 Ո՝երոյ մեծիդ բարերարութիւն, անարգս մերոյ. մերոյ ծագմանդ ճառագայթից, խաւարս մերոյ. մերոյ շնորհացդ անբաւ երախտեց, արդարև մերոյ. մերոյ սիրոյդ վերնումգթութիւն, յայտնապէս մերոյ. մերոյ ստացողիդ յոչ էութիւն, ստուգապէս մերոյ.

մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ.
մեղայ աննուազ լուսոյդ վայելման, նենդօղս մեղայ.
մեղայ ճաշակման անճառդ կենաց, բաղումս մեղայ.
մեղայ անհաս պարգևացդ ձրից, հանապազ մեղայ.
մեղայ գովելոյ մարմնոյդ այ, մահու չափ մեղայ.
մեղայ պաշտելի արեան արարչիդ, իսկապէս մեղայ.
Ահա արդարև օրհնեալ է հատուածս բանի՝ յու-
սադրական սրտի՝ այսր մեղայի. սոյն սա՝ պատուելի
աւանդ. անմոռաց պատուէր. հայրենեաց տուր.
նախահարցն օրէն. համայնից թոշակ. անհերքելի
բան. զօրաւոր պատասխանի. կենդանութեամբ կամուրջ.
ախորժելի վերնոյն. սիրելի սրբոց. անխզելի կապ.
հրաշալի բարբառ. անշրջելի պատճառ. բաղձալի ա-
ղերս. փափաքելի սեղան. սրտաբեկ հնչումն. անհնա-
րից ճարակ. կարծրութեամբ վանիչ. ճծապաշտից սահ-
ման. հեթանոսաց գիրք. վաղնջուց կանոն. քրիս-
տոնէից հարազատ. արարչութեան յաղթող. անջրպետ
հզօր. խորոց ահաւոր. արուեստս բարձրութեամբ. խո-
րութեամբ անչափ. հիացման տեսիլ. խորհուրդ կրն-
քեալ, ընդ որ չէիք ումեք անցանել, եթէ ոչ անբիծ-
նելի մտաց արագման՝ զսա ծանիցէ։ Զայն բարե-
պատեհ հրաշաւորական, որ ոչ յիշատակեցաւ 'ի վեր-
ջին դատակնիքք դատուն լքելոյ. գուցէ առ նմին խը-
զեալ համառօտ զվերիժակն իրաւանց մահուն հա-
սելոյ, յորմէ ընտրութիւն ապագործ եղեալ, զսահ-
մանն յաւիտենական քակտեացէ։ Զարդ փառաց
մեծութեամբ, որով նոյն ինքն ճծութիւնն պսակեալ
բարգաւաճի։ Բանզի ոչ զոք դիմեալ կալաւ զեղ-
ջերուց սեղանոյ այսր սրբութեան, և ոչ առ ժամայն

պրը-

պրծեալ 'ի պատժոյ՝ անարատ գտաւ։ Իսկ եթէ ա-
քար զարմեան, և սաւուղ կիսեան, և յուդա սիմ-
նեան՝ ասելով զոյն ոչ արդարացան, և ես վկայեմ՝
իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի
ակամայիցն բռնադատելոյ՝ ոչ է կատարեալ սէր,
ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն։ Իսկ ես
կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ
բանիդ զմկրտութիւն հարազատս։

3 Մեղայ երախտեացդ մոռացութիւն, վերստին մե-
ղայ. մեղայ մարմնոյ ձեռն՝ յոգի հարեալ, յի-
մարս մեղայ. մեղայ առ կեանդ դժրողութեան,
իսկ և իսկ մեղայ. մեղայ բանիդ ապախտ առնելոյ,
չարաչար մեղայ. մեղայ 'ի յօր սատակման՝ ինձէն ըս-
տիպեալ, վատթարս մեղայ. մեղայ պարտականս ան-
կենդան մահուն, ձաղելիս մեղայ. մեղայ անպատ-
կառս քո բարձրութիւն, տաղտկալիս մեղայ։ Ա երջին
ինձ կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կոր-
ծանումն ինձ երևեցայ. զի անդարձս վարատեցայ.
զի որդիս՝ թշնամի դրեցայ. զի 'ի բարձանցն երկնից
ընկեցայ. զի փուշս վարուց դիզի։ Այլ ևս առ սին
ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի. զի
բաղին կորուսչին գտայ։ Ա՜յլ իմն կսկիծ դժբն-
դակ սրտի, զի զիս ունին՝ առ որ չեմ, զարտաքնա-
յարդար բաժակս անմաքուր, զբռեալ որմն գար-
շունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զայս՝ 'ի
մռայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ,
զքահս փառաց՝ շինջեալ, զամիս յամի ամ իրաք վնա-
սակարս, առ անօրինականն ուրուանկանս. առ յայտ-
նութեան ածսյինս. առ երևմուանն արարչադիրս.

առ խոնարհութիւն սարսափելիս. առ այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք։ Զոր մեծ է պատասխանատուութիւնս, քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս, հիացմունս. հոգս հալողականս. անդաճմունս անհնարաւորս. թուականութիւն՝ մտաց անբարդելիս. ելմունս անկատարս. իջմունս անհաստատս. յուսահատութիւս յարմարականս. յանդիմանութիւս պատշաճականս. ճաղանս պատեհադոյնս. նզովս իրաւացիս. անէծս արժանահատոյցս։ Զորդ՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուածութեանն։

4 Զ. Ս. քանզի կարող ես զայս ամ զպարտս թողուլ, և զկայթուածս մահու բժշկել՝ տէր ողորմութեանց, ամ բոլորից, քո թագաւոր՝ բարձրեալ հօր որդի, ստեղծիչ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝ հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռնկալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անճառ՝ լոյս՝ կեանք, յարութիւն՝ նորոգութիւն՝ քաւութիւն, եթէ հայեացես մարդասիրութեամբ, ըստ որում քոյդ են սովորութիւք, նայեցեալ 'ի քեզ՝ կողկողիմ և ես։ Զ. թէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առիս դառնայցես, գոչեմ։ Զ. պա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպատն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես, սոս-

սոսկամ. ապա եթէ սատկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանի՝ ցես, հերքիմ. եթէ զբոց վհատութիւն ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փոխնուիմ. ապա եթէ սպառնաս, ընկճիմ. Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխոյեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տա՝ ցես, երկնչիմ, զբարեացն պարգև մատնեալ. զերա՝ նուիրեալն թողեալ. զնորին լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց՝ մոռացեալ. զհամարձակութեանն վստահութի՝ կորուսեալ. զստեղծիչդ էիցս՝ բարկա՝ ցուցեալ. զանձառութի շնորհին՝ ընդոտնեալ. ըզ՝ պատուոյն պատկեր՝ այլայլեալ. Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծուք ցաւոյ մարդասիրեալ՝ առիս ժամանեցուսցես՝ տէր յո՛ քո՛ զաղդեալն դիր լը՝ նանիլ 'ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութիւ՝ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նը՝ կարեալ յոգի՝ վերստին դտեալ պնդեցայց քառեալ, և ստեղծեալ կրկին 'ի փրկութի անմահիկ կենացն անախտակեանց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

Ա Էրոթին յաւէլու�ծ էրէին հէծուրէ՝ նորին հանդէ, առ նոյն
աղէրս մաշկանաց բանէ։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ ամ։

* Բան. ԻԸ.

1 Վա՛ սրդ՝ զոր յայտնեցիր, և յաղագս ոչ
նշանակեցիր, և վասն որպիսեաց Ճառեցիր,
և զոր ի՞նչ ծածկեալս մերկացուցիր, և կամ
վա՞ որոց խոստովանեցայր։ Ո՞ ներկայիցս՝ զոր ար-
դէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մոռերեցի. զապա-
գայիցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շարժու-
թեանցն՝ յորոց գլորեցայ. զնոքանչ ինձ համարեալ՝
որ է այ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելոն չը-
յիշատակելի. զնուազն՝ որ է առաւել, թէ զԹեթևա-
գոյնն՝ որ են ծանուանք։ Ո՞ Հոգեկանացն կրից կը-
ղուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց.
զառ դրունս հեշտականացն, թէ զծայրակոտոր վը-
նասակարութեցն. զաներևութիցն, թէ զտեսակա-
նացն. զառաձեռն հպաւորութի՞ թէ զառ նոյն ինքն
շունչ հեռաւորութիւն։ Ո՞ լայնականն դիւրին
խածմունս, թէ զերկարաւորն նեռաձգութի. զնը-
ղութեանն զանչափութի, թէ զամենածախն յայտ-
նատեսիլ. զյոքնագլուխն պոռնկութի, թէ զառող-
ջութեն անբժշկութի. զպարարումն չարին մարմ-
նով, թէ զսովինն բարւոյն հոգւով. զնանամ՞ ին
հանդիսանալ՝ յոչ ախորժելիսն այ, թէ զբռնադա-
տութեանն տոռամբ ձգիլն՝ ի նոյն մոլեգնութի.
զառ ի մա՞ն մեղաց, թէ զընդունայնութեանն
կարծեաց։

2 Ո՞ դարձ ոչ կամաւ խելագար զերծել ի ձորձոյ,

զա-

զառաքեանացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն դոր-
ծեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկեա-
ցեն զամօթս իւրեանց, օտարացեալս 'ի կրօնից. հե-
ռացեալս 'ի կարգաց. 'ի սրբութենէ անտուրբ. 'ի կու-
սութենէ անմաքուր. յարդարութեան ամբարիշտ. 'ի
բարեպաշտութենէ վնասապարտ. բերանովս մերձ առ
ստացօղն, և հեռի երիւրամտեաց. շրթամբքս պատ-
ուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ ելթէ սրտիւս։
Եւ ելթէ պարտ է զքստմնելին ասել աստանօր,
զար քան զտանջանան յանդգնութիւն, իբր զուր իմն
պաշտօնատարս այլ, 'ի միտս անկայուն երկեակ ճա-
նապարհաս մահու վարանեալս՝ ջանամ, և ոչ ինչ
օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժա-
մանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փափաքեմ, և ոչ
հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. ունիմ զամ
երկրի, և եմ պատգամաւոր աղօթանոցէր ամ աշ-
խարհի։ Եւ այլ թոյլ զբաղումս զայսոսիկ բարերար,
և մի՛ ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել,
քան ինձ տաժանաւորս աջուլ նկարել. վա՜յ այնորիկ
դրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջնջ-
ջեսցես՝ օրհնեալ։ Որ վասն մեր մեղաւորացս եր-
կայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի՝ հե-
ծութենէ սրտի՝ եզրի երջանկի. յոյժ նեղեալ անձն
և ձանձրացեալ ոգի՝ բանին յիշատակաւ, որ զայն
պատմէ. յամ կրից մահացուցանողաց վտանգեալ,
անկեալ 'ի վիհ դարշութեան մեղաց՝ անդնդականաց
ապականութեց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ,
ըստ յոբայ ձայնին։ Ո՞ւրդ՝ ես ինձէն ինքնադատրով
անձնադատ դերի՝ կամաւորապէս մատն եղեալ

բնութեանս , արդեալ փակեցի կնքեցի առ յինէն՝
յամ մասանց՝ զկենացն հնար , զի 'ի փրկութիւն մեղաց
կապելոյս՝ կրկին մեծասցիս գովեալ ։
3 Լ. ուս քանզի 'ի մարգարէէն բարուք խրատեալ փորձ
գացուք , մաղթեալ ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ ,
առէք ընդ ձեզ բանս , ասէ ովսէէ , և դարձարուք
առ տէր ՝ ասացէք ցնա , կարօղ ես թողուլ
զմեղս ։ զի ընդունիցիք զբարիս , և վայելեսցեն 'ի
բարութեան անձինք ձեր ։ Լ. հա՝ ասէ խօսեցաւ , և
ոչ է որ ոչ լուիցէ ։ նոյն ինքն վկայեաց , և ոչ է որ
ոչ հաւատասցէ ։ Լ. ուդ՝ այսոքիկ վճիռ պաշտելի ։
նուիրեալ պայման ։ սահման նոյնագոյ ։ կենաց ա-
ւետիս ։ կէտ տերունի՝ դուռն բարութիւն ։ սփոփս-
նաց հրաւէր ։ ճշգրիտ պատկեր ։ անստգիւտ գանձ ։
անմոռաց յիշատակ ։ Լ. յսու առ սոյն և ես հաւատ
ընկալեալ , աստուստ վկայեմ սմին՝ ընդ մարգարէին ,
կարօղ ես յամի թողուլ զմեղանս բազմաբեղունս ։
և ես զօրասցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթագ-
ուառ կործանեալ հոգիս ։ Յամի իշխես ։ ամի բա-
ւես ։ ամուրեք հասանես ։ ամենից բռնուեց յաղ-
թես ։ զամ կարծրութիւն փշրես ։ զամ ընդդիմահար
վանես ։ զամ խստութիւն վատնես ։ զամ սրացեալ
ընդոտնես ։ զամ դառինս անուշես ։ զամ դժուա-
րամոքելիս քաղցրացուցանես ։ զամ զպարտս շնորհես ։ զամ յանցանս թողուս ։ Կարօղ ես՝ զօրաւոր
հզօր հնարաւոր ամենարուեստ՝ զամենեցուն զմեղս
ընկղմել՝ և չքացուցանել բառնալ 'ի միջոյ , իբր ըղ-
ձանձանչ փոքրու կոյծական՝ սահմանեալ 'ի ջաւ ոչէից՝
ան-

անկեալ ընկլուզեալ կորուսեալ՝ 'ի տիեզերատարածն
ծովու։

4 Ա՛ռդ՝ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մա-
տեանի, ողորմեա՛ վա՛ խաչի և չարչարանաց մահու
որդւոյ քոյ՝ հա՛յր գթութեա։ Սկիզբն առաքողի՝ ող-
բերգութեա՛ ձայնի՝ այսմ արտօսրածին նո՛ւագի, որ
զայս դեղ փրկութեան կենաց՝ մեզ յարմարեցոյց,
եղկեալ՝ բժշկեալ յանուն քո հզօր։ Որ հետս ելից
խոստովանութեա՛ մեզ նկատեցոյց՝ այսու պայմանաւ
պատշաճականաւ, լեցի՛ անարատ յիւրոցն պարտեաց։
Որ զհպարտութեան թեւս՝ հարթել մեզ վարդապե-
տեաց՝ 'ի սոյն կանոնի կենաց պատգամ, եղկեալ՝ զերծ-
եալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնակա-
նաց՝ վերջնոց՝ և միջնոց, երրորդութիւդ բարեգոր-
ծեալ, 'ի նորոգութի լուսաւորութեա։ ընդ որում և
մեք գրեսցուք երջանիկ գտեալ ընդ սմին։

Ընդդէմ՝ նաբաբ դէ՛ռոց ոչ նո՛ւազ աղօթից։ ԵՒ դէ՛ռաւարքոռ-
ջերմնոպագնոպ ալոպաւորութեան ասպուծով փարպետ։

5 Ա՛ռդ՝ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ
հա՛յր ամենասքեղծ՝ անուանդ աստուած։ ձայն
սարսափելի։ կոչումն ընտանի։ բան համբուրելի։
ազդումն սքանչելի։ հրաման սոսկալի։ էութի ան-
քննելի։ գոյութի անճառելի։ իսկութի անբաւելի։
զօրութիւն անընկնելի։ կամք ամենաբարի։ տրութի
անսահմանելի։ մեծութիւն անչափելի։ բարձրութի
անքովանդակելի։ որքանութի անկշռելի։ առաւե-
լութի անհասանելի։ պատճառ որդւոյ հայրութի,
այլ ո՛չ նախադրութի։ քեզ՝ և 'ի ձեռն քոյդ անպա-
ռա-

բազիր զօրութեդ՝ սատանան տագնապող և դիմա-
կան տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ
ընդ մեզայ՝ զի փախիցէ 'ի մարդոյս, զարհուրեալ
'ի սիրալի և յանբաւելի արեան վտակի՝ դառնդ
երկնաւորի. որով սրսկեալ միանգամ 'ի մշանջենա-
ւորս՝ համայն մաքրեցաք։

6 Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութենէ ա-
ղաչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ՛ սատանայ 'ի
գործս չարեաց իւրոցն հրեշտակայ. տանջեսցի՛ և
հալածեսցի՛, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շին-
ուածոյ խորանէ քումդ բնակութեան՝ յարտաքին
խաւարն։ Եւ ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոյս
'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութե
'ի սրտից մերոց։ Եւ յիշատակաւ հարման հեղու-
սիցն՝ քստմնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից,
որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցա-
ւեսցի՛ չարին։ Եւ 'ի կողահերձ սայրատուր սլաքէ
ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խա-
պսոնա սատակեսցի սկզբնարար մահուն։ Եւ զի խո-
նարհեցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի
ծոց քո՝ բարձրեալ, ապստամբուն անբարի բարուցն
բելիարայ՝ 'ի կոր կործանեսցի, ամիւ հերքեալ 'ի կո-
րուստ։ Եւ զի զողեալ ծածկեցաւ անմանն խակու-
թիւն՝ յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպար-
տութի՝ կարծեալ դառոզին 'ի յատակս մահու դը-
ժոխոց՝ մթին ստուերին՝ յառեալ դիտեսցէ՛. և յի-
շեսցէ՛ զառաջին հարուածն անբժշկական, որով մա-
հացաւ դիմամարտութի թիւնից վիշապին՝ կենա-
րարն կրիւք ամենազօրին։ Զ սան զի 'ի փառս քո՝

հայր ողորմութիւն, իբր 'ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգ-
ւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պի-
տակ ինչ սոակ զօրութեանն ունի զմիւսմէն՝ առ մի
խորհրդականն խորութեան, այլ զանակիզէն բանդ
անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք.
Լաւ քեզ միայնոյ աբ երրորդութեդ, հաւասարա-
պատիւ տէրութեդ, համաբուն՝ անբաժին ինքնու-
թեանդ՝ օրհնաբանութի, գոհութի, զօրեղութի, և
անճառ վայելչութի մեծութե, բարեվիճակ հար-
թութե, զուգակշիռ հաւասարութե՝ յաւիտեանս.
ամէն։

Ո Երդոյն յաւելուածք երկին հեծութե՝ նոքին հանողէ, առ նոյն
աղերս նաղբանաց բանի. 'Ի խորոց սրտից ելայ՝ ընդ սոյ։

* Բան. Լմ։

1 Լաւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց՝ գը-
թութի անճառ՝ որդի բարձրեալ միոյդ սոյ,
որ զողջոյն զօրն՝ թողութե ցուցեր փը-
կարան, և ոչ կորստեան դատապարտարան, յեղանա-
կեալ ինձ զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկա-
լութեան. Ամենի՝ ախտացելոյս. հովիւ՝ մոլորեալ
ոչխարիս. տէր՝ ապաւինեալ ծառայիս. գինի անա-
պակ՝ մեծ տրտմեցելոյս. սպեղանեաց դեղ՝ վիրա-
ւորեցելոյս. ազատութի՝ մեղաք գրաւելոյս. օրհ-
նութի բարեաց՝ մերժելոյս. կենաց շնորհաց՝ խոտե-
լոյս. օծումն կոչման՝ կապտելոյս. կանգնումն վե-
րըստին՝ կործանեցելոյս. պատսպարան հզօր՝ գլորե-
ցելոյս. օժանդակ վեր՝ գայթակղեցելոյս. դուռն
բարձ-

բարձրութիւն՝ տարակուսելոյս. սանդուխք երանութեան՝ եղկելոյս. Ճանապարհ շաւղայ՝ մոլորելոյս. Թագաւոր ներօղ՝ պարտելոյս. քաղցր յուսադրութի՝ լքելոյս. ձեռնկալ կենաց՝ հերքելոյս։ Ո՞ՀԵԾԴ միայն՝ և ամենառատ, որ զլիութիւն բարեաց սահմանեալ, հեղուս անչափ յաճախութիւն՝ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեան։ Ո՞Ր անզի ինչուց յիսնից՝ և թուոց երից՝ և չորեակ տասանց՝ 'ի վաղորդայնէ տուընջեանն՝ առ մուտս արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ՝ իսկ և իսկ 'ի սոյն՝ անարդել սրտին, 'ի վերէ քան զաղերսանաց ակնկալութի՝ մարդկան բարեգործել միմեանց շնորհատրութի. իսկ առ իմն թշուառութիւն և անարդութիւն՝ զքոյդ եղեալ փառս՝ ամենակարող զօրութիւն ահեղ՝ բոլորից ՈՒԾ՝ օրհնեալ տէր քո, որովք սահմանեսցի կշռութիւն չափոյ՝ հաստողիդ ընդ հոգոյս հաւասարութի կցորդեալ։ Ո՞Ր անզի մնաս յոյսսիկ անբաւ և անհետազօտելի, ամենևին բարի՝ անմասն բարկութիւն խաւարի. ուստի յոյժ նուազեն քում մեծութիւն՝ աստեղացն թիւք, զորս գոյացուցեալ յոչէից, յորջորջմամբ անուանց կնքեցեր. և կամ հիւթ երկրի 'ի յօդս հեղեալ, զոր 'ի չգոյից հաստեալ, տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նսխադրեալ համարդ սակաւութեան, որովք քեզ նմանիլ վարդապետեցեր։

2 Ո՞Հ՛ ծածկեցաւ և ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կամաց երկայնմտութիւն՝ հանուրց չարութի, իբր դոյզն մեայլ՝ 'ի տապ արևու. և որպէս ստուստ իսկ կիրք բնութեանց զհատաբակաց բարուց ցուցանէ։

Քանզի ոմ ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ. ոմ ոք զաղջացաւ, և ոչ ամաչեաց. ոմ ոք գարշեցաւ, և ոչ պատկառեաց. ոմ ոք սխալեաց, և ոչ ապաշաւեաց. ոմ ոք կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ոմ ոք գայթակղեցաւ, և ոչ սարջացաւ. ոմ ոք պարտեցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ոմ ոք պատրեցաւ, և ոչ յոգւոց եկաւ. ոմ ոք ճաշակեաց լեղի, և ոչ դառնացաւ։ Ոմ ոք անկաւ 'ի բարձրութէ, և ոչ ընդոստուեաւ. ոմ ոք կորոյս մեծուն, և ոչ աշխարեաց. ոմ ոք զրկեցաւ յերանութէ, և ոչ եկաց. ոմ ոք կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ոչ ողբաց. ոմ ոք գոտաւ ինքեան ինքնակար, և ոչ ստգոտաւ. ոմ ոք մերժեցաւ յերեսացն ՅՍ, և ոչ հառաչեաց. ոմ ոք լուաւ զՅՍ սպառնալիսն, և ոչ սոսկացաւ։ Ոմ ոք ընդ մի չարեացն՝ հազարս չաւաղեաց. ոմ ոք մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ. ոմ ոք անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտսն կոծեաց. ոմ ոք եռեալ զստրուկն յիւրում մեծուն, և ոչ զկծեցաւ. ոմ ոք կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզովեաց. ոմ ոք ախտացաւ, և ոչ զանձն դարմանեաց. ոմ ոք յամօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին ձաղեաց. ոմ ոք 'ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ զօրն իւր անիծեաց։ Ոմ ոք զգործեցեալսն յիշեաց, և ոչ տապացաւ. ոմ ոք զդաղտնիսն մտաբերեաց, և ոչ խորովեցաւ. ոմ ոք զծածուկսն նկատեաց, և ոչ մահ կորստեան խնդրեաց. ոմ ոք զաներևոյթսն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր կորացաւ. ոմ ոք ընդ մեղացն հեշտութեամբ՝ բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց, ոմ ոք զմնասակարսն բնութեանն,

և ոչ պապակեցաւ. ոմ՚ոք զկամաւ ներդործեալսն, և ոչ սատակմանն ինքեան աղօթեաց. ոմ՚ոք զանձաւ ռելիսն, և ոչ խռովեցաւ. ոմ՚ոք զանկրելիսն էութեանն, և ոչ թախծեցաւ. ոմ՚ոք զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ոմ՚ոք զանբծութեն ապականաբարսն, և ոչ տրտմեցաւ. ոմ՚ոք զտարագրութեն պատճառ յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ոմ՚ոք զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեան վերնոյն զանձն պարտ վարկաւ. ոմ՚ոք զմի՚ի կարևորացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ոմ՚ոք զնոյնառականացն, և ոչ վայրս վհատութեան ընդ հեծութիս ձայնին հիւսեաց։ Ո՞մ՚ոք յաղքայական գահոյիցն տնանկացաւ, և ոչ կարկամեալ՚ի վայր գըլորեցաւ. ոմ՚ոք ընդ պակին պերճութեան՝ հող՚ի գլուխ եղեալ, և ոչ կրկին ջարջարեալ յոգի մահացաւ. ոմ՚ոք ընդ պայծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ, և ոչ տխրեցաւ։ Ո՞մ՚ոք զկեանս իւր կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ոմ՚ոք ընդ արկանելեաց լուսոյ՝ խաւար զգեցաւ, և ոչ նըհաղեցաւ. ոմ՚ոք՚ի վերայ ադոյ սիրելւոյ ոչ թառամեցաւ։ Ա.հա՛ այս կերպարանք ճշգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութեանն, տխուր դէմ. քաղեալ ճաճանչ. ցամաքեալ խոնաւութիւն. երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ. տրտմեցեալ ոգի. այլայլեալ ձայն. կրկնեալ պարանոց։ Լա՛ զի թէ ոք զնոյնութիւնն իսկ նշանակեսցէ, ոչ անօրինէ անանբարտաւան միտ՝ անհպարտ սիրտ։ Ա՞նիմաստ պարգևի՝ թշուառ. անաղերսալի պապաքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ. խրատամերժ սովեալ. արդարալուսկ

քաղ

քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնաւկայ մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի. Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ։

3 Եւ արդ՝ եթէ զբարին՝ հնարաւորութիւն բանսարկուին՝ դատողին զմեզ դայթակղեալս, զիւրսն 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիարդ ոչ ըզբարին տնկեալս 'ի մեզ հոգւոյ արութիւն՝ 'ի խնամակալութենէ կամաց կեցուցչէդ՝ օնևօն դրեսցես՝ տէր բարեգութ, հզօր և յաղթօղ. քաւիչ մեղուցելոց. կարող յամի՝ առ ամ փրկութի։ Եթէ զանդունդս առ երկինս փոխես, և կամ զևաւար մթութեն՝ 'ի լոյս հաստեսցես, եթէ զդառնութի լեղւոյ՝ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սատկութենէ վշտաց՝ 'ի պարս դատու բերկրութեն հարսանեաց կարդես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ։ Եւ ևս քան զսոսին բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից ահաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Ա Էրոտին յաւելուած հրկին հեծուելէ՝ հորին հանողէ, առ նոյն աղէրս մաղեանաց բոնի։ 'Ի խորոց արդէց ելօր՝ ընդ այ։

* Բան. Լ։

1 Եւ արդ՝ ճշմարտեսցի՝ բան քո՝ ողորմած՝ բոլորից աճ՝ ներող և օրհնեալ, 'ի բազմադրելութենէն դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղաւորին, թէ և առ յետին իսկ

շունչն

շունչն իցէ ընտրութիւն, և կամ 'ի մէջ չարութեն փո-
խադրութիւն։ Սանաւանդ զի դժնեայ կցորդս այս
անձնիշխանական՝ միշտ մարտիկ։ խաբօղ շողոքորթ,
յարեալ 'ի ստութիւն, ըստ առակողին, արածօղ հողմոց
դժուարութեանցն։ հաստողին փախչօղ։ դերեալ որսո-
ղին։ մոլեկան մարմնոյս՝ ներհակ անկակից, յոգնա-
պատճառեան ամենավարան։ զոր քո՛ է գիտել զքա-
նեացն յաճախութիւն։ Եւ զկնի մեղանացն, ողորմա-
գինս իմն ողբարկութիւս վհատականս՝ տաժանակոծս՝
բազմաղելիս, քո՛ առաջի՝ որ գթարկութիւս՝ դը-
րեալս արտասո՛ւք, թառանչս թշո՛ւառութեց կար-
գեալոց՝ անբաւս չար վտանդից մեղատանապ պատ-
կառեցելոյն։

2 Եւ զի մի՛ կրկնաբանութիւս 'ի շատախօսութիւն կըր-
թեցի, առաւել քան զսոյն՝ այսու ողբալի։
քանզի՝ ո՛չ երբեք համարձակի խնդրել իւր զար-
քայութիւն, այլ զտանջանացն թեթևութիւն։ ո՛չ ընդ
կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ դերեզմանակա-
նացն՝ զդայական շնչովն 'ի խաւար։ ո՛չ ընդ ամբար-
ձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն։
'Ի հանգստեան իւրում վաստակեալ։ 'ի խրախութիւն
ինքեան արտմեցեալ։ դիմաք ժպտել և մտաք խոցեալ։
կերպ 'ի ծաղր և աչք 'ի յողբումն։ երեսք զսփոփանս
ձևացուցանել և արտասուքն զդառնութիւնն արտին
ճշմարտել։ Ամպանակք երկու՝ յերկոսին ձեռին,
մինն արեամբ և միւսն կաթամբ։ Երկու բուրա-
նոցք կայծակնաւորք, մինն խնկով և միւսն ճենճե-
րի։ Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
մինն քաղցու և միւսն դառնութիւն։ Բաժակք զոյգ՝

առ երկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծը-
ծումբ։ Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն
գինի և միւսն լեղի։ Դրունք տեսանելեաց ներ-
հակաց, մինն 'ի լաց և միւսն 'ի վրիպումն։ Լանութք
հալոցականաց հակառակութեց, մինն արծարծէ և
միւսն շիջուցանէ։ Հայեցուածք դիմաց երկուց,
մինն դոյզն ողբանօք և միւսն անանխայելի բար-
կութ։ Համբարձումն երկակի բազկաց, ումն 'ի հար-
ուածս և ումն 'ի մերժումն։ Դէմք կրկնակի կեր-
պից, մինն տխրեալ և միւսն ցասուցեալ։ Կշտամ-
բանք՝ ընդ միոյ երկու, մինն ատեացս և միւսն ա-
պառնեացն։ Պաւինութիւնք կարծողականք, մինն
գոնէ և միւսն թերևս։ 'Ի մի բերան երկակի բար-
բառ, մինն եղկութիւն և միւսն խռովուն։ Երկուս
ազգմունս 'ի միում սրտի, մինն կեղակարծ յուսոյ և
միւսն ճշգրիտ կորստեան։ Մոգ լրթագոյն ահագ-
նատեսիլ՝ կրկին տեղացմանց, մինն նեաս և միւսն
քարինս։ Որոտումն ահեղ՝ երկոցունց բերմանց,
մինն կարկուտ և միւսն հրացան։ Ցայգ ցաւագին՝
երկուց վտանգից, մինն լալոյ և միւսն մահու։ Ոգա-
ւօտ սգոյ՝ երկուց բողոքմանց, մինն սատից և միւսն
սպառնալեաց։ Ընդակունք երկու՝ 'ի յերկուց
ծայրից, մինն խաւարի և միւսն կիսման։

3 Եթէ հարուածոց աջ կառուցանի, ինքեան վար-
կանի. և թէ ձեռն պարգևաձիր, ոչ իւր ակն
ունի։ 'Ի պարծանս ուրուք՝ կորանայ. յամբարձումն
գլխոյ՝ ընկճի. 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ. 'ի ճառս
մաքրոց՝ պատկառէ. 'ի պատմութիս հանդերձելոցն՝
երերի։ Եթէ օրհնի յուսքէ յայտնի, 'ի ծածուկ

զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ. Եթէ դարուեսցի սատկապէս, ինքեամբ ինքեն վիպէ. եթէ ձաղեսցի ուժգին, սակաւ հատուցումն՝ առաւել պարտուցն զըրեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ, այն ասէ, և դարձեալ կրկնէ. Եթէ որոգայթ մահու ձայթեսցէ յերկնէ, հաղիւ զդէմն համբառնայցէ. Ո՛ւրոց իրաւանցն մատեան՝ խփեալ. զպատասխանութեանն յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեն ընթացս՝ փակեալ. Եւ եթէ ոչ էր անփրկանաւոր կորուստ գերեալն, զիւրովին երթալ ոչ ինչ դանդաղէր. Երդարև վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ 'ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հոգեւոր բանի խմաստնոյն.

4 Եւ արդ՝ զեարդ ոչ ողորմեսցիս՝ բարեգութ, այսքանեաց ձայնարկութեց՝ կողկողագինս հեծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տէր. Երկնաւոր թագաւորութեն, բարութեն քո. առ մահապարտիս դառնութեն, քաղցրութիւն քո. առ կորուսեալս յոյսոնութեն, ճառագայթ քո. առ յանդգնեալս մոլութեն, ողորմութեն քո. առ խակութեն վնասակարիս, հեզութեն քո. առ կործանեալս այցելութիւն, աջ քո. առ ընկղմեալս վերբերութեն, ձեռն քո. առ բժշկութեն անողջանալի խոցուածոյս, մատն քո. առ պակուցեալս պաշտպանութեն, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահութեն, երկայնմտութիւն քո. առ օծումն ամենադժնէիս, զօրութեն քո. առ մեղաւորիս քաւութեն, հրաման քո. առ փախուցեալս ապաւինութեն, ոտք քո. առ սրացեալս

պա

պատսպարութիւն, բաղուկ քո. առ վրիպելոյս առաջ-
նորդութիւն, լոյս քո. առ տարակուսելոյս հնարաւո-
րութիւն, հանճար քո. առ անիծելոյս կրկին ստացումն,
օրհնութիւն քո. առ վհատելոյս քաջալերութիւն, խրախոյս
քո. առ վշտագնելոյս մխիթարութիւն, բաժակ քո.
առ նեղելոյս ընդարձակութիւն, կամք քո. առ ատե-
ցելոյս կոչումն, սէր քո. առ հաստատումն սասանեցե-
լոյս, բան քո. առ հոգւով վիրաւորելոյս, կաթուած
արեան քո. առ աներևոյթ մթերս ցաւոցս, ակնար-
կութիւն քո. առ յուսահատելոյս անդրէն ընտրութիւն,
իշխանութիւն քո. առ պատուհասատումն կտրեցելոյս,
կցորդութիւն քո. առ խաւարաւ մահու ծածկելոյս,
նշոյլ կենաց քոց. առ խռովեցելոյս իմ հանդարտու-
թիւն, խաղաղութիւն քո. առ վայրագութիւն օտարաս-
ցելոյս, ողջոյն քո. առ մոլորելոյս դարձաւորութիւն,
ձայն քո. Օ՛ի դու տիրես ամի գթութիւն, և չի՛ք
՝ի քեզ մասն ինչ խաւարի. և ո՛չ է բարութիւն ա-
ռանց քո. և քեզ վայելէ փառք յաւիտեանս.
ամէն։

Ա՛ երեսին յաւելուածք չրչին հեծութիւնք՝ նորին հոգւոյ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։ Ի՝ խորոց սրտից խօսք՝ ընդ աւր։

✻ Բան. Լ.

Լ՝ ուրդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բա-
նիս՝ զաղէտս տագնապի հեծութիւնս ձայնիս
մեծ հառաչանացս՝ անսփոփելի իմոյս վը-
տանգի, զի դու՝ ողորմած սիրելնահոյրդ խոստովա-
նութիւնս անցսյս ծածկութիւց՝ որդի՝ այ կենդանւոյ

տէր

ար յա՛ք , քաղցրութիւն նայեսցիս քաւել։ Ա. Դարձեալ կարօղ ես։ Ճշմարտապէս բաւական ես։ Եթէ կամիս, հնարաւոր ես։ կամիս առաւելապէս, ոչ և կարես։ Հարստանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ ընդ առնուլն։ բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն, քան 'ի ժողովելն։ յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն, քան 'ի ճշդելն։ կուտին քեզ համբարք 'ի տարածելն, քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ այսմ ամի՛ տէր, գտանել քեզ եւք փրկութեան։ Հաւատամ սնարգս՝ ընդ պատուականին։ յուսամ ընդ աբրահամու, և ընդ աննայի։ զի մինն բանիդ քո հաւատաց, և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Ա. Ցայ և ոմն՝ 'ի խորին ծերութիւն՝ անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառանցելն և զամուլն արդանդ սուսայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութեան՝ բազում ժողովրդոց՝ մարդարէից սրբց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել յուսացաւ։ Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր՝ որովայնին սենեկի, եօթնեակ զաւակզբ բարդաւաճեցոյց։ որ է թիւ մի անբաւութեան, զբնաւն նշանակելոյ վերութի՝ ճծուէն յաբակայութիւն՝ սահման անհետաղօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ անհաս յորդութի։ Ա. Այս թիւ պանծալի՝ որում ո՛չ է կէտ կցորդի, և ո՛չ սպառո՛ւած վախճանի։ այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութիւն նո՛իրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենի, դժո՛ւարաթարգմանելի մերոց իմաստից։

2 Ա. Դ՝ Հանարեա՛ յարդարութի անյուսալի փրկութեան հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծուէ, ընդ նախադրելոցն երջանկաց է՝

եղեալ և դասեալ զայս դաւանութիւն փոքր հաւատոց՝ իմոյս խնդրուածոց. զի կեցից և ես առ նոքօք՝ բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց՝ զքոյդ շնորհաց։ Այնուանդ զի՝ կրկին բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռութիւն բանի դերադոյնք՝ իմումս խռովութիւն հաշտարանք, և հզօրապէս քաւարանք, և կարծեաց թերութեան մտաց սլացեալք։ Ընդ արեան քո ահաւորի՝ և ըստ մարմնոյ ծնօղդ քո խնկելի։ Պարք առաքելոցն. դասք մարգարէիցն. դունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն հետևակ՝ սպառազէն արիութեամբ՝ մերկամարտիկն մրցութիւն. դումարք միանձանց. բոյլք բանականաց ընտրելոց. ժողովք բարեկրօնից. հոյլք հոգեղինաց՝ յերկրէ երկնաւորաց. զինուորութիւք վերնականաց՝ ընդ մեզ կցորդելոց։ Ասանդք երախայրեաց. մատուցմունք զուարակաց. լուցմունք զամբարաց. բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանոք. յաղթանակք փրկական նշանաց. կառուցմունք խորանաց ածաբնակաց։ Զեռք քահանայից՝ շնորհիւ կատարելոց՝ առ շարժումն անձին յիշատակ այ. առ փոփոխումն դարշապարի. առ կարկառումն աջոյ, և ամբարձումն բազկի. առ բարիս՝ գոհութիւն, և առ գթել՝ աղաչանք։ Ոչ բանս ընտանիս. առ խօսս հասարակաց. առ ձայնս բնաւորականս. առ գործոց յաջողուածս. առ առաքինութիւն ջերմութիւս, որ 'ի տուընջեան և 'ի դիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քև աշխարհնորդեալք. 'ի նիրհել և 'ի զարթնուլ. 'ի պատերազմի ազգաց. 'ի մարտս դիւաց. 'ի հակառակութիւս հերձուածողաց. առ փոքունս, առ մեծամեծս. առ

ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց. և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս՝ եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս՝ մնալ 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես պանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ յամենեցունց, թէ բաւական ես ամի. կաթնաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, մտաց վայրենեաց, ստամբակաց դոռոզաց, մինչ զի առ թատերս տեսարանաց, և առ կոյսս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ։

3 Ուրդ՝ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միոյն բարեգութ. զի թէ և մեղեցեն, քո են, վա՜ զի 'ի քում համարի են, քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց։ Որում և ես կցորդիմ թըշուառս բանիւ՝ վկայեալ սորին յանցաւորապէս. յանդգնիմ ասել, թէ որ կարդոյ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթամբք իցէ վարակեալ՝ կրկնապատիկ պատժաւորութիւն, առ այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զի՞արդ ոչ քո իցէ. Որս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝ ըստ պիտականիշ երան աղաւնեաց. 'ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս. 'ի թիւշանց գազանականաց՝ դառինս նոխիրելիս։ Հեզութիւն 'ի խստութեան. կատարելութիւն 'ի թերութեան. խոնարհութիւն յամպարհաւաճութեան. ճշմարտութիւն 'ի ստութեան. միամտութիւն 'ի մանկութեան. անբծութիւն յայլամտութեան. բարօրութիւն 'ի չարութեան. պարկեշ-

տութիւն 'ի լիտութիւն . ողորմութիւն յանդիմութիւն . ապաշաւանք յանյուսութիւն . քաղցրութիւն 'ի բարկութիւն . հաշտութիւն 'ի թշնամութիւն . անսխութիւն 'ի խածանողութիւն . քաջալերութիւն 'ի լկութիւն . օրինութիւն 'ի նեստաձգութիւն : Զոր ոչ բաւականացայ երբեք 'ի դատել ճշդիւտապէս , թէ ոմն յերկրածնաց աստի կանխեսցէ ժառանգել զբեզ , որ միայն անաչառաբար կշռամբեաս իրաւամբք զարդարութիւն՝ առ ամբարիշտսն բարեգործ՝ միայն թագաւոր օրինեալ 'ի բարձունս , և յաւիտեանս . ամէն :

Ա էրոպին յաւելուած էրէին հեծու�՝ նորին հոգոյ , առ նոյն աղէրս նաղիանաց բանի : 'Ի խորոց արարեալ խօսք՝ ընդ աւ :

* Բան . Լ Բ .

1 Եւ արդ՝ ես յեռնեալս 'ի նախադրութեանց արժանաւորաց՝ դրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատժոց , հայցեմ զողորմութիւն ընդ ամենայն մաղթանաց : Ընդ նկուն և անհամարձակս . ընդ տկարսն և փոքրկունս . ընդ ընկեցիկսն և արհամարհեալս . ընդ տարագրեալսն և առ քեզ դարձեալս . ընդ երկուսացեալսն և ճշմարտեալս . ընդ կործանեալսն և յարուցեալս . ընդ ընկճեալսն և հաստատեալս . ընդ գլորեալսն և կանգնեցեալս . ընդ մերժեալսն և ընկալեալս . ընդ ատեցեալսն և կոչեցեալս . ընդ ապշեալսն և զգաստացեալս . ընդ անառակեալսն և զգաստեալս . ընդ հեռացեալսն և մերձեցեալս . ընդ հերքեալսն և սիրեցեալս . ընդ պատ-

կա

կառեալն և զուարթացեալս. ընդ ամաչեցեալն և խնդամտեալս։ Զայլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեզն երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանառութեանն, որ առ ժողովուրդն նախկի, և կամ տանն յակոբու զանօրէնութիւն նորա, այլ իմոյս ժամանեցիւ յայսմնութիւնս. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցիւ զիս ինքն՝ ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին. ոչ զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութիւն՝ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն խսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ էիդ։

2 Զարդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ դլրմանն ցուցիչ կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ անանական դեռնայքարշութեան սողնոյ սահեցմամբ՝ կամաք բևեռեցայ։ Զայլ 'ի քեզ տեր յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց դաւաղան՝ 'ի յարմատոյն դաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ ածութիւդ, կանգնեցայց անդրէն կիսոյար՝ պատկառեալ 'ի քոյդ երախտեաց՝ 'ի վայր կորացեալ դիմաք, աչք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսութիւք 'ի քեզ՝ մերձ 'ի հեծութիւն, բնաւին ողորմութիւն, բոլորովին քաղցրութիւն, զլեռ լուսոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցիւ։ Ուր ամենառատ աննըհաւ երկայնմտութեամբ՝ քո դառնացուցչիս, միայն դու 'ի յամի սահման փրկութիւն, ածդ բոլորից. անճառ մեծութիւն. անբովանդակելի բնութիւն. անքննելի

իս

իսկութիւն • հզօր զօրութիւն • կարօղ բարեբարութիւն • անպակաս լրութիւն • անճառ ժառանգութիւն • վայելչական վիճակ • առատ պատրաստութիւն • անստուերը իմաստութիւն • տենչալի տուրք • անձկալի ձիր • բաղձալի բերկրութիւն • անտխուր հանդիստ • անտարակոյս գիւտ • անկապուտ կեանք • անծախելի ստացուածք • անփոխանորդելի բարձրութիւն • ամենարուեստ բժիշկ • անսասանելի հաստատութիւն ։ Պարձուցիչ մոլորելոց • գտիչ կորուսելոց • յոյս ապաւինելոց • լոյս խաւարելոց • քաւիչ մեղուցելոց • ծածկարանդ փախուցելոց • անդորրիչ խռովեցելոց • փրկութիւնդ մահացելոց • արձակիչդ կապելոց • ազատիչդ մատնելոց • պատրպարանդ սահեցելոց • վշտակիցդ գայթագղելոց • երկայնմտութիւն տարակուսելոց ։ Լուսոյ տեսակ • ցընծութիւն ցոյցք • օրհնութիւն անձրև • հոգի երեսաց • զօրութիւն դիմաց • հովանի գլխոյ • շարժարան շըրթանց • ազդումն բանի • կառավար անձին • բարձումն բազկի • ձգումն ձեռին • երասանակալդ սրտի ։ Լինտանի անուն • մերձաւոր ձայն • կցորդութիւն հարազատ • խնամածութիւն հայրենի • խոստովանեալ անուն • պաշտեցեալ պատկեր • անպարագիր տիպ • երկրպագեալ տէրութիւն • բարեբանեալ յիշատակ • խնդութիւն մուտք • անվրէպ շաւիղ • փառաց դուռն • ճշմարտութիւն ճանապարհ • երկնաձեմ սանդուղք ։ Եւ այլ բազմութիւն բանից դովեստից անհամար կարդաց՝ և տանց անբաւից , զոր ոչ բերէ բերան երկրածին , և ոչ տանի դործի մարմնեղէն , և ոչ կշռեն իղձք հոգեղէնք ։

3 Եւ քեզ հայի՝ ամ ակն տեսողի՝ ա՛ծդ ամենայնի •

նայեա՛ 'ի պաղատանս հառաջման ձայնի քոյոց ծա-
ռայից , և թէ յաղախնեաց ոք աղաչէսցէ ։ Եւ ընկ-
կա՛լ զցօղ ողբերգութեան լալոյ արտասո՛ւց աչացս
ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութե՛ քոյ՝ քա՛ , և
օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զառ քեզ դաբձն և զդաւանութի՛ ։ Եւ համբուրի՛
շրթանցս առ ճաշակ փրկութե՛ կենացդ հաղորդութե՛
համաշնչակիս զանքակ միութի՛ ։ Եւ զնոյն գթութի՛
նորին ողորմութեամբ ընկալեալ 'ի քէն՝ բա՛րերար ,
գրաւականեսցես զմեծդ պարգև՝ ընդ փոքու հա-
ւատոցս ։ Եւ 'ի ձեռն գթութե՛ սիրոյ քոյ առ քո անձ-
կալի անուանդ խոստովանեալ ծառայիս , դարձցին
ձմերունք հողմոյն խստութե՛ 'ի յօդ հանդարտու-
թեան ։ Եւ մրրկին սաստկութի՛ 'ի սիկ ախորժութե՛ ։
Եւ կարծիք երկիւղին՝ 'ի մեծ վստահութի՛ ։ Եւ պա-
տուհաս պատժոցն՝ յերանութեան պատահումն ։ Եւ
վտանգք թախծանացն՝ 'ի հոգևոր խրախճանութի՛ ։
Եւ ալէկոծութիւն ծփանացն՝ 'ի խոր խաղաղութի՛ ։
Եւ ղեկացն թեւարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն ։
Եւ բերք բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի՛ 'ի թոշակ շը-
նորհաց ։ Եւ յայսքանեացս ամենից բիւրուց բա-
ղուութեցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի՛ անուն հզօրիդ
խնկեալ և խոստովանեալ ։ ամաչեսցէ՛ բանսարկուն
չարեաց՝ հերքեալ և հալածեցեալ ։ ունայնասցին մուր-
հակք մեղաց ։ խզեսցին խաղքն ։ որոշեսցին որո-
գայթքն ։ կապտեսցին կապանքն ։ վանեսցի՛ վիշն ։
վերասցին վնասքն ։ պարսեսցին պատրանքն ։ ջրես-
ցին մեղքն ։ պատառեսցին պարտիքն ։ խորտակեսցի՛
լուծն ։ քակտեսցին քեղանքն ։ Եւ ընդ մեայլ մթութե

չարեացն յանցանաց , և դիւացն բանակաց պաշարո-
ղաց՝ արև փառաց քոյ Ժամանեսցէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել , յաջմէ և յահեկէ , 'ի դիմաց
և'ի թիկանց . և եղիցի՝ նշոյլ առաւօտու հոգւոյդ դար
նայնոյ ընդ ակնկալութիւն սպասողացն քումդ երև-
ման : Զ'ի դու ես բարերար առ ամենեսին , և հը-
նարաւոր են քեզ ամենայնք . և ամենեցուն զկեանն
կամիս , և զիրկութիւն բաղձաս :

4 Զամենապարգև ձեռն յի՛ քի՛ , և առ'ս դարձ-
ցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ սրբոյ բնա-
կեալ միացեալ , և ո՛չ հեռացեալ յանձկութիւն սրտէ
սիրոյ սեռնեկիս . և անեղծական քո նկարագիր՝ նը-
խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
մանս՝ ընդ'ս պահեսցի , միջնորդեալ ընդ քեզ 'ի
մտտեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ ա-
ւետեց՝ երկնից յօրինողիդ : Լո՛ւ քեզ միայնոյ պատ-
ճառիդ , և միոյդ 'ի միոյ պատճառէ , և ունողիդ ըզ
պատճառ միոյ , երրեակ անձնաւորութեանդ և միոյ
ճշմարտութեանդ վայելեն փառք յերկնաւորացն վերհից ,
'ի սրբոցն դասուց , յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ա Էրոպին յուէլուծած էրկին հեծուրեբ՝ նորին հանողէ , առ նոյն
աղերս մաշ Լանաց բանէ : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստ :

* Լան . Լ Զ . :

1 Ընդ՝ զյարմարութիւն պաշտաման բանիս՝ 'ի
խայրեաց հոգւոյս քեզ նոմիրելոյ՝ օրհնեալ
բարեգութ , կցորդելով ընդ խնկազգես-

տիցն զուգամասնապէս՝ խառնեսցեն 'ի յանու-
շութիւն կազմութիւն իւղոյն մարիամու՝ կնոջ բարե-
պաշտի։ Յոր հաւասարեալ նոյնութիւն ընդ երջանիկ
պոռնկացն՝ 'ի քէն ընկալելոցն՝ յաւետահրաշ յար-
դանաց, պարարեսցին մեծապէս իմովս բանիւն նը-
հաստիւ, ընկալեալ յանհաս և'ի բարեբանեալդ գը-
լուխս բարձրելոյդ։ անկշտամբելի 'ի բամբասանաց
սաղմոսին, մի՛ օծցէ զտերև ոստոց դաղութան՝ իւղ
մեղաւորին։ Ա՛յլ արասցեն զօրանալ կրկին յաճա-
խութիւն՝ բուրման խոստովանութիւն այսր մատենի՝
'ի բազումս ազդեալ, համասփիւռ ամենատարած և
աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համե-
մատութիւն նոցայն յիշատակի։ քանզի դու նոյն տէր
զգաստացուցիչ՝ նախնի չարախորհից կանանց մեղա-
ւորաց։ Որոց առակեալ զմարդարէին կերպարան՝
քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, ան-
տուստ առ սոսին անճառ ներդործութիւն՝ 'ի յիս վե-
րաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն։ Ընդ
անասնական գարշոյն կերակրոյ, զբազմահամբար պը-
տուղ ցորենոյդ՝ կենացդ հացի։ ընդ ապականացու
արծաթոյն, զարքունական պատկեր։ ընդ յիմարա-
բար թմբրութիւն գինւոյն, զբաժակդ արեան արար-
չիդ։ ընդ իւղոյն առելոյ՝ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժո-
ղովրդեանն, զօծումն շնորհին առիս դարձելոյ։
ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականութիւ
վերարկուն։ ապարանջանին պճնութիւն, զթռիչս բա-
րեմասնութեան, օրինիւն և աւետարանաւն՝ հան-
դերձ գործական առաքինութիւնն։ ընդ ունկանն
գնդի՝ վայելչականն զարդու, զանստուերս յիշատակ

տրունականդ ձայնի. ընդ քայլս՝ պերճութիւն լանջացն, զլոքնահաւաք աւանդս ուղղութիւն՝ քոյինա-
կրօն լծոյդ քաղցրութիւն.

2 Բայց զի՞ է յայսոսիկ ինձ պարծել, և ո՛չ վերբս-
տին 'ի սոյն պատկառել. Ա.յլ յա՛յլ օրինակ փո-
խեալ զմտեան մաղթանաց այսր ողբերգութիւն, որ
ինչ ինձ է յարմարաւոր, ամի՛ հատուցից զպատիժ
պարտուցս խմոց մեղանաց, 'ի մարգարէիցն տառից
բերել համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից սատիկ դա-
տախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ
բերկրումն նց պարել. յորս հառաչանս, ձայնս հե-
ծութիւն, բողբոջս բարկութիւն, նախատինս խորտակման,
լալումն կարևոր. Ա.յլ մեծիդ այ գթութիւն ամե-
նաժամանն՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութիւն.
առ որս՝ զզջմունս, խոստովանութիւնս, աւետիս, պար-
գևս. լուսոյ երևմունս, խրախոյսս ածայինս, փա-
ռաց ժառանգութիւնս, հրաշից յայտնութիւնս, սքան-
չելեաց տեսութիւնս. Յորոց ոմանք յոյս ընձեռեն,
և ոմանք վհատութիւնս բազում մատուցանեն. յորս
ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ.
Զի եթէ զգեստ այ զվարագուրին պատրուակ,
ասաց եղելիւել, յորում արար ժողովուրդն կուռս
կարկատունս՝ որով պոռնկել ասէ՝ 'ի նս. իսկ որքան
պատիժ անմաքրութեան եղիցի՝ զնծ զգեցողիս ներ-
քոյ և արտաքոյ. Զ արմանամ, թէ զիարդ ո՛չ կի-
զուամ. հիանամ, թէ ի՞նչ ո՛չ այրիմ. ափշիմ, թէ որպէ՛
էյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջա-
խեալ, մանրեալ, խորտակեալ, կորեալ, բաժանեալ
'ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գրոյն.

Ա.յլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի՝ փրկութիւն յուսոյ, զի քնեան աւետարանն՝ կեանս է ամենեւին, ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ։ Որով առ մեղանն՝ դարձն։ առ պարտիսն՝ շնորհն։ առ եղծումն՝ նորոգութիւնն։ առ անօրէնութիւնն՝ քաւութիւնն։ առ վէրն՝ բժշկութիւնն։ առ վնասանգն՝ անդորրութիւնն։ առ պատիժն՝ ներումն։ առ պատերազմն՝ հանդարտանալն։ առ հուրն՝ անձրեւն։ առ պատուհասն՝ պարգեւն։ առ ակնկալութիւն սատակմանն՝ ձիրն։ առ գործարան մահուն՝ կենացն աղաւոթութիւն։

3 Այս զինչ է ինձ զայսքանեաց յիշմանց ՝ի թիւ արկանել, և ոչ զանձառելիսն աստանօր դասել։ Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութի։ յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն։ սոցին ակնարկութիւ՝ ընդ հոգւոյն հաղորդութի։ Այսչափ փրկանք։ բանին սփոփութի։ բարւոք վարձ կամացս՝ առ կշռութիւն գիտողին։ աւազանն կենդանարար՝ հաշտութեն միջնորդութի։ Այս այլք ամենայնք անթիւք բարիք՝ ՝ի բարերարէն բարդեցեալք, աղտոք ՝ի հարկէ, արձակք ՝ի լծոյ։ իշխանականք՝ և ոչ իշխեցեալք։ Այսոքիկ են՝ որ ինձ ՝ի մէջ դառնութեանս մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն։ քանզի եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ և իսկ, ըստ բանի երդողին։ Ոչ փոքրկութիւ որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ոչ նուաստութեամբ հոգւոյ՝ զորդի նախադասեմ, համանփառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչութիւ։ Քանզի և ՝ի դէմս հոգւոյն՝ աբ՝ այս են աղաչանք նախընծայ

սկըզ

սկզբան պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զե-
նանի, զայս աղօթեցի։

Աղօթք, որ նախ քան զպատարագն Յաղուցանի։

4 Ամենակալ բարերար մարդասէր Ա՛ծ բոլորիս,
յօրինող երեւութիս և աներեւութիս, փրը-
կող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հը-
զօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց դոչ-
մամբ հեծու

բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամ էից՝ յանէից։ Եւ ստեղծանին 'ի նորոգութիւն յարուցեալ ամ եղեալքս առ 'ի քէն՝ յայնմ ժամանակի, որ է օր վերջին՝ այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց։ Եղ ինաձանդեցաւ միութիւն կամացն՝ ոչ հօրն իւրում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի։ Մերովս կերպիւս զքեզ աւետարանեաց Ճշմարիտ ՅԾ՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի, և զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զՅԾ-ամարտիցն զքո հեռատեսցն՝ էարաբանական բերանս կարկեաց, և զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամի։ որ վասն մեզաց մերոց մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Ղարէմալ ՀրՀՆԷՈՅ 'Ի ՆՈՅՆ ՀՈՐԴ ԲԱՆԷ, ԴՆՆԼ ՎՈՊԱՀՈՒԹԻՒՆՆ ԸՍՈՅ ՀՐԱՇԱԳԷՍ ՅՈՅԴՆԷՈՅ ԱՂԵԷԱԼ։ ԱՒԵՊՐԱՆԷԼ ՎԷՐՈՊԻՆ ՇՀՐՀԻՆ ԽԱՇԱՇՈՒԹԻՒՆ։

Զաջեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամ անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւդ՝ ստեղծ և անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմեռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ հայր։ որ զնբան պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կենցուցիչ կամաց բարձրեալդ հօր։ Ո՛ որդ՝ ազատեա՛ զմեզ յամ անմաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ քումդ բնակուել։ և մի՛ շինջին առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց

փայլ

փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց խմաստից. վասն զի
զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտ-
տիր վարուց խնկելոց. Եւ քանզի մինդ յերրորդու-
թենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ
ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ
դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես
զմեզ օթևանս պատուական ամ պատրաստութիւն՝
'ի վայելումն Ճաշակման երկնաւոր դառինդ, առանց
պատժոց դատապարտութեան՝ ընդունել զայս անմա-
հացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան. Եւ
հալեսցի՛ 'ի հրոյս յայսմանէ գոյթակղութիս մեր,
որպէս մարգարէին կենդանախաղոյկ կայծակամբն՝ 'ի
ձեռն ունելեացն մատուցման. զի յամի քոյդ քաղ-
զեսցի դթութիւն, ոպ որդւովդ ՝՝ի հօր քաղցրութիւն.
որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառան-
գութիւնն, և զպոռնիկան յառաջեցոյց յերկնային
արքայութիւն՝ արդարոցն երանութիւն. Եւ՝ այո՛՝ այո՛՝
և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր
մարդասիրութեամբ կարօտեալ մեծի, շնորհաց քո ապ-
րեալ, զարեամբ քի ստացեալս. Օ՛ի յայսմ ամի՝
յամի ծանիցի քո ածութիւդ՝ ընդ հօր փառաւորեալ
համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն
գովութեան. զի քո է գթութիւն, և կարողութիւն, և
մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն.

Վ. Երոպին յաւելուած էրիին հեծուելե՝ նորին հանդէպ, առ նոյն աղէրս մաղթանաց բանէ։ Ի խորոց արտից խօսի՝ ընդ այ։

* Բան. Լ. Գ.։

1 Արդ՝ առ այսոքիկ թշնամառատեալ շնչոյս իմոյ խղճք, և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակեաս բանիւ զամենայն՝ ա՛ծ, զոր 'ի նախնին Ճառեալ՝ և յերկրորդումն ցուցիր։ Լսեալ յանդիմանութիւս գրաբանականս՝ 'ի կոյսս բաղմութեանէ ազգաց, և թարգմանութիւս՝ ժողովրդոց, զայս արդարատուութիւս մաղթողականս նուիրեցի, զոր ներբնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք։

Ի հանդիսարանս խօսից սաղմոսի՝ բանս մաղթանաց, որոյ հոգին այ հաղորդեալ հասանէ յօգնականութիւն։

2 Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեա զցող քաղցրութիւնք քոյ, և բարեդործեա 'ի յանձին՝ և յիշխանական ազգման զգայութիւնք՝ զամենալից շնորհս բաղմապարգև քո ողորմութեան։ Լաւ հերկեա զբանական անդաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդունակութիւն արդասեաց հոգևոր սերմանդ։ Զոսմ ամենիմաստ էութիւդ խոստովանիմք զամ պարգևս 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ։ որ ձեռնադրես առաքեալս։ լցուցանես մարգարէս։ ուսուցանես վարդապետս։ բարբառեցուցանես հաւատս, և բանաս զնիակեալ ականջս խլեց։ ոչ ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի, քոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամ՝ քարոզեաց զքեզ՝ ա՛ծ հա-

լաւարակից խակութեանդ հօր։ Շնորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսել համարձակութիւն զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ։ Հետևեալ արա դաթիւչ ընթացիւք մտաց՝ ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Այլ՝ ի մատչել իմ՝ ի գը լուխս հանդիսի՝ մեկնութիւն բանի, նախաժամանեսցէ՛ առիս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն և ըզ պիտանիսն և զհաճոյսն քո՝ ՝ի ժամանակի, ՝ի փառս և ՝ի գովեստ ածութեդ քո, և ՝ի լրութիւն շինութեան կաթուղիկէ եկեղեցւոյ։ Այլ կարկառեա՛ ՝ի վե՛ր իմ զամենամերձ աջ քո։ և զօրացո՛ զիս շնորհօք գթութեանդ քո։ Փարատեա՛ ՝ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զկաւարս մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ ՝ի կենցաղոյս երկրէ ՝ի բարձունս։ Լուսաւորեա՛ ՝ի յիս վերստին՝ զծագումն անստուերս հրաշից գիտութեան ածութեան քոյ՝ հրզօր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց ածասէր լսողաց։ Այլ՝ քեզ՝ամ փառք՝ յամի, ընդ հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս։ Ամէն։

Լոկ զհաւատոյ սահման բանի՝ ընտրութիւն շնորհի՝ կենաց կանոնի՝ առ համագոյ նոր երրորդութեան՝ զոյս վարդապետեցի, զոր շաւիղ կարդիդ վերանկարէ։

Երրորդութեան անհայտաշնչական նորոգ ապեղծաբանութիւն, ապրեալ ՅՈՒ, յոր ինչ ՝ի նիւթոյն ասկանէցաս հաւատոյ։

3 Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ երրորդութեանն։ Միութիւն անձառ։ միշտ

բա

բարի. նոյնագոյ, հաւատարապատիւ. անհաս իմաստից թեւոց սլացման, ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն, դերաղանց գոլով սահմանի՝ անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւիտեանս անտարրափակ էութեց, ստեղծակացաց կարգաց, օրինաբանութիւն անթարգմանելեաւ՝ ամենահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ. հաստիչ ժամանակաց՝ և որ ի ժամանակի են կերպաւորեալք. ինքն պատճառ հանդերձիչ՝ և յարմարապէս յօրինիչ՝ տեսականաց և աներևութից։ Ոչ անուամբ չափեալ. և ոչ յորջորջմամբ նշանակեալ. ոչ որակութեամբ նմանեալ, և ոչ քանակութեամբ կշռեցեալ. ոչ օրինակաւ ձևացեալ, և ոչ որպիսութիւն ծանուցեալ. ոչ ի թերութենէ տապտեալ, և ոչ ի լրմանէ ամփոփեալ. ոչ ուրեք երբեքի դրաւեալ, և ոչ ի տեղւոջ վայրի երևեալ։

4 Այր գթութեց՝ ունող ամի, և ած հանուրց՝ որ յերկնի և որ յերկրի, բաց ի բանէն մայնոյ՝ որով զամ՝ ինչ ունի։ Ստեղծիչ և տուիչ ընչից ամենից, բաց ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհամայնն կազմեաց։

5 Ո՞ւրեմն յերջանկափառ համաղօր ահաւորութենէ երկնչն անձնաւորուէց, խոնարհեալ ի վերուստ՝ աստուստ ի ստորինս. որ էրն իսկ ի բնէ անբաժ ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ, և անկարօտ դիմացն ծնողին իւրոյ։ Ո՞տեալ ի սենեակ կուսին արդանդի պարզաբար, և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս՝ անորոշելի. անթերի

մարդ

մարդկութիւն, և անպակաս ՅԱԾՈՒԹԻՆ։ Մի որդի
հօրն միայնոյ, և միածին անդրանիկ՝ ՅԱԾԱՄԱՅՐ սի-
րածին կուսին, արարիչն՝ յերկնականումն մարդ ելով
Ճշմարիտ սկզբնածին. ահա ոչ զկնի եղելոց երկրա-
ստեղծիցս նմանութիւն, այլ նոր և չքնաղ, թագաւո-
րաց վերհափառ, որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյա-
ցաւ 'ի ժամանակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին,
քան զամ թագաւորս երկրի. անապական խառնու-
թիւն՝ կերպացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգ-
ւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յոյսն
նապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ. ոչ փոփոխեալ
և ոչ անջատեալ։ Այլն ինքն եկեալ կամաւորութիւն
'ի խաչն մահու, իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ վա-
րեցաւ, և հանդերձեաց զոչրեղ ինքնիշխանութիւն՝
զարարածոց իւրոց փրկութիւն. չարչարեալ իսկութիւն
կենդանեաց՝ եդաւ 'ի շիրմի անոտոշելի յԱԾՈՒԹԻՆ.
եռօրեայ թաղմամբն՝ 'ի դժոխս սանդարամետակա-
նացն վհատելոցն բանտարգելեցն՝ քարոզեալ ցու-
ցաւ նորոգումն և լոյս։ Այլ աւարտեալ զտնօրի-
նեականացն զփրկանաւորն զտնտեսութիւն, ԱԾԱՊԷՍ
վերակենդանացեալ. և կառավարեալ 'ի թիւս հողմոց՝
ելեալ 'ի քրովբէս՝ ամպով անքննութիւն ծածկեցաւ.
համբարձեալ դեր 'ի վերոյ ամ երկնի, նստաւ Ճո-
խութիւն յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն
հաւասարութիւն, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսա-
ցաւ, անկորուստ առեցելովն, և աննոմազ սեպհա-
կանութիւն։ Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուց-
մանն, քննել զծածկեալսն կշռութիւն չարիոյ՝ արդար
իրաւանց. որում սոպասեմք, և յոր աղօթեմք, հա-

ստացեալք յամի՝ ամիսն ամենակալ տրութեան նորա. որ արդարն մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փա-
ռակցութեան յաւիտեան երկրպագեալ։

6 Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր, և զհոգի էութեան նոցին՝ ամենազօր. Հնամ-
րիտ, կատարեալ, և սբ. որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամ. ինքնագործ հոմիշխան երկուցն և ընդ նմին՝ անեղծ և անսահման թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին, և բանն ահաւոր նորին ինքնուրեն, նոյն ինքն և հոգին բարձրացեալ։ Բարի՝ ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգևս՝ 'ի գո-
վեստ անուանն փառաց միածնին. որ ազգեաց յօ-
րէնսն, շնչեաց 'ի մարգարէսն. փչմամբ ազգակցին՝ տպաւորեցաւ յառաքեալսն. կերպիւ աղաւնւոյ ցա-
ցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծութիւն փառաց եկելոյն. փայլեաց 'ի գիրս աւանդականաց. տրար հանճարեղս. զօրացոյց իմաստունս. լցոյց վարդապետս. օծ արքայութիս. օժանդակեաց թագաւորս. եռ վերա-
կացուս. հրամանատրեաց փրկութիւնս. շնորհեաց ձիրս. հանդերձաւորեաց քաւութիս. զմկրտեալս 'ի մանն քի՝ 'ի բնակութիւն իւր մաքրազարդեաց. զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց. և ինքն է ածխնկեալ տիրապէս՝ ամ յամ։

7 Բանզի ո՛չ նախանշումն յերրորդութեանն ոք մեծ ինչ քան զմիսն. և կամ զնոին անուանիցն՝ նուաստագոյն առ նմանն. և կամ 'ի մինն ասելով խառնակուն գոլ դիմացն. և կամ յերիցն արհուստ՝ ուրոյնութիւն եալ կամացն։ Բանզի անմեծար հայր՝ ամիսն, եթէ ո՛չ զբանն ունիցի ինքեան զօրութիւն.

որպէս ոչ դողով ընդ նմա հոգւոյն՝ անհագագ ումն և
անկենդան՝ և առ ամ հրաման նուազեալ։ Իսկ բանն՝
եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որբ ումն՝ և կամ
լքեալ, և կամ 'ի մահացուն ու�մնէ ոչէի։ Որպէս և
հոգին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի, ապա-
շուք ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի։
Ա.յլ եթէ ոք հակառակական բանիւ՝ յաւակնի կապ
տել զհայր 'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն,
յորժամ և չէր, և անբանութենն բամբասանօք պատ-
ուել վարկանի զվերին մեծութիւն, և կամ տրկութի
տացէ բոլոսոլին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգևոր,
որով այլ իմն գոյութիւն օտար՝ մուծանել, և կամ
ամբոխումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութ-
նբ երրորդութենն, զայնպիսիսն՝ քարամբք պարսից՝
հաւատոց բանից, իբր զդժնդակ դեւս դիմամար-
տիկս գազանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալա-
ծեմք. եղեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք
Ընդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի։
Ուստի զնբ երրորդութենն փառաւորելով 'ի նոյն
տէրութի միակցորդ հաւասարութեան, զուգաձայն
արքայութիւնք, հանդուգնատիպ հարթութիւնք, օրհ-
նեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, 'ի ժողովս
անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց,
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

8 Ա.յդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպա-
ւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց
մեծիդ ոյ ընծայեցուցի. սովիմբ սպառաղինեալ,
և ապա մտի 'ի հանդէսն։ Ա.յլ ոչ եթէ կարօտեալ
իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ միչչև ստեղ-
ծեալ

ծեալ էր քո զամ՝ նախ քան զլինելն երկնի, փա-
ռաբանչաքն անմահից՝ և երկրաստեղծս բանաւո-
ղաց, դու քեզն 'ի քումդ լրութիւն՝ փառաւորեալ
իսկ էիր, այլ զի զմերժեալս զիս յարդեսցես՝ ան-
ճառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղոր-
դութեամբ։ Իսկ զինչ պարտ ինչ ըստ արքունական
հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ ասել ադոնայի տէր,
և զհրամայեալ պատուիրդ ոչ առնել. որ ինձէն իսկ
զիս զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ
պատգամի, զգրեալս մատամբդ ոյ՝ եղծի, որ և խոր-
տակեցն է իրաւացի. և ես տխրատեսակ մրով՝ զերկ-
ղորդն նմանութիւն առեալ հայթայթեմ։ Զ. Յլ արդ՝
քանզի բազմաք պաղատեցայ դրոշակաք խանդաղա-
տականաք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարդ ձայնի, լուր
բարեգութ, ըստ ամին բանի՝ այնմ ամի։ Զ. Զնկի՝ և
այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յոդեալ
ընդ նոսին. թերևս 'ի մոքրոց և 'ի կամաբարից այս
նուէրս հացի՝ պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց՝
'ի սեղան փառացդ քոց մատիցէ։

9 Զ. Յլ դու բարեբար և յամի մարդասէր, քանզ մի՝
ոյ միոյ. հզօր և ամենակալ. որ յաղթես գթու-
թիւն խնամոց քաղցրութիւն քո, ոչ հաստարակականաց
միայն մարդկութեան՝ խոց գոյակցաց, առ որս յա-
ւէտ է ամբոխութիւն և բիւրամանեայ հակառակու-
թիւն, այլ և հրեշտակացն անախտականութիւն. նաև՝
և ևս քան զայս՝ սրբամանելոցն անարատութիւն, յորոց
մի էր և հեղնաս. որոյ ցոյցք խստութիւնն՝ 'ի քորեբ
լերինն նշանակեցաւ յերիս օրինակս. 'ի շարժումն
մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ

քոյդ

քոյդ հեղութիւն երկայնմտութիւն 'ի հանդարտութիւն
մեղմութիւն օդոյն քաղցրութիւն . քանզի կամաց ողոր-
մութեաց՝ դու միայն ես , ըստ գրեցելումն . Լա՛ւ զի
թէ և հաճոյք դատան մերասերքս՝ առաքինութեամբն
յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային , սակայն
երկրածինք են և նոքա , ընտրեալք 'ի մարդկանէ .
իսկ դու ո՛չ ունիս չարանալ՝ իսկութեամբ բարիդ .
յամի օրհնեալդ . ամենևին փրկութիւդ . ամի՛ հան-
դիստդ . համայնից անդորրութիւդ . համօրէն ախ-
տացելոց՝ դեղ առողջութիւն . աղբիւր ջրոյ կենդան-
ւոյ , ըստ երեմիայ . Լա՛ւարձ առիս և ողորմեա՛ ինձ .
որ այնքան ծարաւեաս պապիս անկարօտդ ա՛ծ՝ ի-
մա՛ւ փրկութիւն , մինչ զի զո՛ւարթնոցն երկնից ան-
մահից օրհնաբանողաց՝ բան իմն ընծայեցեր մարդ-
կօրէն փրկական քահանայապէս և քա՛ւչապետաբար՝
անեղծական յարակայութիւն՝ միանձնաւոր պաղա-
տանս օրհնեալդ քո դթութիւն՝ 'ի մերոց դիմաց կեն-
ցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութիւն մաղթել ,
ողորմեա՛ եղէմի . որ է լուսաւոր խորհուրդ յայց ե-
լանելոյ մեծիդ յայտնութեան , առ հրեշտակականն
թափուր տեղի ստորանկելոց , 'ի ձեռն մարդկան՝ քո
կցորդութիւն՝ աւետարանեալ առակաւ այսր օրինա-
կականս եղէմի .

10 Լ՚ուրարև լո՛ւար՝ բարեգութ . անսացեր թագաւ-
ւոր . ունկնդրեցեր կեանք և յոյս . 'ի միտ ա-
ռեր երկնաւոր . յարդեցեր հրէզօր . նկատեցեր ծա՛ծ-
կագէտ . տեսեր խրնամակալ . կարեկցեցեր ա՛նպա-
տուա՛մ . խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ . նո՛ւաստացար
ա՛հաւոր . յայտնեցար ա՛նձառ . ամփոփեցար ա՛նսահման .

քանակեցար մինչնին։ մեծար Հառագայթ։ մարդա-
ցար անմարմին։ շշափեցար մինչանակ։ կերպաւորեցար
անորակ, լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս։ Զու-
իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթ-
նոցն՝ բարի բարեխօս։ միջնորդ կենդանի։ պատա-
րագ անմահ։ սպանդ անվախճան։ նուէր մաքրութեան։
ողջակէզ անծախ։ բաժակ անսպառ։ Ահա ողոր-
մած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեացես առ
մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդա-
նատուն, դովեալ երկայնամիտ։ և քեզ վայելէ
փառք յաւիտեանս։ ամէն։

Ա էրոպին յաւելուած էրլին հեծուրէ՝ նորին հանողէ, առ նոյն
աշէրս ոաշնանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ ոյ։

✳ Բան։ Ա։

1 Աւարդ՝ տէր զօրութեց, մեծութի ահեղ,
անտարակոյս տեսաւորութիւն, կամք ամենի-
ընդարձակ, առատութիւն անպակաս, ոմիզոք
զօրեսցէ տօնել Հանդիսին պարերգութեամբ՝ ի միոյ
կաթուածոյ ցօղոյ քումդ բարութեանէ, որ ցանկ դե-
դերիս պատրաստել պատճառս հնարիցի՝ խմում փրը-
կութեան։ Զու զոր մեծն է դրեցիր՝ պատմել յա-
պառնիսն։ քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր,
և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և
զերկինս զամբարօք նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ
գրեցեր երբէք սիրել զնոսա։ այլ առեր ի պատիւ
մեծաց դովեստից առաջին դասեալ զմարդասիրու-
թիւնն։ Ա՜ որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն

ան

անձառ 'ի խորհուրդս սոսկալիս. զերկնայինս լու-
սակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և զլեռ-
ւորս յատուկ մատակարարութեց. իսկ զստորնային
ծնունդս մահկանացուաց՝ տիրական և ածական պաշ-
տելի անուամբդ պերճացուցեր։ Նոցեալ վերստին
ըստ սահման կշռութեան ջափոյ, լայնեցեր քեզ կտակս
գրոց՝ ճառից անբաւից՝ զանազակ ծորմանն ծոյ-
ռադունին վերնում բարութեն։ Լուս և 'ի մարդա-
նալդ քո միդ յեութեէն, ոմանց վա՞ ինքեանց, և կի-
սոց վա՞ այլոց՝ զեղեր առատութիւն զտուրս կենաց.
արուեստս բազմօրինակս. սքանչելիս ածադործս.
նշանս ճշմարտատեսիս։ Ա՞ղ զի թէ անդամալուծին
պակասելոյն 'ի հաւատոցն, հոգաբարձայն առաջար-
կութեամբ զցոյցս յուսոյն՝ դիմացեալ ողորմեցար,
և որչափ զօրեսցէ առաւել բան քո ամենակար՝ առ-
ախտալից մարմնոյս մաքրութի աղաղակողիս հառաչ-
ման. քանզի արդարև մեծ են չափք հրաշից՝ քան
զանմաքքեալս հոգի՝ ա՞ր հաստել, զլուսացեալս պատ-
կեր՝ անտիրելի աղտոյ ներգործել. նա զի և երկ-
րորդս առաւելութիւն յաւազանին շնորհ յաճախեալ՝
զփառան հայրենի բարձրացուցանէ։

2 Դու ես տէր, որ սրբեաս զմեզ, ո՞ղ ընտրեցելոյն
քոյ նախատապաւորեցեր մովսէսի. դու ես, որ
'ի մեղս և յանօրէնութիս՝ վերակացու եղեր տոհմին
յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի՝ ընդ խա-
ւարն հեթանոսաց ընտանեոյին։ Դու ես, որ օ-
րինագէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ
բանի երգողին դաւթայ. դու ես, որ փոխատրես
զբարեղէն սրտից կարծրութի՝ 'ի լոյծ կակղութե՝
մարմ

մարմնոյ դոյութիւն՝ բանի ընդունելուն։ Զոր ես,
որ բաւես ընձեռել սիրտ այլ, և Ճանապարհ մի՝ երկին
չել 'ի քէն՝ զբովանդակ կենացն սահման. դու ես,
որ տան զերկիւղ քո 'ի միտս խստուն՝ առ քեզ ուշ
ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

3 Օրհնեալ քո շնորհանդ՝ զաշխարհաստեղծ բե-
ռանոյդ՝ զաստեղէն անձրևացդ զկեցուցանողդ
կաթուած, մատո լսելեացս դրանց բացարան, որով
զձին խորամանկուի՝ բանսարկուին թիւնից՝ բարձ-
ցես և բժշկեսցես։ Մենակալդ ձեռօք՝ զնոսանա-
կանացս շարժողական գործի ըմբռնեալ՝ աղդեա զօ-
րութիւն ձայնի. որ տաս բնաւից ընտրութիւն բանի,
զի դաստիարակեալ զպատշաճականն՝ մի՛ յանդգնա-
բար խօսելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ, և
անբանութեամն նեցայց վանեալ յորսողէն։ Ուսա-
ւորեա վերստին զնաւարեցեալ հոգւոյս աչս՝ կեն-
դանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի՛ համարձա-
կութեն շինչեալ լապտեր՝ ընչմամբ վիշապին՝ 'ի ներ-
քոյ գրուանին ստորածածկեցայց։ Խարձ զանօրէ-
նութիւնս իմ տէր, և ընկեա 'ի խորս ծովու. որ է
փոքր առակ մեծութեան քումդ անբաւութեան, ըստ
մարգարէին, զնմն ընկղմել ջրութիւն։ Կանգնեա
կործանեալս անձին՝ նշան վստահութեան, զի մի՛ յու-
սահատութեն կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն
բողոքեսցէ։ Խաց տվ՛ զօր և գթած, զբժշկարանիդ
կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշա-
կութեան կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ
հուպ առ արմատ խուզեալ ինձեսցես։ Զէմ եղեալ
հեռեալ առ քեզ բոլորիցդ ած, պետրոսեան օրի-

նակութիւն, 'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկղմելոյ, մատն ժամանեսն զաջդ կեցուցիչ՝ յօդ նականուն ինձ սասանեցելոյս։ Ընդ քանանուհւոյն ձայնի՝ 'ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս՝ ապականասպաս կաղկանձողական ամենաթշուառս վտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ 'ի բազմաղեղդ քո սեղանոյ մասնաւորեսցես։ Ա՛յսր փրկութիւն նիւթոյ խորանիս՝ որդւոյս դառնութիւն, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս։ Օ՛ի քո է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն. և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն. և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

Ա՛յրոպին յաւելուածք կրկին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբրս ծաղկեանաց բանի։ 'Ի խորոց որոյ խօսի՝ ընդ ա՛ յ։

✻ Բան. Լ՚Օ՚։

1 Ա՛ւ քանզի անթիւ են յաճախեցեալ, և դեբաղանցութիւն միշտ առաւելեալ, փրկանաւորդ արդասիք շնորհաց՝ առ պարտուցս իմոց առաւելութիւն, ջերջերանացդ հանդէս և յանձնառութիւն։ Օ՛ սիրդ ամփոփիչ՝ ամենից հոգւոց դոյից արարիչ՝ 'ի դործարանի մեհեան՝ նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկութիւն իմ ընդդիմութիւն կամաց քոց՝ լքցես։ Օ՛ ընթացողականդ լծակցութի՝ երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութիւն պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մեծութեր, զի

զնախաւ-ցեալս վայրապուՔԻ ԹՇՒառացելոյս՝ դրա-
ւականեսցես դԹաՃաբար։

2 Ա՛Է դօսանալ ձեռաց կռփողացն հրամայեցեր՝ օրհ-
նեալ դաղաԹանդ, որ զԹզենւոյն տունկ՝ առ-
ժամանցն չորացուցեր, զի և զառիս ներբելոյդ օրի-
նակ՝ կանխաւ աւետարանեսցես։ Ա՛Է դանողացն ա-
ղիրաստուԹԻՆ զնոստոսանեալդ ՃԾ՝ սպառնացար, որ
զարուսեակն մԹացուցեր, զի մահացելոյս անձին՝
բարուԹիւն՝ հանդստեամբ հանդերձ գործեսցես։
Ա՛Է զՄայհոյեցացն հնարաւոր չարաբանուԹի կապտե-
ցեր, որ զլուսնին պատկեր՝ երանդաւ արեան գու-
նեցեր, զի զանհամարձակ լեզուս՝ ՚ի գովեստ քեզ
զօրացուսցես։ Ա՛Է նախատողացն մՒլեգնուԹԻՆ սաս-
տեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զԹշՒառացելս
դլուխ՝ գԹուԹԻՆդ օծմամբ իւղեսցես։ Ա՛Է ՚ի մոլ-
որեցուցիչն կարդալ զքեզ ՃԾասպանիցն՝ զոդՒՃԾ
ԾՆօտիցն բաժանեցեր՝ քակտեալ ՚ի մՒմեանց, որ ըզ
կարԾրուԹիւն վիմացն հերձեր, զի զանուանակս բա-
րեաց հոգիս՝ ՚ի բերմանէ ընդունայնուԹԻՆ՝ ողոր-
մուԹեամբ հանդարտեցուսցես։ Ա՛Է զպահապանացն
սուրս՝ ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորովայն
օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս
մարմնոյ ոսկերս՝ իբր ՚ի դանձարանի պահեալ, կե-
նաց յարուԹեան արժանացուսցես։ Ա՛Է ՚ի կնքելն
զշիրմին փականս՝ կենդանակիր քո դերեզմանին՝
անդրէն յորսայսելս զնոսին՝ յանդունդս երկրի սու-
զեցեր, զի ՚ի տապանակի անձինս՝ զնշխար լուսոյդ
հանդուսցես։ Ա՛Է ՚ի համբաւելն զքեզ կորուսեալ,
և իբր զերկրաւոր մարմին դողացեալ, համայնաջինչ

և ամենասպառ՝ զսերմն ծննդոցն կրճատեցեր , զի զնս զանարժանս յիշատակի ընտրութեան բարեաց՝ անկորուստ և անվնասելի՝ ընդ փրկիչ եղլոցն հաղորդեսցես։ Ա՛է յարծաթոյն կրկնակապէն կաշառաձը գութիւն , որ 'ի գանձարանէ հօր քում նոր իրաց՝ քեզ դրաւ մատնութիւն և անարդութիւն մատնաւորեցին՝ զուրացողացն մոլեգնելոց , ըստ հին հարուածոց հանդոյն մովաբու , 'ի յարձան քարի յեղանակեցեր , զի զնս զվերիպեալս 'ի հաստատութենէն՝ և ընդ իշխանութիւն մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ՝ 'ի հաստատութիւն վերստին կառուցես։ Օրհնեալ կրկին , օրհնեալ վերստին , յաւիտ միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն։

Ա էրոպէն յաւելուածք էրկին հեծուրեաւ՝ նորին հանողի , առ նոյն ողբրս նաղ նոանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աւ։

* Բան . Լ.Լ.։

1 Ընդ՝ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգևաց առ խմբերասխիս , ոչ ամենադութ բարեբար գովեալ և ամենալոր , թէ և սակաւք շարագրեցան աստանօր եղեալ , այլ արքայազունք են , և իշխանականք ինքնակալութեց . որդիք զօրութեց , ծնունդք վեհից . մեծափառք , լուսանորոգք , և հրաշապատիւք։ Յաղթողական վերամբարձութեաւ՝ դրօշիւք հռչակեալք , ըստ գլխոց գլխոց պսակապաճոյճ գեղազարդելոց , բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց , Համբոյրս հեզս՝ երջանիկս և խա-

ղաղակեաս՝ ՝ԾԾային հարազատութեց՝ այնոցիկ նա-
հանգաց, զորոց մարդարէն մաղթեաց ասելով, զար-
թո՛ տէր զզօրութիս քո, և եկ կեցուցանել զմեզ.
ոչ թէ յոյժ զօրեն հալածել զմեզ, և զանյուսութեն
կարկուտ՝ հալել և փախուցանել, քան թէ նախա-
մարտիկն զինուորութի երկնային պարուն՝ զդիշե-
րավարն խաւարասէր սկզբնաներհակ՝ բարուոյն ՝այ.
ՀԱՆՁԼ և զընաւն այսքանեաց ձրից՝ որ ՝ի բարձ-
րելոյն ինձ անձրևեցաւ, տկարիս՝ թշնամւոյս՝ և ա-
պախտաւոր ծառայիս, անձառ է ասել. իսկ եթէ
համարձակեսցի ոք՝ զօրել խօսել, զսակաւս ՝ի բազ-
մացն՝ քան թէ զիսկութիւն համանգամայնիցն. առ
այսոսիկ՝ զառաջին նիւթն յիշելով՝ յորմէ հաստե-
ցաւն, իբր զտկար ոք նկուն՝ ՝ի զօրութենէ մեծէ
հեղբեալ պարտեսցի.

2 ԱՅԼ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ ըղ-
նոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և
կատարելութիւն հաստողիդ, և առ բարիսն իմ ջար-
ժանութի, սակայն ամենալոյս աննախանձ և բազ-
մաղեղուն գովեալ արարչութեդ զօրեղութե՝ վա-
նեալ են կարծրութիք արտաքերութե սրտի բան-
սարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վկայեաց-
թե, սպառմամբ խոպանացման աղբերացս երկուց,
որ ՝ի զդայական եդեմայ բղխել պատրաստեաց տըն-
կօղն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ ՝ի յիս բա-
ղեգործութե կենսատուն կն դրախտ, ահա մի՛ ցա-
մաքութե արտասուացս՝ աղանդաւոր պատրանօք
ջարաչար խորամանկեսցէ վերստին հանել ՝ի փափկու-
թե նախնում վիճակին. Իսկ յորժամ կացցէ ՝ԾԾ՝

համբարձեալ հրաշիւք արուեստից՝ 'ի մէջ ասառուա-
ծոց հաշտարանացն խաղաղութեամբ, բարձեալ ընդ
ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամ վնասակարութիւք
խարդախութեց՝ և կարճմտութիւք արտնեղութեց,
իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բաղնեցեալ
ցնդին՝ ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ
հողոյ՝ խորտակմամբ փշրեալ։

3 Ա՛ռդ՝ զև իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին յոբայ՝ 'ի
մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին
հրամանիդ՝ մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
սոսկմամբ սասանեալ յամ կարծեաց, ապաւինիմ և
արդ՝ անձամբ բեկելով 'ի յոյսդ հաստատութեանդ
անեղծ. զի ողորմութիւն նայեցեալ 'ի յիս՝ իբր
'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարերա-
րութեան երկնայնոյդ յանդիման եղեալ՝ ապաձեռն
անթոշակութիւն, զքոյդ երախտիս անպատում փա-
ռաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ
մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթափմամբ
աչաց ընդ միջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես։
Վերացո՛ յինէն աղաչեմ զքեզ, խաչեա՛դ լուսոյ՝ ըղ-
խեղդ վտանկիս. հոգարկութիւն տրտմութեդ՝ զտա-
րակուսելի տխրութիս. փշանիւթ պսակաւն՝ զբոզ-
բոջ մեղացս. զարկո՛ւածով դանին՝ զհարո՛ւած մա-
հուս. ապտակին յիշմամբ՝ զկարիս աւեթոյս. թշնա-
մանաց թքոյն՝ զանդոսնելի դարշութիւնս. լեզուոյն
ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութիւն։ Ա՛հա՛ քո են
այս ամ բարութիւք անբովանդակելիք՝ այ միոյ միա-
ծին որդի. առ որովք զշարութիս իմ յիշատակեալ՝
զամենօրինեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ՝

խմնալեացս պաղատանաց։ Տէ՛ր ի խոստովանութիւն զղջման պարտութիւնս ամաչեցելոյս, և տուր ողորմութիւն որդւոյս սատակման մահուն անմահի. զի ի բազմութիւն խնդաց մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւելութիւն՝ քո ողորմութիւդ աւետարանեսցի, հոչակեալ հնչմամբ ահաւորութիւն յերկնի և յերկրի։ Այս քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք՝ յաւիտեանս. ամէն։

Ա Էրոպին յաւէլուածք էրէին հեծուրէ՝ նորին հոչոզէ, սա նոյն աղէրս նաշլնանաց բանի։ Ի խորոց որոց խօսի՝ ընդ ա։

✻ Բան. Լ.։

1 Բայց արդ՝ որպէս երբեմն յայլ ընթերցուածի՝ որ ի սկզբնաւորականացն կարգի՝ ըստ մեղանացն զնաւարայնն ծնունդս դրնաւորացն՝ օրինացն՝ մարմնականացն անդամոց՝ դրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութիւն բանի՝ զլուսածնելոցն զաղատարարն օրէնս հոգւոյն կենաց՝ որ ի՛ սոր յա՛ յիշատակեցեալ նո՛ւազս յոքունց, իբր յանբաւ բազմութեց ծովու՝ կաթիլ մի առեալ։

2 Բանզի են արդարև կայսերականք ոմանք ի բարձրութենն գահի բազմեալք, թագաւորն՝ և սիրեցեալք իւր. արքայն՝ և պատուաւորք իւր. պահէնն՝ և իշխանականք իւր. բարեհոչակեալն՝ և հնչմունք իւր. յաղթողականն՝ և փոդք իւր. զօրաւորն՝ և մարտիկք իւր. դասեցեալն՝ և փառք իւր. փեսայն՝ և

պա

պարտաւորեալ իւր. դշխոյն՝ և օրիորդք իւր. փեսա-
ւէրն՝ և հանդերձանք իւր. ազատութիւն՝ և շնորհք
իւր. այցելութիւնն՝ և ձեռն իւր. խոստումն՝ և
քաւութիւն իւր. պահպանութիւն՝ և աջ իւր. պար-
գևն՝ և զարդ իւր. նշանն կենաց՝ և ամրուի իւր.
կնիքն՝ և նկարագիր իւր. ամպն՝ և հովանի իւր.
արուեստն՝ և հրաշք իւր. հոգին՝ և անեղծութիւն
իւր. բանն՝ և կատարած իւր. ուխտադրութիւն՝ և
լրումն իւր. զօրութիւնն՝ և հրամանք իւր. լուսաց-
բանն՝ և պանչելիք իւր. մանանայն՝ և անապակա-
նութիւն իւր. վէմն կենդանի՝ և վտակք իւր. սիւնն
հրոյ՝ և ճառագայթ իւր. որոտումն՝ և ազդմունք
իւր. յոյսն վերին՝ և փրկութիւն իւր. ծառն օրհնու-
թեան՝ և պտուղք իւր. բարունակն՝ և բարուիք իւր.
Եւ զի մի՛ զբնաւն ասելով՝ յամենայնէն վերիպե-
ցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութի,
'ի շատն ասել լռեցից՝ և 'ի սակաւն ժամանեցից, բա-
ւականացեալ ամենապիկար կարիւ.

3 Բայց աւա՜ղ յաւէտ աստանօր՝ թշուառացելում
եղկելի անձինս. քանզի կարգ բանիս բերէ ինձ
խառնել ընդ ձայն աւետեացս՝ բողոք գուժիս. վա՜յ զի
ընդ այսոսիկ առ ընթեր սորին գայ, արդարութիւն՝
և կշիռքն. վճիռն՝ և հատուցմունքն. քննութիւնն՝
և լոյսն. յանդիմանութիւն՝ և զամբաղքն. մերկութիւն՝
և պատիառանքն. յայտնութիւն՝ և ամօթն. ամբիծն՝
և վաստակքն. թիւրեալն՝ և պատիժքն.

4 Զարձել վերստին աշխար՝ կրկին եղկելոյս. քանզի
գայ հասանէ առ հասկ հասակիս՝ անչնարին բար-
կութիւն, մանգաղն՝ առ հունձն. դատաւորն՝ առ

աստեանն. Հղօրն՝ առ բեմն. սպառնացեալն՝ առ կը-
րուսան. բազուկն՝ առ դատաստանն. գաւազան իշ-
խաւորուն՝ առ Տարուածն. սպառազինութիւն՝ առ նա-
խանձն. Հովիւն՝ առ ընտրութիւնն։ Քանզի բանն՝
զոր խօսեցար ընդ իս, նա դատի զդատապարտեալս
'ի վերջնումն աւուր Տատուցմանն։ Այլ կանխեա՛
բարեգութ, նախընծայ քաղցրութիւն՝ առ նո

ամրութեանց • աղս տեսակաւ , այլ ոչ համեղութիւ •
ջուրս աղտաղտին՝ անախորժելի ծարաւեաց արբ-
մանն • գետինս՝ անօգուտ հերկագործութիւ • սահ-
մանս լքեալ՝ հեղեղավայրս կնիւնոյ • խոպանացեալ
և տատասկաբեր անդաստանս • ածախնամ երկիրս
անձնաւոր , որ բանսարկուին պատրանաց մշակեցոյ •
և ղընծիւղ փայտս պտղակորոյս • հատանելի ծառս
ունայնաբոյս • կրկնամեռ՝ խօտն տունկս անյոյս •
ամենաշէջ ճրագարանս անլոյս • Ա.ըդ՝ վերստին առ-
սոյն բերելով զայս նմանութիւ աւաղականաց , բաղ-
մաք կրկնեցից • որ ամենայն դառն պատուհաս՝ պա-
հեալ կայ հիքոյս • կրճռումն ատամանց , և անկէտ լա-
լումն աչաց եղկելոյս • հայրական ցասումն անսպու-
ժելի՝ դառնութիւ որդւոյս • տպականութիւն անն-
րոգելի՝ մեղուցեալ մարմնոյս • Զոր կշտամբութիւն
գտողիս ջարեաց՝ ախտացեալ հոգւոյս • տարտամ տագ-
նապի տարակուսանաց՝ ելից դերելոյս • զոր երկնային
զօրքն մատուցանեն՝ թշուառացելոյս • ՝ի խրճուն
որոմանցն վկայելով՝ վտանկեցելոյս • ՝ի ձայն ահար-
կու՝ զանբժշկութիւն ազդել լքելոյս •

3 Ա.հա՛ արդարև երգս կատակերգութեան ջնա-
ւրահար պոռնկի • յածեալ և կոծեալ քաջ հրն-
ջեցուցեալ , ողբս ողբմելիս և զկծեցուցիչս , ըստ
առակաւոր բանին եսայեայ՝ որ ՝ի պատգամին տիւ-
բոսի • Զ ի թէ նա զդիպուածն փոքր անցից ա-
պառնեացն՝ ՝ի մօտոյ իմն տպաւորեալ , բողոքեր դի-
մակս դիմակս՝ կերպից կերպից աւաղականաց , ըստ
կոծողացն կպաւելոյ , իսկ առիս ոչչափս և ոչպի-
սիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս • որ գալստեանն

ՈՒՆ սպասեալ առանց վրիպանաց, մնացի անսպառաստ և անհանդերձելի։ Արդ՝ եթէ զդատաստանացն ա-հաւորութիւն կրկնեցից, բազմացուցից ինձ աշխատ. ապա եթէ զփորձն իսկութիւն ցուցից, յաճախէ ինձ երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զայնս՝ և ոչ անագան ապաշաւեցի։ Ա-յլ խնայեսա՛ յիս՝ գլ՛թած, մարդասէր, հրզօր, բարերար, սմենապարգև. քա՛ թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Ա էրոպին յաւելուած էրկին հեծուածքն՝ նորին հանոյչ, առ նոյն աղերս նաղանաց բանի։ Ի խորոց սրտից ելուտ՝ ընդ այս։

* Բան. Լա։

1 Ա՛մենակալ ած բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վտանկի, և յերկիւղէ տագնապի ապագայիցն կարծեաց՝ փրկեսա կարօղ զօրութիւն զերծեալ ի պարտեաց. քանզի բաւական ես յամի՝ առ ամ հնարս զորանալ անբաւ մեծութեամբ և իմաստութիւն անսահմանելեաւ։

2 Եւ քանզի ուշիւ մնացա՝ տեսեալ ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ նկատեմ ինձէն ատանօր կանխաւ զտիւն լուսոյ՝ աբգն յուսոյ, զօրն խաւարի՝ պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յէնից՝ առ պատսպարան փախստեան։ Ո՛չ անդունդք խորոց. ոչ վիհ.ք վհից. ոչ բարձրութիւք լերանց. ոչ անձաւք քարանց. ոչ

կարծ

կարծրութիւք արձանաց. ոչ ծերպք ծակաց. ոչ փա-
պարք փոսից. ոչ սորք հեղեղաց. ոչ բաւիղք խոր-
շից. ոչ շաբմարանք յարիւաց. ոչ ծածկութիւք սե-
նեկաց. ոչ եմակք հովտաց. ոչ ծործորք դժոխարաց.
ոչ վերադրութիւնք բլրոց. ոչ արձակմունք ընչոց.
ոչ անբաւութիւք ծովուց. ոչ սահանք յորձանաց.
ոչ հեռաւորութիւք եղերաց. ոչ ողջմունք ձայնից.
ոչ հեղեղք արտասուաց. ոչ տատանմունք մատանց.
ոչ համբարձմունք ձեռաց. ոչ պաղատանք շրթանց։
3 Ա. յաստիկ սատակութեանց մասանց անճողոպրե-
լեաց՝ դու ես՝ տէր քո, հնարք և դադարք դիւ-
րութիւ և անդորրութիւ փրկութիւ ամենամեղս հոգ-
ւոյ. արդ՝ հայեա՛ ի յանդերձ վտանկիցս շրջապրու-
թիւն՝ միայնդ քաղցր առ ամենեսեան։ Լսեա՛ սու-
սերաւ յաղթական կենաղէն խաչիդ՝ զցանցս վար-
միս, որ յամ կայիցս պաշարեն ի մահ զդերիս. և հան
ի յանդորր՝ զոտս սասանեալ թիւր ընթացողիս։
Բ. ժշկեա՛ զհրատապ ջերմական տոչորումն՝ մղձկեալ
սրտիս. մերժեա՛ զդիւային չարաճնարութիւս շշուկ՝
զո պարտաւորիս. հալածեա՛ զյուսահատ անձկութիւ
հոգւոյս մթութի՝ ջորի կենակցիս. ցրուեա՛ զծխա-
մած թանձրութիւն՝ բռնութիւ մեղացս երևոյթ՝
մոռելոյս ի յիս. կորո՛ զզաղիր թիսաթիպ կրիցս՝ ապա-
կանութեանս կարիս։ Լսորոգեա՛ զպատիկս լուսոյ՝
պաշտեցեալ փառաց մեծութե անուանն հզօրիդ՝ յո-
գիս. զօրացո՛ զշնորհիդ փայլումն՝ ի դեղ դիմացս.
և ի կերպարան տեսութիւ մտացս հոլեղինիս, յար-
մար յերիւրմամբ կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերե
նկատումն՝ նշուլազարդ մաքրութիւ զտեալ զմտայլս
մե-

մեղաւորիս , ՝ն ծածկին կենդանի անեղծ երկնաւոր
լուսով քո ծածկեալ՝ յօրինակս երիս . Օ՛ դու
միայն ես օրհնեալ ընդ հօր՝ 'ի գովեստ հոգւոյդ սրբոյ՝
յաւիտեանս յաւիտենից . ամէն .

Ա էրոպին յաւէլուած ՝ի՛ ՀԵԾՈՒԹԻՒՆ՝ նորին հոգւոյ , առ նոյն
աղէրս ՝ուղղեանաց բանի . 'Ի խորոց սրտից խօսիմ՝ ընդ քեզ .

* Բան . ԽԱ՝ .

1 Արդի՛ այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի ,
հօրդ սահմանորի անքննելի ծնունդ . որ տիա-
ռանայ առ 'ի քէն և ո՛չ ինչ . Որ 'ի ծագել
անստուերն նշուլից՝ ողորմութիւն քոյ փառաց , հալին
մեղք . հալածին դեւք . ջնջին յանցանք . խզին կա-
պանք . խորտակին շղթայք . կենդանածնին մահա-
ցեալք . բժշկին հարուածք . ողջանան վէրք . բառնին
ապականութիւնք . տեղի տան տխրութիւնք . նահանջին
հեծութիւնք . փախնու խաւարն . մեկնի մեգն . մերժի
մառախուղն . փարատի մուայլն . սպառի աղջամուղջն .
վերանայ մութն . գնայ գիշերն . տարագրի տագ-
նապն . չքանան չարիքն . հալածին յուսահատութիւնքն .
և թիւրութիւն ձեռն քո ամենակար , քաւիչդ ՝ամի .
2 Որ ո՛չ երկիր կորուսանել զմարդկան ոգիս , այլ
կեցուցանել , թո՛ղ ինձ զանթիւր չարիսն իմ՝
բազում ողորմութիւնդ . զի դու միայն ես յերկնի ան-
ձառ , և յերկրի անքննելի . 'ի տարրս գոյի , և յեզրս
ծագաց աշխարհի . սկիզբն ՝ամի , և յա՛մի . ամենայն
լրմամբ օրհնել 'ի բարձունս . և քեզ ընդ հօր և հոգ-
ւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս . ամէն .

Ա էրոպին յաւելուած է էջին հեծութիւնքն նորին հսկողի, առ նոյն ազէրս նաղլնանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աչս։

* Բան. ԽԱ.

1 Տէր ողորմածդ թողութիւնք՝ փրկութիւնք և ողորմութիւնք, քաւութիւնք և նորոգութիւնք, բժշկութիւնք և առողջութիւնք, լուսաւորութիւնք և կենդանութեան, յարութիւնք և անմահութիւնք, յիշեա զիս յորժամ դայցես արքայութիւնքդ՝ ահաւոր հղօր բարերարդ՝ և ամենաստեղծ կենդանի դովեալ ամենակատար, մերձ ի հեծութիւն համայն երեղոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ՝ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քոյ՝ և ոչ կապեցեալ, ոչ կախեալ՝ և ոչ բեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ՝ և ոչ անարգեալ, ոչ լցեալ՝ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ՝ և ոչ մահացեալ, և արքայութեն արդարոց՝ մասին անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ, իբաւամբք ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոյն, փառաւորեցեր առ յոյս փրկութիւն խապառ լքելոյս։

2 Որինեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեսս ի կործանմանէս՝ բարերար. բժշկեա ի հիւանդութեցս ախտից՝ ողորմած. յեղերաց մահուս դարձո զիս ի կեանս՝ կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նոին՝ սպասինութիւն. անձամբ մեռելոյս՝ կենդանական շունչ ընծայեցո՝ յարութիւն կեանք անմահութիւն. անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն. ոչ ամենազօր, ձեռն ամենիշխան, մնան

ամե

ամենամերձ։ Կամեաց տէր՝ և փրկեցայց. ակնար-
կեա միայն դթութիւն՝ և արդարացայց. ասա բանիւ՝
և վաղվաղակի անարատ դարձայց. մուրացեր զթիւս չա-
բեացն՝ և անդստին համարձակեցայց. առատաձեռ-
նեա՝ և արդէն 'ի քեզ իսկ պատուհասեցայց. փա-
ռաւորեալդ յաւիտեանս. ամէն։

Ո՛ Էրարին յաւէլուած կրկին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց արարեալ խօսիս՝ ընդ աւ։

* Բան. Լ Գ։

1 Բ ժշկական կրթականութիւն ամենափորձ հը-
նարաւորութեամբ՝ պատճառ կենաց անախ-
տասկանաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝
տէր յաւ քաւ. ածա ամենեցուն, իմանալեաց և տեսա-
կանաց. ահա դու 'ի յիս, ըստ մարդարէին՝ որ ընդ
ասելոյն նոր կցորդութիւն, առ որ բարեզարդ դա-
շամբ այս բանի՝ ընդ քեզ միութիւն, լուսաւորեցայց
կրկին ողջացեալ շնչով և մարմնով, ահիւ կարօղ և
անվանելի։

2 Որ ոչ կարօտանաս սպեղանեաց, առ պատրաստու-
թիւն պատանաց՝ հոգեկան վերայ. ոչ ժամա-
նակի. ոչ միջնորդի. ոչ աւուրց երկարաձգութիւն.
ոչ փոփոխս մատուցանելոյ. ոչ հատման. ոչ խար-
ման. ոչ սրադորձութիւն, ըստ երկրաւորս դեղաար-
ուեստութիւն, առ որս միշտ է վերիպուն և ամենասխալ ստ-
ուգակուստութիւն։ Ա՛յլ քեզ արարչիդ հոգւոց և մարմ-
նոց, ամ ինչ՝ լուսաւորեալ է. ամ ինչ՝ առաջի՛ է.
ամ ինչ՝ դրեալ է. ամ ինչ՝ դիւրին է. համայնն՝

ինա

հնարաւոր է. իմաստն՝ գլխաւորեալ է. խոստումն՝ լցեալ է. կամեցն՝ կատարեալ է. քո կտակն՝ աւետարանն է. քո վճիռն՝ ազատութիւնն է. քո մատեանն՝ շնորհ է. Ոչ փակեալ ես ընդ օրինաց. ոչ պարուսակեալ ես ընդ կանոնաւ. ոչ արգելեալ ընդ նուազութիւն. ոչ խոնարհեալ ընդ հնազանդութիւն. ոչ պարագրեալ ընդ փոքրիկութեամբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ. ոչ վերիպեալ 'ի բարկութիւն. ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ. ոչ սխալեալ 'ի խստութիւն. ոչ ամբոխեալ 'ի խռովութիւն. ոչ դողդեալ յանդիմանութիւն. ոչ փոփոխեալ յողորմութիւն. ոչ պակասեալ 'ի բարձրութիւն. ոչ լքեալ յայցելութիւն. ոչ տկարացեալ 'ի փրկութենէ. Այլ սկիզբն՝ և լրումն ամի. և 'ի քէնն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն.

Ա Էրոպին յաւէլուծած էրէին հէծուելէ՝ նորին հոգողէ, ապ նոյն պէրս մաղնոնոց բանէ։ 'Ի խորոց սրտէց Եղոռ՝ ընդ այ։

* Բան. Խ՚Ա.

1 Ցանասահման, ծնունդ այ հարազատ անթարգմանելի. արարիչ բնաւին եղելոց, քո թագաւոր. լոյս 'ի խաւարի սրբոյ վթացելոց. ընդ մեզ լրմամբ, և ընդ առաքչիդ իսկութեամբ. մերայնովք զքոյինդ ծանուցանող հրաշապէս։ Հայր քո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ, ում փառակիցդ ես արարչութիւն, այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տալոյ դերոյ, մինչև զքեզ իսկ մատնեաց մարդ

մարդկան։ Իսկ դու կարող գոլով 'ի վեր քան զ-
վիշտս՝ զանտեսութեն աւարտեալ խորհուրդ, հա-
ճեցար ընդ պարտեցելումն՝ զմահուն ճաշակել բա-
ժակ՝ անթերի մարդկութիւն, և անպակաս ուծութիւն։
Եւ հոգիդ սուրբ կենդանարար՝ ոչ քոյ, և հօր քոյ
իսկակից, և համապատիւ էութիւն ծնողիդ՝ և ծնի-
ցելոյդ։ Մի երբորդութի կատարեալ 'ի դիմաց երից
անորոշելի հատուածոց. անսկիզբն և անժամանակ.
բնաւին բարերար. համայն կենդանարար. բոլորից
խաղաղարար. ստեղծիչ գոյից, և յօրինիչ ամենից.
անքակուք՝ և միով բնութիւն փառաւորեալ։
2 Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէու-
թենէն՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զզ-
միոյնակ ծնունդդ յանքննին ծոցոյն՝ ոչ անխայեալ
յորդիդ 'ի համապատիւդ և 'ի սիրելիդ, այլ կամաւ
նուիրեաց մահու՝ չարչարողացն զինու, ըստ մարգա-
րէութեն զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն 'ի վեր
հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և
ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն նուրբ նա-
խագրին՝ և ուխտադրութի խորանին՝ և նուիրումն
արեան սպանդին՝ և առակ խորհրդոյ աբրահամեան
պատարագին, զիրկութի թշուառացելոյս՝ 'ի կամաց
կեցուցչիդ յառաջագոյն նկարագրեր. և արդ հիմ
սրտին՝ անձն իմ կործանեալ, ոչ յաճուստ հնարա-
ւորութեց, այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութեց.
կամ ընդէր զնս խառնես՝ յուսահատութիւն սատա-
նայականաւ զմիտս հարեալ. յուսա՛ յաճ, խոստովան-
լեր նմա, և նա հոգայ վասն քոյ, ըստ դաւթեան
սաղմոսին, և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի։
Ի

3 Իսկ

3 Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստատելին՝ 'ի վեր է
քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և
երկրականաց. և եթէ բիւրս կրկնեսցի, ո՛չ լինի չա-
փեալ. քանզի անբովանդակելոյն՝ և բարերարելն է
անձառելի. Զա զի ոմն օրհնեալ՝ զոմն օրհնաբանեալ՝
յերրորդական համադոյութիւնն առաքեաց. իսկ նա
'ի հաճութիւն կամաց առաքչին մեռաւ. և միւսն
ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութի՝ մեծաջան բաղ-
ձանաց մաղթէ. Իսկ համաբարոյ միակամութեանն
ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներդործել, որպ հոգին
կենդանարարն, և բանն բանականին, պայծառութի
փառացն, և կերպարան էութեն. Զ՚ի կեանսն փոյթ.
առ ողորմութինն սթափ. առ ձեռնկալութինն պատ-
րաստ. առ փրկութինն կսղմ. առ առատութինն յորդ.
առ յաճախութինն զեղուն. առ անբաւութինն լի.
առ աննուազութինն փարթամ. առ երկայնմտութինն
ճոխ. առ անհատութինն բարձրեալ. մի երրորդութի
կատարեալ 'ի յանձանց երից. օրհնեալ յաւիտեանս.
ամէն.

Ա՚ երոպին յաւելուած ի՛ բիբլիին հեծութիւնն՝ նորին հանիւղի, առ նոյն
աղերս նաղիանաց բանի. 'ի խորոց սրտից ելեալ՝ ընդ ՀՕ.

* Ման. Խա.

1 Ա՚ւարդ՝ յոյս բարեաց տնկեալ 'ի սրտի՝ անձն
իմ կործանեալ. և գաւառաւն հաւատոց
պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝
զկրկնապլտոր խորհրդոցդ զցանկականիդ գործա-
ման, խոստովանեմ լեր բարերարին ՀՕ. Մտացդ՝
իբ-

իբրև զգործոց. զխորհրդոցդ՝ իբրև զլրութեանց.
զանտեսիցն՝ իբրև զյայտնեցելոց. զսրտիդ ծածկու-
թիւն՝ իբրև զբարբառումն ձայնից. զակնարկութեցն՝
իբրև զարդիւնակաւոր մեղանաց. զաղեղ շրթանցդ՝
իբրև 'ի գլուխ ելելոց չարեաց. զոտիցդ հետոց՝ իբրև
զպատուիրանաւն այ վաղողաց. զձեռացդ ձգումն
առ ցաստումն՝ իբրև 'ի հեղումն արեան գործողի.
զծիծաղելն բնաւին՝ իբրև զկամաւորական լքումն
շնորհի. զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս՝ թէ 'ի
տարադէպս՝ իբր զգործակցութի խաբողին. Զամ-
բարտաւանութիւնն՝ իբր զհին կործանիչ նախատեղ-
ծին բարձրութեան. զսրտին նեղութի՝ իբրև զթե-
ղութի հաւատոց. զմեղկութիւնն՝ իբրև զպարտութի
զօրաւորին պնդութեան. զարտունջն առ վտանկս
կրիցն՝ իբր զուրացութի ուխտին, որ առ նոսն. զա-
պարատանութիւնն՝ իբր զթոռն իմն անդթութեան.
զամբարհաւաճութիւնն՝ իբր ոչ էիւք առ վերնն գո-
ռողութի. զհպարտութիւնն՝ իբր զկամաւոր հարա-
զատ գտողին չարեաց. Զակամայիցն՝ ընդ կամա-
ւորացն. զբռնացելոցն՝ ընդ հաւանականացն. զե-
կամտիցն՝ ընդ բնաւորականացն. զանօրէնութիւնն՝
ընդ ապաստուածութեան. զվիրաւնն՝ ընդ սաստկագու-
նիցն. զնուազունն՝ ընդ յոլովիցն. Զանճառիցն
իմոց՝ իբր զճառելեաց գիտողին. զանդրելոց վնա-
սուցն՝ իբր զնկարելոց աեսողին՝ 'ի յարձան մեղ-
նեստիս վիմի. զթեթևադունիցն առ խտիր մտաց՝
իբր զստուար ծանրութի բեռանց. զինդիր չափոյ
ծածկելոցն՝ իբր զճշդով պահանջումն ստերն սակի՝
'ի բերանոյ կիտին կորիւնի՝ չորեքդրամեան կշռութեն.

զան

զանդնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս ից արագ
ժամանելոց։ Օ այսոսիկ յաճախեա կուտեա կրկին
յանձնառութիւն, վերստին պատմեալ աստանօր մե-
ծաւ հեծութիւն, զչէոցն՝ իբրև զեղեալոց. ընծայեալ
ից զպարտութիւն վանեցեալ անձինդ, զի ընկալցիս 'ի
փոխատուէն զշնորհագ թողութիւն պարտուց մեղաւ-
որին, զոր ուրն արդարացոյց, և հրաշափառանայս հուչա
կեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ
զոջմանն՝ քան զպարսաւանս մեղացն։

2 Բ արդեա և դիզեա անձինդ մեղապարտի՝ բամ-
բասանս յոքունս, զքոյն խոհերս բազմամաս-
նեայս՝ անձն իմ կշտամբեալ յոքնախթանդ բանիւ։
Օ չարութիւն, զանօրէնութիւն, զվրիպութիւն, զառ
'ի մարտին հանդիսէ փախուստ. զպարտութիւնն,
զմոլեգնութիւն, զամբարշտութիւն, զապշութիւն, ըզ
թմբրութիւն, զքունն արթնական, զառ 'ի յընթացսն՝
զնիրհումն, զնորհուրդն օտարոտի, զբանիցն նան-
րութիւ, զզազրութիւն հաճուի, զյամենալն 'ի նմին,
զփափագելն՝ ից ատելեացն, զաներկիւղութիւն, զան-
սաստութիւն, զանհարթութիւն, զթերութիւն, զթիւրութիւն,
զլուծութիւն, զճշդութիւն, զանկապ սրձակումն։
Օ ծիծաղականն, զվրնջողականն, զկատակերգա-
կանն, զդոյթագղականն, զպատրողականն, զան-
դէպ քաջութիւնն, զանյարմար մարտն, զտառանց
օրինի արիութիւն, զխեղդմունս հոգւոյն, զտատանո-
ղականն զերկչոտութիւս, զբազմատեղնեան ճիւղն
զրահեստականս, զանպատկառ փարաքմունն, զգրժ-
տութիւնն, զդժդմնութիւնն, զանդատ ատելութիւնն,
զմարմանելմունն դիւրբմբռնողականս, զփոքունցն

զանկշռութիւն, զխոստմանցն դժբողութիւն, զուխ-
տիցն մոռացութիւն, զնմանեացն այլակերպութիւն,
զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեն մոր-
սութի, զյօնիցն յաւակնութի, զապիրատութիւն,
զինքնասիրութիւն, զնախագայիցն տենչութիւն, ըզ-
հատուցանելն եղեռնականացն, զնոցինն՝ զանշա-
ղշատանն, զվայրապար բերմունն, զընթացակցու-
թիւնն խորամանկութե բանսարկուին։ Օ՜ քանին
սերմնակութութի, զվաճառումն կենացն՝ ընդ գնոց
սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհայրենեացն
ծախս, զկապարանն ձգողական՝ զիսկով լծոյ երնջոց
անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնութիւնս, զյարաթ-
թաւ տղմաբնակութիս, զլքումն լաւացն, զընթա-
դրութիւնս անկարծիցն, զվնի դարձին՝ առ նոյն
դարձ դաժանական։ Օ՜ նորոգ մտացն, զօտար խոր-
հրդոցն, զանկայուն կամացն, զհաչման հաղագին,
զէութիւն շնչոյն, զևսն քան զսահման կանոնացն
դրութե՝ զիշխանականին զամենասփիւռ բաձարձա-
կութիւն։ և զոր չէ ճառելի, և կամ դրելի, և կամ
պատմելի, և կամ յերեսս դիմաց բերելի։

3 Զարդ՝ զիարդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի,
'ի յայսքանեաց տիդաց խոցոտեալ, բաթձեալ
թողեալ այր մի տարագիր անողջանալի, ըստ մարդա-
րէին։ քանզի մի 'ի վերադրելոցդ՝ բաւականապէս զորէ
սատակման։ թող թէ այսքան դասք ապանողաց՝ դըժ-
նէից դահճաց՝ շուրջ պաշարողաց։ Զանաւանդ զի
ոչ այսու և եթ նմանադրութեամբ կշռի տարացոյց
տարժանեցելոյս։ այլ զոր օրինակ անթիւ բազմու-
թիւն կոյտուռաց կարճաց խայթողականաց՝ 'ի ստորին

մասունս ծայրից տունոցն զօրհասական թոյնս բերել-
լոց, և յաման մաշկեղէն արկեալ՝ ամիսոփէ զելեցն
շաւիղ՝ կապարանին շրջափակութիւն, ցուցանի ար-
տաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համբաւք չարի,
և պահեստ կորստեան, և կոյտ կսկծման, և գործ-
նեայք սատակման, և մշակք մահու։ Ա.ՐԴ՝ այսո-
քիկ են ամբարեալքն՝ քո անօրէնութիւն տաժանեաց
թշուառաքիրան թոշակք՝ անձն պարտական կրկին
սատակման. որ կամաւորապէս ընկալար 'ի քեզ, զոր
թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յաղարակի
աշխարհիս. ոչ այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ,
բնաւին ատեցեալ, սիրողդ՝ մոացդ ախորժմամբ՝ ըղ-
լցեալսն ամ անառակութիւն. և զոր առաքեալ ցու-
ցանէ զթիւն բանիցն՝ սարսափելեացն կշտամբողաց,
աստուստ սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր պայ-
մանի, և որ հասեալ են ասէ, յոյ իրաւանցն վերայ.
եթէ որք զայսպիսիսն գործեն, և կամ կամակից են,
արժանի են մահու։ Ա.ՐԴ՝ ես ինձէն զիս ինքն
պարտ վարկայ, կրկին հատուցման՝ կորստեան սա-
տակման՝ 'ի մահ դատապարտութեան. այլ անխայեա-
յիս ողորմութիւն՝ բարեգութ, կենդանի, հրաշալի,
կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւի-
տեանս. ամէն։

Ալ Երուսաղէմ յաւելուածք չիչին հեծուրէ՝ նորին հանդէպ, առ նոցն աղէրս մաղթանաց բանէ։ Ի խորոյ սրտից խօսի՝ ընդ սոյ։

* Բան. Խ.Օ.

1 Ընդ՝ վերիպեալս ես յաւէտ ամենապատիւ, միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ անձին մահու կշտամբիչ. արածօրս զերամակս զաղերս՝ վայրագասունս խօշից արօտականաց՝ դարշութեան մեղաց, նախատ վարձկանութեանց։ Հովիւս տածողական զհօրանս ուղղացն ամայաբնակաց՝ ի վրանս հովուացն, ըստ երդոյն երդոց առիս առակին. որ ոչ իսկ ծանեայ զնս երբէք գիտել, թէ յո՞ւ, և յոյր պատկեր, և վա՞ր դոյացայ։

2 Ա՛հա ի յոտս տանողականս կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, ըստ ձևոյ հրեշտակի կառուցար, իբր ի թռիչս թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել, ոչ յիմար, զնարդ քեզն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիռս անապատականս համարեցար։ Իբր զճրագ բազմաբերանեան՝ ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորութիւն, զի և այսու ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարացիս զաճ տեսանել, և զմնացականացն խմաստասիրել։ Բանականութեն յարգանօք՝ կրկին ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեացիս։ Զեռինդ հաստմամբ՝ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զդրծնականացն տնօրինել զտնտեսութի, իբր կցորդ համացեղութեաբ ամենաբաշխ աջոյն այ՝ ազ կոչեցար։

Իբրեց

Լրեց հարեւրոց՝ և տասանց վեցից յօդիւք շաղկա-
պեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն՝ և պատ-
շաճական մասունս չափոց ազդողականաց՝ հինգ ըզ-
գայութեց, զի մի՛ և երևելիդ նիւթականութիւն
քումդ տեսութեաւ՝ մնացդ դիտման անդատ եղիցի.
զի ոմանք ստուերք են՝ և զօրաւորք. և այլք փոքունք՝
են և պիտանիք. կէսք կարծրակերտք՝ և ազդողականք.
են և գողտրականք՝ և պատուական ադոյնք. դարձեալ
կարեւորք՝ և պատկառելիք։ Լոկ թարգմանութիւք
սոցին տեսութեաւ՝ 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի
անջնջականի՝ մնձն իմ եղկելի, ոչ զի և տարր ժա-
մանակաց՝ և շարունակ հետևման աւուրցն առ պը-
սակ ամին, իբր կանոնաւ իւիւք սահմանեալ մա-
սամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի։
3 Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն
յօդուածք շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քեւ խոր-
հրդածի. իբր զի առանց բնաւից զուգամասնու-
թեան՝ կապակցել լծով հաւանականաւ զլեռն ընդ
փոքրուն, վնասեալ է հաստուածոյն անարատութի՝
յանուն քի ժողովելոցն. ոչ 'ի հատուամն և 'ի նուա-
զութի միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս
'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուածք կազմութե
մարմնոյ քումդ սեռնեկի զգայականի, և շրջեալ է ըն-
տանութի պատկերին յանարդ փոփոխուլի։ Լաւ արդ
այսպիսեաք, և եւս բազմաք անզուգական հրաշակեր-
տութք եղակեան պատկերք՝ կշտամբեալ խսպառ
ոգի իմ գերի, և թէպէտ յառաջին նմանութէն կողոպ
տեալ գտար պատուիրանին յանցաւորութ՝ 'ի դրախ-
տին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնորհիւն

զՀոգւոյն փչումն առեալ, և նմանութիւն ես կերպարանին. և արդ ընդէր կորուսեր զփառան երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր՝ յաղին դարաստանի. ընդէր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելիցն դուռն աղխեցեր. ընդէր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան՝ զախտ արտասուացդ տարժանութեան. ընդէր զլուացեալ զձորձ վերարկուին՝ դարշելի դործովք զաղբացուցեր. հիմ զեղեալ հանդերձին մեղաց պատմուճան՝ անառակութիւն վարուք քեզ արկեր. ընդէր զտանողացդ ոտից սրբութիւն՝ ճանապարհաւն ժանդից աղտեցեր. ընդէր կրկնեցեր իրաւադատին՝ զուխտազանցութիւն հին պատուիրանին. Ընդէր մերժեցար 'ի պողոյն շնորհաց, իբր զադամ 'ի ծառոյն կենաց. ընդէր նենդեցեր քեզէն քո կամաւ՝ զանստուերս յուսոյն յարակայութիւն. ընդէր պատկառանք անհամարձակելիք՝ քոյին դիմացդ նպաստեցեր. ընդէր զինեցար ընդդէմ քո ներհակ, ոմ ընդունարան խելագարութեան. ընդէր որսացար 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետան վստահութեան. ընդէր կարթիւ պատրանաց ածար՝ հաղորդդ մարմնոյ կենդանարարին. Ա.յլ վերատին յուսացեալ 'ի նա՝ կարդա՛ նմա, ապաւէն և լոյս, քաւիչ, նորոգիչ, փրկիչ, կեցուցիչ և կենդանարար. ողորմած, խնամող, մարդասէր, և անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն.

Ա էրաթին յաւէլուած էրէին հէծու�՝ նորին հանդէ, առ նոյն
ազէրս նաղբանայ բանէ։ Ի խորոց սրտէց խօսէ՝ ընդ ոչ։

* Բան. Խլ.

1 Ա՛ւ արդ՝ զինչ գոյ ասել ամաչեցելոյս յե-
բեսաց մեծիւդ ահաւորութենէ, բայց եթէ
համբանալ, և հող ՝ի բերան եղեալ լռել ՝ի
սրտի, ըստ մարգարէութեանն խրատու, ահա ՝ի բար-
ւոյն կարկառեալ ՝ի յոյս։ Իսկ եթէ զնիկանս շար-
ժողութեամբ շրթանցս բացիցս բառնադատեցիցս՝ խօսել
կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական ե-
ղերերգութեան լալեաց բազմութեամբ՝ խէթ մտացս
յառաջադրէ։

2 Ա՛ւ արդ՝ ողբակիցս մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ ՝ի մահ՝ զնորին գոչութիւն երկրորդե-
ցիս և ես ընդ նմին. մեղայ տէր՝ մեղայ, և անօրէ-
նութեամբ իմոց ինձէն վիսյեմ։ Հիւսեալ ընդ նմին
զբանս յիսներորդի սաղմոսին, անթիւս գրեմ ըզ-
պարտուցս սակ՝ անձինս մեղանաց՝ քան զՀիւղ երկրի
հողմահոս փոշւոյ՝ ընդ օդս ամ տարածեցելոյ։

3 Ա՝եղայ յերկինս և առաջի քոյ, ը անառակ որդ-
ւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերըս-
տին դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն
աղերսանայ՝ արտօսրածին ողբովք գոչման՝ ՝ի սբ-
խուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ՝
հայր գթութեամբ ՝ի ծոր բոլորիս, չեմ արժանի կոչիլ,
և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի,
այլ և անպիտան տպաբան վարձկան։ Ընկալ զսո-
վեալս տարագրական, պարտական վնասուց. և զցաւ

քաղցոյս՝ լլկանաց նեղոյս նոմաղեցելոյս՝ կենաց քո
հայիցիդ բժշկեսցես։ Լեր ընդ առաջ քո ողորմու-
թեամբդ՝ ի սկզբնաւորս ապաւինութեան։ զգեցո՛
զբ՛թած և անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի՝ ըզ
նախակապուտ հանդերձին ծածկոյթ։ աւանդակո-
ղոյս ձեռացս աղտեղեալ մեղաց՝ զկնիք մատանւոյն
համարձակութեան՝ ամենառատ կամաց մատուսցես։
զդարշապարացս թշուառութիւն մերկութեան ոտիցս՝
պատսպարութեան աւետարանական ամրավերարկու ո-
դիցս կոշկաց՝ ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես։
Օ զոհարակիդ պարարակի եղինդ երկնայնոյ, որ է
միածին որդիդ քո օրհնեալ, իսկապէս մարդասիրու-
թեամբ կարօտելոյս բարեաց՝ նոմիրեա։ որ մատուցեալ
միշտ՝ և անպակաս մնայ ՝ի լրութեան, յարակայ զենեալ
՝ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեան,
բոլոր յամենեսին՝ և բնաւ յամում, էութեամբ յերկինս՝ և իսկութեամբ ՝ի ստորինս, աննոմաղ մարդկութեամբ՝
և անթերի ածութեամբ, փշրեալ՝ և բաշխի ՝ի մատունս
անհատս, զի զհամայնն հաւասարեսցէ առ ՝ի նոյն մար-
մին իւրում դլխոյ։ քեզ փառք ընդ նմին՝ հայր
ողորմութեան յաւիտեանս։ ամէն։

Ա Էրոպին յաւելուածք էրկին հեծուրեն՝ նորին հանողէ, առ նոյն
աղէրս նաղլանաց բանէ։ ՝Ի խորոց արդէ խօսք՝ ընդ աչ։

* Բան։ Խմ։

1 Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի, անհիրհելի ակնդ նկատող,
ծ՛ինող անքննելի փառաց միածնիդ, իրա-

ւացուսցէս զիմն ողորմութի՝ հերքեցելոյս ընդու-
նելութէ առ երկնայինս և առ երկրաւորս։ Տ օնեա՛
զկեալս կորուսելոյս՝ վերնականացն պարերդութէ.
աւետարանեա՛ բանիւդ օրհնութէ՝ զկենդանութի
իմ մահացելոյս. զբարեբաստութի կամացդ յայտնեա՛
գո՛վեալ՝ բոլորից գոյից եղելոց. ստացիր անուն քեզ՝
անեղառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութի. կո-
րուսցէս զդիր մուրհակի՝ մեղուցելոյս ամբաստա-
նութէ. զվէրիս հոգւոյս մահու՝ ջրեսցես կայլա-
կոք արեան՝ որդւոյդ սիրելւոյ. վաստահութի փը-
կութէ բարեաց՝ արեամբ քի՛ քո նկարեսցէս. ցոյց
զաքանչելիս քո բարեգթութեդ՝ 'ի ճաշ հարսանեաց
քո՛մ հարազատի։ Մ՝ի՛ փակեսցես դիմելոյս առ
քեզ՝ զառաւաստ սրահի՝ կենացդ յարկի. մի՛ տրո-
հեսցես 'ի բազմականացդ, և 'ի բարեացդ քո զրկես-
ցես. մի՛ պահեսցես 'ի դանձարանիդ՝ զնիւթեալ իմ
պարտուցս անօրէնութի. մի՛ կնքեսցես 'ի քսակ բա-
րեացդ՝ զզաղրութեց իմոց գաղշութի. մի՛ երկարս
ինձ զվէրս մեղացս՝ 'ի յախտալից մարմնիս ծածկես-
ցես. մի՛ զփտութի նեխութէ ցաւոցս՝ ինձ տնկակից
մահու մնացուսցես, այլ բարձ բանիւ քոյդ ողոր-
մութէ՝ զժանտութինն ապականարար, որպ՝ զի ա-
տեալ 'ի հիւծմանց ախտից՝ առողջութէն պատրաս-
տեցայց. հնարաւորեա՛ դրախտեցդ հայր, մեծ խոց-
ո՛ւածոյս՝ զօրէղ սպեղանիս, կարևոր կործանմանս՝
բարի այցելութիւնս։ Օ՝ի քո՛ եմ՝ տէր ողեսէր,
թէ և առ մի նո՛ւազ բիւրս մեղիցեմ, բայց ո՛չ դը-
րեցայց համայն մեղուցեալ՝ տո՛ւիչ կենաց իմոց բա-
րերար՝ 'ի շնորհ պաքդևաց կենաց քոց ապաւինեալ.

զի

զի ճանաչելդ զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և դիտել զզօրութիւդ քո՝ արմատ անմահութեան, ոչ և կանխաւ իսկ դրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո ասէ՝ ամենեցուն, խնայել տայ քեզ յամ. և դարձեալ՝ մատ է քեզ յորժամ և կամիս, կարող գտանել։

2 Այս սողոմոնի յուսոյ աղերսանք՝ խմբոյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ՝ որ քան զնա՝ ինձ զուգաշաւիղ։ Երբեմն որդի, ապա ատելի. երբեմն միջնորդ խաղաղութեան՝ այ ժողովրդեանն, և յետոյ խորոց որոշման՝ բաղում խռովութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ, զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և զօտարին անուն ծանուցեալ։ Անպատճառ օգտող. անկարօտ զրկող. անսովելի գող. գրգեալ արանցիր. փափկացեալ փախստական. սեղանանենդ սարտուցեալ. անպատասխանի վնասապարտ. քաղցրասնոյց հայհոյիչ. զաւակ հայրատեաց. կտակարանացն մատնիչ. մովսէսի չարախօս. մուռացող երախտեացն. իմաստուն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօթապարտ զղջացեալ. տարակուսեալ աշխատող. աղաչաւոր կռապաշտեալ. յամբոյին դարձաւոր. կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտութիւն. յապայս յիշատակ. յերկբայս փրկութիւն. չաւատալի գիւտ. Ի մանուկ մեացուածք. խարդաւանեալ գերի. կիսակտուր պրծեալ. կամաւոր անձնամատն. տմարդի յղփացեալ. բազմալրեպ հանձարեղ։ Զ Յընթացս բանիցդ երկեակ որոշմանց՝ ամ ուրեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ՝ և փոքր գովեստ.

իբր 'ի վեր ինքնագրաւ կորստականի՝ երդիծանութիւն
խառնեալ ընդ աշխարհ. բան նոր՝ թեւադիր բարդաւ-
ադանութեան եամ հասակի, և խոտորումն նորին՝ 'ի
շրթունս բնաւից՝ թառանչ թախծութիւն ողորմելիս
ինն ազդեալ։

3 Օ արմանամ՝ վհատիմ՝ տարակուսեալ ապշութիւն,
զի թէ նա այնքան գթեաց, ինձ զինչ պատ-
հեսցէ. զիարդ անկաւ ամբարձեալն. զիարդ սասա-
նեցաւ հաստատեալն. զիարդ կործանեցաւ կառու-
ցեալն. իբր օտարացաւ ծանուցեալն. զիարդ զակա-
տեցաւ զաւակն ընտրութիւն. զիարդ սրացաւ մեք-
ձաւորն. զիարդ աղօտացաւ փայլեցեալն. զիարդ պա-
տանդեցաւ ազատեալն. զիարդ անօրինեցաւ ուսու-
ցիչն. զիարդ նոճաղեցաւ հռչակեալն. զիարդ ա-
նարդեցաւ փառաւորն. զիարդ փոքրկացաւ մեծա-
տունն. զիարդ ամբարշտեցաւ բարեպաշտն. զիարդ
ամբարհաւաճեցաւ ընտրեալն. զիարդ ունայնացաւ
պատարունն. զիարդ կորեաց զուխտն՝ որ ընդ բարձ-
րելոյն։ Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սանդարա-
մետականին կապեցաւ. զի՞ կայր նոր՝ և կռոց. ուստի
սէրն ընդ պատկերաց. վա՜ էր կամքն ընդ խորանաց։
Օ իարդ ո՛չ յիշեցաւ յանդիմանութիւն սամուէլի՝
առ սաւուղ եղեալ. հմայք ասէ՝ մեղք են, և ցաւս
և աշխատութիւն ածէ թերափ 'ի վերայ։ Օ իարդ ո՛չ
հայրենի յանդիմանութիւն, կուռք ասէ՝ հեթանո-
սաց՝ դեւք և անշունչք են, և նման նց լիցին պաշ-
տօնեայք նոցա։ Տէր միայն ածէր զնս, մովսէս նա-
խադրեալ յառաջնոյն ձաղանոք՝ սատիկս ինն ամ
բաստանէ, ո՛չ էր ընդ նոսա ասէ՝ ածս օտարոտիս,

զոր ոչ ճանաչէին հարք նոցա։ Որ է մահամատոյց
այլազնեայ արձանն փագովրայ. որ տգեղն և ան-
պանծալին սիդոնացւոց՝ իգական ամենանզով ձու-
լածոյն. որ կանացի կերպին անդրելին խայտառա-
կութիւն զաղէր տեսակին, որով՝ ամօթոյ մարգարէքն
զանազանօրէն դիմեցուն անխտրաբար, յանուն չա-
րութեան անժուժկալ դիւին՝ անանձաբար ձօնեալ
մղէին։ Տարաւ զէութիւն բարեբաստութեն, որ
զնախնին որոց 'ի կորուստ. յաղթեաց մեծութին՝
խմաստիցն առաւելութեամբ. գերեաց գոռոզութիւնն.
յիմարեցոյց փափկութիւնն. վանեաց արծաթն ծա-
ռայեցուցիչ. յոգի դատեցաւ զայրն ասնելի՝ հին
զէնն կործանողին. 'ի գրկացն այ հանեալ՝ 'ի յոտս
ստամբակին գթեցոյց. մեռոյց մեղկութին. թմբրե-
ցոյց ծուլութին. արբեցոյց շուայտութին։ Ոչ դիւ-
ցապատիր մարմին երկրածին, որոնք ձայնարկութեք
զքեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ նա հան-
դիպի ընդդիմաբանութիս, այլ ամենից սիալողաց՝
կամաւ վրիպելոց. վա՜ զի նովաւ է իմանալ, թէ անի-
ցաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստու-
ծով դատեալ ընտրեսցի. որ զի թէ առ այս պայ-
մանի յիմար ոք իցէ, և 'ի հաստչին կամ յուսացի,
ոչ և ս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ.

4 Այլ քանզի սատրիկս և քսամեղիս ունի սողը-
մն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապար-
սաւն կշտամբութեամբ, իբր մեռեալ խսկապէս հա-
մայն աշխարհիս անձնասիրութեան, զոր եթէ զնսկն
ոք նկատեսցէ, ունայնութիւն է իմանալի. այլ և 'ի
մատեանս քահանայիցն՝ և 'ի գիրս աբիսայ սիլոնացւոյ,

յո-

յորում զնոյնն իւրում ընթացիցն՝ արտասուելիս
ինն յեղանակէ։ Օ՞ ուր ջան։ անօգուտ վաստակ։
անմիտ հեռեւումն։ անշահ արշաւանք։ անկայուն երկիւղ։
օտարին խմաստք։ ոչնչից հոլովք։ բամբասելի բերք։
անյարմար վարկածք։ անոտի սերմանիք։ աւազափուլ
շինուածք։ ապականացու ստացուածք։ քամահանաց
տաժանմունք։ ինքնամարտ կռիւ։ ընդ ոգւոյ իւ-
րում դատ։ ընդունայնաթոյ քիրտն։ վնասակար փա-
փաք։ կորստական շաւիղ։ վրիպակ ճանապարհ։ կոր-
ծանական կրթութիւն։ մոլորապատիր վարժութիւն։
հանապազասխալ տեսութիւն։ ակնոյայրատ պչրութիւն։
պառնկակերպ կերպարան։ ախտաբորբոք նիւթ։ դրժ-
նեատեսիլ գոյն։ յոքնատխուր գեղ։ յոլովամեղծ
ծուխ։ շոգի ցնդելի։ վաճառ մերձ 'ի յատ։ տաղա-
ւար քակտելի։ ընդ վայր աղաղակ։ անպատճառաւոր
ծաղր։ արհամարհելի ասպարէզ։ անձնավաճառ դիր։
սատակչական ելք։ անաճ մտածմունք։ ստոյգթ ճառ։
զայրացուցանող զրոյցք։ եպերանաց խծբիծ։ խե-
լագարութիւն խնդիր։ ամօթանաց ցոյցք։ խոյատառա-
կանաց յայտնութիւնք։ առակ ապառնեաց։ ապաշա-
ւանաց դորձ։ ըմպահկանաց պատմութիւն։ հեղգացե-
լոց օրինակ։ խորխորատ ծածուկ։ որս խաւարային։
մնհաղուշակ վիհ։ անյատակելի անդունդք։ ուղեկ-
ցութիւն սպանողաց։ յիմարութիւն բարբանջմունք։
դարանակալաց վայր։ խարխուլ յարկ։ շինուածաս-
սանեալ։ կամուրջ խախտեցեալ։ երևոյթ փախչելի։
խաբող շողոքորթ։ անոպայ մատնիչ։ ընդդէմ բարձ-
բելոյն հակառակութիւն։ Օ՞ այս ամ մասունս բանից
խոստովանական կանոնադրութիւն, 'ի սիրտս բնաւից

նախասերմանեց ժողովողս՝ կանոնադիր դարձելոց զըզ-
ման. ոչ զի մի՛ պարծեսցի ոք ի մարդկանէ բամբա-
սաւորօք զինուորական նեռիւք՝ զանձն և զընկերն
խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն,
որ զկերպարանսն միայն ունի, և զոչ ախորժելիս
ստեղծչին կատարէ.

Զարդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ, որքան զըզ-
ջացաւ, մի՛ խսպառ պախարակեսցի. այլ յիշեսցի՛
այրն այն ի բարի, իբրև զհիմն յուսադրութեան ի
ապրանի ոսան դիմելոց, յորժամ հոգւովն էզ յայ-
ցելութեան ածութեանն անբաժանելեաւ՝ կենագործել
զանդ խոստովանեալսն. զոր մեռեալքն՝ ահա՛ կեն-
դանեացս անտարակոյս բերին աւետիս. Ընդ որում
մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեան ոչ ժամա-
նելոյ, ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ
մեծիդ պաղատիմ. լից զնուազդ իմ բանադրութեի՝
ի յերջանկին հանձարեղութեի. նիւթեսցին ներ-
կայիս հայցմունք՝ ի բարդաւաճին յարդաւորութեի՝
ի գերաշխարան աքբային աղերս. այցելութեի խնդ-
րոցս դիցի՛ քո ընտրեցեալ վեհ աքբայորդւոյն, զոր
միածնիդ օրինակեցեր. Յարեանն կցորդութենէ՝
զքո փառակիցդ ճաշակեցաք. տուր փրկութեի քոյոյ
ծառային՝ ամենաճնար զօրեղ ահաւոր, ի ստեղծո-
ղիդ փառս ամենեցուցեալ՝ զանքաւելի մեղացն ջն-
ջումն. Յիշատակաւ խորհրդոյ բարեաց՝ ընդ ողոր-
մելսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ
բազմապաճոյճ առակագրութիւ՝ ճաշութեի քո քա-
ղրողեալ՝ ի մատեան լուսաղարդ կտակի եկեղեցւոյ,
ընծայեաց հետս բարութեի՝ խոստովանութիւ մատչել

առ քեզ՝ Տէր։ Քանզի ոչ հեռի յողորմութէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեան կաթ՝ ուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ զձեռս զղջմանն՝ փոքր ինչ կասեաց։

6 Լ.ուր՝ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բա՝ րեմանութիւնք՝ զգթութիւն քո ողջունեսցես. որով զկոշկոճեալն 'ի բաղում դարուց՝ բամբասանաց քարանձգութիւն, երանութիւն վերարժանացո. որ յոք՝ նահատան արտասուաց ելիւք՝ զմէջ յատակի յար՝ կին հեղեղեալ՝ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սատակակիծն ապաշաւանաք, հօրն կրիցն գերա՝ զանցեաց՝ ողորմելի ոգւոյն հեծութիւն. զոր 'ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերովս 'ի յիւրն ախտա՝ կրեաց, երկայնամիտդ ներողութեամբ՝ միացուցեալ խառնեսցես՝ գրիթած. և զանյարմարն առ նա կար՝ ծեցեալ զսաղմոսին բարեբանութիւն, 'ի փառս էակցի որդւոյդ՝ կնքելով նովաւ՝ կեցուսցես զնա քաղց՝ րութիւն՝ ընդ աղքատս ժողովրդոց։ Ո այս պոռ՝ տիկոս ոմն բարեշնորհ՝ արդահատէր ընդ սողոմոնի, ամիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայ՝ նութեամբ՝ իբր կենդանեաք նովաւ՝ ընդ նմին վա՝ նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարդիդ տնտեսէ։ Քանզի և օսաացւոյն 'ի նմանէ սահեղ՝ ծեալն՝ բազմահրաշաւորն՝ մարգարէաճառն պատմա՝ գրութիւն՝ ածուեն արդարացուցիչ՝ զսողոմոն ողոր՝ մեալ կարդէ, որ զի անպարսաւ է աղօթելն, քան՝ չարաբանելն վասն նորին։

7 Ո՞ որ և եթ մաղթեմ մեծ վստահութիւն՝ նմանա՝ կից այսր հեծուեն՝ և զիմն ընդ նմին ընծայել

գոչումն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գործոց, ո՛չ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչին. իսկ եթէ գացես, այնքան բարձրանաս, որքան մեծութեդ քում վայելէ. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութիւն, քան նախահրաման սաստկութիւն. Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութիւն՝ ի խնամս գթութեան՝ ձրի և ամենառատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տոչորման անբժշկականի. Զեռն եդեալ փրկուել՝ նորոգեսցե՛ս վերըստին, քաւեալ և պատսպարեալ՝ ի մեղսակործանս խորտակմանէ. Լաւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանց՝ սուրբ երրորդութեդ և միում ՚ածութեդ փառք և իշխանութի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Ա ՀԷՐՈՊԷ ՅԱՒԷԼՍԱԾ ԷՐԷՆ ՀԷԾՈՒԼԷ՝ ՆՈՐԷՆ ՀԱՅՈՂԷ, ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՊ ԽԱՂԼՈՒՆԱՅ ԲԱՆԷ. Ի ԽՈՐՈՅ ԱՐԿԷՅ ԽՈՍՔ՝ ԸՆԴ ԱՅ.

* Բան. Խմ.

1 Ա՛ւ արդ՝ մի՛ տիրեսցեն անօրէնութիւք քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում՝ ա՛ծ բոլորից լուսոյ. մի՛ կապտեսցէ գոռոզն ապստամբ՝ զզարդ փչմանդ շնորհի՝ ի քո ստեղծեալս կերպէ. մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի՝ առ ի դրաւել զկնս ի նոյն. Զնք իմ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բաց ի քէն ք՛ս՝, որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութիւն. որ բառնաս զկարիս մեղաց ամենայն

նակատարդ բանին. որ արեմբդ քո ստացար, և մարմ
նովդ կերակրեցեր. որ կարդեալ սահմանեցեր ուխտ
կենաց անփոխադրելի. որ յոգի քո կնքեալ կցորդ
քեզ գրելով՝ հօր քում մատուցեր ժառանգակցա-
պէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չար-
չարանաց՝ առ նոյն բարերար աղօթել համարձակե-
ցեր, ստեղծիչ ամենից և կեանք. Ո՛ւր ես ա՜ծ ա՜մ
հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց՝ քան
զամ գործոց քո հրաշս. ո՛չ զերկինս խրովքն զար-
դուք և հրեշտակացն պայծառութիւք. ո՛չ զերկիրս
և զմարդկութիւս, և որ առ սոսա են զարմանութիւք.
ո՛չ զսահման լայնութիւն ծովու, և որ 'ի նմա են ե-
ղելութիւք. ո՛չ զանդունդս աղխիւքն հանդերձ, և
որ 'ի նմա են անքաւութիւք. ո՛չ բարձրացար յօրին-
մամբ այսքանեաց վեհիւք, որչափ առ իմն կարեկցու-
թիւն՝ յասելն քո նբ մարդարէին՝ քաղցրութեամնց
յուսոյ բարութի, ո՞վ է ա՜ծ իբրև զիս կարօղ, թո-
ղուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիս. Ա՜հա
արդ խնկեալ են բանք քո՝ ողորմած, և խոստովա-
նեալ բարերարութիւք. փառաւորեալ խորք խորհրդ-
դոցդ, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ.
2 Ա՜ ղդարև ո՛չ ոք բաւէ յէիցս թարգմանել խո-
սիւք նիւթական լեզո՛ւի՝ 'ի մասանց այսր քումդ
գթութեց՝ զոր առիս ցուցեր՝ յօրինիչ. քանզի և
մեծ իսկ է զօրութի՝ զինացեալն անդրէն նորոգել՝
ըստ առաջնումն պայծառութե, քան յանդոյից ըս-
տեղծագործել. Ա՛ւ զի ո՛չ է քո տկարութիւն, որ
զօրութիդ ես ա՜մի, առ որ բան քո միայն ազդեալ՝
զլրութի գործոցն գլխաւորէ, ահա յարիցես փա-

աւաւոր լինել՝ բարեգործ, 'ի սահմանս այս կրկին անյուսալի փրկութեան. զի իրաւամբք ուխտի բարձրասցի, հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո ձայն՝ 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութեան լուսովդ ուղերձեալ, քան 'ի ճանապարհ ստեղծանելոյն։ Զի առ մինն՝ արարիչ միոյն ճանաչիս. իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն՝ և քաւիչ. ընդ նորոգելոյն՝ և բարերար. ընդ հաստելոյն՝ և ողորմած. ընդ կազմելոյն՝ և հնարաւոր. ընդ յօրինելոյն՝ և հեղ. ընդ նկարելոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդելոյն՝ և լոյս. ընդ տածելոյն՝ հովիւ. ընդ դարմանելոյն՝ խնամիչ. ընդ ողջ պահելոյն՝ բժիշկ. ընդ ձեռնկալութեանն՝ զօրավար. ընդ անպարտութեն՝ թագաւոր. ընդ արարչութեն՝ քաղցր. ընդ ամենատուր պարգևացն՝ առատ. ընդ միշտ անսալոյն՝ նեղոյ. ընդ ոչ բարկանալոյն՝ անոխակալ. ընդ կարեացս վշտակցելոյ՝ ծածկագէտ. ընդ յանձանձելոյ գթոցն՝ ապաւէն. ընդ դերունակ դորովոյն՝ ճշ. ընդ անսպառ բարութեն՝ օրհնեալ յամի։

3 Զ.ուդ՝ ոչ ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ դոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ՝ յարդարեա անդրէն վերըստին յանարատութիւն մաքուր սրբութեան՝ նախնի լինելութեն. զի բազմասցի առաւել աճեցուն երեալ՝ յաճախ տուչութիւն անսահմանելի քոյդ աքանչելեաց՝ նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոցն ըստ ուերանանաց։ Զ.ս ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան մնացս թիւս ընթանայ զանբերելիսն յիշատակել,

արդարացոյց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ինձէն
զանձին խմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութի
բազում մեղանաց խոստովանելոյն՝ հզօր ծածկա-
տես ամենափրկիչ, զի մի՛ ծայրագոյն լրութիւն առ-
տեացս, դարձեալ նախանումն կարօտացոյց՝ երանե-
լով սաղմոսիւն՝ զշնորհսդ փրկիչս մկրտութիւն.
և փշոիլք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեցի
յիս առաւելապէս ոյժմէն վերստին, ծանրս առ-
նելով զբեռն պարտեացս՝ քան զքաղցրութիւն պար-
գևացդ. ոյլ աղատեա՛ զիս օրինաբանեալ հոգւովդ
սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամի, յօրինաց մեղացն
և մահու։ Բա՛ւ լիցի, թէ անկցի ընդ տկարութիւն
սահմանաւ ճշմարտութեդ ծագումն՝ իբրև զդրոյն
օրինակ. քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ,
փտարեալ են մեղք. և 'ի խրախոյս կենդանի բանիդ,
ո՛չ է յուսահատութիւն. և ամբարձեալ քոյոդ շնոր-
հաց, հալածեալ են պարտիքն. և մերձ դոլով ձե-
ռինդ՝ ոչ գոյ անհնարութիւն, ոյլ ամենևին լու-
սաւորութիւն, բոլանդակապէս զօրութի, անպարտելի
կարողութիւն։ Բա՛ւ է փրկութիւն. կենդանութիւն.
նորոգութիւն. ողորմութի, միանգամայն և քաղցրութի.
արքայութիւն. անեղծութիւն, և փառք յաւիտեանս.
ամէն։

Ա. Երեսին յաւելուածք երկին հեծուրեն՝ նորին հոգոյն, առ նոյն աղերս խաղեանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աչս։

* Գլուխ. Ի։

1 ԱՅԼ արդ՝ քանզի որպէս ոչ է առանց քի՝ այ՝ ոգւոց փրկութիւն, և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն, և կամ առանց արուսեկին նշուլից՝ արևու երբեք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութիւնց՝ և ստգտանաց անձին՝ քաւութիւն։ Զի զինչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զինչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ըմբաւորին գովեցայց. և կամ ուր ասի պարսաւել՝ մարգարէն յովել, երիցս կրկնելով զանձինն եղկութի. և կամ զի՞ գուցէ ասէն դատաստան՝ առ 'ի յիշատակ աւուրն մեծի. և կամ իբր արդեաք անմաքուր խմասցի շրթամբք եսայի՝ հեռին 'ի գործոց տանն իսրայելի. և զիարդ ասի՝ պարտաւոր պաշտի ադամեան մարմնոյն՝ խմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յոլս թարգմանի առած առակին, թէ սիրտ խմասցնոյն՝ 'ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ 'ի տան ուրախութեան։ Զի որ զսխալելն ադամայ՝ անձին իւրում ոչ գրեսցէ, և զմեղս ամենից՝ ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զՀարցն, կորոյս զիւրն արդարութի՝ ոչ անախտակիր գոլ բնութես. և ոչ բերկրի սիրտ՝ առ զուարթութի երեսաց աւետեաց յիսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն քի ուսեալ՝ ամենայն ոգի ըստ այ տրամեսցի։

2 ԱՐԴ՝

2 Զ.ոդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝
նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին , զոր
ՏԷՆ իսկ երկրորդեաց , երթալ նստել , ո՛չ յառաջին
բարձին հպարտից ընդ ամբարշաւն նանրախորհուրդ
ժողովելոց . ուստի դաւիթ և երեմիա՝ ուխտիւ կա-
նոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին , այլ
ընդ զղջացեալսն սրտիւ՝ պատկառեալսն մեղաց՝ և 'ի
դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ հատուց-
մանն , յեռնոցն հաւասարեալ աստէն 'ի յերկրի կա-
մաւ խոնարհութեամբ , ուստի բարձրեալն ՏԷՆ պարա-
րեալ բերկրի . որով ընդ նախադասեալսն 'ի բազմա-
կանան երանութեամբ համարձակեցայց , թէ ես՝ և թէ
նա՝ հեւանեալ սովիմբ : Զ.որ զերծեալ 'ի բամբա-
սանաց բանի մարդարէին , որ 'ի վերս ոմանս ակնար-
կի , մի՛ յիս ասէ՝ մերձենար՝ մաքուր եմ , և ո՛չ զիս
տեսանիցէ : Զ.յլ զանկշիռն խոնարհութի երջան-
կին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին ,
ես իբրև զանասուն համարեցայ , հերբեալ 'ի զգայու-
թեամբ . և հասին չարիք ինձ շուրջանակի . և նեխեցան
և փտեցան վերք իմ 'ի յանզգամիս անբժշկութիւն :
Զ.ս զայլոց ոմանց ընտրելոց 'ի յասորեստանի՝ զկա-
մաւորն կշտամբութիւն մեղապարտութեամբ՝ անձանցն
անարատից . ընդ որս և զերկրի մեծի քահանայի զա-
սելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ , թէ և ո՛չ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ՝
աստուած :
3 Զ.ոդ՝ ես ՀՇդրիտ պատկեր ամերկրի՝ զնմն խառ-
նեալ ընդ նոցին պարոիս՝ և 'ի նոցայոցն զառ իս
դառնութի կրկին առաւելեալ , նոքօք հեծեծեցից .

թէ-

թեպետ և չէ՞ ինչ պիտոյ դարշութիւն դունոյ՝ դարձեալ տգեղութիւն։ Ա՛հա արդ մեղայ՝ զի անմտութիւն գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմիք սխալեալ յանցաւորութիւնք։ Նայեա՛ յիս դէ՛թաց, ոչ երբեմն յուրացուենն ըմբռնեալ պետրոս՝ զի յոյժ ունայնացոյ։ Լուսաւորեա՛ ինձ զողորմութիւդ քո ճառագայթ՝ ամենևին բարերարութիւն, զի ընկալեալ զօրինութիւն քո՝ տէր, արդարացայց կեցիլ և մաքուր եղէց յանտեղծիցն քո՝ իմոց ընկողաց։ Զունիմ համարձակութիւն զմեղապարտ ձեռինս հաստատաց՝ առ քեզ տարածանել, մինչև մատուսցես զօրինեալդ քո զաջ՝ ի նորոգութիւն դատապարտելոյս։ Ա՛րդ՝ յաղթեա՛ վերստին իմումն յանաւուն՝ քոյին հեղութեամբդ առ իս ժամանեալ մարդասիրապէս։ և զնա՛մն յամենայնի ա՛մի՛ քո կարողութիւդ, զառաջինն ջարիսն՝ միջնորդն և վերջնականաքն թո՛ղ ինձ՝ հընարաւոր անհասից՝ քո՛ թագաւոր լուսոյն արդարոց։

4 Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վընասակար եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց։ Ա՛ռ կնիքն։ առ շնորհն։ առ փչումն։ առ պարգևն։ առ աւանդն։ առ ձիրն։ առ անուանն։ առ որդեգրութիւնն։ առ պատիւն արքայական։ առ պատկերն։ առ դրոշմն։ առ օծումն։ առ ճոխութիւն։ առ համարձակութիւն։ առ ընտանութիւն։ առ կեանսն։ առ լոյսն։ առ երանութիւն։ առ յոյսն։ առ փառսն։ առ անխոնարհելի բարձրութիւն։ առ պատկն անկապտելի։ առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քեզ՝ տէր քո՝, բազմաք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս և քարբիս՝ ունկնդրիցս և լսելափակ անլուր ականջացս։

որ

որ միշտ յառաւելութիւն քումդ բարութիւն յոգնա-
պատիկ յաւէտ քան զսոյն չարիքն իմ յաճախեալ՝ իսկ-
պառ կործանեցին, մերժեալ 'ի կենաց՝ ընդ մահ կա-
պեցին՝ ծառայ կարդեալ ապականութիւն։ Այս արդ՝
դու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարեբար՝
օրհնեալդ 'ի դիւթութեան, մեղայ քեզ՝ անօրինեցայ՝
անիրաւեցայ, վա՜ որոյ և եղծայ՝ զեղծայ՝ յանցեայ՝
ամբարշտեցայ՝ և ո՛չ լո՛ւայ խոստովանեալ և երկիր-
պագեալ գովեալ քո բանիդ։ որ դու իսկ երևեցար
անձառելեաւ քո սիրովդ, զոր դրեալն իսկ մեծ է,
և նշանակելն սարսափելի։ Քեզ արդարութիւն և
փառս և մշանջենաւոր գովութիւն, և ինձ պատկա-
ռեցելոյս 'ի քէն՝ խոնարհակալ, քաւութիւն և ողոր-
մութիւն և բժշկութիւն։ օգնութիւն և պահպանութիւն
սրտի և ոգւոյ։ բարեբանեալդ յամի յաւիտեանս։
ամէն։

Ա էրոպին յաւէլուածք չիլին հէծուրէ՝ նորին հոգոյ, առ նոյն
աղէր նաղլանայ բանի։ 'Ի խորոյ սրտէ խօսէ՝ ընդ ՀՅ։

* Բան։ Ծ՝Ա՝։

1 Այս արդ՝ առ երկրածին ոք պաղատեցայց
այս մահացու ամենապատիր էթէ, ընդ-
դունայն է աղաղակելն։ առ մահկանացու
բանական էթէ, սուտ իցէ փրկութիւն առ յուսոյն
վստահութիւն։ առ մարդ ոք եղծական էթէ, ընդ-
տկարութիւն բանին՝ և նանիր է զօրութիւն։ առ իշ-
խանս երկրաւոր գահիցդ էթէ, անցաւոր է ընդ ին-
քեանս և իւրեանցն բարութիւն։ առ եղբայր ոք

հարազատ եթէ, կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն. առ հայրն իմ երկրաւոր եթէ, պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նոր՝ազգութեն. առ մայրն իմ որ երկնեաց եթէ, կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեն. առ թագաւորութիւս աշխարհի արդեօք, որք զմահացուցանելն միշտ արո՛ւեստաւորեն, քան զկենագործելն. այլ առ քեզ՝ բարերար ՝ած օրհնեալ ՝ի բարձունս, որ կենդանի ես՝ և զկենդանութիւն տաս ՝ամի. որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել։

2 Որ եթէ փախնումք ՝ի քէն, դու զկնի ընթանաս. եթէ տկարանամք, զօրացուցանես. եթէ վրիպիմք, շաւիղ դիւրութե՛ ուղղես. եթէ պատկառեմք, քաջալերես. եթէ ախտանամք յանձն և ՝ի մարմին, բժշկես. եթէ դարշանամք մեղաք, մաքրես. եթէ ատեմք, քո ճշմարտութեդ արդարացուցանես. եթէ յանդունդս ներքինս սուզեալ դլորիմք, յերկինս ցուցանես. եթէ ՝ի կամաց մերոց ո՛չ դառնամք. դու դարձուցանես. եթէ մեղանչեմք, ողբաս. եթէ արդարանամք, ժպտիս. եթէ օտարանամք, սրդաս. եթէ մերձենամք, տօնես. եթէ տամք, ընդունիս. եթէ յամրանամք, երկայնամտես. եթէ մեք ժրկտեմք, դու առատապէս շնորհեալ ընձեռես. եթէ լքանիմք, տրտմիս. եթէ արիանամք, խնդաս։

3 Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշաւորական՝ զվհատելոյս զսիրտ սփոփէ, և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութե՛ն հանդէս, որ յաղթականն է դի՛ւաց, և տարակոյս բանսարկո՛ւին. որ լրբր զնաչին ՝որունի նշան բարեբաղդ

պան-

պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութիւն
լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութիւն կանգնեալ է
ախոյեան անվանական և անշարժական՝ Ամի՛ն յաւի-
տենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնութեանն
բելիարայ. որ ունի յինքեան դանձս հոգևոր օգ-
տից գիտողաց մտաց՝ ընծայեալս զպարտումն մահու
և զլուծումն մեղաց, և յոյսս կրկինս՝ յերկուս յա-
ւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութիւն ար-
դարոյն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս՝
գրեալս հոգւովն Այ. որպէս Ամ իսկ երդ սաղմոսացն՝
մաքուր սրտից է տեսանելի կտակ կենաց մարդկան
նկարեալ.

4. Զի թէ 'ի նախնումն տկար կերպարանն՝ զայս
աւետիս և վստահութիւն ընդդոգեալ ունէր՝
կործանման մահու նախաժամանն մեծ աւետադիր՝
և կեանս երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անձա-
ռելիս. և այն ջնջական դիրն, և յեղանակաւոր օ-
րինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութիւն յան-
ցաւորացն, և խափանելի կտակն երկրային, և տկար
հաշտարարութիւն միջնորդացն, և թերութիւն բանից
մաղթողացն. Որ զի թէ մանասէի փրկութիւն խոս-
տովանելի է, անտուստ վկայել յետ այնքանեաց մե-
ղանաց անբժշկականաց. որ արեամբն արդարոց՝ ելից
զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք
Հայրենի, ըստ մարդարէագիր անտուտ պատմութեն.
որ և զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախախտ ձեռն-
կալութիւն խնամողութեանն պաշտպանութեան՝ նախ-
նակերտ յարկին տեսչութիւն, մանկավարժ ինքեան
և նախնի, մեքենայիւ մահու սղոցեաց, 'ի յերկուս մա-

մասունս խզեալ՝ դժնդակ տանջանաց մաշեաց, իբր խորհրդով ապստամբութեան զյուսոյն փրկանակ կլուրեալ։ Որ որով զբար յաւելուածն մոլեգնական՝ ըզքրիստական վերնամարտուին 'ի բարձրեալն յանդգնութեան։ քանզի ոչ պատկառեաց երբեք զստեղծողին պատիւ և զանուն՝ յիւրաքանչիւր խորանէն մերժել։ Հալածեալ զոյ հոգին, բելիսարայ զանձն դաւանեաց։ Քանզի զնոյն տաճար տիրական՝ խնկարկութեան հաստատելին սահման՝ հուչակաւորն երկրի տեսարան՝ զարտասփելին ալանց սրբարան, ուր տեսիլք հրեշտակականք և ածային հրամանք յաղթողականք՝ լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երևէին, զայն վայր երկնանման ահաւոր սքանչելատես, քևանայ ուսմն քառադիմակի՝ նախանձարկու պատկերի՝ աւերածոյն անապատի, պաշտօնեատեղ դարշելի և դիւաձենձեր զոհարան պատրաստեալ կազմեաց։ Զրկեալ զարքայն երկնաւոր՝ 'ի յարքայականն կայից։ զամենահարուստն՝ ունայն 'ի ըստացուածոց իւրոց։ զտանուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ։ Ի հեղեղբուղայ ձեղուն նկարեալ, և զանուանն ահեղ՝ վտարանդի արարեալ։ դերի տարեալ զաւանդ դովելոյն, ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցուցեալ։ աղուհեսուն փոքրուապարանք՝ զարդն լուսոյ կարգեալ, և բնաւից ունողին՝ և ոչ գլխոյն տաղաւար յիւրայնոցն եդեալ։ Հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման՝ երևեցուցեալ։ Այնեալ հեռս բաղումն՝ ընթացելոց 'ի գայթակղութիւն։ հովիւ կորստեան՝ հօտին տատակման։ մոլորու-

րութեամբ բուռն վարդապետ. և այն՝ գիտութիւն կրօնական օրինաց, հայր ունելով զմեծն Եղեկիա՝ զնմանակիցն դաւթի.

Յինքեան ստացեալ գտմունս էարեաց, որ և զայս պատիւն՝ որ զարքայութեանն փառս ընծայեաց նմա՝ հայհոյեալ և թշնամանեալ. և զաղօթիկերացն բազմութիւն՝ սուսերաւ մահու խողխողեալ. Նոտանի դաւաճան. մերձաւոր վասնիչ. հարազատ սատակիչ. կցորդակից սպանօղ. Զոր ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ. իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր 'ի նմանէ. իսրայելիւ ոչ էր պարծել, զի տարագիր էր անուանն կոչմանն մեծախորհուրդն շնորհի. զդաւթեան երդ ոչ էր նուագել, զի կրճատամբիչ էր նորին. 'ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տապանակն ճաճանչիւ ոչ էր տպաւինել, զի ընդ դարշութեան ձուլածուին էր փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի անքաւելի՛ էր պարտիքն՝ որ առ նա. առ ահարոն ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարդարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր նոցա։ Զոր նոր քաւութիւն մեղաց, և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ՝ բարերար, բազմացուսցես կաթգեսցես գովեստս անճառս և անլռելիս՝ 'ի յաղագս տոհմից և 'ի դաբս ժամանակաց. և զդուռն յուսոյն մտից անփակելի պահեսցե՛ս՝ 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոյս. անմահութեանն պարգևաց տուիչ քո՝, գովեալ յաւիտեանս. ամէն.

Ա Էրոպին յաւէլուած էրէին հեծուելէ՝ նորին հսկողէ, առ նոյն
աղէրս մաղլեանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աց։

* Բան. Ծ.Ի.

1 Օրհնեալ տիրաբար ի քումդ էութեան, անսահմանելի և անսկսելի, իսկապէս բարի. պաշտօն խնկելի, և երջանկութիւն խոստովանելի ամ երկրի. երկայն յուսոյ ամենապատրաստ տեսուլի. գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց՝ քթթել մի ական. որ հրաշաւորս զարմանալիս՝ գեր քան զամ ազինս նախնեացն՝ անսահման առաւելութիւն՝ կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս ի շնորհաբաշխութեանս նորում։ Լաւ զանտուստ զմուտս լուսարանի պատուհանին անձկութիւն նշուղեցն աղօտականաց, ջաւիալ դիտութիւնցն ըստ սողոմոնի, և իւր իսկ նմին, և ինձ ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումն զառագաստն անջրպետարան եղեցն ողորմութեան՝ ձրի պարգևացն ածականաց. զոր ընդ մէջ իմն մասնաւորագ աւետաւոր յիշատակաց, և ի հնումն զայսր տեսպաւորութիւն օրինակաւ նկարագրեր՝ զդարձարուքն առիս, և ես դառնամ առ ձեզ. և յորժամ դարձցիս և հառաչեսցես, յայնժամ կեցցես։ Լա զի և զաղջամուղջին սեւութիւն գունոյն՝ փոխարկել ի ձեան պայծառութիւն. և զարանցն արեամբ ներկելոցն՝ յեղանակել ի պատուհանն գեղման, ըստ եսայեայ և զաբարիայ. և ի մէջ բարկութեանն՝ դարձեալ զոյդ զողորմութիւն. քանզի անսպատանալ քաղաքացն իշելի, և

և դարձեալ բնակիլ. և Ճանապարհացն ամայի լինել
'ի ջուրն մարդկան, և անդրէն հետևիլ. և լքանիլ
'ի սովոյն ոգւով, և դարձեալ զօրանալ ձեռամբ. և
դնալ ոչ 'ի տեղի իւր զայրացմամբ, և դառնալ ողոր-
մութիւն. ըստ ներողութեան զերկն, և 'ի մէջ սատիցն
սպառնալեացն՝ կրկին պաշտպանութիւն, և 'ի սրտին
խռովութեան յուզումն խնամոց գթութեան։ Ա. յս մար-
դարէիցն ձայն խնկելի, որ զօրինեալդ քո գալստեան
զազատարարդ հրաման կանխաւ ազդէին։
2 Եւ զոր էր բանին նիւթեղէն լեզուի ընդ թիւն
արկանել վասն անբաւութեան. փոքունք են և
նուազունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժա-
մանակաւորք՝ առ աւետեացդ քո յոյսնուն, և խա-
ղիդ փրկագործութիւն։ Որ յամ վայրի կառուցեր
զնոսրանն վկայութեան արեան քո ուխտի, որք մեծա-
բարբառ միշտ աղաղակեն՝ քան զատակնիք մահուն
հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի,
կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկրտութեան,
յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան,
ընդ հոգւոյդ սէր միութեան. քաւութեան, աղաւաղ-
լուսաւորութեան. մշանջենաւոր մաքրութեան. խնկապէս
երանութեան. ընդ վերնայնոյն կցորդութեան՝ անկա-
պուտ փառաց. 'ի շրթունս մեր ձայնիւ՝ բարձրելոյն
հաշտեցուցիչ բանիդ աղաչանք։ Եւ զոր աշաւորն է
ասել, կարգեմ աստանօր՝ յիշատակ եղեալ մեծիդ
երախտեաց՝ ոչ ինչ լինել ընտրութիւն շնորհին, և
ընդ հաստողիդ միանալ՝ որուն մարմնոյդ ճաշակ-
մամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութիւն. զոր կա-
տարումն երջանիկ խոստմանն, ըստ պօղոսի բանին,

ոչ ունէր օրէնն։ Այլ դու փրկութիւն եկիր հայրենիդ քո հարստութիւն, արարեր և կատարեցեր ըզյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի՝ քսուիչ ամի։ Այս քեզ փառք ընդ հօր քում՝ 'ի գովեստ բարեբանութիւն հոգւոյդ քո սրբոյ, յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Ա էրոպին յաւելուածք էրէին հեծութիւն՝ նորին հանողի, առ նոյն աղէրս ծաղկանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աչս։

* Բան։ Ն՚Գ։

1 Տէր զօրութեց՝ բոլորից դոյից թագաւոր, օրհնաբանեալ ողորմութիւն՝ ածս ամպուն։ Որ յաղթեաս սահմանի լայնատարած ընդարձակութիւն։ ամ անբաւութեց դու ես ողբանութիւն։ մինչ զի կարծրն քեզ հոսանուտ է, և լոյծն քեզ պնդակազմ, և չէիք քո իր անհնարաւորական՝ յանդիսաղ զօրութիւն ահեղ։ հուրն՝ ցօղ իմն է զովական, և անձրևն՝ բոց կիզանողական։ Օ՚ քարն բաւէս ցուցանել կերպարան աղդման, և զբանականն դնեաս անխօս և անշունչ արձան։ Օ՚ պարտաւորն ողբեալ՝ պատուական առնեաս, և զկարծեցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ դատիս։ Օ՚ մատուցեալն 'ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութիւն օծեալ՝ դարձուցանես։ Կանգնես զմտանեալն հաղբից գլորման, և զասասանեալն՝ 'ի վստահութիւն վիմիդ հաստատես։ Օ՚ ախտացեալն բազմահառաջ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն՝ դարձեալ անդրէն 'ի յետս նահանջես։ Այս յորժամ

սպառին առ 'ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալիսն յայնժամ ներդործեսս. քանզի վասն քո գիտես Թո-
զուլ զմեզ՝ և ջնջել զանօրէնութիս, և քաւիչ լինել անիրաւութեց՝ և զմեզ մեր ոչ յիշատակել, ըստ
եսայեայ և երեմիայ։

2 Զ.յլ առ շնորհ նորոգ փրկութեա՝ բաղմաք դո-
հաբանութիւն հեռաւեալ, 'ի յաճախութիւն ան-
բաւիցն՝ լռեալ առ ամին խակոյն կարիեցայ. քանզի
կրկնեալ զլուսոյդ անապատ բարիսդ, որ 'ի քէն առ
իմ յամառս թշուառութի, քոյին աղերսիւ առ քեզ
մաղթեցիլ, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս
զտառ ողբերգութե այսր մատեանի, լցից թախծու-
թեամբք և հեծեծանօք։ Զ.յլ առեալ խառնեցիլ
'ի տուողիդ հաճութի, ընդ ցաւոցն՝ զդեղն. ընդ
վհատութենն՝ զխրախոյսն. ընդ յուսահատութենն՝
զմիշտակիդ անուանն հաստատիդ. ընդ տխրութեանն՝
զսփոփանսդ. ընդ խմամն դառնութե՝ զքաղցրու-
թի կենարարիդ. ընդ պատիժ օրինին՝ զշնորհն. ընդ
պարտս անիծիցն՝ զաղատարար օրհնութիւնդ. ընդ
մարմնոյ մահուն՝ զանմահ նորոգութիդ։

3 Զաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ. լուր
լութե սրտիս՝ տէր յա՛, որ հնչումն է առ քեզ
մեծութեան ձայնի երկար դոչելոյ։ Որ մարմնակից
և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետապէս
անօրինակիդ՝ զօրինակին խորտակել զլուծ, ընդ զէն-
մանն մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նը-
հիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս, և անդր
հաղաբար քաւութիւն շնորհես. ոչ սակաւամեղիցն
միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութի առ ելս

կենաց։ Օ՛ի որքան զօրէ մարմնոց անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ ՝ի՛ծդ բոլորեցուն վասն սորին՝ կամաւ և յօժարութիւն զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ ՝ի քաւութիւն։ Օ՛ի ոչ եթէ մաքրութեդ աղբիւր՝ պարտական դոյ մահու յօրըստորէ կատարիլն, այլ կամաք քովք՝ հոգւոյդ գործակցութիւն, ՝ի հաճութիւն հօր՝ և ՝ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանիս։ Իսկ եթէ ամենիցդ ՝ի՛ծ անքննին՝ իմովս վասն իմ առ իմ փրկութիւն, ՝ի դէմն իմ, իբր թէ ընդ քոյդ էութիւն ես իցեմ մարմնով՝ պարտնակողիդ կցորդ միացեալ. և դու բարերար, յաղագս իմ ՝ի յիմն կերպի փոխանակեալ, ընդ իմում պարտեաց և մահ ընկալեալ անպարտդ՝ զմահապարտիս վնասուց պատուհաս, և ՝ի յիմ անուն յանցաւորապէս, ոչ թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բազումս մեռեալ՝ և մնաս կենդանի. ոչ ուրացողացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ՝ի՛ծապէս նոր՝ իրեալ, և ՝ի մատունս անհատս բաշխեալ։

4 Զ՛սէր ոմն ողբաւոր՝ չաւատալեացն պաշտօնատար։ մեծ ինձ և անկշռելի առ սմին դատեր՝ անյարմարադիր անձին յուսադիր, հաւատամ զիտաս և զերջանկութիւն, քան թէ մարտիրոսութիւն իսկ՝ թողթէ ուղղութիւն իմն թշուառութեան՝ յանցաւոր մարմնոյս վախճան ընդունել։ Իսկ զանձառութիւն խորհրդոյս՝ այսու դիտեցի. դաւաներ իսկայն, որ զի և մաքրոցն անձինք առանց նոր՝ իրման այսր յիշատակի՝ չև են իսկապէս կատարեալք խսպառ, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութիւն մեծութեան՝ հոգւով խառնեսցին։

Զ՛պա

Այս թէ մեղաւորիս մասին, կրկին մատուցար բա-
ժին ասելով՝ յուսայր, իբրև այն՝ թէ ես ինքն ե-
ղեր Աշմարտիւ, դրաւեալ զիմն դաժանութիւն ընդ
քում համեղութիւն, պատարագեալ քոյինանիութիւն զանդ-
ուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այս յսու ամիւ
'ի վերնատանն նախանուէր բարեշնորհութիւն՝ անհը-
նարաւոր ախտիցն Աստուած՝ զմարմին և զարիւն իւր
բաշխեաց 'ի քաւութիւն, 'ի վեր կարծեցուցանէր քան
զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ. յու-
սոյս օրինակ յարդարութիւն դրել զիս 'ի փառս,
այսմ փրկանօք հաւատալի երևեցուցանէր, քան թէ
քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ ածանա-
նիդ առ մարդ զօրութիւն. և տիրական ածախառն
մարմնոյն կամաւորական նուիրումն՝ առ անասնական
սպանդին մատուցումն. և անմահն՝ առ մահկանա-
ցուս. լոյսն ահաւոր՝ առ ստուերայինս. յաւիտե-
նականն՝ քան զանցաւորս. բարձրեալն՝ քան զերկրա-
ւորս. անստեղծն՝ քան զեղակոնս. բարին խակութիւն՝
քան զթիւրեալս բնութեամբ. մանաւանդ զի՞ւր է
կամելն, և իւր կենագործելն. օգնութիւն առիթ՝
քան զանիծիցս պատճառ։

Ո՞ՐԴ՝ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի՝ աղաչեմ
դէթաց, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ
կենաց. մատիր քաղցրութիւն՝ առ ախտացեալս մեղաք.
քաւեսն 'ի պարտեաց՝ սմենակատար բաւականութիւն։
Իսկ առ 'ի յինէն՝ այս է Աշմարիտ և անխաբելի կեր-
պարան բանի, որ զի հաստիչդ ամենից՝ 'ի նբս բը-
նակես. և ըստ տարաղու սերմանն՝ և ինձեն է իրա-
ւացի, ըստ Աշմարիտ բանին պօղոսի. և աչացաւացն

'ի

'ի տապ արևու՝ ոչ է զօրութիւն։ Աչալ դու բնութեարար հատուիչ յոչխարից՝ յարդեսս յաւետ խնամեսս համայն, և զդաւանեալն զքեզ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթեսս՝ մանաւանդ թէ խզեսս զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տա՞ ընակաւսելոց։ Լու քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

Ա էրապին յաւելուածք էրէին հեծութիւնք՝ նորին հոգոյ, առ նոյն աղէրս նաղիանաց բանի։ 'Ի խորոց արարեալ ի՞ՀՍ՝ ընդ ա՞ց։

* Բան. ՃՀ։

1 Լու արդ յամի՝ առ ամ ակնկալութիւն՝ քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի խնամատից՝ յո՞. քո է բարերարութիւն, կեանք և անմահութի։ Զարձ առիս դիթութիք, և հանդերձեսցես դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութիք. զի առանց քոց կամաց՝ ոչ ոնիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո դիտացին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վերհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ։

2 Զհա՛ ոչ պարծիմ՝ ամ իրաք նախատեալս. ոչ պանծամ դարուվեալս. ոչ խրոխտանամ լքեալս. ոչ մեծաբանեմ պապանձելս. ոչ ըմբոստանամ ձաղեալս. ոչ երջանկանամ եղկելիս. ոչ արդարանամ ամբարիշտս։ Զի ոչ երբեք հարթ ընթանայ երիվար՝

առանց սանձակալի. և ոչ նաև համբառնայ հանդէպ՝ առանց ուղղչի. և ոչ արօր կշիռ ինչ գործէ՝ առանց մաճակալի. և ոչ երկուորեակք լծոցն 'ի ճահ ճեմացին՝ առանց եզողի. ոչ ամպ վերաչուէ՝ առանց հողմոյ. ոչ աստեղք ցնդին և կամ գուսանին՝ առանց ժամանակին. ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի՝ առանց տարրական օդոյ. և ոչ ես նոքոք հանդերձ՝ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովմանն արարածոց, և 'ի քէնէ ինձ փրկութիւն, ըստ սաղմոսողին, և դու ձայնեա բարբառ խնդալոյ աւետեաց հնչման՝ յականջս լսելուն ամ հասակի, եկայք 'ի հանգիստ իմ բնաւին աշխատեալք՝ և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց։ Իսկ զինչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղտացայց. և կամ որ օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Այլ կամ զնարդ յաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս դարշութեան հօր ամենայնացայ, և մոր քեռացայ, կամ քանանացայ, ըստ մարգարէին որ առիս՝ յանկաւոր ձայնի. ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սենեկին սառայի, ըստ տեսանողին առիս աւածի. եղբայրս շամրնի՝ և կամ գոմորայ. համբակս անլուացս և անաղելի՝ խակակութ պորտոյն խակութեանն հողայ և ասղեբայ, ըստ եղեկիէլի կրկնանախատն կշտամբութեան։

3 Այլ քանզի 'ի ծուփս բազմալտանգս ալէտանջ հողմոյ սատակեալս զզուեալ՝ ուժգին լլկանաք իսպառ տագնապմամբ 'ի ծովին՝ փոխեալ ընկեցեալ 'ի

'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմատուցս
ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հոսանաց
բռնութեանց գարնանաղայր գետոց, արտաձգեալ
յակամայ ընթացս ողորմագին գլորման՝ ջրակուլ ո-
գեսպառ պղտորարբութիւն՝ դաժանահոտ սկախառն
մամուռամատ խառնախուիւ՝ մահաբեր երկամբք վա-
նեալ, ըստ որոց յուղևիցն հեղեղեցին՝ հեղձուցեալ։
Ա. յոր առակաւ և ես եղկելիս՝ խօսին, և ոչ իմա-
նամ. դոչեն, և ոչ ինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթ-
նանամ. հնչեն, և ոչ փոխադրիմ. փողեն, և ոչ գու-
մարիմ. վիրաւորիմ, և ոչ ևս զգամ, կուռցն գարշուե-
նմանեալ՝ թափուր յաղդմանէ բարեաց իմաստից։
Ա. դարև չար առաւել յաւէտ խակապէս քան զ-
ընինակդ՝ ճշմարտութիւնս, առեալ և մեղադրելի, և
առենին քի արժանապէս մատնելի։
4 Ա. ։ քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ՝ առ-
տեացս պարտեաց՝ զայս կատակ թողի՝ որոց ընդ-
թեռնուն, իմովս բանիւ ուռ ուած կարդալ հանա-
պազորդութիւն, այս կացցէ սահման յանձնառական
խոստովանութեան՝ միանձնաւոր ձայնարկու առաջի
քոյ՝ ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ
ընդ հոգւոյս՝ զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ,
իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յի-
մոյս ձայնէ՝ բարեգութ մարդասէր, օրհնեալ յա-
ւիտեանս. ամէն։

Ա Էրոպէն յաւէլուածք էրէին հեծուբէ՝ նորէն հոգոզի, առ նոյն
ազէրս մաշլանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ Աստ։

* Բան. Ծ.

1 Եւ վասն զի սլացեալ ոգւոյս թեւոք ի թիւս
անբաւիկ ծննդոց մարդկան՝ եդի ի կը-
շիռս իմանալեացս մտաց, ոչ գտի զոք հա-
մեմատ ինձ պարտաւոր, և առ այս զդաւթեան սաղ-
մոսին զբանն ի յերդ ինձ առի՝ դառն կշտամբութիւն
գաւազանաւոր գործավար. ոչ յարիցէ ընդիս ի
չարիս՝ հաւասարել յանօրէնութիւս։ Եւ քանզի այս
ըստ սմին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս
մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր
իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ խապառ,
քան իմովս բանիւ բազմայ տարադրիլ. թերևս սո-
վիմբ առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնոր-
հողիս զպարտիս իմոցն։

2 Եւ արդ՝ զինչ քեզ աղերս հաճոյական ի յայսմ
և ի սոյն, և ի ծուխս անուշից ընդունելի խընձ-
կոց մատուցիլ՝ գովեալ թագաւոր երկնաւոր քո,
եթէ ոչ՝ զառ ի յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ.
զկապեալսն արձակել. աղատել զդատապարտեալսն.
բարեգործել զնզովեալսն. պսակել զթշնամանեալսն.
սփոփել զտրտմեցեալսն. դարմանել զխորտակեալսն.
խնամել զսարտուցեալսն. պատսպարել զնեղեալսն.
զվիրաւորեալսն ի մարմին՝ յոգի բժշկել։ Այնթէ օրհ-
նութեան բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ
եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ընդունել զլթաճ։
Այս տառատպեալս ամենաթշուառ՝ ի վերջին սպասա-
ւո-

ւորութեան մաղթանաց այսր մատեանի , 'ի բովանդակ մնաց շնորհեցի խմոցն՝ փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն . և դժնէիցն նեն-դողացն խմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտութիւն արդահատեցի . վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի . որչափ դու ինձ ահա յայց ելեալ առաւել ողորմեացիս ըստ քոյդ մեծութեան՝ դոմեալ խնամակալ , կեանքդ՝ մահացուիս . հզօրդ՝ տկարիս . ամենակարդ՝ վարանելոյս . խմաստութեդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս : Բանզի յաւէտ սիալեալ անկայ իբրև զաղաղակ մթայինն ոչ ընդեղակեան՝ 'ի հաղբս մանու անզգայապէս , չիմացայ զկորուստն . չգիտացի զորոգայթն . չտեսի զբմբռնող որսոյն ծածուկ մանեանցս . չիարծեցի զկաբուն կերպարանաց կեղծաւոր վարսին . չնկատեցի զդայթակղութիւն շուրջանակի . չշուտիեցի զպատանդիչ զգանցարկ կարթին . ժամանեցին ինձ չարիք , և ես ոչ կարացի ճանաչել , ըստ սաղմոսողին :

3 Բանզի և ոչ խմաստակի ումեմն արտաքնոյ բարուք թոմեցաւ չար ասել զմնա՝ առ չիմանալոյն պատճառի , և ես վիպեմ խմովս բանիւ . քանզի իբր զսնդղոյ պաճարս անասնոց մեռանիմք , և ոչ զարհուրիմք . կորնչիմք , և ոչ հիանամք . թաղեցեալ լինիմք , և ոչ խոնարհիմք . տարադրիմք , և ոչ տագնապիմք . եղծանիմք , և ոչ զղջանամք . մաշիմք , և ոչ մատռեմք . պակասիմք , և ոչ պատրաստիմք . գնամք , և ոչ զգուշանամք . գերիմք , և ոչ և զգամք : Իսկ Հանդիստ ասել երջանկին յոբայ զվախճան մարդոյ , և ես խոստովանիմ զսոյն ընդ նմին , եթէ ոչ ունէի

զբեռն աշխատութիւն մահացու գործոց ըստանձնեալ։
Պանաւանդ զի՝ որոգայթն գաղտնի, և հնարագիրն
անբերևակի. տարբ ժամանակիս յանէից, անցեալն ան-
յայտ, և ապառնին կարծողական. ես անհամբեր,
և բնութիւն թերահաւատ. ոչ անհաստատք, և միտք
ցնդեալք. կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք.
մարմին մեղսամակարդ, և յօժարութիւն երկրասէր.
դիմամարտութիւն տնկակից, և խառնութիւն ներհա-
կական. բնակութիւն կաւեղէն, և անձրևք ուժգնա-
կիք. կարիք անթուելիք, և պատահարք ամենագը-
րաւք. միտք չարախնամք, և տենչմունք բարիատեացք.
կեանք առօրեայք, և զմբաղք սակաւաւորք. խաբ-
մունք յիմարութիւն, և խաղալիք տղայական. աշխա-
տութիւք ընդունայնք, և վայելմունք երազական.
համբարք ոչնչից, և պահեստք հողմոց. նմանութիւք
ստուերաց, և կերպարանք ծիծաղելիք։ Պանդի իբ-
րև եկն ետհաս պատուիրանն, ըստ պօղոսեան բա-
նին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կեն-
դանացան յանդիմանեալ յարդարութեցն, և ես մա-
հացայ կենացն, և կենդանացայ կորստեանն։
4 Պողացան օտարք չարին դուռանքք՝ զստացուածս
սրտիս իմաստից, ըստ գրոյն կանխաբանութիւն.
որով եկն ետհաս իսկոյն աստանօր իմաստութիւն ինձ
նուազանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բար-
ւոյ ցանկութիւն։ Ոչ յառեցի զանկն ոգւոյս 'ի գը-
լուխն իմ կենաց քոյ, որով ընդ ուղիղն հետևեցայց։
Պանդի կամելով ուժգինս ընթանալ, ընկալայ սաստ-
կապէս. յանչափին ձգտիլ, իմոյն ոչ հասի. 'ի մեծա-
գոյնն ամբառնալ, աստուստ գլորեցայ. յերկնային

ուղղոյն՝ անդնդոց մատնեցայ. 'ի զգուշանալն ա-
ռաւել, յաւէտ վնասեցայ. յանարատն պահիլ, մանր
խորտակեցայ. կարծելով ընդ ահեակն մրձիլ, յաջն
դիմեցի. 'ի զերկրորդն խուզել, զնախնին կորուսի.
'ի խնդիր սակաւուն, 'ի կարևորացն զրկեցայ. 'ի յուխ-
տին պահել, դաշինն դժրեցի. առ սովորութեանն
կտրիլ՝ կորուսիչս գտի. 'ի փոքունցն փախուցեալ՝ մե-
ծամեծացն մատնեցայ. զոր ես ինքն ինձէն ստեղ-
ծեալ՝ չարաչար դատախազ անձին կարդեցի։ Յո-
րոց փրկել զմատնեալ դերիս դու միայն զօրեսցես,
կենաց մատուցեալ՝ զընծայեալս մահու՝ զհոգիս.
զի դու միայն՝ ո՛ր յա՛, Ճանաչիս բարերար, անսահ-
ման փառաք՝ ընդ հօր և հոգւոյդ սեպ օրհնեալ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։

Ա՝ երորդի յաւելուածք երիցն հեծուրեաց՝ նորին հանողի, առ նոյն
աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց արդիս խոսի՝ ընդ Աստ։

* Բան. Ն.Օ.

1 Ասկ զառիթսն՝ մահու դիպուածս՝ դժոխարա-
մատ ծառայս դառնութեան պատուղք, ընտ-
անիք թշնամիք, հարազատք հակառակք, և
որդիք դաւաճանօղք, ստորադրեցելովք մասամբք
նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ։
2 Սիրաս նանրախորհուրդ. բերանս չարախօս. ականս
յայրատատես. ականջս վրիպալուր. ձեռնս մա-
հաձիգ. երիկամունքս անփորձ. ոտնս մոլորաշաւիղ.
ընթացքս աներկիւղ. հեղք խոտորնակ. շունչք ծը-
խա-

խախտուն • դնացք խաւարային • գոյութիւն լերդի
վիմական • խորհուրդ ծորեալ • կամք անկայուն • չար
անփոփոխ • բարեմանութիւն սասանեալ • անձն տարա-
գիր • առանդ վաճառեալ։ Զաղան վիրաւոր • թրոչ-
ուն նեռահար • փախստական քարավէժ • ըմբռնե-
ցեալ վնասապարտ • աւազակ ծովակուր։ Օ ինոմ՛որ
նենգաւոր • մարտիկ անպատրաստ • սպառազէն ան-
ժուժկալ • մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրա-
խոյս • բեմական ստորնաքարշ • քահանայ անկնդրուկ •
օրինական աննո՛ւէր։ Պսիր կշտամբեալ • իմաստակ
խելագար • ճարտասան անճոռնի։ Կերպ անպատ-
կառ • դէմք անամօթ • երեսք լպրշեալ • գոյն ան-
համբոյր • տիպ տմարդի • դեղ ծանակեալ։ Խորտիկ
խանդարեալ • ճաշակ դարշեցեալ • այգի գաղձնաւոր •
որթ որդնահար • պարտէզ փշաբեր • հասկ ուռճա-
հալ • մեղր 'ի միանց ճարակեալ, անպատսպար անկել։
Անաչարծ յուսահատ • անհամողելի նզով • անհաշ-
տական բաժանեալ • ունայնաբան շաղակրատ • պաճա-
բամիտ գոռող • անանձնուրէն ապիրատ • դժոխային ա-
գահ • աներասան յանդուգն։ Աղեգնուի անանձ •
ձեռնաձգուի սպանող • տատասկայան երկրագործ •
երջանկութիւն եղկելի • մեծութի վատթարեալ •
վայելչութիւն անշքեալ • կարողութի տկարացեալ •
բարձրութի խոնարհեալ • փառաւորութի ընդոտնեալ •
պատուի՛իրանազանցութի յարակայ • սխալանք ինքնակամ։
Ստակարար կամակոր • խորհրդակից նենգաւոր •
բարեկամ հատո՛ւածեալ • հաղարապետ դողամիտ •
մերձաւոր կծծի • բաշխող ժլատ • վերատեսուչ կար-
կամ • ոգի անախտակիր • իրանք անսէր • բարք ատեցող •

աղիք անդթականք • գնացք անխոհեմ • աներևոյթք
վնասակալք • ծածուկք անիծեալք • դիպուածք թըշ-
նամանեալք • Ա՛ռաջնորդական վատնիչ • շահաբար շը-
հայտեալ • պաշտօնեայ արբեցող • գանձուց ոսկ-
կան երկիմտ • պատգամաւոր բանասարկու • դունապան
քնեաց • Ա՛ղքատ հպարտ • մեծատուն ժլատող •
Զ՚ինանապետ անօրէն • պահապան մատնիչ • բնակ-
կից չարախօս • սուրհանդակ անժաման • թղթաբեր
պարտաւոր • առաքել խռովարար • միջնորդ անիմաստ •
Ա՛ղբոյ արտաքոյ • թագաւոր թարմատար • կոյսր ո-
գեկործան • իշխան տիրադաւ • զօրաւոր ղեկող • դա-
տաւոր ակնառու • ռամիկ ինքնադործ • Ա՛խատողն
ծաղր • սիրելոյ աշխար • բանադրի դարով • յանդի-
մանչն դատախազութիւն • Ռանգն և՝ ի վերադունիցդ
կոչմանց՝ էր ուրեք արդեօք՝ զի էի • իսկ՝ ի վատթա-
րականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ •
Ա՛ՐԴ՝ այպան վնասակարութիւնք խարդախութեց
յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև ըղ-
ձիմար, և յոմանց սիրեցայ իբրև զսկայ՝ կամաւ
մատնեալ զիս ինքն մահու •

3 Ա՛ՐԴ՝ զոր՝ ի վերադրելոցդ մասանց՝ քեզ ատե-
լեաց, և իմ կորուստեաց՝ ի տարս պաշտաման քեզ
ընծայեցեալ • զոր սխալս ապականութիւն պարադրեալ՝
ամենաբդ քո մեծութեան հանդէպ կացուցից • և
կամ որքանեաք երկայնմտութիւնք համբերեսցես այս-
քանեաց պարտուց • որքան ներես • որպէս լռեսցես •
զնարդ իսկ անասցես • իբր ոչ մատնեսցես հարուա-
ծոց դանից զարժանիս սատակման մահու • Ա՛ՐԴ՝
այսոցիկ անշոյլ մթութեց՝ հոգւոց խաւարն՝ ողոր-
մու-

մուԹեամբ լուսոյ քոյ պատահեսցես՝ բժշկել, քա-
ւել, և կենադործել զօրեղուԹիւն անվԹարելի. և
քեզ փառք յամենայնի. ամէն։

Ա էրոպին յաւելուած էրէին հեծուԹիւն՝ նորին հոգոյ, աա նոյն
աղէբս հաշխանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աց։

ԱՂԱՂԱԿ

* Բան. Ծ.

1 ՎԱՂԱՂԱԿ, անուն ահաւոր. մեծուԹեան
տեսակ. անքննելի բարձրուԹիւն պատ-
կեր. անսահման զօրուԹիւն. կերպարան
փրկուԹեան լուսոյ. պաշտպան կենաց. դուռն արքայու-
Թեան՝ վերնամ հանգստեանն. Ճանապարհ հան-
դարտուԹիւն. ապաւինուԹիւն նորոգ և անտխրական ե-
բանուԹիւն. ամենակալ ինքնիշխանուԹիւն՝ բոլոր էա-
կանուԹեան. օրհնուԹիւն կոչումն. աւետեաց ձայն.
բերկրուԹիւն բարբառ. անմահուԹիւն դեղ. որդի ան-
ճառ ոյ միոյ։ Որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է.
որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է. որ ինձ ա-
նանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկե-
ցեալն է, քումդ երանուԹիւն մերձաւոր է. որ ինձ
անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռե-
լին է, քումդ անճառուԹիւն չափեալ է. որ ինձ յու-
սահատուԹեանն է, քեզ սփոփանաց է. որ ինձ ան-
բժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հե-
ծուԹենն է, քեզ ինդուռն է. որ ինձ ծանուցք են,
քեզ ԹեԹևագոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ
զօրեղուն դրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ
ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է.

որ ինձ մեայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քումմ ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահեղբեալ է. որ ինձ մահաբերն է, քումդ էանուշ զօրութիւն զոյն հոգոյն համարեալ է։

2 Այլ դու ողորմած ՝ի ծոլորից ՝ի քոյ քո, և այսմ զօրեաս առ ելիցն հնար՝ եթէ դիտասցիս. վասն անուանն փառաց մեծութեան հօր քոյ օրհնելոյ, վասն կամաց դիտութեան ոգւոյդ քոյ սրբոյ, տես ՝ի աստ ժանաւորս կրիցս յանդիմանական յայտնութեան, և ՝ի խորոց սրտի ինքնամատոյց դատապարտութեան. նայեա՛ ՝ի բնութեաս ամենապատաղ խակութեան, և պարդևեա՛ բժշկութեան վերացս, և հնարաւորութեան կորստեանս. զերծումն բազմամանեայ մահուս, և շարիղ կենաց ապականելոյս. նորոգութեան եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս։ Եթէ ես զանազանն ինձ կամցուցի, որչափ առաւել դու զընտաւորականդ քո զընտանի բարերարութիւնդ. եթէ ՝ի փշոց պտուղ ընծայեցար քաղցրութեան, որչափ առաւել ՝ի ծառոյդ կենաց՝ հաշակ անմահութեան. եթէ ես իմոց ատելեաց ողորմութեան մաղթեցի, դու քոյոյս զիարդ ոչ կրկին մատուցցես հրաշալեաց յանուանազդ առատութեանդ։

3 Ընդ՝ տես ՝ի քոյդ մեծութեան՝ բարձրեալ, նայեցեալ ՝ի յիմն փոքրկութեան. ընկալ զսակաւ խոստովանութիւս անհամար մեղացս, որ զընտաւն համայն տեսանես. և որպէս զվիմին գթեալ՝ ոչ գրեցեր, և զսաւազոյս փոքրս սատանեալ՝ մի՛ համարեսցիս. և իբրև զդաւթին՝ ընդ մեղսն ասել՝ խակոյն անցուցեր

զպատիժ պարտուցն, և առ իմ Հայնիս հեծութիւն՝ զնոյն գործեսցես երկայնմտութի. որ տաս ամենեցուն առատապէս անաչառութիւն՝ ոչ յաղթօղ բարի բազմիմաստ. և ոչ նախատես զբեռնեալ ստրուկս՝ ոչ ողորմած և ամենատեղծ. ստայգիր վերստին, և մի՛ կորուսաներ զբուժեալս արեամբ քո, և զբուծեալս ստեամբ քո՝ դէպ թաց։ Զի քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութիւն, և քեզ վայելէ փառք յամենայնի յաւիտեանս. ամէն։

Ա Էրոպէն յաւելուած էրէին հեծութիւն՝ նորին հանոզէ, առ նոյն աղէրս Հաղնանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսի՝ ընդ Տ։

✻ Բան. Ծ.

1 Օրինեալ Տէր յա՛ ընդ հօր, 'ի կամս հաճութեան հոգւոյդ քո սրբոյ. և օրինեալք Տա՛ առ 'ի յօրինելոյդ օրինեցան. օրինեալ միայն որդի օրինելոյ. զի՛ք իմ թագաւոր իշխեցօղ շնչոյս բաց 'ի քէն՝ ք՛ա։ Զայս է օրինութիւն յակոբայ՝ ասէ եսայի, յորժամ բարձիցէ զմեղս նորա։

2 Զոր ողորմեսցէ ինձ՝ տէր բարեգութ՝ ըստ նախնիդ քո սովորութեան, և օրինեա զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւթի՝ և ըստ մովսէսի. զի բանիւ՝դ քո փրկուեն ժամանեալ, հասցէ քաւութեան՝ օրինեալ առ 'ի քէն։ Զ՝ծապէս ինձ հրաշագործեա՝ ողորմած արքայ երկնաւոր, ոչ անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահձացն խաւարս, ժողովելոցն 'ի սրատինն բեթհեզդայ։ Զորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամաց ախտացեալ

յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայտեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր դիտելով զանբոյժ յարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դառն դիշերին տիրամարտութիւն՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ։ Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի՛ մեղանչեր՝ զի մի՛ կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչ ինչ վերջացաւ լինել ձեռնէրեց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին։ Այլ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ մնհու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձնառ բարութիւն. սխրալի՛ մարդասիրութի. սարսափելի՛ նեղողութիւն. սոսկալի՛ երկայնմտութի. անբաւելի՛ քաղցրութիւն. փառատրելի՛ հեզութիւն։ Որ միշտ յաղթիս 'ի դթութիւն, և ոչ թշնամանիս. պարտիս յողորմութէ, և ոչ պարսաւիս. բռնադատիս 'ի մարդասիրութէ, և ոչ անգոնիս. հարկիս 'ի բարութէ, և ոչ հայհոյիս. ստիպիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս։ Պաղատիս դարձին իմ առ քեզ, և ոչ ձանձրանաս. արագեաս զկնի ապերասանիս, և ոչ լքանիս. ձայնեաս չլսողիս, և ոչ սրտմտիս. փութաս մեղկելոյս, և ոչ խափանիս։ Այդ չարս՝ ես բարի. առ ամենապարտս՝ ես ներող. առ մեղաւորս՝ ես քաւիչ. առ խաւարեալս՝ ես լոյս. առ մահացեալս՝ ես կեանք։

3 Այս են գիրք՝ ամ հոգեշունչ օգտակարութիւն, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս՝ անձառս և զարմանալիս։ Այսմ և ինձ թշուառացելումս՝ օրհնեալ ամենապարգև, արի՛ առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեսն յանդորը հանդիստ անաշխատ կենաց։

Լսեցէս ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ զերիզապնդեալ մահազգեստս պարիսակութեան՝ դժոխաշնեալ կապանացս. և լոյծ ինձ զհանդոյցս խեղդողական ոգեպահանջ սաստկութեանս, առաքելով զարժանաւորս մահու՝ յազատութենն վերին անանց բերկրութենն, կենսաբեր և ածային քո բանիւդ։ Ա՛ի տակաւ տակաւ ազդեսցես, և մի՛ օր ՚ի յօր յերկարաձգեսցես, զի մի՛ ստոյգ ծանրութեի բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս ազգերաց, և կործանեալ զնս կորացուսցէ՝ հայել ՚ի դժոխս, և ուժգնակի դողող բռնութեամբ՝ անպարապ հոգևորական զենուն ապրեալ, մահու ծառայեցուսցէ։ Ա՛յլ օգնեա՛ ինձ՝ բարի վշտակից՝ հեծութեամբ կարեացս մահու երկանց, առեալ յինէն զվայր ստոյակմանն, ոչ՝ երբեմն յուսոյ պահակին. որով կառուսցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեանն, այնդուզէս հաւատով յուսոյն կարծրութեամբ՝ ընդ քեզ բևեռեալ անսայթաքելի։ Ա՛ւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութեի յաւիտեանս. ամէն։

Ա էրոպին յաւելուած կրկին հեծութեամբ՝ նորին հանողի, առ հոյն ազգս մաղթանաց բանի։ ՚Ի խորոց արարէ խօսք՝ ընդ ա։

* Դան. Ծ.Ամ.

1 աւաստամ և վկայեմ մտաց դիտութեամբ՝ ՚ի քէն ազդեցեալ ոգւոյս խմաստիւ ուշիւս տեսանն. զի ըղձալի են քեզ՝ բարերար, աղաչանք մեղաւորաց, քան զեռնդրուածս արդարոց։ Ո՛չ ի մինն՝ զպարտուելի անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ

առ որ Ծանուցեալ զբնութիւն չափ , և մեծ կշռամ-
բիչ աստէն համբարձեալ՝ ինքնոգոր մարտակից նմին
իսկ ինքեան , և դառն դարովիք և ծածկատես դա-
տաքաղ Իսկ միւսն՝ յարդիւնս բարեացն իւրոց նայե-
լով , յանձին հարեալ ձեռն վստահութիւն , մուռանայ
զսահման բնութիւնն , և պարդևաց՝ քան ողորմութիւն
դիտեալ ակն ունի : Ա՛ որոյ առ մինն՝ անթիւ են
ստեղծուածք Ճառից , որ զողորմութիւնդ քո՝ փողով
բարբառոյ ազգէ . իսկ առ միւսն՝ լռեալ են քոյդ՝
սնքանչելի աշխարհ և ամենախնամ . ամաչեմ ասել ,
թէ և երկրաւորիս դործոց պատմութիւն՝ զքոյդ յա-
ռաջեալ : Լ՚ուդ՝ արի՛ աչք , և մի՛ զօրասցի քան ըզ-
քոյդ՝ ազ հողեղինի . մի՛ կշռեսցին ողորմութիւք քո՝
ընդ Ջանիոյ մարդկան :

2 Լուարդ՝ առողջքն անդամոք՝ անկարօտք են բը-
ժշկութիւն . և տեսանողականքն աչօք՝ չունին
պէտս առաջնորդի . և փարթամքն ընչիւք՝ ոչ դե-
դերին առ դուրս լիոցն . և ամուր յղփացեալքն՝ ոչ
սպասեն փշրանաց սեղանոյ հացի . և երբքն վարուք՝
ապէնիսալ են ողորմութիւն : Լուարդ՝ ինձ դթասցիս
ողորմել՝ բարձրեալ երկնաւոր հզօր , ամենատխուր
վարանեցելոյս : Գանալ թէ էի իբրև զյօր , ասէի
զանձն իմ իբրև զնա արդար և անարատ . թէ իբրև
զմանանս , ասէի վստահութիւն զնորոյսն , ծանիցէ՝ որ
զայնոսիկ՝ որ իւրն են . եթէ իբրև զդաւիթ , ասէի՝
արարի զիրաւունս և զարդարութիւն . և դարձեալ՝
զմեծն քան զբնութիւն մարմնոյ , զմեզս թէ տեսա-
նէի ՚ի սրտի իմում՝ մի՛ լուիցէ ինձ տէր : Թէ էի
իբրև զեղիա , ասէի զանձն իմ այր աց . թէ էի իբրև

զե-

զերեմիա , զքոյդ Աշմարտութի յանձն օրինակէի . թէ էի իբրև զեղեկիա , պարծէի զբարուքն և զիրաւացին՝ դնացի առաջի քո արդարութ . թէ և իբրև զպօղոս , ասէի զիս բնակարան ազգարան և ընդունարան այ բանին ։ Ա՜յլ ես անօրէնս 'ի մէջ դիտութեան օրինացն , ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարգանօք բանից իբրև զնոսա , և զբնաւին չարս՝ ոչ զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշատակել , այլ և ոչ զամենուստ գոյից զբարեհաջակեալ անուանդ հզօր՝ ամբարշտեալս լեզուով գովել ։ Իսկ դու առ՝ամ հնարս զօրաւոր՝ մատո՛ ինձ ոգի փրկութիւն . աջ պաշտպանութիւն . ձեռն այցելութիւն . հրաման բարութեան . լոյս ողորմութիւն . բան նորոգութիւն . պատճառ քաւութիւն . դաւազան՝ կենաց օգնութեան ։ Ո՛ի դու ես յոյս ապաւինութիւն՝ տէ՛ր յա՛ քո . օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Ա՛ ԷՐՍԹԻՆ ՅԱՍԵԼՍՀԱԾ ԿՐԿԻՆ ՀԻԾՈՒՆԻՆ՝ ՆՈՐԻՆ ՀԱՅՈՂԻ , ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՆԱՂԵԱՆԱՑ ԲԱՆԻ ։ 'Ի ԽՈՐՈՅ ԱՐԱԿԻՑ ԽՈՍՔ՝ ԸՆԴ ՍՈՅ ։

✻ Բան . Ա ։

1 Աւարդ՝ որպէս զի ոչ վայելէ օրինաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի Աշմարիտն առակիչ կանխաւ իսկ ուսայ , զնարդ յաւելից կըրկնել զնոյն գովութիւն՝ աղաչաւորս բազմապատկաւ , որ հանապազ ընդունիմ անէծս 'ի սաղմոսիս բարեբաստութիւն ։ Ո՛ի իբր երդեցիկ ինձ վտանգս , և արձանացուցիչ նախատինս . և 'ի մերկութեան գրկի՝ փու-

փուշս ընդ շուշանաց ժողովեցիլ։ Օ՝ Լսիրդ ընդ դաւթի համարձակեցայլ ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես։ Օ՝ Լսիրդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց։ Օ՝ Լսիրդ, թէ դատ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ անբծութեան իմոյ որ յիս։ Օ՝ Լսիրդ, թէ կատարեսցին ջարիք ի վերս մեղաւորաց։ Օ՝ Լսիրդ, թէ խոբատակեսցին բազուկք մեղաւորի և ջարի. և զայնմ որ զինի։ Օ՝ Լսիրդ, թէ տեղասցէ՛ ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ։ Օ՝ Լսիրդ, թէ սատակէսցուր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս։ Օ՝ Լսիրդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր ա՜նիրաւութիւն։ Օ՝ Լսիրդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս։ Օ՝ Լսիրդ զլսան, թէ ես արդարութիւն երևեցայլ երեսաց քոց։ Օ՝ Լսիրդ, թէ և ես եղէց ամբիծ ընդ նմա։ Օ՝ Լսիրդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ ուր ըստ արդարութեան իմում, և ըստ սրբութեան ձեռաց իմոց։ Օ՝ Լսիրդ անձամբ ինձէն զատութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն, թէ լուսաւորեալ սրբութիւն զձեռս իմ։ Օ՝ Լսիրդ ի մէջ նանրութեան, զամբարշտացն աթոռս բամբասեցից։ Օ՝ Լսիրդ զերջանկին պարծանս՝ թշնամանացելումն կերպաւորեցից, թէ դատ արա ինձ ուր՝ զի ես յանբծութեան իմում գնացի։ Օ՝ Լսիրդ օտարս ի բաբեաց՝ գիտողիդ գաղանեաց արդահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ։ Օ՝ Լսիրդ ես ինքն գոլով՝ զայլս անիծեցից, թէ տուր նոցա տէր զգործս նոցա. և ի կարդ բանիցն համարձակեցայլ։

2 Բանզի թէ զյեանս բանիցն՝ առաջնորդքն ա-
տանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք, և
յաճախեսցեն դառնութիւք։ Բայց 'ի շեղջեցելոցն
արտասուաց՝ դոյզն մի ջրմեալ, բաւականացայց հա-
նապազորդեան յանդիմանութիւն սաղմոսարանին ըն-
տանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ.
առ որս՝ և սպառուած քառասներորդի ինն ներորդի
հատուածի բանի յանդիմանողն՝ զիս դարձեցուցեալ,
հանապազ խոյտառակէ. խցեալ զբերանս 'ի փառա-
բանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ. ածային
ձայնիւն դատապարտեալ, յանկալութիւն կենաց լքա-
նէ. միանգամայն և վերջս մահու ինձ՝ իբր 'ի պատ-
նիշ առաքէ։ Բանզի թէ չար է անէծս առնուլ
յօտարէ, ապա անձամբ զանձն անիծանել՝ կրկին չա-
րաչար. իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մերձաւո-
րաց՝ օրէնք են, ապա 'ի տեսողէն հայել զայսոսիկ,
կրից արեան տաժանմունք՝ վիշտք աղէտից և խէթք
մտաց։ Բայց թէ առ խոնարհութեամբ անձին իւրում
մատնեսցի, ջնեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ
իւրմէ, 'ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բե-
ղանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի Ճշդրտեալ թարգմա-
նեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց. ոչ լքա-
նելով. սահմանաւն սիրոյ՝ զպարտեացն արմատ կրը-
ճատեաց, ոչ տիրեալ 'ի խարդաւանաց չարաբանողաց.
ոչնաբ հօտին քի գտաւ բժշկեալ՝ դիմելով 'ի յաղն
բուժիչ աղեսցն արկածից։ Բայց և ս անբանական
բարոյից է ասուն կենդանեաց՝ 'ի մէջ դալարաց ծաղ
կածին վայրից՝ կենաձիր բանից՝ թմբրութիւք մտաց 'ի
յարօտս մահու ճարակել։

3 Եւ արդ՝ քանզի իմ է առակս վերջին կշտամբ-
ղական, և առիս ակնարկէ զդիպուածոյն զար-
պատհմունս. որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղ-
մունս կիսանողական հրոյ տոչորման, հոսեալ 'ի յերկ
նուստ զդոյնն գաղաթանս խմաստնարանի բաղմա-
կիս։ Քանզի զիարդ 'ի յարդիւնս ինձ օգուտից սաղ-
մոն եկեսցէ, յորժամ անպտուղ 'ի բազմերդութեն
լինիցիմ, ոչ նուազեալ հոգւով, ըստ թելադրելոյն
պօղոսի։ Օ՜ խորդ ընդ մարգարէին և զսէրունին
խաւնեցից՝ մեծս մեղաւորաց՝ նկուանս պիտանեաց՝
ասել ընդ սրբոյն, թէ 'ի բաց կացէք յինէն ամքն՝ որ
գործէք զանօրէնութիւն։ Օ՜ խորդ ոչ ունելով 'ի
բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օ-
րինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն ա-
ռար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պա-
հեցի զայս. և որ զհեռն դան ասացեալքն։ Օ՜ խորդ
թափուրս 'ի լրութեէ խմաստից կենաց՝ ընդ երկիւ-
ղածս ան օրհնեցից։ Օ՜ խորդ ընդ մեծին մաղթա-
նաց զնմն յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի անէ՝ ըզ-
առեսիլ վայելչութեն նորա, և զհրամանատրութեն տա-
ճարի նր։ Օ՜ խորդ 'ի հրաժարելին ինձ ձեռնամը-
խեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելչ օրհնութի։
Օ՜ խորդ շրթամբք խմովք զանձն իմ անիծից՝ ա-
սելով զնին յոլովից առեալն, թէ երեսք ան 'ի վը-
էարագործաց՝ ստուգել զմիշտակս նոցա յերկրի։
զիարդ զմիւսն դաշնեալ, թէ ջաղք վաղվաղակի սա-
տակեսցին։ Օ՜ խորդ զկերպարանացն իմ նմանու-
թիւն, թէ բաղուկք ամբարշտաց խորտակեսցին։
Օ՜ խորդ ստուգման ինձ պաղատեցայց, թէ ահա
մե-

մեղաւորք կորիցեն։ Զ Իսկզ զբաղմայածեան լե-
զուս 'ի յօրինեալն բան միեցիս, թէ ասացի պահել
զճանապարհս իմ, զի մի՝ մեղայց լեզուաւ իմով։
Զ Իսկզ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարատին պար-
ծեցայց, թէ այլ զիս յամբծութեան իմում ընկա-
լար։ Զ Իսկզ ես մեղաւոր և կրկին պատժաւոր՝
զհանդունակիցսն դարուվեցիս ապրել 'ի նոցունց,
թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենդաւորէ փրկեա զիս՝
սաստուածոյ։

4 Զ Իսկզ իբր ոչ կռապաշտեալ անպատկառապէս
պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի,
միթէ մոռացեալ իցէ մեր զանուն այ, կամ ձգեալ
զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց։ քանզի որ 'ի
մեզս դարշութեամբ խոնարհեցցի, առաջի՝ կոյ նորին
կատուցեալ առել 'ի պաշտօն յաւնականացն ախտաւոր-
ծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ աս-
տարտայ և քամուսայ և մեղքոմայ արուարձանի, և
Թարահատայ Թարմատարի, ընդ զաղջոտեացն կանա-
ցեաց՝ իշանդամիցն պատկառանք՝ անվերարկու ծա-
նակուքք։ Զ Իբր ոչ պատկառեցիս սովիմբ ասել ընդ
նահատակին, որ զայս դիմադրաւութեամբ առ բարին
ունէր միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհանապաղ։
և որ 'ի կարդին է սորին՝ սաղմոս։ Զ Իբր յիմարս յարս
և վատթարս՝ ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատ-
մեսցէ զիմաստութիւն, և սիրտս զհանճար։ Զ Իբր մարդ-
ապէտ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրը-
ուել մաղթեցիս։ Զ Իբր զկրկին երկրորդեալսն մեծա-
նուանն բարութիւնս, թէ հաճոյ եղէց առաջի տն
յերկրին կենդանեաց։ Զ Իսկզ ունօղս անբաւիս

մեղայ՝ զարդարոյն առեալ կարդացից , թէ ոչ մեղք
իմ և ոչ յանցանք՝ առանց մեղայ ընթացայ , և ու-
ղիղ եղէ : Օ՛ խորդ զիս ինքն մատնեցից կորստեան՝
յասելն զայս բան , թէ մի՛ ողորմիր գործողացն զա-
նօրէնութիւն : Օ՛ խորդ , թէ որպէ՞ հալի մոմ առաջի
հրոյ , այնպէս և մեղաւորքն յերեսաց ՝ի : Օ՛ խորդ
գրգեալս ապականացու փափկութիւն՝ սահմանեցից զան-
նմանն ինձ բան , թէ խոնարհեցուսցի պահօք զանձն
իմ . և զաղաչիցս նորին ընդ նոյն , թէ ես ՝ի նե-
ղել նոյ՝ քուրձ զգենուի . և իբրև զդաւոր և զգ-
արտուամ՝ խոնարհ առնէի : Որպէս հանդարտեցից
զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել , թէ սակայն
մրուր բարկութեան ՝ի ոչ սպառեսցի , և արբցեն ՝ի
նմանէ ամ մեղաւորքն երկրի . իբրև զեան առ սմին ,
թէ զամ եղջիւրս մեղաւորաց փշրեսցեմ : Օ՛ խորդ
զապերախտութիւն յանիրաւս ՝ի ձառ առեալ հենդնե-
ցից , որ ընդ ստուերին զճշմարտութիւն ընկալեալ ,
մոռացայ ընդ նոսին՝ նոցին թերութիւն զերախտին
քի՝ ածայնովքն արուեստիւք խաչին փրկանաք , քան
նոքա զոգորմարութիւն մովսէսի՝ ցպոյն պանչելեաք ,
որ զբինակն նկարագրէր երուսական տնտեսութեան : Օ՛
խորդ զյարուցելոցն ՝ի վե՛ դիւ՛ աց զաղէտս ցու-
ցից , իբր նոքա զօտարացեղից խուժադուժ ազգայն՝
ասելով , թէ արկին զդիակունս բարեացն որ ՝ի մեզ՝
կուր վնասակարացն թռչնոց , այս է՝ այսոցն օդայնոց .
որպէս զանկեալ զսերմն բանին ՝ի ճանապարհին . և
զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ սուրբ անուանեցից ,
իբրև զնմանակիցն առ ՝ի նոյն շաւիղ չարին պատե-
ղասմ՝ դուպար դաղանամարտ մնացս օգտելոյ , զոր

ես զօրացուցի՝ գործակցեալ հնարիւց բանասարկուին։ Այս ոչ ունիմ աղերսել, թէ մի՛ լուեր և մի՛ դադարեր՝ ա՛ծ. և խորհեցան 'ի վերս ոբց քոց և ասացին, զոր 'ի կարդէ սաղմոսիս է աղօթել։ Բանզի յոյժ պատեհադոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերս բռնութիւն մոլեկան դիւացս միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խրատուութիւն, և ընդ նոսին՝ նոցին մշակաց։

Յորոց դու տէր քո՝ որդի բարձրեալ մեծիդ այ պահեսցես և ամրացուսցես, երկնային զօրուդ շրջափակուբ՝ յամ ընթացից խաբողին հողմոց՝ խաչի՛դ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՝ թէ և դրտցին յիս անօրէնութիւք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիւք։ Որ ոչ հանդէսար 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ ամենագորով թախանձմամբ ընդ երդման ջրողին զաղրագործաց՝ կրկին վշտացար, տաղտկալի զմահու նց դիպուածն քեզ գրեցեր, ասելով զաղրմանալիսն լսողաց բան, ածեալ ըզմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Այս մխիթարիս մեծ իմն պարարեալ, ընդ կեանս՝ անմաքրից և պարտաւորաց սատակման. որ երբեմն առակաւ դդմենուոյն՝ զանխոյելն 'ի կործանելիսն ցուցեր՝ ողորմած. և առ այլ ուրեմն՝ նեղեցար սաստիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման։ Անճառելիս ցուցեր բարութիւն տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն առաքելոցն քոց, ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր։ Ահա և յիս ցօղեա կենդանի զհայրենի գթութեանցդ զսէր, զի և ես փրկեցայց քաւեալ՝

ամենատաս քո այցելութիւնդ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք՝ յաւիտեանս։ ամէն։

Ո էրոպին յաւելուածք չէին հիմնուած՝ նորին հանողի, առ նոյն աղէրս նաղլեանաց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ սոյ։

✻ Բան։ ԿԸ։

1 Եւ ընդէր է ինձ բնաւն որ ի սաղմոսին այն պիսեաց բանիցն՝ ի կիր արկանել։ որ ի նա խատինս՝ միանդամայն և ի նեղութիւն ինձ յարակային, հանապազ երգել խմովս տաւղաց։ Քանզի՝ զիարդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցիչ՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցար առիս թիւրեալն սրտիւ։ Ո՞ զիարդ զկարդաղութիւնս տանցն՝ ի յայտանէ զնին թոմելոցն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին, և մարմնական հրամանատարին, որք և երկնայնոցն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղէց ի կենաց պատմողաւետեացս և նորոյս աշակերտ՝ անմասն յամենատաս բարեկարգութեց։ Ո՞ զիարդ ըստ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝ մահու զինեցայց առակաւ առաւօտին ի սիլոէն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամն մարմնոյս դանեալ իրատեցի։ զիարդ մասնակցեալ մեծին աբրութեան՝ սատակեցից ի քաղաքի տն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի։ Ո՞ զիարդ ատեցից դրողին չև յայտնելոցն, թէ ըստ մինիր որպէս հաց կերայ։ զիարդ, որ ոչ միացուցի մի-

յիմոցս կրեց կաթիլ մի պղտոր՝ ընդ յստակ արտօար աղբերց երդողին՝ ասեմ ընդ նմին, թէ զմտելիս իմ արտասուօք խառնեցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Օ՜ որս ինձ դրեցիս մեղօք մահացեալս, յորժամ սիրոյն ՝ի բոլոր սրտէ՝ զանցանունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք. և որ ՝ի վախճանն յանդի սաղմոս՝ իրաւամբք առիս, քան առ խորայել։ Որովք յարդեցայց դասիլ ընդ բարիսն, յորժամ մարդկային ինարեց այս դեղ պատուհեցաւ՝ որ ո՛չ յիս գտաւ, ՝ի դարշութենէ կերակրոց ՝ի մահ սովեցեալք՝ և յաճախութէ ճգանց ՝ի հոգւոց նը՝ ուաղեալք, ըստ խորութէ ինքնօրէն կրօնիչ՝ հրէից և հեթանոսաց։ Օ՜ իմիրդ՝ արդարութի իմ մնայ յաւիտեանս, զոր ո՛չ բնաւ իսկ կատարեցի։

2 Եւ զի մի՛ տաղտկացայց յամեալ ՝ի բանիս, ՝ի համառօտել զսոյն փութացայց։ Օ՜ ինչ ունիմ ասել ՝ի տեղի բանիցն՝ զոր ածաշունչ ձայնն նուագեաց օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սրտի՝ իմով խնդրեցի զքեզ. զիմիրդ ընդ սին զմեծն քան զայս, թէ յամ ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. իբր ընդ եղեալս և զսոյն մատուցից, թէ ՝ի սրտի իմում թաքուցի զբանս քո՝ որպէս զի մի՛ մեղայց քեզ։ Որպէս զունայնութեցս իբր զլքուեց ճառեցից ընդ պարս մաքրոց, թէ ՝ի պատուիրանաց քոց իմացեալ, ատեցի զամ ճանապարհս չարաց։ Օ՜ իմիրդ զհեզոյն ճշմարտութիւն՝ իմում ստութեան մշանջենական երդմանհարութի կարդեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդուցայ զոր հաստատեցի պահել զդատաստանս արդա-

դարութիւն քոյ։ Օ՛ խարդ ինձ հրեշտակ մահագոյժ անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն։ Օ՛ խարդ ջարս խսկապէս՝ զբարեացն գրեցից՝ որք 'ի անէ առնուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից։ Օ՛ խարդ զհամառօտն փոխատրութիւն անաչառութեամբ՝ վերիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւ-բեալն յափշտակութիւն՝ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն։ Օ՛ խարդ զաճաղգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայսն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ զբօսան աչք իմ. և որ յետ սորին պատմին ասացեալքն։ Օ՛ խարդ զանձառն քան զմարմին բան՝ 'ի ցոյցս առեալ քաջալերութիւն վկայելոց, ես գանձ գերհենին՝ ասել ընդ օծեալն ՅՍ հոգւոյն, թէ յառաջադոյն տեսեր, զի ոչ գոյ նեն-դութիւն 'ի լեզուի իմում. 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսիս՝ մինչև 'ի լրումն աւարտման բանիս։ Օ՛ խարդ դասակցութիւն դժնէից մարդոց համաբան՝ այրս մահու և որդիս սատակման՝ բարբառեալ զբարեշնորհին, ոչ ահա զատելիս քո՝ տէր ատեցի. և ըզմնացուածն սորին կարդի։ Օ՛ խարդ մեծաւն վըստահութիւն տօնելի վերին՝ անձն իմ և դու աշխարաշխարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեա՛ զիս՝ տէր և տե՛ս, թէ իցեն անօրէնութիւք 'ի ձեռս իմ. և ըզյաւելուածն որ զհետ սորին։ Օ՛ խարդ ես դողով՝ և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացեալոցն յաճախակցեալ, պահեա՛ զիս՝ ե՛ր 'ի ձեռաց մեղաւորի։

և

և 'ի մարդոյ ջարէ։ Օ՛խարդ համբարձայց ընդ փա-
ռաւորեալն մաղթել ՝այ, թէ դու ես յոյս և բաժին
իմ յերկրին կենդանեաց։ Օ՛խարդ իբր հանդիսա-
ցեալ ընդ ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թա-
գաւորին մատուցանելոյն զառաւելեալն քան զօրի-
նակ աղերս աղօթից, թէ ինձ սպասաւոցն արդարք
քո մինչև հատուսցես ինձ։

3 Բ՛արեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և ՝որուն
գործոյն նմանի, որ զիւրձիչն պատկառեցոյց,
յորժամ զամ արհամարհիցէ՝ և զսկզբնապատճառն
եղելոց միայն ընտրիցէ՝ ասելով, թէ երանի՞ ժողո-
վրդեան, որոյ ՝ար ՝աստ է նոցա։ Պ՛ատ է և այս բարձ-
րութիւն շնորհի՝ և զդուշական համարձակութիւն լը-
ցեալ երանութիւն, թէ սուրբք քո օրհնեսցեն զքեզ։
Բ՛ղձալի է և այս ընտանութի մերձաւորական հոգևոր
հաղորդութեան՝ յոյժ յուսալ և 'ի նոյն արձանանալ՝
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կատարէ,
մինչև զողբալին և զսիրարձալին աղդեսցէ, թէ պա-
հէ տէր զամենեսեան որ սիրեն զնա. և զամ մեղա-
ւորս սատակէ ՝ար. 'ի դլուխս լման գրոց նահ՝ադա-
բանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վեր-
ջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց։ Օ՛ու-
գակցորդք են միմեանց և զկնի երդեցեալքս. զի թէ
ընդունի զՀեզս տէր՝ և խոնարհ առնէ զամբարտա-
ւանս մինչև յերկիր, ապա ինձ որքան եղկութիւնք
կան առաջի. իսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ
՝ար, և բարձր առնէ զՀեզս 'ի փրկութիւն, ապա հեր-
քեալս 'ի բարեմասնութեց ես՝ որ հատատեցոյց.

իսկ

իսկ եթէ օրհնելն է ՝ի ՝ի սէր սիրապէս , ապա օտարս ես ՝ի մաքրութեան՝ ընդ որս դասեցայց . իսկ եթէ ՝ի կանխերդիցն մերձ ելար երդից յիշատակարան ինձ կշտամբութեան , թէ սիրեցէք զոր սէր նորա , զի ստուգութեան խնդրէ՝ սր՝ և կրկին հաստատեսցուք ամբարտաւանիցն , ապա յորում գնդի ես դասայց՝ գերեալս ՝ի գաղտնեաց դատողին չարեաց : Բանդի զոր օրինակ տատանին տագնապաւ տերևք տնկոց երևին ծառոց՝ շարժեալք ՝ի հողմոց ուժգին բախելոյ՝ հոսեալք ՝ի խոնարհ , այնպէս ջանացաւ ջարդել զընթացիկ խմոց վերարձակութեան քաջաբեր ուղէշ՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշակիդ : Օ՜ որ հաստատեսցէս արմատացուցեալ վերսին դարձեալ՝ նոր պտղաւորութեամբ անապականաւ , յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ՝ ամենապարգև թագաւոր քո՝ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Ա էրսոին յաւելուածք էրէին հեծութիւն՝ նորին հանգէ , առ նոյն աղերս մաղխանայ բանի : ՝ի խորոց որոց խօսի՝ ընդ ոչ :

* Բան . ԿԲ .

1 Ամ արդ՝ ընդէր ոչ ՝ի վերագրեցեալն սաղմոս նախաձառական՝ և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից : Բանզի զինչ վայելումն ինչ ունիցեմ . և կամ զոր շահ սաղմոսն ունիցի , եթէ ոչ ՝ի միտ առնուցում : Բանզի նզովեմ զիս ինքն ՝ի նոսին , և ոչ խմանամ . լուացեալ լինիմ , և ոչ պայծառանամ . արևու ծագեալ , և ոչ լուսաւորիմ . մեղը

ճաշակեմ, և ոչ քաղցրանամ. ուտելիս լնանիմ, և ոչ բժշկիմ. միշտ կանխեմ ի նոյն, և դատարկ երևիմ. հանապազ ձաղիմ, և ոչ երբեք խրատիմ. ողբիմ դարձեալ, և ոչ զդաստանամ։

2 Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ ի նոսին, ըստ մարգարէին՝ որ ի դիմաց պարտաւորացն բանի. և արուեստական առակին՝ հին տոկոցն և նոր դիւղոյն։ Ա՛ռ զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք ի միասին, ըստ եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձել պահի։ Զ՚հանգի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կցորդեմ սին զընթերցուածն, թէ օր ան՝ ի վերայ հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք ի մօրէ, և որ ինչ կարդ սորին ցուցանէ, յաբեմ առ սին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի՝ յերկրէ, և անիրաւք մերժեսցին ի նմանէ։ Ո՛ղբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զնորին վառի եղէգն ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորքն ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարհս պատմեցէք ի բանս ահեղեան վճռին՝ մարգարէին՝ աղաղակեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հոլովեսցէ զնս. աղի արտասուս՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ լիելի և ինձ ասասցէ բանին սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. ասա՛ղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ

այլ մարդարէ զնոյն դիցէ , վայ նոցա՝ զի վաղեցին զինև : Բարբառ փողեցէք 'ի սիրտ մղձիկեալ նոր ա-
ղաղակի , յորժամ տեսանօղն ասառուծոյ ամաչեցու-
ցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ ապարասան տանն յա-
կոբայ , տեսէք սրհամարհոտք՝ զարմացարուք և
եղծարուք :

3 Ա. Յլ դարձուսցես և ամփոփեսցես զբարձրացեալ
զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց՝
'ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ . և խնամովք աչոյդ
բարեբաշխութիւն առիս ժամանեալ , օծումն կենաց
պարգևատրեսցես քո աղաչողիս : Եւ քեզ փառք՝
յերկինս 'ի բարձունս , և 'ի մահացուցաց յերկիր 'ի խո-
նարհ , 'ի սահմանս բոլոր աշխարհաց , և յամենայն յա-
ւիտեանս . ամէն :

Ա Էրսոքն յաւելուածք էրէին հեծուրէ՝ նորէն հանողէ , առ նոյն
աղէրս նաղ Լանաց բանէ: 'Ի խորոց սրտէց խօսք՝ ընդ ոչ:

* Բան . ԿԳ . :

1 Բարերար և բազմագութ , մարդասէր և երկայնամիտ՝ միայն թագաւոր , ընդ հօր քում
պատուական և օրհնաբանեալ որ ամենայնի ,
որդի՛ այ կենդանւոյ : Ընդպատճառդ միշտ խնամ
կորստեան . որ ամենևին անփոյթ ես 'ի չարեաց . որ
ոչ կամիս զմահ մեղաւորի . որ փրկութիւն են 'ի քոց
կամաց ընծայեցեալ . որ դարձուցանես զմարդիկ մե-
ղաց՝ 'ի յօդ քաւութիւն . որ զհուր բարկութիւն՝ յանձ-
նև փոխարկես : Որ զբեանեալ զկինն 'ի բարեաց՝
կրկնակի դոյիւ նահանջեր՝ երկեակ բնութիւն 'ի նոյն

արձանի, ոչ խակապէս ընդ անպարտան, և ոչ համայն
ընդ պատժաւորսն։ Որ զլուծութիւն ծովուն սահա-
նայ, իբր զկարկառս քարանց կառուցեալ՝ յեղանա-
կեցեր։ Որ զկարծրանիւթ վէմն անապատին, 'ի վի-
ժակս վտակաց հոսեալ՝ բղխեցեր։ Որ զյորդանա-
նաւ ջրոյն սրաշարժ վայրեկութիւն, հրաշաւոր անդ-
ընդարձութիւն՝ 'ի յետնորդս հեթանոսաց լուսացումն
աւաղանին՝ 'ի Թիկունս առաքեցեր։ Որ զպատուհաս-
տեալ պարիսպն երիքովի, յօրինակ կործանման բըռ-
նութեան սատանայի՝ իբր զթեթևութիւն յարդի ցընդ-
եցեր։ Որ զվնասակար ջուր նորին, 'ի յառակ ոչ-
լայլութեան՝ առ 'ի բարին փոխարկութիւն՝ քանանա-
ցւոյն փրկութիւն՝ խորհրդական աղբիւն համեմեալ
անուշեցեր։ Որ զմեռային դառնութիւն, իբր զմտաց
անհաւանութիւն, կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝
պիտանի արարեր։ Որ զառեալն 'ի գետոյն, 'ի դը-
ծադրութիւն անսահմանդ քո հրամանի անաբակիդ
գունակութիւն՝ 'ի նոր երանդ բոսորային՝ մածէր ա-
րիւն 'ի ցամաքի։ Որ զանկենդան ցուպ դաւաղա-
նին, 'ի կերպաւորութիւն՝ առ 'ի զքոյդ մերոյս նկարա-
գրիլ, այլ և յօտարազնիցն ընտրութիւն՝ 'ի սիպն ա-
պաթոյն կերպիւ վիշապի՝ նմանեալ ցուցեր։ Որ
զերջանիկ ձեռն աջոյն մովսիսի, 'ի ցոյցս տեսութիւն
ապագայիցս հրաշից մարգեղութիւնդ քո՝ բարձրեալ,
և քեզ՝ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփո-
փոխ փոխատրութիւն՝ կրկին գուշակեցեր։ Որ յայս-
քանեաց շրջադրութիւն, բարեխնամապէս արուեստիւ
սիրոյ՝ զանակնկալն գիւտ մեզաւորաց կորստականաց
նշանակեցեր։

2 Երնեակ ամենապուծ, որ բուսուցանես յերկրէ
գալարի, զմեռեալն՝ յանշնչականէն. որ զան-
շարժն՝ իբր զընթացօղ կառավարես. որ յանարգ ար-
գանդէ՝ կոչես քեզ պատկերակիցս. որ տաս պատա-
նեկաց՝ աղարիս ըմբռշխնելիս. որ յայտս մերքուրս՝ հերս
ընծայես. որ զսաղարթ սեռութիւն վարսից, 'ի ձեռն
կերպարան զարմանագործես, ցուցեալ՝ թէ առ ամ
սահման հեռաւորական, յաղթօղ ես հզօր. որ փո-
փոխես զշրթունս բնաւորական, ըստ բանին յո-
բայ, 'ի կամս հաւատարիմս. Որ սասանես զերկիր,
և զսիւնս նորին 'ի հիմանց, նշանակեալ հաստատ-
ութեան դպրին՝ թէ դու միայն մնաս անկիրնչելի. որ հը-
լովես զտարերս՝ իբրև զանցաւորս, և դարձեալ 'ի
նոյնն կապես՝ իբրև զյարակայս, յայտ արարեալ՝ թէ
և առ մեզաց բազմութիւն դիւրապէս ունել կամ
թողուլ դոյնպէս զօրաւոր իցես. Որ զարուսեակին
անզգայ էութիւն՝ իբր երասանաւ ինն դաստիարա-
կես, երևեցուցեալ այնր իրի կերպին՝ թէ զընտրեաս
չար դիմեցումն՝ յորժամ և կամիս՝ հանդարտ առնի-
ցես. Որ զանբարբառ բոլորակ լուսնին՝ կարգես
ունայնս և պատարուանս, լուսաւորել զպատճառն առ
աւետիս տեսողաց՝ թէ 'ի նոր աղուութիւն բարեաց ըզ
պարտաւորս մարմին՝ դու ածես 'ի լրութիւն առաջնաս-
տեղծ հարատութեանն. Որ զպատկերս անիսս աս-
տեղաց, իբր զդասակս դոյն հօտից՝ տրոհես և ժո-
ղովես, յոյս ինն կենաց առ ոյս խորհրդաբերեալ՝
քաղցրահայեաց տեսութիւն, թէ՝ և անաղաչաւորաց
լեզուաց՝ կարողապէս բաւես ողորմել. Որ 'ի մէջ
մահու և կենաց՝ շաւիղ վտահութեան ուղես 'ի
ծո-

ծովու , վկայութիւն եղեալ հաւատի , թէ՝ և յան-
կասկածաւորն վայրի՝ քեզ պաշտպանիմք անդայթադ-
ղելի . որ իբր զջուր կաթսայից 'ի տրոյ եռացեալ ,
որպէս զմեղայ մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց
խաղաղացանես . Որ հայիս յերկիր և սատանես զսա,
զի անբանիւն՝ զմտաւորս զբաստացուցանես . որ իբր
զակատ մի անձուկ նաւի՝ 'ի մէջ շարժութիւն ալեաց՝
զանբաւ թանձրութիւն գեհենայս դղրդես , որպէս ծա-
նուցեալ լինիս ամենից հաստատածոյ՝ թէ ելցես ան-
երկիւղայելի , որ 'ի բան քո զօրեալ՝ հիմնացեալ ունիս
զամ։ Որ սերմանես զարտաշնչացեալ մարմնոյ յերկ-
րի , և զնոյն անկորուստ պահեալ՝ կրկին կենդանա-
ծընես . որ ապականացուս տանդեալ՝ անեղծս ըս-
տանաս . որ ընդ մահացու նիւթոյս՝ զնշխարդ կե-
նաց խառնես , որ հրամանաւ ակնարկութիւն՝ 'ի խուն
վայրկենի կնազմեցեր պատրաստ կացուցեր զանզար-
դութիւն ամենից եղանակաց . Որ է զօրութիւն և
կարողութիւն , որ շրջանակես զժամանակս ամաց հո-
լովման աւուրց՝ յայլ նմանութիւն բարեպատեհ տեսո-
ղութիւն . Որ կարդաս զանմուտնչան , իբրև զկենդա-
նիս . որ ազդես միայն , և նոքա ընթանան . որ միայն
հեռուս անկանես անձառ արուեստին հնարադի-
տութեան՝ մեզ և առաւօտ . Որ յետ նախակարդ
յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութենն , արարեր
զիտառաւորեալսն մեծամեծս հրաշակերտիցն հան-
դիսից , ըստ դրոյն երջանկութիւն կանխահիսայն զար-
մացման , այլ ինն դասացուլ տօնելի սեռակի՝ անեղծ
աշխարհագործութիւն և քան զոյն՝ 'ի մարդանալդ
քո , որոց օչ գոյ թիւ .

3 Որ

3 Որ ահա զինեան մեր՝ քեզ դրեցեր • որ զարդա-
րութիւն քո՝ մեզ շնորհեցեր • որ ընդ քեզ կրե-
ցեր զհաշտութեան մերում փրկանակ • որ ոչ երբեք
լքանիս յողորմութենէ , դարձո զամբարշտեալս՝ 'ի
պաշտօն բարի երկիւղի , զթմբրեալս՝ 'ի զգաստութի
արթնութեան սրտի • զանմաքուրս՝ 'ի սրբութի պայծա-
ռութեան կերպարանի • զբազմաբիծս՝ յանբծութի
հանդարտական աբ պատկերի • զբեկեալս՝ յողջութի ,
որ 'ի դիպմանց ոչ խորտակի • զլացեալս՝ 'ի խնդութի
զոհարթութեան անտխրելի • զյուսահատեալս՝ 'ի սէր
միաւորիչ անքակտելի • զամաչեցեալս՝ 'ի վստահութի
հաստատութեան անշարժելի • զնսաւարեալս՝ 'ի լոյս ե-
բանութեան անմեկնելի • զմահու գերեալս՝ 'ի կեանս ,
որ ընդ եղծմամբ ոչ անկանի : Ո՛ի փառաւորեսցի
անուն քո՝ յիսուս , խոստովանեալ յամի , ընդ հօր
և ընդ հոգւոյդ սբ՝ 'ի բարձունս երկնի և 'ի ստորեւս
երկրի՝ և 'ի բնակիչս նց , յաւիտեանս յաւիտենից •
ամէն :

Ա էրոպէն յաւելուած է բլրին հեծութեան՝ նորին հանդէպ , առ նոյն
աղէրս մաղթանաց բանի : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աղ :

* Բան • Կ՚Ա :

1 Քաւարդ առ ամ բան՝ յամի ուղիղ ես՝ ա՛ծ •
իրաւամբք դատիս • արդարութիւն կշռես •
կենաց և հովիւն հօտից բանաւորականաց։ Հաւա-
տարիմ եղև յաշխարհի. և երևեցեալ նոյնութիւն՝ ա-
մենևին աննուազելի, ոչ եկն համայն, և համբաւ-
ձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ 'ի դերուանին

դահոյն՝ նախնականին պարզութիւն՝ արարչական փա-
ռաւորութիւն։ Օ՜ որ խոստովանիմք ՝ի ծ բարերար և
՝ի ար բոլորից. որ դատի զամ երկիր արդար ընտրութիւն
յաւուրն մեծի. որ ինքն է սկիզբն՝ և ինքն կատա-
րած. նոյն առաջին՝ և նոյն առյաւէտ, անպակաս բո-
վանդակութիւն թագաւորեալ ՝ի լոյս անմատոյց։
8 Որ՝ինաբանեալք ընդ հօր և որդւոյ՝ և ընդ սուրբ հոգւոյն՝
նելի բղխումն՝ նոցին փառակից հոգւոյն ՝երու-
թեան։ Որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զամե-
նայն. որ անդստին իսկ ՝ի բնէ համապարփակ մթու-
թիւն աշխարհական մեղի՝ շրջեր նկարեր և կերպա-
րանէր ամենունակ ջուրքն անբաւութիւն երկրատա-
ղածն ծովու՝ ՝ի կատարումն արդեան խորհրդոյս՝ ըզ-
սբ աւազանն լուսոյ։ Ցախս արար, և այժմ գործէ.
գոյացոյց, և միշտ կատարէ՝ արուեստս, զքանչելիս.
նախատեսութիւս սրբասնելոց. ազգմունս ՝ի ծ օրէնս.
զօրութիւս զարմանաւորս. մարգարէս, առաքեալս,
վարդապետս՝ վարժօղս կրթութեան հանճարոյ։
Օ՜ սրբարարն մատուցման արեանն քի՝ յարդարեաց.
քաւութիւնս անձանց՝ առողջութիւս մարմնոյ՝ ըստ
նմանութեանն քի՝ ողորմութիւն հրամայեաց։ Ո՜՝կրտեաց
և դեր քան զնուր, ինքեան միայն բաւականութիւն՝
նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նոցին բարե-
գործութիւն զօրանայ։ Ա՜ կայեաց մեծանին ՝ի ծ ՝ի-
թեն՝ ՝ի հոսանան յորդանանու. օրինակաւ տեսութ-
ամպոյ՝ ցուցաւ ձայնին՝ հօր ՝ի լերինն թափօրական։
՝Ի՝ նոյն տիպ նմանութեան՝ հովանի եղև յակոբեան
առհմին՝ ՝ի յելան եգիպտոսի. յուղեգնացութիւն զո-
ղաւաքուեն մովսիսի՝ հողմով սաստկութեամբ զփարաւոն

ընկղմեաց։ Քահանայս կատարագործէ. խնամատուս
կազմէ. թագաւորս զօրացուցանէ. քաւութիւս ընձեռէ. կեանս շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութիւն
յարութեան։ Այսոյն ինքն է օծումն մարդացելոյն այ.
մշանջենաւոր հաւասարութիւն ընդ հօր երկրպագեալ՝
'ի պատիւ մեծութեան որդւոյ. անսահման փառաւորութիւն
օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Աղերսն ասացեալ 'ի Խորհուրդ սէր։ Էլիսէեցւոյ. ընդդէմ պղծաղանդաւորացն Ինդրայիցոյ, նոր Մանիցոյ։

9 Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխտրական ամբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ, զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ ածային բնակութիւն եկեղեցւոյս շինումն ածոյ։ Որ գերազանց դտաւ և երկնի ամենազարդ բարձրութիւն. որ 'ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Սկիզբն առեալ կենացս այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին այ լցոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն՝ յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար աստուածութիւն, յորում ապա և 'ի նմին բնակչացն՝ որ ընտ լուսանորոգ բարեփառութիւն։ Ուստի արիւն հզօրին այ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զհաբելին մնհու՝ գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութիւն՝ կենդանութիւն անմահութեան 'ի սմա աղդելով։ Քանզի ոչ է կար զօրութիւն ուրուք ընդ

երկնաւ յանդիման արեգական՝ 'ի սպասաւորութի
խորհրդոյ այսր սահմանութեան ձեռնարկել, եթէ ոչ
ընդ թեւաւք սորին պահեսցի. նա զի ոչ երկնիւք բա-
ւականանայ այս նոմէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ
զայս ձեղուն օրինութեամբ՝ ծածկոյթ ունիցի. վասն զի
մահու անիծիւք հեղբի այր ըստ օրինին, որ արտա-
քոյ խորանի այս վկայութեամբ՝ զաճծային պատարագն
մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կո-
չեսցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն՝ յայս նոմի-
բան ընծայեցուցէ. Մի՝ 'ի սմա լուսացումն 'ի մանն
քի, զի մի՛ յանգէտս անարդեալ՝ ճծութենն, 'ի ծա-
նուցելումն զնախանին կրեսցէ. Մի ձեռնադրութի
'ի պատիւ օծութեամբ լուսոյն, զի մի՛ յանբծութենն՝
խաբէութի խառնեսցի. Մի և շնորհաց, քան թէ
ապաշխարութեամբ՝ քաւութի, զի մի՛ ճշմարտութիւնն
կերպարանաց խորամանկեսցի. Մի յընտրութենն՝ ա-
պառնի հաւատ, զի մի՛ սպառնալիք հատուցմանն՝ զը-
ըոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի. Մի երկոքան-
չիւրոց գոյութեց մերոց իրաւամբ կշտամբութի, զի մի՛
կիսամանեալ առ մարդն նեղբին և առ արտաքին՝ չա-
ըի և կամ բարւոյ փոխատրութենն՝ կարծիցի յանմահ
զօրութի ալքայական որդեգրութենն, զի ընդելութեամբ
երկրայնով՝ առաւելութի վերնումն թագաւորու-
թեան՝ յայանապէս ճշմարտեսցի. Մի յայս կենդա-
նութեամբ առ անեղծութենն նբոյ, զի անեբկեանութի
խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ
հաւատասցի.

10 Այս դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝ տայ
կեանս, և մահու իշխէ. ըստ օրինակի աղամեան

պողոյն յարմարապէս Հաշակելի. գերազանց քան ըղ-
բանականս՝ յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի
կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին
նկարել՝ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ։ Պրեալ
և-ս է տեսակ մեծութեան վերնումն կամարին՝ սկզբ-
նաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն
՝ի նմա զօրութեց։ Զոր իմն ընծայէ թռիչս մարմ-
նոց՝ ընդ թեթևութիս հոգւոց, պատուականին հա-
ղորդաւորք՝ զանարգն յարդաւորեալ։ Ա՛ն ինքնակիր
մեզոք զաղբանայ, եթէ ո՛չ՝ ի մարդոց չաբաց, և կամ
անհաւատից կոխիցի. Տիպ իմն է զարմանաւոր՝ յաղ-
թող իմաստից մերս տեսութեց. անբանն՝ ի բանա-
ւորին կառուցեալ, նմին օժանդակեալ՝ իբր վերհա-
գոյնն յաւէտ նուաստի։ Ա՞ն է քան զմարդ, ո՛րքան
ընտրեցելոյն մովսիսի՝ ցուպն յաղթողական. առաւել
քան զբանաւոր, ո՛րքան զահարոնն՝ գաւազանն խոր-
հրդական ծաղկեցեալ. գերազանց քան զմտաւոր,
ո՛րչափ քան զեղիսաս և զեղիսէոս՝ գեաահերձ մաշ-
կեակն աքանչելահրաշ՝ փայլեալ արուեստիւ։ Օգ-
նութի պարգևէ կրկին ամենակատար սրբասնեալ
ձեռաց՝ մաքրաբար, քան թէ զինապէս, մարմին նիւ-
թական՝ քարի և հողոյ գոյակից, հարազատ զգայա-
կանաց և սրբոց։ Իբր զվէմն անմահ կենդանի՝ ի
կործանումն է և՝ ի կանգնումն. ոչ զդատաւորն ա-
մենից հոգւոց՝ հանդիսանայ հրաշապէս աղդմամբ՝
յանէծս և յօրհնութիս. իբրև տեսօղ աներևութից՝
զոմն հրապարակէ, և զոմն տածէ. առ ինքն կոչէ զբ-
րեալ յանուանէ՝ իբր զտիրօղ հրամանատար էիցս։
Իբր զվառն յաւիտենական՝ անհարուածելի է՝ ի

դիմամարտից. ըմբռնէ զՀոգևորս՝ իբր զնաբադրութիւն մեծին արուեստի. անմեղս և անվրիպութիւն՝ ըստ քի հեռոցն ընթանայ. բարձր ճոխութիւն անպատկառաբար համարձակապէս՝ զօրէն դողելոյ գլուխս ամբառնայ։

11 Զ՝ինքան մեծ ունի սրբութիւն, մինչ զի զրոս ըստ պատկերի այ եղեն, կանոնաւ խօսէ։ Յետ յոդունց ընտրուեցս փորձից՝ թէ համարձակեսցի մարդոք սխալեալ՝ ի դասութիւս նորին մնանել՝ ոչ պղծի, այլ ընդ անպատրաստացին թերութեանց դժուարի. ոչ նեղուի, այլ տեղի ասայ ոչ դիտողացն զնորհին ըզբաւի. ոչ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրովն գըտեալ, այլ ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թոյլացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց, ըստ տիրական անձառ խորհրդոյն, ոչ կըրկին յաւուր՝ զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար՝ նը ճիրանն խայտառակեսցի։ Ա՝շտակցէ կարեաց զորապէս՝ իբր անախտակիր ապականութեց՝ որ ի մեզ շարժմանց. առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ դատի։

12 Զ՝ազի և տապան իմն է մաքրական, կրկին երջանկական, ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահպան։ Ո՛չ բազմաք անբանիւք գազանաց դասուք՝ և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ. ոչ յալիս խռովութիւն բերի, այլ ի բարձրութիւն երկնի համբառնայ. Իբր զշակերտս հրահանգեալ հոգւոյն այ՝ փախչի ի նենգութիւն. ոչ ի բողոք մահու՝ մարմնոյ հարուածոց, այլ ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ. ոչ նոյնիձեռ

ձեռնարկեալ գործի, այլ հաստատուն հրամանաւ շինի. ոչ մինչեւ ընդ բեսելիել, այլ միածինն այ՝ հոգւովն սրբով զսա հանդերձէ. ոչ յարաշարժ հանապազ փոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա հաստատէ։ Պարձել իբր զտապանակն անիսօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան՝ սեստղականաց մեզ առաջնորդէ. ոչ կերպարան անքանակ էին յառաջ հետեւեալ՝ ի հանդերձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ։ Ընդ ոգիելի անտուստատակէ, եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի. սպանանէ վատնեալ վաղվաղակի առ ժամայն, եթէ անասնայինն լծակցութեամբ երկրասիրաբար գեռնակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազնին բարձեալ տանիցի։ Ո՛չ լեզուաւ մարդոյ, այլ բանիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութիւն, և արագապէս մոռեալ լսի. ոչ ձայն կերպաւորական բարբառոյ, և զբլատգամն գործոցն յի՝ համբրէն ազանց պատմեալ հուչակէ. ոչ խաղալեաց շարժականութիւն, և ածայնով իմն կենդանութեան հագագաւ ազդէ։ Ո՛չ ոսկերաց և ջլաց յօդուածք, և երկուք հազարք կանգնաց լայնութիւն՝ իբր զգունդն անհամար՝ բարձրեալն այ, զկենդանական զօրուն դումարտակ՝ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ նոսին՝ իբր զանմարքուրս ի սրբութիւն զոմանս ախտիւ մեղանաց ջերեալս՝ հաստուածեալ յինքեանէ հեռի ուղեկցէ, ապրեցելոցն ի տաժանաւոր աղիսարկութեանցն։ Այն իսկ էութիւն այ մարմին երեալոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ. պատառմամբ կողին զբնաւս արբուցեալ։ Ո՛չ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ

վերնոյն շառաւիղք , Թափանցանց միութիւն զայն կեն-
դանացուցեալ նորոգ պաշտպանէ . ոչ սողոմոն կամ
զօրաբաբէլ մահկանացուաց ոսոիկանութիւն , այլ ամե-
նից ունողին իմաստ զսա գծագրէ . ոչ անանուիրա-
կան հատարակաձաշակ իւղով առ 'ի յակոբայ պարարի ,
այլ ահաւորին արեամբ՝ և փառօք մեծին օծանի ։
Ա՛ՀԷ տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկ-
նային լուսոյ ՝՝՝ զսորին որդիս կնքեալ ձեռնադրէ .
ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս , այլ արքայութեն
երկնից ժառանգս կրթէ . զ 'ի ծոց իւր գրգեալսն՝
գոդոյն աբրահամու ընծայեցուցանէ ։ Փեսայ հարս-
նութեամբ սորա՝ որդին ՝՝՝ կենդանուոյ . օրինորդք խրն-
ճոյից սորին՝ հայրապետացն գումարք ։ Այն ինքն
մուտացումն առնէ այսակիր բարձանցն կռամոլութեամբ ,
զի զերկնայնոյն ՝՝՝ ունի զծանօթութիւն . օտարու-
թիւն է ամի դիցն դրօշելոց , զի 'ի համօրէն քա-
րինս սորա՝ քո երկրպագի . քակտումն է յայտնապէս
ուրուական ըղձիցն անտառաց , զի 'ի բնաւիցս մայրիս
աշխարհի՝ նմանութեամբ կենացն փայտի՝ 'ի սմա տէրն
նուիրի . խորտակումն է համայն դիւապատիր յուս-
թիցն արձանաց , զի քարն գովեալ կարկեհան ակամբք
և վիմաք կենդանեաք՝ այսրէն հաստատի ։

13 Ա՛. յս յարկ չքնաղ և ածընկալ՝ ազատ է միանգա-
մայն 'ի յամենուստ ծառայութեէ . ոչ օրինակ
վերնոյն սիօնի , քան թէ ճշմարտութի նմին ճանաչի .
ոչ կռապաշտութենն կապաւ՝ բագին , և կամ լծով
օրինին՝ տեղի պարտաւորութեամբ , այլ ՝՝՝ տրունի բարե-
բարութեն պարգեւարան 'ի մէնջ համբուրի ։ Ա՛ՀՍԿԱ-
նի երբէք՝ յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ ,

այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն
ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կեր-
պիւ հռչակի։ Որպէս է առանց հօրն քի, և ոչ ա-
ռանց սյսր մօր արդանդի՝ յոգի կատարիլ։ Ինտուն
շրջի անբովանդակելին, եթէ ոչ 'ի սմին տան տաղա-
ւարեացի. ոչ ունի տեղի դլխոյն հանգստեան՝ տէրն
բոլորիցս, եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մտեալ ա-
գանիցի։ Քան 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս
հիւթաւոր բնակուի առաւել պարծի. անբաւութի
ճծեան լուսոյն, որպէս զդէմս մարդարէին՝ և զբրի-
նակս սորին ծածկեցին, ոպէ փախեան 'ի փառաց ե-
ղեսաց նորին, և նմանութեան սորուն՝ որ 'ի տաճա-
ռին՝ ոչ հանդարտեցին, 'ի տօն հանդիսի մեծի գո-
վեստի, և 'ի բանականացս դասուց խմբեալ նոճադի։
Ինտ օրինի կրկին բաղձանաք, քան 'ի դրախտն
վայելչական։

14 Ինչ մայր հոգևոր՝ երկնաւոր՝ լուսաւոր, քան
թէ երկրաւոր՝ ընչաւոր՝ մարմնաւոր, զնս գրգ-
ռեաց որդի. կաթն ստեանց սորա՝ արիւնն քի։
Եթէ ճծածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ,
ոչ անօրինի։ Բեր զնշան խաչին փրկութեան՝ զօրու-
թիս զարմանազանս՝ և արհեստս բազմօրինակս կա-
տարեալ հրաշագործէ. բեմ աշաւորին ատենի՝ 'ի
սմա հաստատեալ տեսանի. սովաւ խորթաբարոյիցն
հերձուածողաց՝ մոլեգնաձառ բերանք կարկին։
Ունի և քարինս իմն իմանալիս և բանաւորականս,
որով զգաղանամիտս անմաքուրս՝ բացուստ 'ի բաց տր-
ոհեալ տարադրէ։ Նանի և ճծս ոմանս եղակաս՝
պատկերս մաքուրս՝ միոյն ոյ քի։ Ունի և զդիրն իւր
ընդ

ընդ արևելս՝ 'ի տեղի խոստման բնակութենն մերոյ առաջնոյ. ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս՝ զգաստութեանն այ շաւիղ. զնայլականն առակ տիրական՝ 'ի դէմս բերեալ մեզ վարդապետէ. զնիրկութիւնն 'ի յելից անտի ծագման արուսեկին՝ քնեան երևմանն 'ի վերջնումս աւուրն, արարածոց երկրի թարդմանէ։ Յաւս հալածէ. ախտաժէտս բժշկէ. դիւհաց բռնութեց զօրէ։ Լ.ըգանդ որովայնի սորին՝ աւազանն կենդանարար. 'ի պար հարսանեաց սորա՝ դասք առաքելոցն։ Լ.ինքան ճոխացաւ բարդաւաճեալ երանութիւն, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ՝ վայելչապէս յորջորջեցաւ. տիրամօրն լուսոյ կոչմամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ ինքեցաւ։ Ոփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտութեան. խրախճանարան՝ վերնոցն դասուց. բժշկարան անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց։ Լ.ըրդութիւնն անպատում՝ 'ի սմա փառաւորի՝

օրհնեալ յամի։

15 Լսկ եթէ ոք ձեռն չարութեան՝ 'ի վերինն արքայութի յանդգնաբար համբառնայցէ, և գիւտ ինչ մարմնաւոր, և կամ հնարք մարդկային, և կամ արուեստ երկրակենցաղ՝ զսահմանեալ աւանդութիս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև առաւել կենաց, և ակնկալութիւն ածային, և հոգւոյն սրբոյ յայտնեալ՝ լուսանորոգ նախագրութի, և երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութի, և կամաց արարողին՝ խնկաւորել խորհրդարան, և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանձար հիմնարկութիւն, և միանգամայն ասել՝ դուռն երկնից, և

քաղաք այ կենդանւոյ , և մայր կենդանեաց՝ ազատ
'ի պարտեաց , և Ճշդիւտ տեսակ կերպի երևակիս բա-
նական , իմանալին՝ խորհուրդ հոգւոյս , և շշաւիե-
լին՝ պատկեր մարմնոյս , և սրբութեան անդանձառից՝
գերազանցեալ նոր սրբութիւն , և քնեանն նշանաւ՝
պայծառապարծ պսակեցեալ , զայնպիսի ոչ խոստ-
վանօղն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝
'ի ձեռն բանին իւրոյ էակցի , բարձեալ 'ի նմանէ և
զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի . փակեսցէ ըղ-
դուռն կենացս այս առագաստի յանդիման նորին .
Իսկ մեք զոր գրեցաք՝ ամին և վկայեմք , հաւատա-
ցեալ որում կարգեցաքս . յանուն և 'ի փառս ամե-
նակալ երրորդութեան և միում աստուծոյ , յաւիտեանս
յաւիտենից . ամէն .

Ա՛յս է հաւատ յերրորդութիւնն . և այս 'ի հայրն է ըստ-
գեալ՝ խոստովանեալ դաւանութիւն .

Ա՛ երրորդին յաւէլուածք հրէին հեծութիւն՝ նորին հանողք , աս նոյն
աղէր մաղթանաց բանք . 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ .

*Բան . ԿՕ .

1 Յ՚ողորմած , բազմագութ , հզօր , ահաւոր ,
մարդասէր , օրհնեալ , կենդանի , անձառ .
որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո՝ իր ան-
ձեռնարկելի , որ և մնաց է անհնարաւոր . Զո՛ է
հատուցանել պտուղ քաղցրութիւն՝ ընդ փշոց խստու-
թեան , սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր
կանոնաց կենաց . քանզի բարի առնել ատելոյն , և

աղօթս 'ի վե՛ հալածչէն, և փրկութի՛ հայցել խոցղէն, և սպանողէն ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշէց. որոյ քաղցրութէն անձառէ քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք, և գովեալ շրթանց քոց ճաշակելիք. Հոգի երեսաց՝ և զօրութի դեղոյ մերոյ՝ տէր քո՛ օրհնեալ 'ի բարձունս։ Ա. Յլ մարդք երկրածինք և ամենաւորեպ.ք, և բարեմասոյց ձեռաց՝ չարիս դարձուցին. իսկ դու լոյս և տո՛ւիչ լուսոյ՝ ո՛չ լսես անէծս. ո՛չ ախորժես չար. ո՛չ կամիս կորուստ. ո՛չ ըղձանաս մահ. ո՛չ յուզիս 'ի խռովութենէ. ո՛չ տիրիս 'ի ցասմանէ. ո՛չ հարկիս 'ի բարկութէ. ո՛չ մթանաս 'ի սիրոյ. ո՛չ այլայլիս 'ի դթութենէ. ո՛չ փոփոխիս 'ի բարութէ. ո՛չ թիկանց շրջումն, և ո՛չ երեսաց անդրադարձութիւն, այլ ամենևին լուսաւորութի՝ և նկատումն փրկութեան։

2 Ա. Թէ քաւեսցես, կարօղ ես. եթէ բժշկես, զօրաւո՛ր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւո՛ր ես. եթէ պարգևես, ամենալի՛ ես. եթէ արդարացուցանես, ամենարո՛ւեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակա՛լ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւո՛ր ես. եթէ վերստին հաստատես, արարի՛չ ես. եթէ կրկին գոյացուցանես, ա՛ծ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենաակո՛ր ես. եթէ կորդես 'ի մեզաց, այցելո՛ւ ես. եթէ չարժանեաց ընձեռես, օրհնեա՛լ ես. եթէ յորսողէն ազատեսցես, փրկի՛չ ես. եթէ զեղցես 'ի քոյոցդ 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախքան 'ի մէնջ խնդրելն՝

զա՝ կարկառեացես, անկարօտ ես. եթէ լայնես նե-
ղուես, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խը-
նամակալ ես. եթէ զասասանելս հաստատես, վէմ ես.
Թէ պապաքելոյս արքունացանիցես, աղբիւր ես. Թէ
զծածկեալսն երևեցուցանես, լոյս ես. Թէ զօգտա-
կարսն իմացանուցանես, բարի՛ ես. Թէ զբիծսն ան-
տես առնիցես, երկայնամիտ ես. Թէ ընդ փոքուս՝ի
դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. Թէ ծռելիս ձեռն
մատուցես, ստացօղ ես. Թէ աղօրդ քո պաշտպա-
նեացես, յանձանձիչ ես. Թէ վհատելոյս դարման մա-
տուցես, կերակրիչ ես. Թէ զանդիտս պատրաստ-
ցես, վարդապետ ես. Թէ զդիմեալս առ քեզ ըն-
կալցիս, ապաւէն ես.

3 Լուարդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութիւն. ոչ
միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ
նախնի նահատակդ Համբերութիւն վկայից. որ վասն
խնայ փրկութիւն հանդիսացար զօրապէս յասպարիսի
Հակառուն, զի կակղեացես զկարծր բռնութիւն մարմ-
նոյս գոռոզութիւն՝ վարժմամբ կրթութիւն չարչարա-
նացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին՝ չափեալ
զբնութիւն մերում զտաժանեալսն տաղնապ տուժի,
զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես
՝ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս.
ամէն.

Ա Երուսաղեմ յաւելուածք ի բլրին հեծուցեալ՝ նորին հոգոյ, զա նոցն աղէր նաղանաց բանի. Ի խորոց սրտից իւրոց՝ ընդ աչս.

* Բան. ԺԱ.

1 Զ քանզի օր է օրհնաբանեալ և լուսանորոգ՝ !ՀՇՈՒԹԵան երկուց ընտրութենոց արարածոցս սասանութեց՝ յերանակելոյ յոյլ իմ էութիւն երկնակենցաղ անսիոխադրելի, ամբարձելոցն խոնարհութիւն, և կործանելոցս վերբերուն, սարսափելի ուրբաթու մեծի պասէքիս, յորում եկն ես հաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուազ ձայնի հեծութիւն՝ զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր՝ ի քոյոց սյոսի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ ա՛ծ բոլորից.

2 Պատեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպիւ. ոչ խօսեցար՝ ոչ լիցդ բանի. ոչ բարբաւեցար՝ հաստիցդ լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ ոչ սանիցդ երկրի. ոչ մունջեցեր՝ ամենազդեցիկ փողոմեծութիւն. ոչ երախտեաքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեաք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամենայն զմատնիչն զքեզ տանջանաց մահու. ոչ ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դրժաւարեցար. ոչ ի թքնուելն թշնամանեցեր, և ոչ ընդ կափելն երբեք խռովեցար. ոչ ընդ կատակելն սրբոյ մրաեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր. Ա՝երկացուցին զզգեստս պատմուճանին իբրև ի ակարէ, և դարձեալ ազուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ. Լ՝թէ ոչ էր արբեալ կրկնակի քաջոյս զանգեալ ընդ լեզուոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ

մը-

մԹերեալ նախնի դատնութեն. Ճաշակեաց վհատութեամբ, և արդեալ անդէն տարակուսանօք. առին մելեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Զանիւ հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին. ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութեան։

3 Մ'էետուն հանդիսաւ կենդանարարիդ, եթէ ոչ՝ զգործի մահուն կրեալ քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ. առեր իբրև զհեզ. բարձեր ոչ համբերօղ, ըստանձնեալ իբր զպարտական՝ զնայան վշտաց։ Որոյ զծաղիկ շուշանաց հոտեալ՝ ուսուալ բերեալ զզենն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց՝ զեւրակերաս դահաւորակս մարմնեղէն գոյութեանն՝ պահպանեսցէ 'ի դատապարտութեն վայրի՝ իբր 'ի խրախճան ննջելոց։ Հանին արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զնոյն տաբեկոյ՝ ձգեալ զեղջերացն. տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ. բևեռեցին ոչ չարագործ. պնդեցին իբր զապստամբ. զնահատուիդ երկնաւոր՝ իբր զաւազակ. զանկապուտ մեծութիւդ՝ իբր զտառապեալ. զառ 'ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ. զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր ատակման մահու. զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին. զտէր և զկատարումն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրեցելոցն. զճառագայթդ փառաց՝ և զկնիք անքննին խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծնողիդ կամաց. զորհնեալդ իսկապէս՝ իբր զտարագրեալ. զկապոյ օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր

իբր զՀերքեալ իմն կայանաւոր. զահաւորդ երկնի և երկրի՝ իբր զհաւատի պատժաւոր. զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ։

4 Վ.քաղցրութիւդ և երկայնամիտ բարերարութիւդ ողորմածիւդ գթութիւն, որ վա՛ռ ապախտաւոր և անօրինեալ ծառայիս, ՝ուրդ բոլորից՝ զայս ա՛մ կամաւորապէս և հաւանողական հաճութեամբ տարեալ՝ մարմնոյդ միութի՛ 'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քնարան շնորհին տապանի՝ անպակաս 'ի լրութի՛ ամբողջ նոյնութեան ՝ուծ անքննին՝ զնոյն կրեալ նախատինս անձառ համբերութի՛, յարեար կենդանի ինքնիշխան բարձրութի՛ լուսոյ՝ անեղծաղ մարմնով, և անթերի ՝ուծութի՛։ Օրհնեալ փառաք, գովեալ գթութի՛, բարեբանեալ միշտ ողորմութի՛, յաւիտեանս յաւիտեանից. ամէն։

---

11 Էրոպին յաւելուած էրկին հեծութի՛՝ նորին հանողի, աւ նոյն ապէրս մաղթանաց բանի։ 'Ի խորոյ սրտից ելօր՝ ընդ ՝այ։

* Բան. ՀԻ։

1 Լուարդ՝ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ՝ զբարեգործիդ ողորմածութի՛՝ զկենդանարար ոսս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

2 Զաչեմ զքեզ միոյն խնամակալ, մարդասէր, գթած, կենցուցիչ, հրաշագործ, այցելու, պաշտպան, մի՛ ունայնասցի վաստակն աշխատութե՛ փրկականդ կրկին մարդացելոցդ վա՛ռ իմ՝ ՝այ. մի՛ սոսկ եղիցի քրտանցն կաթ-

կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մատնութեն ա-
ւուր գիշերին. մի՛ լեցի ստուերացեալ լուսոյդ ե-
րախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացե-
լումս ինձ պարգևեցեր. մի՛ ջնջեսցին շնորհացդ ա-
ւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի՛ ան-
շահ եղիցին կրկիդ պատուէր, զոր կարօտութեանս
խմամատուցեր. Այլ՛ պարծեսցի բանասարկուն վա-
նեալ՝ զքո ստացեալ իւրացուցանել. ահա յաղթեսցես
կամաք քո՝ ըղձից չարին. վերստին ապշեսցի՛ միան-
դամ զարհուրեալն. կրկին պարտեսցի՛ խսպառ դա-
տեցեալն. Այլ՛ անիսայեր զազատարարդ քո բան, որ
զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ
դարձուցանէ. զանձառն արարեր բարերարութիւն՝
յանակնկալ ժամուն յուսահատութե. յոլժամբեր-
նաս իսկ կարեալ և օտարացեալ էր կենդանութեն
շարժողութի, մեռար անմահդ՝ և զմահացեալս նո-
րոգեցեր. եթէ զկանոն համաձևութե օրինին փո-
խեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զևս հը-
նարաւորն մի՛ արգելցես՝ ըսկզբնաձիր ողորմածութե
բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր.
Զդեռ բանիւդ ամենազօրաւ՝ որ զգոյութի լու-
սոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի
փոփոխեալ գոյոյց 'ի լաւ անդր. և փոխանակ զի ես
ոչ խնդրեցի հեռաւել լուսոյդ, դու ելցես ինձ յոյց՝
Ճնռագոյթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց
առաջի քոյ ծառայս վնասապարտ՝ ողորմեալ շնորհել
առ 'ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգութե առ 'ի
զպարտան հատուցանել, ահա շնորհեա՛ ինձ տառապե-
ալս զերեսս քո՝ լոյդ 'ի խաւարի արտից վհատելոց.

Ա.ը-

Աբդել և Կնքեան զընթացմունս երկնից, որ միշտ զե-
զուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսութիւն. պա-
հեա ինձ զշնորհս ամենապոյծառ դանձուցդ մեսա-
կանաց, որով պատուական դառեալ՝ քո անուանեցայց,
պաշտպանեալ 'ի քէն՝ անսահման բարի.

3 Սիրեա ողորմեան ինձ՝ դրիթաց, աղաչեմ զքեզ ո-
ղորմեա ինձ՝ հրոյր, կրկին ողորմեա. Մի՛ փո-
խարկեր երկունս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ
ամենեին. մի՛ բռնեար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն
պարգևեալդ շնորհս. մի՛ կապտեր զիչխումն ամենօրհ-
նեալդ հոգւոյ. մի՛ լուծաներ զկնիկեալ զկնիք ար-
քունական պատկերիդ. Մի՛ յայտնեսցին փուշք մե-
ղանացս՝ 'ի սրբութիս մատցս. մի՛ խղեր զկապ միու-
թեան՝ զընդ քեզ սիրոյն պնդութե. մի՛ մերժեսցես
զարուեստս զօրուե՝ լեզուոյս յարմարուե. մի՛ պակա-
սեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մա-
ուունս բաշխել. Մի՛ դրեր 'ի դպրութեան կենաց
մատենիդ՝ զմահուն պարտիս. մի՛ պահեր. մի՛ ինձ հա-
մարիր. մի՛ յիշեցուցաներ. մի՛ ամաչեցուցաներ. մի՛
նախատեր. մի՛ ոան հարկաներ. մի՛ արձանացուցաներ
զմեղկութեցն. մի՛ ամբարեր զկորսաւանցն. մի՛ խբր
ապտեալ իմն ամբաստաներ. Մի՛ յարուցես ընդ իս
զծառն անիծից. մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթ վը-
նասուցն. մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղացս. մի՛ բեր-
ցես ընդ առաջ զնամակ պարտուցս. մի՛ արտաբերեր
զէութիս պաղոյն. Մի՛ թուեսցես 'ի ճիւղս երկրա-
ստեղծ մատանցդ՝ զգիւտս գործոցս. մի՛ մատուս-
ցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիս իմ յիշատա-
կել. մի՛ մատնեսցես խնդս կամաց զաւանդս հոգւոյս՝

վարել 'ի գերութեան. մի՛ ատէն զիս փառաւորէր՝
զի անտանօր դատապարտեսցես. մի՛ նուաղութ այսր
անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր. մի՛ 'ի
սակաւում այսմ ժամանակի՝ զանմահանելի զփառսն
չափեր. մի՛ ընդ հովտիս վշտաց հեծութեամբ զանախ-
տական զկենանդ դրաւեր. մի՛ ընդ սոսկեալի այսր
մթութեամբ՝ զանհառելիդ լոյս փոխանակեր. մի՛ զերասա-
նակ մնայս լքցես՝ ըստ արտուղի հետս հետևել. մի՛
զկամուրձ կենցաղոյս գրեսցես՝ ինձ հանդստեան բա-
ւականութեամբ. մի՛ զհովիտ հանձարոյս ստոսերական
պահեր՝ 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել. Եթէ
ամբարեսս զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մե-
ռայց կենդանւոյն. Եթէ շահեմարանեսս 'ի սրտի, աս-
տուծոյն կիզեալ անբոց այրեցայց. Եթէ քննեսցես
զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ՝
խոպառ հալեցայց. Եթէ անկակիից ինձ թողցես ըզ-
մեզսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց.
4 Զկնարկեա մշտ զօրեղ ամենակարող՝ փոխնուլ
չարութեանս որ յիս, զի բարիդ քո եկեալ փո-
խանորդեսցէ. հրամայեա դրախտ, խնամակալ, գո-
վեալ, լոյս անշիջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ,
զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մարմնե-
զէն յարկի անդամոցս. յորում հանդուցեալ անլքա-
նելի՝ բնակեսցես բաղմեալ ախորժ տենչանօք՝ միու-
թեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մե-
զաց մերժեալ խոպառ՝ յանարատուն զիս պատրաս-
տեսցես՝ ամենակեցոյց թագաւոր անմահ ՝որ յաւ քաւ,
օրհնեալ յաւիտեանս. ամէն.

Ա Էրատին յաւելուած է էջին հեծութիւն՝ նորին հսկողի, առ նոյն աղերս նաղ Խանայ բանի։ Ի խորոյ սրտից խօսք՝ ընդ այս։

* Բան. Հիգ.

1 Յիշեա՛ տէր, տէր դիւութեանց, սիրողդ իրաւանց ՝ի ՀՀմարիտ. նայեա՛ վերատին ՝ի բնութեան կերպարան միշտ սխալական. զնեա՛ ինձ դարձեալ զամէնընթաց տարածմունս՝ ելից աբեանս շարժողութիւն. բժշկապէս մատիր տեսանել, զի մարդ եմ հաստատեալ մազք խակութեան թերի խորհրդոց՝ յոյն ինչ, զոր դու խակ վկայեցեր տեսողդ ոչ էիր՝ միայն դու անմահն ստութեան խաւարի։ Ապա իրաւունս է դրել ինձ ՝ի մեղուցեալն մարդ կորիւն վրիպանաց սխալմամբ, պարտեալ կրկին՝ իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիդ քումս ուստ երևեալ. քանզի արդարև դիտակ խակ ես, թէ չար է արարն՝ և ընդաբոյս չարութիւն մեր, և ո՛չ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանձար իմաստնոյն կանխագիտոյց առակի։

2 Լ. ԵԹԵ ևացո՛ զաստուածութիւն տանջանացն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհենին՝ զարդ մահուն յաւիտենականի. բարձ զամօթոյս պարտիս, որ պահեալ է յայտնել թշնամառականիս յէ տին ատենին յանդիմանութիւն։ Լսրատ խաղաղութիւն՝ յառաջապարգև ողորմութիւն քո ընծայեցո՛, զի մի՛ անտանելիքն ահաւորութիւն՝ ՝ի ցոյց ինձ եկեալ կերպարանեսցին՝ անյոյս ապշութիւն ընդ կենաց զղջման առաջն կարդել, դատաստանն ահաւոր. անկաշառ և անխաբելի դատաւորն. ամօթն սոսկալի. կշտամբանքն սար-

սարսափելի. յանդիմանութիւն անփախչելի. տաղնապն անհաղորդելի. պակուցումն անխրախուսելի. դողումն անվհատելի. լալումն անսփոփելի. կրճումն ատամանցն անբժշկելի. ապականութիւն անողջանալի. անեծքն սարսափելի՝ ահագին քո բանիդ. փակումն գթոյն, և արգելումն ողորմութեան։ Որ ընդ դալարեալն երկնի՝ և ընդ երկրի դղրդեալն ընդ կարծրութիւն յատակիս, ըստ կուտակելոյ կոհակաց խռովութեան։ Զոր ինքն փախստեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց. և տատանեալ սասանեալ լայնատարած գետնոյս թանձրութեան՝ ի հիմանց անսի, ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնայնն խորոց՝ հարթէ զլերինս, և հալեալ հրդեհին բնութիւք վիմաց և ամ տարերաց գոյից. այլոյն երկինք՝ յանեղծ փոփոխութի, և յեղանակին արարածք տարերաց իւրովք՝ ի նորոգ նմանութի։ Ծածկուիք գործոցս հրապարակին, և աներևոյթք կրեալ մեր յայտնին, վարք կրօնից ներդործեցելոց՝ ի մարմինս մեր նկարին. Ադաւորն երկնից՝ յատենի նստի, վճիռ հատուցմանն՝ ի ձեռին իւրում։ Ո՛հ՝ վայ ինձ եօթնից անդամ կրկին եղկութիւն, ըստ չափոյ կշռութեան այսր համարու, որ զամբաւութիւնս թռուց պարարդրէ. Ո՞ւ ինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զյանդիպումն. զոր ումն մարդարէ՝ զորինակին նմանութի՝ ի դէմս բերելով, զձեպ տաղնապի անդերձ փախստեանն նը՝ շանակէ ասելովն. զորօրինակ եթէ փախնուցու ոք՝ ի ձեռաց առիւծու, և պատահեսցէ նմա արջ. և

փախ՝

փախնուցու յերեսաց արքայն, և մտանիցէ 'ի տուն,
և յեցուսցէ զձեռն իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա
օձ. և դարձել կրկին սաստկացուցանէ առ նայն կեր-
պարան իրն՝ զտեսիլն քստմնելի. ոչ ապաքէն՝ ասէ,
խաւար է օր ՆՈՆ, օր խաւարոյ և մթոյ, օր ամպոյ և
մառախղոյ։

3 Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից,
հզօր ոստիկան՝ իրաւամբք ամբաստանեսցէ, և
հատուցանօղն ահաւոր՝ արդարութիւն յանդիմանեսցէ։
Պասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուճա-
պեն, զմանս 'ի կեանս հրաւիրեն, և զմանս յա-
մօթն դատապարտեն. կիսոց՝ զէմն լցեալս ծաղու-
ցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևե-
ցուցանեն. ոմանց՝ պակս լուսապանծայն մատուցա-
նեն, և այլոց՝ կորուստ մահու բողոքեն. արդարոցն
ձայն աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց։
Յորժամ առ քարիսն՝ մահու յաղթութիւն խոպառ
մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր
դրանն բաղևել՝ ոչ ինչ ազդիցէ, վշտար եղեալ գը-
թութեանն առիս։ Յորժամ դպրութիւք հրաշիցն
զարմանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հա-
սարակաց վարուցն տեսակք՝ մարդկային բնութեան
գործոց, յաղագս որոյ եղեն գոյութիւնք ամ էից՝
յիւրաքանչիւր մարմնոյ անպակաս դրութիւք խսկոյն
երևին. և խորութիւք անճառիցն կնքեցելոց յիմաս-
տից աստեաց, առաջի աչաց մերոց կերպարանին։
Ուր այժմ շահավաճառութիւք ողբոց և արտասուաց
զերկինս դրաւեն, և անդ իբր զապաժման ընդու-
նայնութիւք՝ արհամարհեալք լքանին. հառաչմունք

հեծութեան՝ ոչ կանխաւ ասսի առաքեալ, էջ երբ-
բէք դասնել անդէն. ողորմութիւք Աշդով սերմա-
նեալ, ոչ պայծառ վառմամբ դնան առաջի։ Ուր
տապանն նախայանցիցն, և կտակարանն տիրանար-
դիցն, և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ
մեծաձայնս դատախազեն. յորում սոսկալի վայրի՝ ոմն
զուխտն կցորդութիւն հայրենի, և ոմն զկնորանն վը-
կայութեան անտեսիցն, և ոմն զարիւն մեծին ՝՝՝
ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն։
Օ տանջանարանն բազմապատիկս՝ անձամբ անձին
ասէն իսկ պատրաստեցի, զնարդ մխիթարեցայց հա-
մառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք
արդարոցն, որ փառաւորեալքն են երանութիւն, սար-
սեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ ե-
րեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակը-
ղոյս սատակման որդիս՝ ո՞ր երևեցայց. որ ոչ միայն
չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի՝ և
կորուստն անսպառելի։
4 Այլ արագեսա ամենապարգև՝ զօրութիւն անճառ
ձեռն փրկութեան 'ի կորուստ դերելոյս, զի օգ-
նեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժո-
խոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին ան-
վրատանդելի՝ պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ
մտացս խմաստիւ զապագայսիցն դիպուածս, բաւա-
կանացեալ 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝
ահին համբաւով, կամաքս քո բարեաց զերծեալ ապ-
րեցայց. և մի՝ մատնեցայց կորեանցն առիւծուց, ոլոր
խնդրեն 'ի քէն զնս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն
գազանութեամբ, զի զորոյն մահուն լցուցեալ՝ զաստուստ

պարարեալս՝ անդ ձգեալ հալէն, ուր անապառ պա-
հի մնացուածք մթերիցն՝ 'ի ծախումն յաւիտենից։
Օ՛ի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակ-
մանն՝ 'ի կեանս և յերանութիւն, բնաւից ապաւէն
թագաւոր լուսոյ՝ տէր յա՛ քա՛, օրհնեալ յաւիտեանս։
ամէն։

Ա էրոպին յաւէլուածք էրլին հեծուէ՝ նաբին հանդէր, ատ մայրն
էրանուելեան՝ ազէրս մաղլանաց բանի։ 'Ի խորոց արտից խօսէ՝
ընդ տէրուհոյն։

* Բան. Զ։

1 Վա՛ ասդ՝ 'ի վե՛ այսքանեաց յուսահատութեց
և ահարկու սրտաբեկութեց, պակուցանող-
զսկան սաստկութեց ահագին բարկութեց,
տագնապեալ ոգւով թախծութե խապառ, աղաչեմ
զքեզ սուրբ ահագին։ Հրեշտակ 'ի մարդկանէ։
մարմնատեսիլ քերովբէ։ երկնաւոր արքայութի։ ան-
խառն լիբրև զոդ։ մաքուր որպ լոյս։ անշաղախ ըստ
նմանութեան պատկերի արուսեկին բարձրութե։
գերազանց քան զբնակութի անկոխելին սրբութեց։
երանաւոր խոստմանն տեղի։ եղեմ շնչական։ ծառ
կենացն անմահից բոցեղէն սրովն պարուսակեալ, 'ի
բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հան-
գըստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործել,
բնակութիւ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ։
Ո՞իածինն հօր՝ և քեզ անդրանիկ։ որդի քո ծնընդ-
դեամբ՝ և որ արարչութիւ։ Ընդ անաղտ մաքրու-
թեանդ՝ և անբիծ բարի։ ընդ անարատ սրբութեդ՝

և խնամակալ բարեխօս. ընկալ զմաղթանս այսր ա-
ղերսանաց՝ քում դաւանողիս, և մատո ընծայեա ի-
սմին խառնեալ զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝
'ի քոյդ պաղատանս. Հիւսեա միացո զմեղուցելոյս
դառն տեծութիւն՝ ընդ քումդ երջանիկ և խնկաւո-
ւեալ հայցուածոյ՝ տուընկդ կենաց պտղոյն օրհնու-
թեան. զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ,
և 'ի մաքրական քո ծնեալութիւդ ապաւինեալ և լու-
սաւորեալ, կեցիցք քի որդւոյ քոյ և ամն։

2 Ժանդակեա թեւոցդ աղօթիւք՝ խոստովանեալ
մայրդ կենդանեաց և ելիցն իմ յերկրէս հովսէ,
առանց լկանաց հեռեալ 'ի կեանս օթեվանացդ պատ-
րաստութեան, զի թեթեւասցի կատարածն իմ ինձ՝
ծանրացելոյս անօրէնութ։ Պրասցես տօն ինձ բերկ-
րութիւ՝ զօրն իմ տադնապի՝ սրջացուցիչ երկանցն
ևայի. բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի ըստ ան-
ճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութիւ։ Պրասսուք օգնեա վտանգեցե-
լոյս՝ գովեալդ 'ի կանայս. ծուռնր խոնարհեցո առ իմ
հաշտուի՝ ծրնօղդ այ. ընդ իմում թշուառիս հոգ՝
խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս՝ տանձար
երկնային. փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ՝ ածօրէն
ինձ հրաշագործել քաւութի և ողորմութի՝ սղա-
խին այ և մայր. բարձրասցի՝ պատիւ քո ինև, և
յուցցի՝ փրկութի իմ քև։

3 Պթէ զիս գտցես տիրամայր. թէ ինձ ողորմեսցիս՝
սրբբուհի. թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ.
թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ.
թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ.

Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ ՝ի քեզ կոյս.
Թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ ՝ոյ .
Թէ յիս ցուցցես զդթածութիւն՝ լուծիչդ անիծից .
Թէ զծփեալս հաստատեսցես՝ հանդիստ . Թէ ՝ի խը-
ռովութեցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար .
Թէ վրիպելոյս ինձ ճնարաւորեսցես՝ դիմել .
Թէ վասն իմ մոցես ՝ի հանդէս՝ մահու նահանջիչ .
Թէ զդառնութիս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն .
Թէ զբաժանմանն իմ խորոց քակտեսցես՝ հաշտուել .
Թէ զանմաքրութիս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ .
Թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս .
Թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն .
Թէ զնորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց .
Թէ ՝ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից .
Թէ ողորմութիւն ինձ պատահեսցես՝ կրտակ նոր-
բեալ , օրհնեալդ միայն ՝ի շրթունս անբիծս լեզուաց
երջանկաց , ահա կաթիլ մի կաթին՝ քումդ կուսու-
թեան՝ յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ , մայրդ
բարձրելոյ ՝ան յի արարչին երկնի և բնաւին երկրի :
Օ որ անճառապէս ծնար բովանդակ մարմնովն և
հանայն ՝ածութիւն , որ փառաւորեալն է ընդ հօր և
հոգւոյն սրբոյ էութեամբ , և անքննութիւն մերոյին
բնութիւս միացելով , ՝ամ՝ և յամենայնում , մի յեր-
րորդութիւն . նմա փառք յաւիտենից յաւիտեանս .
ամէն :

Ա ՀԻՐՈՊԻՆ ՅԱՒԵԼՍԱԾ ԷՐՀԻՆ ՀԵԾՈՒԼԵՔ՝ ՆՈՐԻՆ ՀԱԿՈՂԷ, ԱՌ ՆՈՅՆ ԱՂԷՐՈ ԽՈՂԼԻԱՆԱՑ ԲԱՆԷ։ 'Ի ԽՈՐՈՅ ՍՐՍԻՆ ԽՕՍԻ՝ ԸՆԴ ՆՈՅ։

* ԲԱՆ. ՁԸ.

1 ԲՆԴ ԱԾԱԾՆԻՆ ՄԱՂԹԱՆԱՑ՝ ԱՀԱ ԵՒ ՁԼԵՐՆՈՅՆ ԱՆՄԱՀ ՀՐԵՇՏԱԿԱՑՆ ԼՈՒՍԱԿԵՐՊԻՑ ՁԱՂԵՐԱ ՀԱՅՑՈՒԱԾՈՅ, ՈՐ ՎԱՍՆ ԻՄ ԴՈՂԵՆ ԱՌԱՆՑ ԼԸՌԵԼՈՅ ՀԱՆԱՊԱՂՈՐԴԵԱՆ ԱՐԴԱՀԱՏՈՒԷ ՄԱՔՈՒՐ ԷԼԵՐԱՆՈՅ՝ ԸՆԿԱԼ ԲԱՐԵԳՈՒԹ։ ԱՐԲ ԵՆ ԲԱՐԻՔ ԲԱՐԵԳՈՐԾԵԱԼՔ 'Ի ԲԱՐԵՐԱՐԵԴ՝ ԱՆԿԻՐԹՔ ՉԱՐԵԱՑ, ՀԱՍՏԵԱԼՔ ՅԱՄԷՆԻՇԼԱՆ ՀՐԱՄԱՆԱՑ ԷԻԴ։ ՁՕՐՈՒԹԻՒՆՔ ՀՂՕՐՔ՝ ԱԿՆԱՐԿՈՒԹԵՆ ԲԱՐՁՐԵԼՈՅԴ։ ՍԷՔ, ՄՍՔՈՒՐՔ, ԱՆԱՐԱՏՔ, ՕՐՆԵԱԼՔ, ՎԱՅԵԼՉԱԿԱՆՔ, ՅԱՂԹՕՂՔ ԵՒ ԱՆՊԱՐՏԵԼԻՔ։ ԵՒ ԸՍՏ ԸՆԹԱՑԻՑ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՑ՝ ԱՐԱԳՈՒՆՔ։

2 ԱՐՔ ԵՒ ՊՈՂԱԿՈՐՈՅՍ ԱՆԿՈՅ ԹՂԵՆՈՒՈՅՆ ԵՌԱՄԵԱՆՆ ԴԱՏԱՐԿՈՒԹԷ, ՈՐ ԶԸՆԱՒ ՅԱՒԻՏԵԱՆՍ ՊԱՐՈՒՆԱԿԷ ԺԱՄԱՆԱԿՆ, ՁԱՆՑԵԱԼՆ ԸՆԴ ՆԵՐԿԱՅԻՍ ԵՒ ԸՆԴԱՊԱՌՈՒՈՅՆ՝ ՅԱՄԱՅՐ ՅԱՄՆՈՒԹԵԱՄԲՆ ՅԵՐԿԱՐԱՃԳԵԼՈՅ՝ ՅԱՅԴԻ ԱՇԽԱՐՀԻՍ ԱՐՄԱՏԱՅԵԼՈՅ, ՍԻՆ ՍԱՂԱՐԹԻՒՆ ՊԱՇՃՈՒՃԵԼՈՅ՝ ԶԸՆԵԱԼ 'Ի ՊՈՂՈՅ, ՈՐ Է ՔՀԻԳՐԻՍՏ ՊԱՏԿԵՐ ԹՇՆԱՌ ՄԱՐԴԿՈՒԹԵՍ, ՍՈՔԱ ԲԱՐԵԽՕՍՔ՝ ՀԱՆԴԵՐՁԻՉՔ՝ ՍՅԼԼ ԽՆԱՄՆԱԿԱԼՔ։ ՈՐ ԴԵՌԵՐԻՆ ՀԱՆԱՊԱՂԱՌ ՄԵԶ՝ ԸՆԴ ՄԵՐՈՒՄ ԿՐԻՍՏՈՍ ԿԱՐԵԿՑԵԼՈՎ, ԲԱՐԵՄԱՍՆՈՒԹԵՆ ՄԵՐ ՍՊԱՍԵՆ։ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՆ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲ ՓՐԿՈՒԹԵԱՆՆ ՄԵՐ ԱՂՕԹԵՆ՝ ՁՍՏՍ ԲԱՆ ԱՍԵԼՈՎ, ԶԳՈՐԾՍ ՁԵՌԱՑ ՔՈՅ ՄԻ՝ ԱՆՏԵՍ ԱՌՆԵՐ։ 'ԲԱՆԶԼԻ ԱՐԴԱՐԵ ՄԵՐ ԵՆ ՍՅՍ ԱՂԱՉԱՆՔ 'Ի ԲԱՐԵՐԱԲԵՐԴ ՍՅ ՎԱՍՆ ՄԵՐ ԿԱՐԳԵԱԼ ԱՌՆԵՆ։ ԶԻ ՆՈՔԱ ԲԱՆԻՒ

ԵՆ

են ստեղծեալ , և մեք ձեռօք ներդործեալ։ Որք
և գալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաս-
տանին հատուցման , Ճշմարտաբան դատախազք յան-
ցաւորութեան երկրայնոցս , յահաւորին առենի՝ յայտ-
նիչք իրաւամբք զմտաւակարարութիւնն՝ որ առ մեզ ։
որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ ըզ-
մշտանոնէրն նոնադ ձայնի , ողորմեա՛ դու ստեղ-
ծեր մի՛ կորուսաներ ։

3 Ո՛ւրդ՝ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց՝
անմահականացն վերիվ՝ և 'ի մեր տեսութիս հո-
տուտացիս՝ բնաւիցս արարիչ , որ յաղթեաս դիւութիդ
քո վերնոցն և ստորնայնոցս ։ քանզի քո՛ է բարերա-
րելդ առ մեզ և առ նոսին ։ Ո՛ւրդ՝ վա՛ բարեզարդու-
թեան անսխալականացն , հրաշատեսիլ հրակերպիցն ,
անշաղախ մաքրոցն , անմեղիցն , բոցանիութիցն , հո-
գեղենացն , և անվանելեացն ։ ամենաձեցուն առա-
ւելութիւ 'ի բարձրն ընտրականութիւ գերափայլ յա-
ճախ դիտութիւ՝ անցուրտ ջերմութիւ ջեռուցանօղք՝
ինքնաբուն տապալն ՝ածսիրութիւ ըստ ինքեանց ըզ-
մերս սառնասեր սրտիցս անբորբոքք շնչումն , այրիլ
անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբութիւ սեղանիս՝ որ 'ի
խորանիս , առանց նիրհելոյ և դանդաղանաց սպա-
սել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամե-
նաստեղծիդ ։ քրովբէօրէն առաքինութեամբ յաճ-
միացեալք անբաժանելի ։ Որք երկնաւոր պետուիք
են մեծք , և զինուորութիւք անբիծք ահաւորք , երկ-
նաւորիդ՝՝ ազատաղնեայ պաշտօնեայք , 'ի յամպոյդ
լուսոյ՝ ցոլք նշուղից ։

4 Որովք և քնձ մեղաւորիս հողեղենի մարդասի-

բեացես ողորմել յիսուս , աղաչանաք իմոյն հրեշտակի , դարձուցանելով զիս տէր՝ 'ի բարիդ քո հետ լուսոյ . զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան , զոր հաւատացեր նմին տեսչութեան , զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ ատեացս՝ ուրախութիւն սրտի՛ յիս բերկրեալ , անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութիւն՝ քեզ աքսոյ բարձրութիւն փառաց անհասից՝ 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուցչի՝ գովեալ ողորմած . Եւ քեզ անքննին ընդ հօր անհասի՝ թուակցութիւն հոգւոյդ անճառի՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն , յաւիտեանս յաւիտենից . ամէն .

Ա էրոթէն յաւելուած երկին հեծութիւն՝ նորին հսկողի , առ նոյն աղերս խաղ խոնարհ բանի . 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աչս .

* Գլուխ . ԶԿ .

1 Տէ՛ր ածք բարերար բազմապարգև թագաւոր , կենաց պատապարան , լուսոյ կերպարան , լոյսնատարբ հանգստարան . որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար . գործեցեր զանպատումն և հանդերձեցեր զհրաշալիսն , մինչև կատարեցեր զառեցեալն ընդ ամենայնիս ածուեդ .

2 Ա՛յդ՝ վա՛ռ առաքելոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց , և հոգւովդ սրբով օծելոց , զորոց զդովեստն արժանաւորութիւն ըստ իմում կարի՝ առ 'ի փառս քո՝ տէր ասի , յայլում բանի պաշտեցի , և ինձ ողորմեացիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտ-

ընտրութիւն։ Հաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հանդերձեսցեն յերանութիւն փափաքելի։ Ձոյն բարի հովհարութեան նոցին՝ 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լսելի։ Սնան կալայց 'ի յանեղծութիւն փրկութեանն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուհասս, փառաւորեալն դասուց, դեռոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, ի ղողմն զհարթութեան տիրական լուսոյն կատարելոց։

3 Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ այք՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութիւն, զբաց մահացու և վշտաշարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամոք, երկրաւորական և հողազանգուածն բնութիւն՝ մարտաւորեալ ընդ տարր դոյիցամ նիւթից՝ պատկերացն բարձրացան և կենդանացան հոգեալէս։ արիաբար եղեալք 'ի յերկրէ, ըստ մարդարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու։ խմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բարեացն՝ յոսով տեսելոցն աստէն նկատիչք։ աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին։ որ հաւասարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն 'ի խրախճանս անկէսն երանութիւն։ որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր քրոնակնդրուկ աղերսիցն յարդմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոսին մասին անեղծ փրկութիւն՝ 'ի քեզ արձանացեալ։

4 Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ

ներ-

ներկելոյն, և ճգնաւորայն սրբոյ Հարցն միանձանց՝
և քեզ հետևելոյն՝ որդի՛ այ, անպարտելի քաջութիւն
և անպատիր զգաստութիւն, ընդ դժնեայ գոռոզի մարմ-
նոյս բռնութիւն՝ արիապէս մարտուցեալ, սովիմբ վա-
նեցին զանմարմին բելիար. և մշտամարտ հանդի-
սին յասպարիսի կենցաղոյս՝ առանց զզուանաց ծան-
րաբեռնութիւն՝ ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս
ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութիւն զթե-
թևութիւն հոգւոյն թռուցեալ՝ ի նաւահանգիստն
կենաց հասին. և իբր սիրողք վերնամ վիճակին՝ ա-
ռանց յետնոյն մտածութեան, զթագն յաղթութիւն
համարձակապէս՝ պայծառ ճոխութիւն ազնեալ իս-
կապէս՝ ի գլուխս կապեցին. վա՜ նոցին արժանաւոր
մաղթանաց և նոր իրական հայցուածոց՝ և զիս զմե-
զաւորս ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին.

Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ ընդ նա-
խագրեալ երջանկացն փառատրական աղերսակ-
ութիւն, որ վա՜ իմ գոչեն քեզ ի հաճութի, և ես
ընդ նոսին՝ իբր դառնութի եդեալ ընդ քաղցս,
կամ տատասկ ընդ ողորկութիւն. ագեղութիւն ընդ
վայելչութիւն, և տիղմ ընդ գեղեցկութիւն մարգարտի,
կամ հող ընդ յատակութիւն ոսկւոյ, և կամ քարինս
անարգս ընդ պայծառութիւն արծաթոյ. բացասութիւն
ընդ ճշմարտութիւն, կամ աւազ ինչ ատամնառու ընդ
կակղութեան զանգուածոյ հացի. արդ լուր՝ հիզոր
ինարաւոր գովեալ, զնոցայն վա՜ իմ, և զիմս ընդ նո-
սին՝ ի նոցին գովեստ, ի փրկութի իմ և ի փառս
քո՝ ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ,
կարող, անքննին, անճառ, անեղծ և անստեղծ.

Բո՛ն են պարգևք, քո՛ն են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամի։ Ո՛չ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ո՛չ ես կորուսիչ, այլ գտիչ. ո՛չ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ո՛չ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ո՛չ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ո՛չ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ո՛չ ես գլորիչ, այլ կանգնիչ. ո՛չ ես անիծիչ, այլ օրհնիչ. ո՛չ ես վրիժառու, այլ շնորհիչ. ո՛չ ես թշնամացուցիչ, այլ մխիթարիչ. Ո՛չ եղծանես, այլ դրես. ո՛չ սասանես, այլ հաստատես. ո՛չ ոսն հարկանես, այլ սփոփես. ո՛չ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ո՛չ ես 'ի կամն շարժեալ սատակման, այլ 'ի փրկութիւն ողորմութեան. Ո՛չ մոռանաս զայցելութիւն. ո՛չ լքանես զբարի. ո՛չ արգելուս զգթութիւն. ո՛չ բերես վճիռ կորստեան, այլ կտակ ազատութիւն. Ո՛չ թշնամանիս յառաստուեց. ո՛չ բամբասիս 'ի շնորհաց. ո՛չ հայհոյիս 'ի պարգևաց. ո՛չ նախատիս 'ի ձրի ձրից. ո՛չ անգոսնիս յերկայնմտութեց. ո՛չ եպերիս 'ի ներութեց. ո՛չ բանասարկիս 'ի բարութեց. ո՛չ անպատուիս 'ի քաղցրութեց. ո՛չ քամահիս 'ի հեզութեց. ո՛չ առաքին այսոցիկ տրաընջմունք, այլ անլռելի գոհաբանութիւնք։ Խնդրե զմեզս իմ՝ հրզօր. լոյծ զանէծս իմ՝ օրհնեալ. քաւեա զպարտիս իմ՝ ողորմած. ընդեա զյանցանս իմ՝ գթութած. մատո մատն այցելութեամբ, և անդատին իսկ կատարեցայց. զինչ քեզ՝ տէր, քան զսոսին դիւրագոյն, և կամ զինչ լինիս պարտաւորիս կարևորագոյն։ Ա՛յլ կենդանագրեա բարեխնամ՝ քոյինասաեղծ պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութեամբ բարեական շնորհի՝ զամենամեղս ոգի պաշտպանեալ։

6 Մի՛ ածեր ողորմած՝ ինձ օր տարաժամ՝ ի համա-
ռօտս երբի՝ անթոշակ ապաձեռնութեամբ՝ ընդ-
անկատար ուղին հետևել. մի՛ մատուցաներ բաժակ
դառնութեան՝ ի ժամ ծարաւս. մի՛ փակեր գրիթած՝
իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգուս, և մի՛
երբ յանկարծադէպ հինից առապատակ՝ դիշեր մահուն
ինձ պատահեսցէ. մի՛ տայ տօթոյն յանպատրաստ պա-
հուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուս-
նակիան դիպուածք հասեալ դաղտնեաց ցնասեսցեն.
մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղ-
խից կենցաղոյս զիս ողողեսցեն. Այ՛ի՛ հանդիսան մահ
բերիցէ, և մի՛ ենջու�՝ ի սատակումն յառաջեսցէ.
մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապա-
կանութեան գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝ ի վր
իմ արշաւեսցէ, և մի՛ շնչոյս վերարձակութեան ըմբռ-
նեալ՝ ի խոնարհ լքցի.
7 Դու ես տէր. դու գթած. դու բարերար. դու
երկայնամիտ. դու ամենակարող. առ ամ բան
անհասութեան անձառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կե-
նդանարարել, լուսաւորել, վերստին հաստատել, ի ժա-
մեաց կերջաց գազանաց՝ և կամ յատամանց վիշապաց
ի կեանս կորզել, ի խորոց անդնդոց ի լոյս բերկրու-
թեան ածել, և ի հեղձմանէ ծփանաց մեղաց՝ ընդ
արդարս երջանկաց՝ փառաց բաղմեցուցանել. Ամ-
նայն ոգի քեզ ակնկալեալ յուսով ապասէ, կարօ-
տեալ քումդ շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկ-
րաւորք. եթէ անկածն մեղաց, և եթէ ամբարձեալն
արդարութիւն. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տի-
կին, և եթէ աղախին. և ի ձեռին քո է շունչ կեն-
դա-

դանական բոլորեցուն։ Այս քեզ ընդ հօր և հոգ-
ւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Ալ էրսպին յաւելուածք էրլին հեծուրնէ՝ նորին հոլոզէ, առ նոյն
աղէրս նաշլնանոց բանէ։ Ի խորոց արդից խօսի՝ ընդ ոչ։

* Բան. ՀԶ.

1 Բարձրեալ անքննին. զօրութիւն ահեղ. տէր
արարածոց. թագաւոր երկնի. ստեղծիչ
հրեշտակաց. գոյարան մտաց. հաստիչ հր-
ելինաց. պէտ բարի հոգւոց. աջ ապաւինութեա.
անդորրութի հանգստեան. տեսարան լուսաւորութե.
պայծառութի բերկրութե. ճանապարհ երանութե.
պատճառ կենդանութեան. առիթ բանաւորութե.
փրկութի առանց չարութե. առաջնորդ խաղաղութե.
պարիսպ ամրութեան. պատուհար պահպանութի.
ցանկ բոցոյ մեծի օրինութե. սահման անոխակալութե,
յիշեա յայսմ ողբերգութի մատենի բանիս խոստո-
վանութի՝ և զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝
'ի բարի, և ապա կատարեա նոցին քաւութի և ողոր-
մութիւն։ Ա՛ի՛ բարկացիս նոցա վա՛ խի՝ տէր, իբրև
զաբս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ
որպէս զաբս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝
ներեա յանցանաց նոցա։ Այլ արդ մատուցեալ երկա-
քանչիւրոցս առ ի քո՝ սրդարարաս, ոմանք առ մեզ
վաստակարարդոյնք՝ սակաւուք թերևս՝ և յիրաւի բամ-
բասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարգև, անթիւս
և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիս։
2 Արդ՝ յիշեա զքո մեծութիդ՝ տէր, նայեցեալ

'ի յիմն անարգութիւն. և ընդ խնդրելս իմ 'ի քէն
բարի իմացն ատելեաց, և դու առ քոյս՝ ըստ քում
մեծութեդ՝ անձառելիս հրաշագործեսցես. Արի՛
սատակեսցես զիմն խածանօղն, այլ փոփոխեսցես.
խլեալ զնոտանս բարս երկրաւորս՝ զբարիսն արմա-
ատացուսցես, և յիս և 'ի նոսին։ Անաւանդ զի դու
լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խսկու-
թիւ բարի գոլելի, և ես համայնիւն չար ապիկար.
դու ՝ի ստորինս և երկնից, և ես անիշխան շնչոյս
և ոչնչոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և
ես տաժանաւոր և վանդաւոր. դու 'ի վեր քան զ-
կիրս երկրիս, և ես կաւ անարգութիւն գարշութիւն.
դու՝ ՝ի մարգարէին, մնաս յաւիտեան յանբաւ բարձ-
րութեան, և ես միշտ կորնչիմ՝ ըստ նորին բանին.
'ի քեզ ո՛չ է մթութիւն կամ նենգութիւն, և ես բո-
վանդակին ինչ եմ՝ որ զաւանդն իմ ո՛չ պահեցի.
Չան զիս 'ի բանտէս. արձակեա 'ի կապանացս. զերծո
'ի շղթայից. փրկեա 'ի խեղդմանէս. ազատեա 'ի տաղ-
նապէս. քակտեա 'ի յերկաթից. լոյծ 'ի պաշարմանցս.
արտաքսեա յերկմտութեցս. տիրեա 'ի տխրութեցս.
հանգո՛ 'ի նեղութեցս. փարատեա 'ի վշտացս. հան-
դարտեա 'ի խռովութեցս. ապաքինեա 'ի լալոյս.
մերժեա 'ի հեծութեցս. հեռացո՛ 'ի յողբոցս. կազդու-
րեա 'ի կսկանմանցս. Ա՛ծ ողորմութիւ և պարգևա-
տու քաղցրութիւ, մի՛ զդրաւեալս արեամբ հզօրիդ՝
անտես արարեալ ընդ վայր կորուսանելս. կանգնեա
զհասեալս յատին մահու՝ 'ի բազմավանդ հիւան-
դութենէս.

3 Ա՛հա բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ըն-

դունայնութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցոյ
յոչ պէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սե-
նեկի՝ փուշս դժնկի՝ մեղաց շառաւիղն. մի՛ լինիր ինձ
խայթող խոցոտիչ՝ ոչ անդ տոհմին յուդայի, և կամ
զաւակին եփրեմի։ Լ՚ս քանզի բուսուցեալ անկեցի
յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմութեան՝ խոտս
խայթողական ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ
գրոյն բանի՝ որ երկնցն է քան զաւետիսն, զնաթրդ ոչ
կոչեցից զանձն իմ՝ դարշելի անդաստան անիծաբեր
փշովք մեղաց հեղձեալ։ Ո՛չ սերմանեցի արդարու-
թիւն, ըստ բանին յովսեայ, և զնաթրդ հնձեցից և ժո-
ղովեցից զկենաց պտուղն։ Ա՚նկաւ ստինք կուսութ-
անձինս մաքրութիւն, ըստ մարգարէին բանի՝ որ առ
իսրայէլ կարօղ ես՝ տէր, 'ի նոյնն հաստատել։ Լ՚այ-
նեցի ընդարձակեցի, ըստ մոլեկան բարուցն յուդայի,
զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, 'ի ձեռս քո է
ամփոփել դարձեալ՝ 'ի նոյն զդաստութիւն։ Լ՚թէ
մարմնապէսն կցորդութի՝ ընդ տեսանողին, անարատ
գործեաց զպոռնիկն, իսկ դո՛ւ փրկութի՝ հոգեպէս
միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ արեդակնս
այս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մա-
սակարար, և զկարակուսն մօրից ցամաքէ, և զտհաս
պտուղս հասուցանէ, իսկ ստացողդ ամենից՝ հոգիդ
այ՝ ոչքան զօրեսցես զտիզմ չարեաց աղտոյ՝ և զթա-
ղարխ պղծութիւն մեղաց մթերից՝ իսկոյն սպառել։
Ա՚սան այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի
քէն բարի՝ ատելեացն իմոց 'ի կարդ այս բանի, զի
զհերքեալ վնասակարս պարտուց մահու, յամենախը
նամաչաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ օրհնեալ գթութ.

արդ՝ կենադրծեա զիս զամենամեղս անդամոք մարմ-
նոյս՝ ընդ բնութիւն հոգւոյս խորհել միշտ զքոյդ։
Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են
օրէնք՝ անբռնադատ կրկին յարակցապէս առ սոյն
բերումն։ Քանզի արդարև առ միդ այդ պատուէր՝
ամենայն հասակ զօրանոյ. իսկ միւսոյդ երկրորդի՝
առաջնոյդ խնամով հանդիպել, ուղղականիդ է նմա-
նութիւն. յաղագս այսր իրի՝ նախնի դասեցի զթը-
նամեացն իմոց՝ աղերսանս, քան զերախտաւորացն
բարիս։

4 Եւ արդ՝ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ 'ի քո
անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան.
և տուր նոցա՝ տէր ամենառատ բարերար և անոխա-
կալ, վարձս արդարոյ և մարդարէի, թէև ես յաւէտ
թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նոցա և առ
յոյս նոցին ակնկալութիւն, որ առ պարտաւոր դերիս՝
ողջամիտ կամքս ակնարկեն, որպէս թէ 'ի մասանցդ քո
կեցուցչաց՝ 'ի պահպանարան հոգւոյս ծածկութիւն՝
լինիցի։ Եւ զպատժաւորս՝ անամփոփելի 'ի քոց տեսութեց, և անխաբելի 'ի յուղիղ կշռութեց՝
քաղցր դթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ
առիս՝ մաքուր արասցես, անխայտառակելի պահե-
լով 'ի տիեզերական յանդիմանութենն։ Եւ ոչ շուք
ինձ վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս՝ սի-
րելիքն քո՝ վասն քոյ, նոյեցեալ 'ի կրօնս զգեստուս
բարեկերպութեանդ, զգիտելով զքիծս դաղտնեացն՝ եր-
ջանիկ կարդան եղկելոյս, և դու հնարաւոր ամենա-
պարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած,
վա՛ն ամենաթշուառիս հեծութիւն՝ հաշտեաց ընդ նա

ըստ

ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մատն պարդևեա զանեղծ մեծութիւդ՝ և զանթառամելի ըղպսակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութենն։

Յ Օ՛ի դու ես դրաւ փրկութիւ մեծութիւ անվատնելի և անծախ գանձուց ստրկիս և սովեցելոյս, ՝ի վաճառ վերնային շահու օգտութիւ՝ բանիւդ որ ՝ի քէն՝ յարդեալ Հոխանամք։ Վառ՝ ինձ սահման՝ ջրոյ հանգստեան. արձանացո՛ անփոփոխ՝ պատրաստական վստահութիւ. կարդեա՛ օրինաբանեալ՝ անկեղակարծ յուսոյ ամրութիւ. տո՛ւր ամենախնամ դու, անաչառ պաշտպանութիւն. սասանեցելոյս՝ բարեաց անդորրութիւ. տարակուսելոյս՝ լուսոյ ապաւինութի. աշխարելոյս՝ մեծ երջանկութի. վհատելոյս՝ կենաց օգնութիւ. լքելոյս՝ անդայթադղելի օժանդակութիւ. նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութիւն։ Օ՛ի քո՛ է բնաւդ, և ՝ի քէն է ամենայնդ, և ՝ի ձեռն քո բաշխին հաստատութիւք պիտանացուցաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւիտեանից. ամէն։

Ա՝ երդոին շաբաթուոյ ՀՐԻՆ հիցուրեա՝ նոքին հոչոգէ, ոտ նոյն աղերս նոշ Լուանոց բանի։ ՝Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ՝ոյ։

* Բան. ԶԿԳ։

1 Ա՝ ղքոյ երկնաւոր. թագաւոր բարձրեալ. ՝որ բոլորից. ամենից ակնկալութի. ստեղծող տեսականաց. հաստիչ իմանալեաց. պատճառ եղանութեանց. կազմիչ հանդերձելոց. տո՛ւիչ

լու-

լուսոյ. առիթ առաւօտու. պատրաստիչ վաղորդայնի.
երևեցուցիչ երեկոյի. տարրիչ խաւարի. արուեստ
տաւոր բարեշնար. իմաստութեան գործոնեայ. քա-
ւարան օրինեալ. հալիչ մեղանայ. հալածիչ ցաւոց.
քակտիչ դառնութեց. պահպանարան հանգստեան.
հնարք նիրհման. յարմարիչ քնոյ. պարգևիչ ննջման.
շնչոյ յարակարգութի. զգայուն տեղութի. ցրիչ
ցնորից. յեղանակիչ անրջոց. փոխարկուն զարհուր-
մանց. այլայլութի տխրութեց. խափանիչ խիթմանց.
ընդարձակիչ կարծեաց. համադրութիւն ծփմանց.
ահադնութի խարդախմանց. հարուածիչ դիւաց.
փախուցիչ ախտից. ընկղմիչ դայթագղութեց.

2 Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ. զօրացո՛
բարձրացեալ քո աջովդ. ամփոփեա՛ ամենակալդ
թևօք. ծածկեա՛ ՝ի ծածեան խնամոցդ. ամրացո՛ վերա-
կացութեամբ վերնայնոցդ. շուրջանակի պարսպեա՛
դումարտակօքդ անմահից. ՝Ի յամենուստ պարիսպ-
կեա՛ կցորդութիւն հրեշտակացդ. վանեա՛ զընդդիմա-
մարտն իմ՝ զենուորութիւն զոհարթնոցդ. պատսպա-
րեա՛ զասանեալս՝ ՝ի ծածանիդ մաղթանօք. զբանակս
անդրանկացդ՝ բարեկարգեա՛ ինձ պահապան. Լաց
ընդ աչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս. զգաստ
արա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդա-
ղութիւն. վերացո՛ տէր ՝ի զգայութեցս՝ զմածեալս
յիմարութի. բարձ միայն բարեդործ՝ զպատրուակիս
թանձրութի. Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողոր-
մութի քո ծագեա՛. ընդ երկից արևուն՝ արդարութե
արեգակնդ ՝ի յանձկութի սրտիս մտցէ՛. Ճառագայթ
քո փառացդ՝ ՝ի յիմաստիցս խորհրդանոց ջահեցի՛.

խաչիդ տեսանելդրութիւն՝ ընդ շունչս և ընդ մարմնոյն համասիրութեան տարածեսցի։ Զանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարել տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին։ Զի դու ես ածանքնին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս։ ամէն։

---

[1] Երեսփն շաբաթուան երրորդին հեծութիւն՝ նորին հանողի, առ նոյն աղէրս նաղլեանաց բանի։ 'Ի խորոց արտից խօսի ընդ աչ։

* Բան։ ԶԼ։

1 Իսկ արդ՝ վասն զի արքենականն մեր զուարթութիւն՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութիւն լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ անթարթափ բացութիւն աչաց, ուղղեա՛ հոգւոյդ քո իմաստութիւն զյաջողուածս ձեռինս գործոյ՝ ընդ հեծութիւնս ձայնիս մաղթանաց։ Զ օրացո՛ տէր՝ 'ի հանդէս բարի ճգնաւորական արի վաստակոյ։ կցո՛ղդ լեր կարեացս տկարութիւն։ թեթևա՛ կացո զաշխատութիւնս այս սկիզբն։ արագեա՛ մի՛շտ կարօղ՝ զյառաջադրեալ ձեռակերտս։ դիւրաւո՛ր ընթացո 'ի յաւարտումն լրմանն։ 'Ի վախճան իրին՝ բերկրութիւն զնս հասո։ Ժամանն կացուսցես՝ 'ի հանդիպումն յուսոյն։ կցո՛ղդ լեր ուղղոյն՝ ճանապարհիս ընթացեալ։ 'Ի թռիչս ամբարձման՝ փութացուսցե՛ս յօգտակարն։ ընդ աջմէ իմ լեսցես՝ 'ի վտանգի ծանրութենն։ զձայն քո լսե՛ս՝ 'ի յանձկութենն պահս։ ձեռամբ քո կեցո՛՝ 'ի կորստեանն ժամս։ մատամբ քո ազդեա՛՝ 'ի սահմանին անձկութիւն։ հարթեա՛ զնստրոց՝ ամենաչար

խափանմանն. Հոգեղինին առաքմամբ, ըստ ամբակու-
մայ, ինձ հնարեան. բան ինձ շնորհեան 'ի յառենի բաղ-
մութեանն. խնամառութիւ յիս անկեան 'ի հանդիպման
քնուեաց։ Լ։մայով կամաց քոյ Հովանացիր հրաշապէս.
հանդարտեցո փոյտիւդ կենաց՝ զծովուս մրրիկ. սան-
ձեան զաստեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրաման-
նուդ. քանզի թէ ասա ողորմութիւ քո սէր՝ կամեսցի,
այս լուծուի կոհակաց կարծրէ քան զվէմ. և թէ 'ի
ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդուի
յատակիս 'ի ներքոյ աստի հասեալ սասանի.
2 Լ։բդ ընկալ յիսուս՝ զպաղատանացս ձեռնարկու-
թիւն՝ քեզ 'ի հաճութիւ, և արա ինձ զամենա-
կարծն գայթադղութիւ՝ մեծ վստահութիւ։ Լ։ոպէս
'ի ջրահեղձոյդ ամենակործանն դարս, որք 'ի հարթ
տարածման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին,
յողորմութիդ ամայի մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ
հովանաւոր մածուածով լաստիւն յոգնատատան հի-
մանն հայթայթանոք՝ յանուն դիտածիդ յեցեալ պա-
հեցան. ընդորս՝ և զաղաչօղս մշատատան՝ 'ի նաւա-
հանգիստ խաղաղութիւ՝ մարդասիրապէս պրծեալ
ապրեցո. վասն 'ի քոյոյդ ընդէս բերելով հոգևոր
շահոյ, զստորագրեալս այս ստուարութիւն պարտաց
լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ որ անկայդ միացեալ
խապաս ունաստանելի օրհնեալ յամի։ Լ։ա կցոր-
գելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝
Հոգեղինացն մարդիրոսաց, որք ջրով և հրով փոր-
ձեցան, և յերկոյ զերծմանն ընդ մեր խնդրեցին, և
մեզ յիշատակ թողին օգնութիւ, ասասցեն ընդ մեզ
համաբանաբար զաղամանութիւ՝ եղիցի՝ եղիցի։

1 Լ։նդ

Ա Երուսաղեմ յաւելուածք էրէին հեծուելոյ՝ նորին հանդէպ։ ապա նոյն աղէբս նաղբանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ ն։

* Բան. Զ.Ի.

1 Բնդ այսր հառաջանաց թախծութեանց ողբոց՝ Ի բազմաց կերպիւ շարակարդելոց, և ամենից հոգւոց ողորմեալ դիմելոյ և երկայնամիտ թագաւորս։ Եւ այնոցիկ առաւել՝ որոց հատեալ է ակնկալութիւն փրկութեան կենաց։ որք ննջեցին անպատրաստաբար՝ շնչեալ լապտերաց իւղոյն պակասութիւն։ Ա.Հա յիշեա՛ տէր իմ գթութիւն, և Ի յայս ևս պատճառ իրաւունս ինձ գրեա։ Քանզի թէև Ի փառս աստուածութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակաբար հանդերձեցեր զկազմած մարդոյս, զոմն ծանր՝ և զոմն թեթև։ զմին զով՝ և զմիւսն հրոյին։ զի դիմադրութիւն Ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կոչեացուք հաւասարիմ հաւասարութեան, և Ի յայսմ դարման առաքինութիւն վերաբերեալ ընդ ամբարձիչն զկոնարհութիւնն առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ պտակ ընկալցուք ճգնաւորական։ Ա.յլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր մածաք, այլ ոմն ախտիւ՝ և այլ ոմն անգթութիւ։ միւս մասն մոլութիւ ամենաբաղձ կերակրոց՝ իբր գազան մշտաբոյժ՝ յարակայ կապեալ ընդ բնութեան։ Ասկ Ի քաւիցս՝ ոմն անընդունելի և անողբերելի պայմամբ Ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ։ եթէ ջերմութամբ տապով սիրոյն որ Ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ Ի մեզ, ցուրան առընթեր կենակից նմին՝

զնոյն կասեցուցեալ բարեոյն ընդ միջէ. եթէ օդա-
կանաւն հրեշտակայնոցն յառնիցեմք 'ի քեզ, Ծանրու-
թիւն Թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի
ստորև քարշեալ խափանէ.

2 Այս արդ՝ յամենուստ պարտեալ և խոպառ լքեալ՝
էբր զապիկար հաշմեալ հելքեցոյ կորեայ վա-
նեցայ. վասնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ դրաւեցայ. ինչ
'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութեանն կողմ
նայիմ. և պատկառեալ դիմաք համայնից ունօղս՝ ըզ
քեաւից աղերսաբանեմ զմեռելոցն քեզ՝ կենդանեց.
քանզի կարօղ ես յաւէտ հնարիւք և կորստականացն
ըստիս մեռելոցն. ամ ինչ քեզ զօրելի է. նա զի՝ և
ընդ անակար կարելոյդ՝ և կամելդ է ախորժելի.

3 Արդ՝ այսց երկուց բարգաւաճ շնորհաց նորոգ-
ջաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն,
բարձեալ երկնցի և յուսահատութեան վհատութիւն
աղգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ
լոյս՝ հոգւոց բժշկութեան քումդ հրամանի՝ տէր ամ,
օրհնեալ յաւիտեանս. ամէն.

Ա Էրոպին յոռելուծած էրկին հեծուելեն՝ նորին հանդէր, առ նոցն
աղէրս նաղելանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ոչ.

* Բան. ՁԱ.

1 Այս արդ՝ քանզի 'ի դլուխս կատարման հա-
սեալ սակաւամանեայ կսակի այսր աղերս-
գութեան, արա տէր՝ վախճան դադարման
առնուլ ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս
կշտամբութեան՝ և որ յիս կրկին չար սովորութիւք.

Որ քեզնէն կարդեցեր սահման աւետեաց ակնկալուն դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք ի փոքրիկանցս. և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալն ոչ կորուսից։

Ա. Հա օրհնեալ ես ի գթութիւն. բարեբանեալ միշտ ի քաղցրութիւն. խոստովանեալ յերկայնմտութիւն. ծանուցեալ ի յայցելութիւն. քարոզեալ տէր ի փրկութեան. ներբողեալ դու յառատութիւն. պատուեցեալ ի պաշտպանութիւն. փառաւորեալ ես ի փրկութիւն. երկրպագեալ յանբաւ բարձրութիւն. պաշտեցեալ ի յանքննութիւն. գովեցեալ միոյն ի յաղթութիւն. վերառնեալ ի մեծ զօրութիւն. խնկաւորեալ յողորմածութիւն. համբուրեցեալ յանճառ հեզութեան. ճաշակեցեալ ի խոնարհութիւն։ Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր ՅԾԴ բոլորիցս միաբանութիւն. ըստ որում հոգիդ քո նոր բարութիւն, որ զանկեալ զդրաստ թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն անբանութիւն՝ կանոնեցեր ոչ անտես առնել։ Որոյ երախտիս հրաշալիդ ի յիս, և առաքինութիւն մեծիդ ի բարձունս ոստնեալ անդադար յանվախճան փառաբանողաց. որովք զայս ձայն աղերսական յարգել ընկալցիս՝ մարտիրոսացն պաղատանաքք ի հոտ հաճութիւն բուրման անուշից։ Եւ այսու փրկանաքք հաշտարար բանի՝ ըստ նախնեացն պարտս և զանարեւոյթ վերս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողքն զանձն և զմարմին բժշկեսա՝ ամենակարող. զներքինս և զարտաքինս. զտիպքն և զգիծքն, և զնարանս հարուածոցն. բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեանդ զիւտեալ

խածուածս բազմադունիս, որք գարշելիս ընդ ախոր-
ժելեացն քեզ ցուցանեն զէութիւն։
3 Եւ եթէ հասիցս յամս ծերութեան քոյ առաջնոր-
դեալ՝ արժանիս մահու, մի՛ թողցես զտկարուիս.
մի՛ անարդեր զալիան. մի՛ կորացուսցես զկործանեալն.
մի՛ զկիզուսցես զկիսեալն. մի՛ վայրաբերեր զկոնար-
հեալն. մի՛ շնչման հողմոյ մատներ զառկայծեալն. մի՛
ընդպահկեսցես զդեղեւեալն. մի՛ անվերարկու առ-
ներ զսառուցեալն. մի՛ անդարման լեցի տագնապեալն։
Մի՛ առանց տածելոյ՝ յարկն խարխալեալ. մի՛ անպա-
տիւ՝ պատկերն հնացեալ. մի՛ պարարտութիւն անհա-
մեալ. մի՛ շուք շնորհին անարդեալ. մի՛ հնութիւն քա-
մահեալ. մի՛ նաւ հոգւոյս ալեկոծեալ. մի՛ երկարուի
յուսոյն կտրեցեալ. մի՛ լար շաւիղին խզեալ. մի՛ ուշ
իմաստին բարձեալ. մի՛ գոյին կազմած զեղծեալ. մի՛
ամբարձմանն թեւք փետտեալ. մի՛ զուարթութի գե-
ղոյն տգեղեալ. մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ. մի՛ պա-
տուհանք աչացս փակեալ. մի՛ լուսաւորութի նորին
խափանեալ. մի՛ պատկերն խօսուն անկեալ։ Ահա
աղաչեմ զքեզ՝ բարեգութ, եամ սրբովք պաղատիմ,
լուր սոցին ինձ կանխաւ, զի զանազանն մի՛ մոռաց-
ցիս։ Զոր առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, և
ապրեցուցեր, տան տէր՝ ընդ երդողին՝ և՝ ի կարծեցն
կասկածանաց, յորմէ երկնչիմ։ Զսկ ես չեմ արժանի
՝ի քէն՝ և ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ
դու կարօղ ես սովորաբար՝ և առ զըլացողս բարե-
գործել։ Զոր են զամանալիք անձառիւ բարեաց՝
միայն հրաշագործ առ եամ երկայնմտութի, ընդ հօր և
հոգւոյդ սբոյ օրհնել հանապազ յաւտանս յաւտանից. ամէն։

Ամէրսին յաւելուածք հրէշին հիւծուելոյ՝ նորին հանդէպ, առ նոյն աղէքս մաղիոնաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ ամ։

* Բան. ՁԸ։

1 Եւ արդ՝ ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկուածք հոգւոյս՝ մտացս լքմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարդաբերին յիշեցուցանեմ զարամաթացւոյն սամուելի, զոր առեալ ի հեղ՝ ի սկաւառակի յանդիման քո՝ սմենաստես, առ ժողովրդեանն օրինակութիւն զանձն արկանելոյ՝ խոստովանութիւն և հնազանդութիւն կենդանարարդ գարշապարաց։

2 Եւ արդ՝ ընկալ զայս հիւսուածք բանի աղիողորմ հեծեծանաց, և հոտոտեսցիս յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ թանգաւոր երկնի. և օրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգութիւն. և դրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն սպասաւորութիւս։ Պացցէ առաջի քո մշանջենաւոր, և յիշատակեսցի՝ ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի՝ շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի՝ բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի՝ հանդէպ աթոռոյ քոյ, և ընծայեսցի՝ ի սրահ սրբութիւն քոյ. խընկեսցի՝ ի տաճար անուն քոյ, և բուրեսցի՝ ի սեղան փառաց քոց. պահեսցի՝ ի գանձարանի քում, և համբարեսցի՝ ի ստացուածս քո։ Պատմեսցի՝ ի յականջս ազգաց, և քարոզեսցի՝ ի լուր ժողովրդոց. նկարեսցի՝ ի դրունս իմաստից, և տպաւորեսցի՝ ի սեամն զգայութեանց. իբր կենդանեաք՝ զիմն պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալայց

իբր

իբր զմահացու , այլ յարակայութիւն բանի այսր սո-
փելի՝ գրեցայց կենդանի։ Նասցէ՛ սա անեղծ
՝ի կամս քո տէր՝ ինձ պատժապարտիս համբարձեալ
միշտ՝ անդուլ դատիչ. անաչառ կշռամբիչ. անպատ-
կառ յանդիմանիչ. անանխոյսելի դատաւորիչ. անողո-
քելի պարտաւորիչ. անհամբոյր ծանակիչ. անմարդա-
սիրելի մատնիչ. անսիրելի տանջիչ. անկաշառ կա-
ռափիչ. անխնամելի յայտնիչ. ապառուտ հրապարա-
կիչ. աշխարհալուր բողոքիչ։ Փողով մեծութեան
աղդման՝ առանց լռութիւն և կամ դադարման՝ զիմոց
պարտեացս խոստովանեսցի՝։

3 Այն դիր՝ իմովս ձայնիւ՝ իբր զիս ընդ իմ աղա-
ղակեսցէ՝, տարածեսցէ՝ զծածկեալսն. հռչա-
կեսցէ՝ զդաղտնիսն. կականեսցէ՝ զկատարածն. հրն-
չեսցէ՝ զմոռացեալսն. յայտնեսցէ՝ զսներևոյթսն. բար-
բառեսցէ՝ զբարբարսն. քարոզեսցէ՝ զնորոցն. պատ-
մեսցէ՝ զմեղացն. մերկացուսցէ՝ զանտեսիցն. ցուցցէ՝
զկերպարանս թաքուցելոցն։ Շօշափեսցի՛ն սովա-
որպէս. գտցի՛ն դայթադղութիւնքն. յանդիմանեսցի՛ն
անճառք. քամեսցի՛ն չարեացն մնացու՛ածքն։ Լու թա-
գաւորեսցե՛ն կենաց ընորհաց ողորմութիւն քո՝ ք՛ս՝,
՝ի դանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց. որով ՝ի
ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի
գարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութեան՝
քոյովդ ցօղով յոգի առնելոյ այսու փրկութիւն ան-
մահականաւ. և անցամաքելի վերամբարձութիւն շառա-
ւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դա-
լարացայց և կրկին ծաղկեցայց , ըստ քոյինաշունչ
դրոյն յուսադրութեան։ Լու քեզ միայնոյ փրկողի՝

և հոգւոյդ քում հօր իսկակցի՝ միասնական տէրու-
թեանդ և անձառ երրորդութեդ՝ խորհրդական դո-
վեստիւ փառք և երկրպագութիւն յաւիտեանս ։
ամէն ։

Ա Էրոթին յաւէլուածք իրիւն հիւծուրէ՝ նոբին հոկոզի , ա՝ նոյն
աղէրս մաշլեանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ այ։

* Բան . Զ։

1 Ամ և Տէր . կեանք և արարիչ . ողորմած .
գթած . լոյս . երկայնամիտ . անսխակալ .
մարդասէր . ամենազուրթ . պարգևատու .
փրկիչ . օրհնեալ . գովեալ . բարեբանեալ ։ Դարան
ամրութիւ . պատսպարան վստահութիւ . առանց նեն-
դութեան բարի . առանց խաւարի ճառագայթ . քա-
ւիչ մեղաց . ողջացուցիչ վիրաց . անհասանելեաց հր-
նարք . անմատչելեաց հպարտ . անյուսութիւ ելք .
անուն քո խոստովանեալ՝ այդ որդի . և հօր քո ընդ
քեզ հզօրի և ահաւորի , և հոգւոյդ ամենակալի՝ և
ընդ քեզ երկրպագելոյ փառք և պաշտօն գոհա-
բանութեան՝ յաւիտեանս ։
ամէն ։

Պ Էրոտին յաւէլուածք էրէին հէծուլէ՝ նորին հոգոյ, առ նոյն աղէրս մաշ Լեանայ բանէ։ Ի խորոյ օրոէց խօսէ՝ ընդ աշ։

* Բան. Պ.

1 Բարեբանեսայ ՀԱՅ Երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ. մեծութիւն ահեղ. դիւթութիւն օրհնաբանելի. ողորմութի խոստովանելի. բարերարութի երկրպագելի. խնամակալութի պաշտելի. մարդասիրութի տօնելի. պահպանութիւն խնկելի. բարձրեալ անքննին. մերձաւոր կամարար. ապաւէն անկասկածելի. միութար սրտից. փարատիչ վշտաց. ապաքինիչ յաւուց. սպառումն վըհատութեց. բարձումն պարտեաց. փոխարկիչ կրեաց. կարդաւորիչ կրից. յարմարիչ բանից. սանձարկու լեզուի. շրջադրութի ընչից. կացուցիչ հոգադի. ամփոփիչ խորհրդոց. կրթարան կամաց. արձանացուցիչ յուզմանց. հանդարտութիւն մրրկաց. խաղաղութի ծփանաց, որ ունիս զքեւոց ամենեքեան ի շնանականիս, և խնամատութեամբ նոր ճաճեալ առ քեզ դարձուցանես։

2 Պոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեղուք անհպարտութեամբ երկայնամտեալ հանդէս տենչանոք անձաւ հրաշիւք՝ յանձինս սրբոց։ Թագաւոր էից համայնից, ամենեցեալ դիտաց. սկզբնայիր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին։ Զեռնկալու մեծ վատահութեամբ, որ ոչ թողացուցանես գայթադղելոյս ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առ հաւատչեին աղա-

ջողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինութի հան-
դրստեան, որ ոչ երբէք մատնեաս վտանգի դատա-
պարտութե։ Զատուի շնորհաձիր, որ տաս լիապէս
առանց փոխատրութե փրկանաց. առատութի անանա-
խանձելի, որ քոյին փառաւորութի՝ զանարդ նիւթ
հողոյս ճոխացուցանես։ Պայծառութի անստուեր,
որ ճառագայթիւք ահեղ բարձրութե պարածածկեալ
զթշուառս՝ կրկին բարդաւաճ առնես։ Բաւիչ
մեղանաց բաղմաց, որ զհերքեալս 'ի փրկութէ
առաջնումն պայծառութե նորոգեալ՝ վերստին վայել-
ցուցանես։ Հնարաւոր դիւրահաս առ ամ ան-
բաւ գերամբարձութի յաւէտ յառաջեալ. ելք վըս-
տահութե առ խոստացելոցն վայելս. երանութիւն
անձկալի, յոր զկենդանութի շնչոյս լքանելն է ախոր-
ժելի, զի զքեզ դտից՝ կենդանի։ Կամք անփոխա-
դրելի՝ առ 'ի քաւութի գերոյս զօրացեալ ամենագո-
վելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնա-
ւին եղծելոց առնես զքանչելիս։ Մենատեղծ
աներկբայելի, որ զհուրբ կիրեալն, և զհողմով հո-
սեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, 'ի քթթել
ական նուիրն հիւթականութե անպակաս յարուցա-
նես։ Ընհաւատար համարձակութի, յորում ածօրէն
պանծանօք պարծելն է իրաւացի։

3 Հայեաց տէր՝ յերկնից զուարթ քաղցրութեամբ՝
յամենակործան վտանգ նեղելոյս, և արա ան-
դորր հանդստական դիւրաւոր՝ 'ի բաղմաստադնապս
հեծութէ։ Ընդ զյարուցեալ դումարս սատակչացն,
եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորու-
թե բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ

մեզայ ոգեաց՝ և քո ստեղն կերպարանք, եթէ ցաւոց
և սխալից վատնիչ և կորստական նշմարանք, մերժես
ցեռ հանցեռ հատցեռ խափանեսցեռ և հալածեսցեռ՝
հեռի սահմանաւ խսպառ տարագրեալ անդարձ ո-
րոշմամբ վերստին կորստեանն. և կառուսցեռ կա-
ցուսցեռ նպատակ կենաց և ամուր մահարձան՝ ըղ-
նշան խաչիդ՝ ապաւինելոյս ի քեզ՝ փրկութիւն։
Եւ յայսմ անպարտ և անպատիր և անվնասելի ար-
ուեստից ահաւորիդ մեծութեանդ, լուծցին որոգայթքն
դաղանածածուկ սատանայականք. կապտեսցին մե-
քենայքն. վատնեսցին դայթակղութիւնքն. խայտառա-
կեսցին հաղբիցն դրութիւք. յայտնեսցին երևելիք
որսոյն. գտցին նենդողին ծուղակք. վերասցին վար-
մին վերարկուք. տոչորեսցին որոմանցն բոյսք. նը-
վեսցին բռնաւորին ջարաբանութիւնք. կտրեսցի՛ լար
խաբէութեանն ի մահ որսողին. պարսեսցին պատրողին
բանսարկութիւք. պակասեսցին զէնք զրպարտողին.
անկցին սուսերք մահաբերին. սուզեսցին սադրո-
ղին պատրաստութիւք. արձակեսցին տուռունք տագ-
նապողին։ Եւ յլայլեսցին սուտ կերպարանք կեղծա-
ւորին. սատակեսցին խորհրդական խիստ յարձակ-
մունք. ցրուեսցին կցորդութիւնք կերբացն. բա-
ժանեսցին ազինք աւազակացն. քայքայեսցին բոյլք
բարբարոսացն. քանդեսցին ամրոցք ապստամբողացն.
արդելցին ամպրոպք յանդգնելոցն. փարատեսցին
փորձողին անձրևք. հալեսցի՛ և ցամաքեսցի՛ եղեամն
աղանդաւորին։ Կորտակեսցի՛ եղջիւր գոռողին.
մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց. փը-
րեսցին ամբարհատաճութիւնք հպարտացելոցն. նա-

հանջեսցին դիմեցմունք ճակատելոցն • քակտեսցին միաբանութիւք զօրացն բելիսարայ, թէ անմարմինք և եթէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոյ՝ յեօթն տարակոյս, 'ի դուքն ինձ փոքեալ՝ ինքեանք ընկճեսցին։ Եղանակեսցին ձերունք ձանձրացուցչին հատցի՝ կապն կցորդութեան՝ մշտաջան աւազակին • նողկասցի՝ մոռացս կոյից՝ համբոյր շողոքորթին • ընդ միջեալ մեկնեսցին՝ նեռաձերդութիւնք նեղչին • կացցէ՝ 'ի սասանման՝ նաև խարդախողին • խլեսցին յարմատոց անտի՝ ատամունք խածանողին։

4 Ա՛ն փայտիդ օրհնութեան կենաց, յորում պրկեցար ածդ անբմբռնելի • յիշատակաւ բևեռացդ, որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի • արեամբդ ՝որ ունականաւ, որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար • լերանցն դառնութիւք, զոր արբեալ՝ զդեղատուն կորուսչին արտաքս հեղեր • պատմաբանութիւք ըղձական ճառիւք կրիցն սարսափելեաց, որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր • անուամբդ անհասականաւ ամենայնի անթարգմանելոյդ, յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանի սարսափմամբ՝ բնութիւնք ամ երևութիւց և աներևութիւց, եղեցին այս ամ պարդևք շնորհաց՝ խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութիւն և 'ի քաւութիւն • Լու մահաբեր դառնութեանն օձին, և որ 'ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութեանն, 'ի սատակումն եղեցի նորին • նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկակն հարուածատանջանացն՝ սոլաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի։

Եղե-

Լուցցի՛ ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ
ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միա-
ցեալ 'ի մի։

5 Լաւ որ զբ ընթերցցի զայս աղերս ձայնի՛ մաղթա-
նաց գոչման՝ աղօթից հայցման, ծերոյ և տը-
ղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղխնաց զբ
զաղատեսցի ՀԾ-սիրաբար, հաւատարապէս անաչ-
առութեամբ ընկալցին 'ի քէն մատն երանութեան պար-
տուց ազատութիւն, հաստեալ վերստին յանարատու-
թիւն նորոգ մաքրութիւն, նկարեալ դարձեալ զքոյդ
կերպարան անփոփոխելի։ Հա տիրապէս՝ հրնա-
լաւոր զօրեղ անպատում անհաս անխմանալի, տես-
ցես աստանօր 'ի հառաջանս կողկողանաց սյսր հե-
ծութեան, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ
մատուցանի, վա՜ հօր քոյ երկնաւորի և բարերարի,
և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի։ աստ-
ուածածնիդ բարեխօսութեամբ, և խնդրուածովք
ամենայն սրբց։ Ո՛ի դու ստեղծեր զամ։ և 'ի քէն
եղեն ամենայնք։ և դու տիրես ամենայնի։ և քեզ
փառք յամենեցունց՝ միդ յիսկութենէ անժամանակ
երրորդութեդ, զուգակցապէս փառաւորեալ յան-
բաւս, և յաւիտենից յաւիտեանս։
ամէն։

Ի Երեսին յաւելուածք երկին հեծութիւնք՝ նորին հանողէ, առ նոյն աղերս խաղիանաց բանի։ Ի խորոց սրտից խօսի՝ ընդ աչս։

* Բան. Զ.

1 ՏԻՐՈՒ դիւթութեանց և ահ ողորմութեց. անուն մեծութիւն. ձայն ահաւորութիւն. կոչումն սատակութիւն. լուր անհասութիւն. բարբառ դողութիւն. հնչումն հիացման. յուսադրութիւն բարերարութիւն ամենողորմ քաղցրութեան։ Յորմէ երկուցեալ սատանին՝ ամ բնութիւք եղելոց. Ի քո սպառնալեաց ահիդ պսկուցման՝ սաւառնին սերոբէք. ամիսոիին քերոբէք. պարուրին պարք լուսակերպիցն. երկնչին հիացմամբ բոլոր պետութիւք վերնոցն. նոյնք ցնծան դողութիւն մեծաւ Ի մի նաւակատիս բերկրութիւն. զարհուրին դևք. ընկրկին չարութեցն գունդք. պակասին խաւարասիրացն հոդիք. անդնդոց մատնին հրեշտակք օտարին. Կապին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին. փակին Ի ստորին բանակ՝ քինաւոր ամաղեկացիքն. անխզելի հանգուցիւք պաշարին՝ խումբք հակառակորդին. արդելին անդերծ զնդանաւ՝ մահաղինացն կաշառք. պնդին Ի մեռաղս ահեղ հրամանիդ՝ այսպանացն դումարք. պատոնձին կարկեալ՝ ընդդիմանբանիցն դասակցութիւք. պարաւանդին հիւծմամբ կարաւէն՝ անելութիւնն ժողովք. անլոյծ շղթայիւք նեղին՝ առաքելութիւք դերասքրիստոսին։

2 Ահա կարկառեմ մատամբք ձեռինս՝ զոտառնադրութիւն նշանիդ Ի ժամ դիշերիս, որ ոչ մթանաս

խա-

խաւարաւ անդիտութիւն՝ ամենեւին ոչ տեսականութիւն, քան թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակեաց։ Ինկիլ զաղաչօղս վտանգաւոր դոհաբան՝ ընդ պահպանութիւն թեւոց հզօրիդ։ փրկեա 'ի ցնորից՝ եկամուտ պղտորութեց։ սուրբ արա զզբայսրան հայելեաց՝ սրտիս նկատմանց։ ամրացո փայտիւդ կենաց՝ 'ի տխրական անրջոց։ արեամբ քո սրսկեա՝ զշրջակուութիւնս կայիցս։ զհեաս եղումիցն՝ կաթուածով կենարար կողիդ գծագրեա։ երգոցն պահպանաբան՝ քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի։ հանդէպ տեսութիւն աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի։ ընդ բարաւոր յարկիս՝ ջարջարանաց քոց դործի հաստիցի։ զծառայդ օրհնութիւն՝ հաւատք յուսոյ իմոյ կոխեսցի։ Երդեալ տէր՝ սովաւ զատակիչն հոգւոց։ մոցէ՝ անխափան՝ պաշտպանն լուսոյ։ և ընդ սաստիկ ծանրութիւն ցաւոցս՝ և զբեռն պարտեացս թեթեւացո, զոր 'ի լուսաբանի մտացս ամփոփման մահճացս անկողնի՝ ուշաբերեալ զյուսահատութեցն դառն պտղոյն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս։

3 Անդո զվաստակեալս 'ի բազմաճուփս աշխատութենէ։ բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութին ընդ վշտացն։ զհեծութին ընդ կարեացն։ զանձկութին ընդ թշուառութեցն։ զհաւաքմունսն ընդ խորտակմանցն։ զբեկութիւնսն ընդ ափշութեցն։ զթմբրութիւնն ընդ շտամանցն։ զարբեցութիւնն ընդ յիմարութեցն։ զթերամտութին ընդ խելագարութեցն։ զսառուցեալ սիրոյն, և զհրայնի

ջերմութիւն աղուհական ախտին։ Ժանդակ լեր տը-
կարութեամբ բազմատեսակս տարտամութեամբ, բարեգործ-
աջովդ շնորհի. ձեռամբդ նորոգողն. մատամբդ կենդ-
սաբաշխն. փառաբդ մշտափայլն. յարակայութեամբդ
անեղծն. երեսաբդ զուարթականն. իսկութեամբ էիդ
պաշտելն. բարձրութեամբդ երկրպագելն։ Հատո՛ զբաղ-
ջար հեծութի՝ կորստականս խեղդման, զնոր գիւտ
ջարին. զհին խարդախութեան բանսարկուին. զոտար
աղդեցմունս՝ 'ի մահ կրթողին. զանյարմարական ե-
ռեայթս՝ հանապազորդեան եղեռնագործին. զառ աչս
ճնարադրութեան դժնդակ դիւին. զողբական բոցա-
շնչութիւն ձգող կախարդին։ Պահեա՛ 'ի տեղւոջ
հանդստեան մեռօրինակ սյսր դադարման, յանե-
ռեայթ մոռածութեանց. 'ի մասնաւոր սխալութեց.
'ի մեծադոյն դայթաղղութեց. 'ի փոքրագոյն ոտնա-
ռութեց. 'ի խաչբեբայ ջար ձանձրութեց։ Հեռացո՛
զանհանդէպ մոռածութիւն 'ի ղայութեց ծառայիս
յանցաւորի, զվիրս բասրելիս. զվարս թշնամանելիս.
զդիպուածս պատկառելիս. զհետս վրիպելիս. զպա-
տիրս ձաղելիս. զնորհուրդս անդոսնելիս. զաւելա-
բանութիս նշկահելիս։ Անսխալ հոգւով և անշա-
ղախ մարմնով զսպաւինեալս 'ի քեզ հանդերձեա՛,
'ի շնչմանէ հողմոց. 'ի զարկմանէ բռնութեց. 'ի բախ-
մանէ փոթորկաց. 'ի յոստմանէ մրրկաց. 'ի յարձակ-
մանէ դազանաց։ 'Ի կատման աչացս՝ հայեցուածս սրը
տիս մի՝ ստուերասցի, այլ՝ զուարթասցի՝ պայծառաս-
ցի՝ վայելեսցի՝ ընդ քեզ փայլեսցի՝ տէր յա՛ քա՛,
լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ։ Բանի՛ քո սրը-
բեա՛ զպատսպարանս բազմականիս, 'ի խորամանկութեց.

'ի զբաղմանց . 'ի քո ատելի յիշատակաց . 'ի վերնամարտ մոռացմանց . 'ի քրիստական մոլորութեանց . 'ի տիրանեղոյ անշնորհութեանց . յաստուածընդդէմ հերձուածութեանց . Զնդիւք վերնայնոցդ՝ վերակացուինձ լեցիս , պերճութեամբք . իշխանութեամբ . զօրաւորագոյն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ նբ ՅԱՅԾՈՒԹԵԱՆԴ . առաքելական՝ աւետեաց աւետարանաւն . մարգարէական՝ կտակարանաւն . մաղթանք երջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայեալ : Զրովք ներհեղեալ երկիւղիւ ըստ քեզ՝ տրամութեամբ , և զարթեալք շնորհաց քո՝ կրկին ուրախութեամբ . եթէ վհատութեամբ ննջեցիս , յարեալք դարձեալ հոգևորական բերկրութեամբ . եթէ ընկողմեցեալք մեղանաք , կանգնեցեալք վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ ամբիծութեամբ :

4 Զուր խնդրուածոց ամենահատաչ ձայնիս հեծութեամբ՝ միայն բազմագութ , բարեխօսութեամբ նբ ՅԱՅԾԱԾՆԻԴ , և ամենայն արդարոց , և նահատակաց ընտրելոց : Զոր քեզ փառք յամենեցունց՝ խնամիս դոչմամբ վերառաքեցեալ սրբովք զանարիւնոցն անմահականաց դասուց՝ 'ի դոլեռստ հօր քոյ ՅՅ մերոյ , և հոգւոյդ նբյ բնաւիկ հաստատելի և նորոգողի , յաւիտեանս յաւիտենից .

ամէն .

'Ի փայտն երկանիկ բարեբաստութեան՝ ժամահարին խորհրդաժուութեան։ աղաչանս եղեալ ընդ հերպարանս ներգինանութեան։

* Լան։ Ղ։

1 Զոհանամ զքէն բարեգութ՝ միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի այ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո յիշատակի՝ 'ի լրութեան ինչման՝ փայտիդ հրաբերման։ Որոյ բախեալ զձայնարձակութեանցն զաղբոդարան, սթափեցաք կանգնեցաք, 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ։ ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք 'ի ժամապաշտման օրհնաբանութեան, յանդիմանս լինել քեզ ուրախութեամբ՝ հանդէպ հատուցմանս բեմի։

2 Զհա փառք քեզ՝ անսահման անուն՝ և անբովանդակելի զօրութեան, որ այսքանեաց հնարաւորութեամբք՝ ընդ փրկութեան իմում հոգացար։ զոհաբանեալ անեղծ խսկութեան, որ կերպարանեցեր հրաշիւք աստստին զհանդերձելոցն նմանութեան, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ առքունս անյարիր՝ սաստիկս որոտացեր։ Ով թէ ընդծուլութեան դանդաղութեան՝ զյանդիմանութեան խրատուդ խառնեցեր։ 'Ի հայրենի սիրոյդ հեղութիւն՝ զուժգնութեան ճայթմանն յարեցեր։ յընդոստ զարկուածք երկուց միջնորդաց՝ մարդասիրաւ քաղցր անձրևեցեր։ ոչ մեղմութեամբ մեղմական վանդիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութեամբ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր։ Ծնրադրական երկրպագութեան ստեղծչիդ բոլորից, որ այժմէն

ցուցեր Հանայն յայտնապէս՝ զօրինակ ահեղ բարբա-
ռոյն՝ մեծի աւուրն յարութեան. կենդանացուցեր
'ի դադարմանէ դժոխական անբանութիւն. 'ի խնդիր
ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի գինիդ ուրախու-
թեան. արարեր զայն՝ լինել հանդերձիչ անարատ
հարսինն՝ առ սէր փեսայիդ. երկուցեր փոքր այս խը-
թանաւ՝ զապարատանին զվիթխարուն. լուծ ստուար
կրթութիւն՝ ստամբակին ուսոյ՝ զայս իր դործեցեր.
վարպան վանիչ՝ չարախօսին կզակաց եդեալ կազ-
մեցեր։ Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութի
մեծիդ այդ, որ փոխարկեցեր զիսայտին պարտիս՝ յա-
զատութիւն շնորհիդ կենաց. խմաստնացուցեր վերբս-
տին դարձեալ՝ զյիմարս ցնդեալ՝ հոգեւորական հան-
ճարովդ. կարկառ կռճմամբ՝ զանբժշկութիւն հարուա-
ծոց օձին՝ առանց մուռացման միշտ թարգմանեցեր.
ընդ երրորդութեդ դծաղրուն՝ զկապն երեքկին՝ իմ
վերասակարին 'ի կատարածին սովիմբ կրկնեցեր։
3 Հովեստ ներբողից՝ բուրմամբ խնկոյ վերառա-
քեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի ստապատիր կռոցն
բազմաստուածութենէ՝ առաւել յաճախագունիւք
որսացար զանձն իմ պարտաւոր՝ 'ի քո երկրպագուն.
խրոխտ և ահարկու նոմիրեալ փայտին՝ զճշմարտու-
թիւնն քարոզեցեր. մեծացուցեր այսր պատճառաւ
պատշաճականաւ՝ զնոր աւետարանութեդ պատին.
Այն ինքն աղաղակ բարձրութեդ գոչման սպառաղի-
նութեանդ քո՝ արքայ պետութեդ կայսերաց երկրի
ար քո։ Նշան խրախուն աւարտման հանդիսի մարտի
քոյ՝ յիսուս, յորում խմանալին փարաւօն կապեալ
ըմբռնեցաւ. կռփիչ հանապազորդեան՝ դլխոյ գա-

գա-

գաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տա-
շեցեալ։ Սովաւ գումարին 'ի պատերազմի որդիք
սիոնի՝ ընդդէմ աշխարհակալին խաւարի. տօն իմն
ՅԾաւանդ կրթութեան կարգեալ 'ի հեռուստ՝ այս
դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափան-
ման. նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման՝
'ի բացուստ անդր ծանուցմանէն. ազգակից հանգու-
նանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ ՅՈ. կոչ-
ման բարուք հաւաքման փոյթ ընթացիւք՝ 'ի յարկն
օրհնութեան. պատկեր տեսակի տնկոյն դիտութեան՝
'ի կարգ ընտրութեան բարւոյն և չարի. յիշատակ մեծ
սեառնագրութեան յերեսս կերպիս հոգւովդ սրբով՝
զնշան խաչիդ. նախաձեկոյց աւետամատոյց փառաց
դալստեան՝ 'ի դշխոյն պահեալ սուրբ թագաւորիդ.
յորդորիչ քաջալերական՝ մաքրապարիսպն խրախճա-
նութեան. անախտական սիրարկու՝ անձնահամբոյրն
կցորդուն. շքեղաշուք քողընծայ՝ ամենածին կուսի
թագուհւոյ. յարդարիչ ծածուկ պճնութեան, որ 'ի
հոգին է վայելչութի. նմանուի պատգամին սինայ,
որ 'ի տէրունեացն արտաքս առաքիւր. միշտ օրհորդ
պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ
փառազարդեր։

4 Ներագոյն քան զերիքովին փողն եղջերեայ՝ ըղ-
բռնուին բելիարայ՝ սովաւ հարթեալ տապալե-
ցեր. քարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ՝
ընդդէմ դողիադու. գայիսոն նորոգ կառուցեր՝ վը-
կայ ահարկու՝ կործանմանն սատանայի. զ'ի խոր ածե-
ցեալ արմատս մեղացն՝ մեքենայիւս այսու խլեցեր.
զմուացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախտեաց
ե ընդ-

ընդ իս կապեցեր։ Օ՜ որ եթէ այլ իմն ձայն բանիդ
այ անուանեմ նախապատուամ եկաւորուենն՝ ոչ սխա-
լեմ, քան թէ ճշմարտեմ. 'ի տիար ամենս այս նիւ-
թոյ հոգեկրի՝ մեծուի գործոցդ յի՝ առաւելապէս
պատմեալ հռչակի. բիւրաւոր օգնականութիւս վեր-
նապարգևս և քոյինատուրս՝ 'ի յոյսմ անպատապար
ապաւինուէ՝ երկրականաց զարմանագրեցեր։
5 Խոստովանեալ անուանդ անքննին՝ մարդասիրիդ բա-
րեխնամութեան, խնկեալ խորհրդով սրբամաս-
նութիւնք՝ անգծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնա-
ձիր նշանաւս այսու՝ նեռս արձակեցեր հեռաձիգս
ձայնատրականս՝ օդաչուս և յարմարաթռիչս՝ ունօղս
յինքեան հոգի կենդանի. որով անսխալ հանդիպ-
մամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին գաղտ-
նութիւն՝ յաւէտ կործանմամբ՝ 'ի յեռս ընկճեցեր։
Բբր զպատնեշս ամրաբերձ բերդամարտուէ՝ կանգ-
նաւորս անվայրարկելիս՝ աստուստ անտանօր զկտեալ
դիպոհածս այս փայտի զարկման՝ հրեշտակ կամ-
բար՝ թշնամւոյն ներհակ վերյուղարկեցեր։ Բանիւ
հրամանի մեծիդ ակնարկութիւն՝ օծութիւն շնորհիդ
արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթիկիչ՝ մոլի
դուռողին, իբր զեռաչիդ փրկանակ յեսանեալ սրեցեր։
'Ի մեծ ազդմանէ սյսր աղաղակի գեր քան 'ի վեր-
նոցն՝ քանդեալ վերացաւ դրանդն ամրութիւն կամաց՝
անվայելուչ և ամենարկչուտ խենեշութեան կարճա-
մտութեն, ընդ հրեական սրտին խնամտից՝ և ստոներա-
կան տանն կործանութիւն։
6 Դառաբանուի քեզ վերընծայեմ՝ անմահ թագաւ-
որ. զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր՝
աղա-

աղաչեմ զքեզ՝ կրկին ներդործեա։ Նոցուցեր սո-
վաւ հերքեալ առ ի մէնջ՝ զնէթ դժնդակ խորհանն
կուրթե բանսարկուին. զտաժանական տապ մեղաց.
զհողմն դառնութե շնչման խաբողին. զտարր արկա-
ծից մահու երկիւղի. զառ ի յօդից ցնդմանէ վնասա-
կար բերմունս տխրեցուցիչս. զոյսախառն հեծեծու-
թիս թալկացուցիչս։ Յրուեա վերստին քոյինազէն
հեծանաւս՝ օժանդակել թեւօք նշանիդ՝ զամպս հր-
բաժինս. զորոտմունս կարկտաբերս. զցաւադին ցող-
մունս հրախառար կեղծաւորութե փչման՝ բազմո-
տանի վնասին. զսուր սատակման, զճակատամարտ
դիմեցման, զյարուցելոցն ի վերայ վայրենական խոր-
հրդոց, զդիւացն կաքաւս։ Յորմէ զարհուրին յայսմ
իրէ փոքրոյնէ՝ տեղի տուեալ մեծաւ դողոլքի, կիրթ
ինն ծանօթութիւն յայանի գիտացեալ, թէ յայս աղդ
ձայնի՝ յառնէ տէր ի դատաստան։ Լու խրախուսին
յոգի արութիւն՝ զրահեալ պնտապէս սուսերաւ հոգ-
ւոյն՝ ճշմարտեալ մարտիկք ամենայն՝ ի ձև կանոնի
այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընարութիւն՝
գոչմամբ անկերպագրեալեաւ՝ համարիցն ազանց քա-
ղոզէ ի յօրինաւոր ասպարէզ՝ երկանկաբար նահա-
տակութեան։

7 Արաւ ահա փող աւագափող, համբարձաւ սո-
վաւ ճշ օրինութիւն. պատմեցաւ սովիմբ ամենայն
երկրի. հնչեաց ի լսելիս բաժանման հեթանոսաց.
ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին Ե-
սայեայ, և ի նոյն բարբառ առ հասարակ ցնծացուք։
Ցնդեցան ջրոյն առակաւ՝ ի ձեռն սորին՝ թշնա-
միք խաչին. անպատուեցաւ ճաշակին պտղոյ առաջին
փոյ-

փայտին. տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կենաց անուն անեալ. անարգեցաւ երկաթ՝ առ 'ի պէտս պատերազմի. իբր զարբուն՝ 'ի սանձս երիվարին մեծին նշանի՝ այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ. ամփոփեցաւ օծեալս ցպով հովանին երկնայնոյ՝ սուրբ իշխանութիւն մարդկային ձեռին։ Ա՛յլ դիւեաց 'ի քար սահմարին՝ մուրճ ինչ գործողի, իսկ յածակերտս խորան՝ փայտս այս նոր-իրեալ ընդ խաչին թիւոց սրբացեալ զօրէ։ Ա՛յլ 'ի գլուխս սմանցն, և կամ յեօթնիցս եօթներորդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց՝ և ընդ ծիրս եղերաց՝ 'ի ծոցս ջուրց բաղմութիւն ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սաստկութիւն՝ անարդել ճայթմամբ իմն ահագնով հնչեցեալ աւետարանէ։ Պատերեցան սուսերք սաստկողին՝ այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխաձևեալ՝ 'ի խոպս և 'ի մանկաղս։

8 Ա՛յլ արձագանք արձանաց 'ի խորոց ինչ դանչութիւն խիստս առաքեցեալ, և ո՛չ դժնդակասէս, ըստ իմաստակի ումեմն օտարի, զոդ վերաւորեալ. ո՛չ անանխորժ սրուք ընդ ունկն մտեալ, և ո՛չ զամանն ուղղոյն անկամակութիւն չար թնդեցուցեալ. ո՛չ ոսկերցն փուշ խրատուցման՝ յանձն բուսուցեալ, և ո՛չ մտացն սղայլ ապշութիւն առաջի արկեալ. ո՛չ զանդակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ, և ո՛չ քար ընդ վիրդս սալի՝ առանց քաղցրութիւն առ նոցն զարկուցեալ։ Պարսկարան անխորտակելի նորոյս սիոնի. մի սա 'ի սպասուցն կազմեալ-ածոց արարչաւանդիցն դլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէիցս՝ ընդ վերականացն՝ զուշա-

ւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշ տակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. նոր գործի շնորհի նը ճագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն այս առ մեզ, քան առ օրինաբանութի սաղմոսարանին՝ 'ի վը երկնչին։ Սկզբնապար նախընթացութե աղէ յարմար ջութակաց՝ բարետուիլ ողբերգարկուեց՝ բարացու ցական բամբռան բառացի բարառնութեց՝ սրինկ նը բոգ այլ ինն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ հնոյն փոխա նորդութիւ. ոչ հեթանոսօրէն ուրուճայն հնչման, և կամ հրեաբար խակախորհութե, զոր մարդարէն տերամբ ազդեցոյց՝ 'ի բաց արա յինէն, այլ զսա սի բեաց և կրկին պատուհեաց մաքրական տաճմամբ՝ ա հարկու դիւաց և ամ չար պատահարաց։

9 Եւ արդ ընկոյզ օրինութիւ յարգեալ գովեստիւ զայս տուր սրբութիւ՝ ինձ պահպանութի և քո փառատրութի. քո պաշտօն՝ և իմ գոհութի. անաղանդ արուեստ բարձրութե՝ արարչական փառաւորութեդ։ Ստոյգ ձայնդ այդ ածարեալ՝ ընդ պատուհաստ յօդիցս շաղկապութիւ, հանել 'ի հոգւոյս զպատիրս դիւաց՝ և զմուտս անիծիչ՝ և մեղաց ապականութիւ։ Լրաս ցես լինել զայս իր՝ նշանակիչ Ջնար Ջահաւորական՝ անՋրելի նամակ՝ Ջատագով անիսփանական տերու նական տնօրինականացդ։ Լհա պարգևեան սուլաւ՝ բարեգութ, աղաչեմ հիզոր՝ կրկին մեզ շնորհեան պահպանութի 'ի դիմամնորսիչ՝ յաներևոյթ և յերևելի։ Ընձեռեան մեզ ձեռն ամենալի, որ բանաս և մատուցանես պատրաստաբար բաշխմամբ 'ի մասունս բազմապիսիս, օդոց քաղցրութի. անձրևաց շահեկանութի.

պակասեսցին քոյով հրամանաւ այսու բարբառով՝
հողմ տապախառն, շնչումն ցաւաբերը, յարձակմունք
հինից չար խարդախութեց. սովաւ խափանեսցին ամ
դիմամարտութիւք զինուորութեց՝ դժնեայ մահնչին.
հալեսցին հացին և մեղցին յերջանիկ ձայնէ՝ օ-
ծեալս այս փայտէ՝ որդն և ուտիչ, և ամ նմանք սղ-
ցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ՝ ընդ մեզ պատե-
րազին։ Արմատացո՛ մեզ սովաւ տունկ երանութիւն՝
զյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպանութի՝ ստեղծիչ բոլո-
րից տէր արարածոց, զայս ծառ սաբեկայ, որ ունի
կախեալ 'ի դիտակ ոստոցն՝ զաւանդ նբ նորոդ՝ այժ-
մու փրկութեան ծաղկեալ քև՝ քրիստոս, 'ի պտուղ
կենաց անմահականաց։ Փախիցեն յանհուն հեռաս-
տան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բա-
րեղեկոյց ձայնարձակութիւն՝ նեսարք ներհակք ստա-
պատիրն ստորնականաց՝ բազմաձեռնեան խարդաւա-
նողաց։ Սերժեսցին սովաւ 'ի յանդոց պաղատոհ-
մական արօրադրութեանց մերոց սահմանաց՝ և 'ի քո
մշակեալ կենդանի երկրէ՝ վերք վատնիչք, և հոյլք
մերմնքեցուցիչք. կարեսցին սովաւ՝ յաւելուածք կրկ
նատեղ և անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չա-
րին 'ի մեզ յայտնելոյց. խակապէս վանեսցի սովաւ,
որք յերկաքանչիւրոյց բնութեցս մերոց վերերևին
ինքնատեղծութիւք՝ մերձաւոր դաւաճանողաց, յու-
մեմն օտարին վրիպակ մոտածմունս, և յայլումն դարշ
դոյութիւնք՝ անմաքուր զեռնոցն ապականողաց։
Փրկեա՛ տէր յս աղաչեմ զքեզ, փրկեա՛ բարերար.
կարկառեա՛ առ ի զաջդ ամենազով, և օգնեալ ինձ
սովաւ՝ զերծո՛ զիս յամենեցունց ընդդիմացողաց։

10 Սառնեսցի՛ միասցի՛ հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փո-
խարկել զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին
բանիդ արդիւնատրութիւն. Հարցեա՛ս մեսցեա՛ զայս
նեցուկ հրաշից քումդ աբանչելեց՝ 'ի սիրտս ծորեալս
և յոգիս լքեալս, և հաստատեսցե՛ս կազմեալ պնդա-
պէս՝ 'ի կայսումն ուղիղ անսասանելի. իսկ զանձն-
դոտան կակղացուսցե՛ս զարթնուլ և զգաստ լինել
յոգի հեղութեա՛ն՝ ածաւանդ քո պատուիրանին, ոչ
զպօղման և զմատեանն։ Յիշեցո՛ մարդասէր պատ-
ուեալս այս փայտիս՝ զերախտիս խաչիդ, որով զան-
ճառան ներդործեցեր. բարձ յինէն՝ կեցուցիչ, զգ-
վանդ պարտեցա՝ պանծալի լծակոք ամբառնալեաց
նոր տապանակիդ։ Բացցին կամքդ քո՝ հրզօր, 'ի յայս
ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց. լուիցեն
յայս մեծի բարութեա՛ն քումդ ակնարկութեա՛ն՝ ականջք
խլից. պարզեսցին 'ի ձեռն սորին՝ լեզուք համրացե-
լոց. լուսաւորեսցին 'ի սոյն՝ տեսարանք աչաց, հայել
մոլորապէս 'ի քեզ պշուցել անայլայլաբար. զղջասցին
դարձցին կազդուրեալ՝ կամք յափրացելոց. ընձեռել
ասցե՛ս տէր՝ տագնապելոյս՝ անձրև արտասուաց։
Զղեցի՛ քեզ սա մեզ՝ լուր ցնծութեա՛ն. ձայն ուրա-
խութեա՛ն. բարբառ բերկրութեա՛ն. նուագ հանդստեան.
նիւթ երանութեա՛ն. պատճառ փրկութեա՛ն. առիթ քա-
ւութեան. մերժումն վշտաց. խզումն խեղդմանց.
ընդարձակութի՛ն նեղութեց. համառօտումն խեթմանց.
հալածումն հեծութեց. թեթևութի՛ թառաչմանց.
յուսահատութիւն կարեաց. կարդադրութի՛ կրից.
սփոփութի՛ վհատմանց. բժշկութի՛ ցաւոց. ապա-
կանութի՛ հեղգութեց. ուշադրութի՛ անտեսիցն։

11 Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտոր նակ, և ի վերնաշուխ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաչու, առ Հայր քո օրհնաբան աՀաւոր անուն՝ ձգեալ մատուցեա՛ բարերար, Հոգւոյդ աւանջնորդութիւն միանալ ի քեզ անընդմիջելի. որով և սէր միոյ՝ միայնոյ և միասնական երրութեանդ՝ և անեղծ արարչութեդ՝ ի կենդանեաց և յանշնչակա նաց Հատելոց՝ վայելչական գոՀութիւն փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ա էրոպին յաւելուած Հիլին Հեծուլեա՝ նորին Հանողի, առ նոյն աղերս ուղղեալ։ Ի խորոյ սրտից խօսք՝ ընդ սոյ։

* Բան. ՂԳ.։

Աղօթք Լուսաբանչին վասն սրբուհոյն Դեռոնի։

1 Սուրբ աՀաւոր անուն՝ բարձրեալ անպատում. անձկութեան փափաք յարախորժելի. ի սրբերդենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ՝ բնակեալդ ի սրբում. լի և ամենազեղուն բարութիւն առատաձեռն աննուազելի. լոյս բարի, և ծագումն դովելի. երկրպագեալ փառաւորելի, աՀեղ և անզննելի. ամէն և յամենայնում։ Այսու բանիւ դաշամբք յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութեան՝ Հնչզօր, այո՛, ամէն, ալելուիայ. գովեալ թագաւոր Հանուրց. ահ բոլորից. ստեղծիչ գոյից, և տէր կամարար. միայն առիթ պատճառաւորաց. փրկիչ և օծեալ մշտապաշտելի։

2 Ասոմ մինչապէս թարգմանեալ 'ի մեզ զայս գանձ
անվնաս՝ և հարստութիւն անփոխադրելի՝ յաւ քան
արքայ երկնաւոր. որում դողութիւն մեծաւ սպասեն
անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւք,
կրկնեալ քեզ յօժարութիւն 'ի հաճութենէ անխոտոր
մատոյ՝ ծունր գոհութիւն. ստեղծօղ էութեց, որ են
'ի տեսման և 'ի ծածկութիւն։ Որ Եսդ և էիր միայն
բովանդակ՝ ամենեին անպակասելի. առեր զմերս իս-
կապէս համայն, զի 'ի լրութիւն քումմէ լցուսցես.
օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ
անքննութեամբ ողորմութիւն մեզ 'ի փրկութիւն, 'ի
փառս և 'ի գովեստ անհաւ բարձրութիւն՝ ահաւորիդ
բարերարութիւն, սկզբնաձիր օծմանս շնորհի՝ մեծա-
խորհուրդ հրաշազարդութիւն։ Զանգի լոյս քո մեզ
ծանուցեալ՝ հառագայթ անհաս. ծագումն անսահ-
մանն. արեգակն անաչառատիպ. աստղ սահմանիչ եր-
կակշիռ տարրութեանց. հրաշք ոսկի՝ և լոյս հետև-
մանց, որով 'ի ցոյցս խմաստից եկեալ տեսութիւն՝ բա-
նիս այս յարմարութիւն, տօնեմք պարերգութիւն հրեշ
տակօրէն յուսակամաբար՝ փրկչասայելուչ կնդրիա-
լանկեալ զպարգևաբաշխն առատաբարութիւն ամենիմաս-
տիդ՝ յիւղ զուարթութեան անբիծ դաւանման։ Զանգի
'ի սկզբան անդ՝ կապուտցելոյ ողորմելի տիրականու-
թեամբ՝ 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ
սկզբնատեղծ՝ և հնայեալ յաւէտ մեղացն գեր-
մամբ, 'ի մահ գրաւեցաւ. կապեալ ընդ եղծման ա-
պականութիւն անզերծ հանդուցիւ, 'ի ծառոյն պատ-
ճառաւորեալ՝ յանկումն անյարիր ամենակործան գը-
լորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի
մատ-

մատնեցաւ. իսկ դու գլխած տէր ողորմութեան, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր, և զի չէիցն ակնկալութեամբ՝ չեկաց յոր ինչ էրն, որով անկարողանայր իսկապէս տեսանել 'ի լոյսն վերին անմատոյց գերակայութեան անսահմանելոյդ, ոչ միտափայլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ոստնալիրծ միթին արհաւրաց՝ ձեռնկալութի ձիթոյ՝ շարամանութեան նիւթոյ պատրուակի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեան ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կաղմեցեր. զի որ 'ի ստուերս մահու տարագրեալ գտաք՝ կանխակորուստ տնկումն պարտեաց, 'ի պատճառ իրին՝ ազդակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորութիւն. ոգ և փայտիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն՝ միաւորեալ 'ի փայտն կենաց։

3 Լուարդ՝ որպ՝ ոչ է օր լրմամբ՝ առանց գիշերոյ, և ոչ տնօրէնութի յարկի՝ առանց ձիթոյ պէտոյից խնդրոյ. քանզի իբր օրինակն հաստատակայնն ոչ նոսիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութի լուսաւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շընորհին՝ ընտրութեամբ անխմանալեաւ՝ զաներևոյթ հոգիս միութի 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս պայծառացուցանէ. Ի որպ յիջումն լուսարանի՝ ամ աւազանին՝ լուացմամբ մաքմանոյն՝ զանձինն հաւատամբ առնուլ սրբութիւն, այնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութի սովիմբ և 'ի սոյն՝ համարիմք ունել ամէն աներկմտելի.

Լու-

Լուսոյ հրամանդ տէրունական օրինաբանելի՝ զքաջութիւն մեղաց ախտացելոցն նախաւճռեալն • իսկ ոչ հաւատ ունողացն առ այն բժշկութիւնն հրաշալի՝ յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի՝ հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատելոյ, սոյնպէս իւրոց այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս • իսկ ըզ-նեարքին մարդս աներևակ՝ ծածկապէս մատեալ նոր կենդանածնէ։

4 Պատկեր պանծալի այս զանգուածս նիւթոյ՝ աշարաչիդ երկնի • քանզի որք զնչուղոյն կրեցին օգտութի՝ որ յողորմութէն շահլնծայութի, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմիս տէր • քանզի ոչ սիրոյն անուն կցորդիս ՝ն ծ, նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութենն որ առ մեզ։ Ա՛ ՝ն հագոյն մեծութէ խորհրդոյ յարմարաւոր գլխակերպութի՝ այս ճարպ պարարտութէ՝ երկրի թանձրութէ՝ հողանիւթ դոյականութէ • զի ոչ սոյն մասն 'ի կենդանուոյն՝ ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ՝ ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին պտուղ որոշիւր, նոյն նմանութէ և ս ատանօր՝ իբր ըզ-զօրութէ՝ ան մատչելի յայս աւանդ՝ հաճութէ էիդ ՝ն վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարազատ զուգաճանապարհ, արարողիդ պահեալ և ուխտեալ • քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ճենճեր ինչ զմարթութէ՝ օրինակ հոգւոյս իմոյ և կարոյս՝ ընդ անդամանթիւս մնոյն ծախի, այլ արքայութեդ վերնում վիճակի՝ արուեստական բաղմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական միտաբոբքոք անապատելի։

5 Ա՛յէր մատչելի 'ի նախագահութիւն արու անդրա-
նիկ՝ դատիչ քննողաց, եթէ ո՛չ օծմամբ ինչ
նշանակէր. ո՛չ քահանայութիւն 'ի յանկոխելին տեղի
ձեռնարկէր, եթէ ո՛չ այսու կատարեալ լինէր.
Յակոբ զքարն պատկեր վիմին՝ 'ի խորհուրդ երկար՝
խորանին ընտրութիւն՝ օծմամբն տպաւորեալ կերպա-
ցոյց. առ որ զիրումն անձառ բարձրելոյդ՝ տեսութիւն
սանդղոցն յարմարութեան, և զիս 'ի վեր տանելոյն
անդուղեկցութիւն, զարձանն իւղեալ կառոյց նպա-
տակ՝ 'ի ցոյցս ապառնեացն յիշատակի. Հարանեան
քահանայութիւն պայծառութի՝ հրամանաւ մեծիդ
այ՝ օծմամբն ճոխանայր. որով 'ի գլխոյ անտի 'ի մը-
րուանն զեղեալ՝ գերափառ իւղոյն՝ զարմանազան կեն-
դանագրութիւն, ըստ սաղմոսողին, զիսառայ նախնւոյն
առակեր զանդրադարձութիւն, և զինորհիդ կենաց
արքութիւն՝ ընդ մեզ խառնութի. Յադաւորութի
ո՛չ էր պանծալի անդանօր պատկերաւն ստեղծագոր-
ծիդ, եթէ ո՛չ եղջերբ իւղոյն օրհնութիւն ձեռնադը-
լեալ՝ պսակաւ պճնութիւն թագին՝ յանուն քո քա-
գլուխ ամբառնայր. Լու զիսիդ զնախանին վերհից մը-
ռացոյ՝ զծառայն մեծիդ՝ և զիերպարանն անպարա-
գրելոյդ. ո՛չ ահա մելքիսեդեկ՝ յօրինակ ճշմար-
տիդ ահաւորութիւն՝ 'ի ձիթատանեաց լերինն, ուր
յետոյ ոտք մարմնացելոյդ այ զերտեղեալ կացին, 'ի
վերնոց անտի հրեշտակաց՝ 'ի պաղոց տեղւոյն իւղե-
ցաւ. ուստի շերմի սկզբնահօրն պաշտպան՝ եպիսկո-
պոսական արքայապատիւ ճոխութի՝ 'ի քէն հանդեր-
ձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լրմամբ հա-
մայն խակութի ադամային կենագործութեդ.

6 Եւ արդ՝ քանզի քո՛ են շնորհք, և քեզ վայելեն
գոհաբանութիւք՝ օրհնաբանեալ որդի՛ այ, դու
ինքն յարմարեա՛ բարեհնչմամբ տպաւորութիւն զաղաչանս
իւղաւորականս՝ խնկապատարս՝ զմնալիրս՝ պատճառ
քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան.
մատո՛ տէր յա՛, վերացս աներևութեան՝ զայս ձէթ լու-
սանիւթ. և սրբի՛ ի սոյն խարանս խոցոյ մահացու՛ի՝
զկաթո՛ւած օրհնութեամբ իւղոյդ փրկութեան՝ անապակ
գիներաւ սիրոյդ, միութեամբ արարչականաւ պատապա-
րեալ պատանաւք խնամոց. զի յիշատակարանս թարգ-
մանօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յար-
մարութեամբ՝ ի թեւս հոգւոյդ զկարգ իւր գտցէ.
ի՝ վերդ աւթի՝ հոգի՛ քո բարձրեալ՝ յայնմ օրէ խա-
ղաց, յորմէ օծութիւնն նո՛ւիրեցաւ. Սուրբ յա՛յր
յայլ՝ և ի մարգարէս ոմանս անտուստ խակ դրեցաւ,
յորժամ օծումն ժամանեցաւ գաղաթան նորին.
Ընթայութիւնն ասորեստանեայց՝ օծմամբն դրաւեալ՝
մատուցաւ ի կցորդութիւն տանն իսրայէլի. Այսպէս
ոմանս նշանաւորս վերս և երևելիս՝ ի խժականաց
բարբարոս ազգաց՝ իւրս այս կենսացնցուղ ցողով
անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ ի յընտանութիւն
հպատակութեան մեծիդ այ. Զանն որ առ կիւրոս
երկնաւորին պատո՛ւասիրութիւն՝ զօծեալն ձայն՝ նմին
մեծ վարկաւ. Զայն սաղմոսողին՝ դեր քան զմար-
գարէութիւն՝ զօծեալն անուն նախասյարմարեաց, կա-
նոնապակ ընդմիջարկութիւն պատո՛ւէր աւանդեալ,
մի՛ մերձենայք և մի՛ մեղանչէք. Եւ հեղեսս առա-
քելութիւն՝ ճշմարտին հրամանատարութեան, նշանակ իմն
հանելոյ ի պաշտամանէ անտի բահաղու, զօծելութեան
իսա

'ի քորեք աղեաց յէուայ և աղայելի։ Իսկ թա-
փեալ անուն փեսայիդ՝ 'ի հոգելից բանից խմաստնոյն
վերամկայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ։ որպէս զի հոգի
այ յաւէտ պատկեր և նշանակիչ, զի փոքուս զմեծդ
կերպագրուի. քան նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք
առմամբ քո շնորհիդ։

7 Եւ զի՞ ևս երկարս՝ պատուհասածօրէնս՝ բացակա-
նագոյնս՝ դիտագրականս և առակաւորս շարա-
գրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մարդասիրական
բանաստեղծութիւն։ սէրդ և կենդանարարդ՝ արա-
բիչդ երկնի և երկրի՝ 'ի յօժմանէ անտի սկսար քա-
րոզել զաւետարանն արքայութիւն։ վկայեալ անտուստ
'ի յոհանէ՝ օծեալ և դառն այ՝ բարձօղ մեղաց աշ-
խարհի։ Զ 'ի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան՝
հոգին էր քեզ իսկաբար լրմամբ, և ածուէն խառ-
նուի բովանդակապէս, այլ անուանն պաշտի խորհրդ-
դեամբ շնորհին հրաշափառապէս աղդելոյ 'ի սբան,
զի զտարկուի ադամեան մարմնոյն՝ մեծանալ յաւէտ
այսու յորջորջմամբ պատրաստ արասցես։ Բացեալ
զառաջս մարգարէուքն եասցեայ՝ դու ինքն ածու-
թիդ մարդացեալ՝ ընթերցար, հաւատարիմ առնել
զբան ծառայից քոց՝ ասէր։ և իբրև ծանուցեալ է-
ղեր օծութիւնն 'ի կարդ անդ բանին, թէ հոգի տն
'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա փակեցեր 'ի
հանդիսատեսաւն օծելութիւն՝ զորքանութիւն երկպքան-
չելուոցն յայտ արարեալ խորոցաւ սահմանի՝ ընդար-
ձակ հեռաւորութիւն մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթ-
ուածով ինչ շնորհազարդեալ, և զքոյդ՝ իսկութիւն
ընդ հօր՝ և ի հոգւոյդ հաւասարութիւն թարգմանեալ։

'ի

Ի նախաձանօթ մերակերպութեանն՝ պանծալի ինն դուկեստին օծեանն կոչմամբ՝ ի հրեշտակացդ փառատրողաց՝ արարածոց երկրի ծանուցար։ Օ՜ որ մարդարէն կանխաւ դուշակեաց զ՝ի յորդանան, և յընտրեալն լեառն Թաբօրական՝ հայրենի ձայնիդ եկաւորութի, թէ որ պատմէ՝ ի մէջ մարդկան զօծեալ իւր։ Օ՜ որ սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հը զօրիդ փառաց զայս պատիւ՝ առ՝ի զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ՝ ա՜ծ՝ ա՜ծ քո իւղով ուրախութեան։

8 Հոգի երեսաց մերոց՝ որ քո։ որ է օծեալ անուանդ իսկոյն, որով զնչուն կենդանուն՝ ի դէմս մերոյս՝ բարերարութիդ քո աղդեցեր։ խնամատութիւ ուսմն երջանկի՝ մարդասիրութի խոստովանելի, ասելով առ ոմն, թէ եդ վկայութի առաջի՝ ոն օծելոյն։ զնոր աւետեաց վկայելով, թէ կոչեսցի անդամ ոչ առի յամ մեղեաց։ Արդոյն երդ՝ իւղեփեցչական դինի՝ զաստուծով ծանուցեալ զնորհուրդն՝ ի դովեստ հարսին՝ սբ եկեղեցւոյս՝ զմուռս առաքինութեան հանդերձ՝ ամ առաջին իւղոնն։ և ևս զմուռս և կնդրուկ մաքրութե վարուց՝ ամ փոշեաց անուշեց՝ իւղովքն զանգեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց։ Դանիել զկենսատու մահու քո՝ ք՝ա թագաւոր երկնի, ի վերս քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանադրեալ վկայեաց յայանի, թէ զինի վաթսուն և ինն եօթներորդացն՝ սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց։ Դրագակիր աշտանակն զաքարիայ ադդովայ՝ որ՝ ի բարեբերեայ՝ իւղոյն բարեբաշխ բացատրութի՝ ի մասունս եօթանց

առաջադրութեց գնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անտի զօրութիւն անեկամնաբար վիճակաւորեալ, զ'ի քոյդ լրութէ 'ի մեզ փրկութիւն և օծելոյն դերաբնապէս նախազեկուցեր։ (՝) որ ըստ օրինին անտուսա զուշակմամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամենընդեալ ինն կրթութիւն սովորաբար մատուցեալ լիներ, պանք, բաղարջընծայք, և նաշիհք՝ իւղովք խառնեցեալք, և զուարակք եզանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւմամբ յաղդակից ճարպին 'ի յարիւն, այսր խորհրդոյ՝ առ ձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ միծին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ այ։ միայն դու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութեամբ համոյն էութիւն՝ խակապէս լրմամբ ամենի անդուկասելի։

9 Այս զի՞ և ես ինչ բազմաղատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ՝ քաղցրութիւն։ իմանալ քեզ զայս՝ թէ զինչ ինչ է իւրն, եթէ ոչ՝ զմխրութիւնն 'ի փայտն պարտեաց՝ սովամբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ դործեսցես։ Այս զինչ պարարտութիւն, եթէ ոչ՝ զկերակուրն մահու՝ սովաւ մատակարարեալ 'ի սանէ։ Այս զինչ օծութիւնն, եթէ ոչ՝ զմխրոյն թշուառութիւն՝ 'ի ձեռն սորին փոխարկեսցուք 'ի պայծառութիւն յաւէժ ուրախութէ։ անուամբ քո փրկեալ յոգի զօրութէ՝ հօր անուանեսցուք։ Այս զինչ արդեօք մարդարէին հոգևոր բղձականութիւն ամենատենչ բաղձանացն էր իմանալ, որոյ ծերութիւն առակի 'ի ձէթ պարարտութեան, և կամ օծանելն իւղով զբլեսոյն վերամբարձութիւն, եթէ ոչ՝ զնոր

խաղ-

խարդախութիւն սդոյն ստստկութիւն 'ի մահ կործան-
մանն՝ կենագործեալ դեղովս այս կենաց՝ պատսպա-
րեալ օժանդակեսցես։ Եւ զինչ Հրադին լուսա-
ւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ՝ 'ի մէջ իմն անյու-
սութիւն մեղացն միտի և կռապաշտութիւնն խաւարի՝
կերպակցապէս միութիւն 'ի յիս եմմանուել։ Եւ կամ
զինչ մարդարէն ասաբանեալ 'ի սփոփանս զուար-
թարարս օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս
ոմանց աւետէ, օծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ։ և
կամ իմաստունն՝ 'ի դիմաց հարսինն՝ ասէ օրիորդացն,
հաստատեցէ՛ք զիս իւղով, և գեղեցկաղարդ խնծո-
րով յարկեալ ծածկեցէ՛ք, և 'ի պարտէզ իւղենեաց
տածեալ գրգեցէ՛ք, եթէ ոչ՝ այսր ահա ընտրական
նիւթին՝ հոգւովդ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք
զանխմանալիդ 'ի մեզ բարձրութիւն՝ գովեալ։
Եւ արդ քեզ միայն՝ խնամակալ, պատճառ բարի բը-
նաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազ-
կացս՝ երկիւղանոցս գործակցութիւ՝ սրտիս հեծութիւ՝
լեզուիս և շրթանցս ձայնարկութիւ, լուր ողորմու-
թեամբ՝ տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ
կարդալոյս։ շնորհաւորեալ այսու պարգևաբ՝ գոհա-
բանութիւ քեզ վերընծայեմ՝ հրաշալի աստուած բարձ-
րեալ անչննին, անփակ փափաքմամբ միշտ համբու-
բեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհ-
նեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութիւ։
Ընձեռեա առաւել բարերարութիւ՝ խսպառ վրիպե-
լոյս։ տուր յոյս քաղցրութիւ՝ ոչ մասին միոյ մատուց-
մանն լուսոյ՝ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել
քեզ բարի զնրբութիւ ծածուկ խորհրդոյս՝ գրգռութիւ

խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ դաւթի, ընկալաք
ա՛ծ զողորմութիւն քո, և զծածուկս գաղանեացդ ան-
տեսից՝ իմաստուք քով յայտնի արարեր։

10 Լուարդ՝ մեծութիւն քեզ՝ ամենակալ առատա-
ձեռն աննուազելի՝ ամենափոյթ առ ի գթութի՝
մշտայօժար ի բժշկութի, զի միացուցեր խառնեցեր
ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս՝ ըզ-
հրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութե։
Քանզի զոր երկին եմ բարձանց՝ երկրիս լայնութ՝
և անդնդոց ներքնոց խորութ՝ ծովուց բազմութ՝
ոչ զօրէ տանել, այլ իւր զդայնն ի մեծէ բերի, ի
փոքր գոյս տեսականեցեր զօրութ՝ սահմանեալ
ճշմարտապէս անհրաժարելի. զի մի՝ նորոգ ինն ե-
րևելով յայլ էութէ՝ առ աչս հարևանցի երևակա-
նութի ինչ վարկանիցի՝ վերաւորել, քան թէ բժշ-
կել անընտրաբար զկարծիս մտաց։ Քանզի ոչ մար-
մին՝ քեզ հաւաստապէս՝ օրինաբանեալ որդի՝ այ, ի-
կութի և ոչ օրինակ՝ ի յարդեանցն ցորենոյ արար-
ջապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զա-
րիւն խաղողոյ, և արդանդ կենաց հոգևոր ծնընդ-
եանն՝ զառատութի ջուրց յոլովութե, նոյնպէս
հոգի անմահիդ փչման՝ սովաւ և ի սոյն արդիւնա-
տրեցեր երկունք կենաց, որոյ կերպարան՝ յառաջ ե-
կելոյն, և ոչ հեթանոսութ է փոխարկութի. որպէս
ոչ տեառնադրութե խաչական փայտի ինչ երկրորդ-
ութի՝ նստելոցս յերկրի խաւարի՝ ըստ նմանութե
քո ա՛ր՝ ծագեցեր։ Քանզի յայս կերպարան շնորհի՝
զանպակաս լրութի անհասիդ յայտնեալ աշխարհի լու-
սաւորեցեր, զի մի՝ տնանկն կարօտասցի՝ և մի՝ ընչեղն
բարձ-

բարձրամտեսցէ , ըստ օդոյ հաւասար բաշխման , և լուսոյ արեգական տարածման , և ջրական վտակաց զեղման • զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութիւն՝ փոքրունցն առաւել , քան մեծամեծացն ։

II Եւ ակ այս նիւթոյ տեսաւորուն խորին խորհրդոյ՝ և 'ի բնութեան անտուտ հրաշապէս ունի զթարգմանութիւն • ոչ զի ոչ երկմիտ ինչ շուարտութեամբ՝ անհաստատապէս զտեղի փոխէ , և ոչ նենդողաբար զբնակութիւն ինքեան լքանէ • քանզի ոչ վերջնակաց նոգ աճառովք հերքի , և ոչ յընդդիմակցէ ուսմբէ ողողեալ արտաքս ելանէ • Այսն զի ոչ պատահումն գունոյ յէութիւն մարմնոյ՝ անփոփոխ իմն և անհրաժեշտ , որ գոլ ոմն գոյացուցանէ՝ և ոչ գոլումն ապականէ , այսպիսեաւ իմն յարմարութիւն՝ իւղոյս զօրութիւն անդատին 'ի յիւրոց անտի կերպարան զառեալն ունողի՝ միտնական զուգութեամբ ընդ մեզ իակ կցորդեցեր՝ տէր յ՚ քս , ընդ իրին գոյի՝ և զօրինակն լծակցելով • քանզի զանիմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից՝ 'ի դէմն բերեալ կերպաւորեցեր • 'ի պտղոց երկրի ճնշեալ մզելով՝ զարմանալեաց հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատրաստեցեր ։ Այ՝ անաւանդ զի ոչ յոլովից խառնից 'ի մի եկելոց խրմբակցութէ զանազան ծաղկանց , ըստ հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլութէ , զայս իւղ օծութէ հրամանատրեցեր , այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնագոյս ձիթոյ • Որ թէպէտ անճառ են համեղութիւք քումդ անուշութէ , և ընդ օրինակաց իրիք

ոչ

ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի՝ և շուշան հովտայ՝
և նարդոս ընտիր՝ և եղեգնախուռնկ խառնեալ հալ-
ուէին՝ յարմարութիւն հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ
և աղնիւ գինւոյ, ոչ սոսկ՝ քան թէ իւղոյ միութիւն
պատշաճապէս օրինակեցար. փառաւորեալ անուն-
անքննելին, որ զամ ընուս, և յիրի իմքէ ամենևին ոչ
կարօտանաս։ Ուստի ոչ շփոթելովք ի հակառակաց
բռնադատութեաց՝ բաժանեալ կամայ՝ մեկին առակի,
այլ ի սիրոյ հաւանութիւն ածապէս ի մէնչ պարարիս,
վա՜ մեր ըստ մեզ՝ առ ամ վայելչական նմանութիւն օրի-
նակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր ջերուցիչ,
տապ սիրոյ առանց մասին ինչ շնչման անգթական
սառնացրտութեամբ՝ այս զանգուածս նիւթոյ՝ կաթուածոյ
ձիթոյ՝ մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յիրաւի
սուաւ ի յաղթ է միանալի։ Ընդ սողոմոնի օծելոյ որ-
դեգրեցելոյ՝ ՝՝՝

զարմանահրաշ օրհնութիւնքս լուսոյ՝ զհրեշտն և զխուժն՝
զնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զդուժն դժնէաբար՝ և զարհօրատեսակ շանա-
դլուխն սոսկալիթխար , զտէրն ազատ՝ և զստրուկն ծառայածին՝ քրիստոսեան արարել անուամբ քո կրն-
քէ , և հոգւոյդ սրբոյ ընծայէ , և հօրդ երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ ։ Հաղմօրինակ են սուրբ-
արուեստից տեսմունք յարմարեցեալք , նախ նիւ-
թոյն՝ ապա զօրութեն ։ Զանգի իբր անօթ փայտե-
ղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի՝ և անօ-
գուտ եղեալ անպատուի , նոյնպէս և մարդ՝ ոչ իւ-
ղեալ սուրբ՝ հեշտեաւ խորտակի , և մեկուսի եղեալ
առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի ։ Պատն սա քո՝ յիսուս ,
որով զհրաշալիսն զարմանագրես . քանզի իբր անդը-
ծելի կազմութիւն կարծր պահպանակաւ՝ ամենապատ-
րաստն շրջարկութիւն պաշտպանեալ՝ ծածկէ յայլա-
գունակ խրթնի եկամտից . մինչ զի այսու մաքրութիւն
թաթահեաւն 'ի սմա՝ ոչ ներկի արեամբ , և ոչ տրխ-
րատեսակ երփնիւն այլայլի ։ Այս զի և թափանցանց
իմն խառնութիւն հոգեպէս՝ ընդ թանձրութիւն մերոյս
գոյութեան մտեալ անցանէ . զի թէ անէծք սաղմ-
սողին՝ ձիթոյ առակաւ՝ ընդ ոսկերս ջրին համայ-
նիւ բաշխի , որչափ ևս հոգիդ սոյն Ճարպով լուսոյ՝
զաներևոյթ ներքնոյն տեսակս կենդանարծեալ ողջա-
ցուցանէ , ազդումն տուեալ 'ի խորոց անտի շնչման
հաղագին՝ մինչև 'ի սպառուած ծայրիցն երերաց՝
զընաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մահուն արկա-
ծից . քանզի կենդանական զօրութի քո միշտ ահաւոր՝
ո՛ր յա՛ քո՝ 'ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ ։

13 Եւ այս օծումն բարետեսիլ՝ և առ բռնամարտիկ
մերկամրցանակ ըմբիշն՝ իբր զօրաւոր հնարից
կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռաց ներ-
հակին՝ օրինօրհ պաշտի, դիւաց և ախտից հղօր ա-
հարիւռ։ Քանզի յոքնապատճոյճ պճնուի բանին եղե
կիսելի առ իմանալին փարաւօն, հենդնաւոր առակա-
գրքուք՝ ողբականօրհ շարաչարմարեալ, յորժամ եղեր՝
ասէ, և հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր
արձանքն հրեղենք հաստատեալ կառուցան։ Որոնա-
բանեալ ահաւորութիւն ամենավայր ձեռընկալութիւն,
որ միշտ անձնու ես բանից՝ և դերազանցեալ քննութեց.
որ աւետարանաւն կենաց խնկիս յարակոյ՝ իբր նորա-
ծին օծեալ 'ի քաղաքի դաւթի. և 'ի քահանայապե-
տին հարցմանէ, դո՞ւ ես օծեալն որդի օրհնելոյն. և
յերանաւորն դաւանուիս պետրոսի՝ օծեալ միոյն որ-
դի այ կենդանւոյ. և յապահաւատ քննողացն, եթէ
դո՞ւ ես օծեալն՝ ասեն, ասա՛ մեզ համարձակ. և 'ի կա-
նոնականացն քոց՝ հաւատամք յօծեալդ ուսուցիչ և
տէր ամի. և հերովդէս յառաջ քան զսոյն՝ զօծեալդ ա-
նուն յայտնապէս հարցեալ. և զնարդ դրեն՝ դու իսկ
ասացեր, զօծեալն այ զտէրն դաւթի՝ զանսկիզբն որ-
դի՝ ժամանակաւ որդի։ Քանզի այսպէս ընկալաք վայ
ելլաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի ծայ-
րըն կատարման խորհրդական կոչմանն՝ վերնակ քրիս-
տոնէից նախապատուութիւն։

14 Զինքան ունի ահաւորութիւն՝ միանգամայն և
սրբութիւ՝ իւղաւորական խնկաւորուի՝ սոսկալի
անուանս օծութիւն, մինչ զի՝ որպէ՞ չէ համարձակել
ուրուք յերկրայնոցս ածս անուանել՝ այլ ածսյին,
նոյն-

նոյնպէս ոչ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն ան-
ձին համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի նախ-
նայն մեծութիւն մկրտչին՝ ջուրբ զհոգին հրաւի-
րողին, քանզի չեմ ես ասէ՝ օծեալն, այլ առաքեալ
առաջի նը։ Սոփաւ շրջէին՝ ոչ բանն ազդէ աւե-
տարանչին մարկոսի, առաքելականացն լծակցութիւք,
իբր ազդակից հարազատ ձեռինդ ոչ՝ այսու վարե-
ցեալք. քանզի իւղով օծանէին՝ և առանց մարդ-
կային հնարից՝ անուամբ քո բժշկէին։ Սասն զի ոչ
խաւար ի լուսոյ՝ և ցաւ յառողջութենէ, դիշեր ի
տունջենէ՝ և մահ ի կենաց, այսպէս և ի սոյն իրէ
տիրապարդևէ՝ եամ չարին երևոյթք մերժին խափա-
նին և բնաւին ամփոփին։ Քանզի ոչ ճանաչք զա-
զերք՝ և փոքր զեռունք սարդից և ունկնամտից՝ իբր
ի դեղոց մահու՝ յայս նիւթոյ սպառեալ պակասին,
սոյնպէս լրութիւք շնորհի օրհնութիւն սոյն իւղ զօրա-
ցեալ՝ և զայսս վանէ, և զմուրհակս չարեաց ջրէ,
և զվճիռ մահու պատառէ։ Ոչ է աւաղան կատա-
րեալ՝ առանց օծման օժանդակութիւն։ Եթէ աւա-
զակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ
փրկութիւն մատուցեալ տոհաւ. եթէ անճարակ վիրացն
յակոբայ և իսրայելի, սոյն իր պատուական յիշատա-
կեցաւ. այս իւղոյ փափաքեալ դաւիթ՝ իբր ձիթենի
պտղալից ի տանն ոչ՝ յուսով յարակայի, լքեալ ըղ-
թըփատուին անդատին՝ զկրտութիւն շնորհ գուշակէ։
Եւ զի՞է ինձ զայսմանէ ճառել, և հանդիսին կարծել
հասանել, որև ոչ վերինքն զօրեն ձեռնարկութիւն ինչ
բանի՝ զսոյն խորհուրդ ի մասնաւորի ինչ ճառելով
նշանակել, թողութ՝ասել՝ թէ յիսկութիւն։

15 Դառք քեզ միշտ և յամի անմոռ թագաւոր՝ ի
յայժմու երգեցեալ օրհնաբանութեան, զոր արա-
րեր և կատարեցեր առիս՝ բարեխնամ գթած և եր-
կայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթող. ան-
դադարելն ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև ի
լրումն ածեր զիսկութիւն ճշմարտապէս։ Դու լոյս
իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակեր-
տացն դաս՝ լոյս անհանգեցեր, որով զարարածս ամ-
երկրի ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լցու-
ցեր։ Ընկալար զնշանն անուշութեան յումեմնէ՝ ի
յոտս, յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ.
և ի միւսմէ պոռնկէ՝ ի գլուխ, նշանակ սիրոյ գթու-
թեանդ առ մեզ. մշտափափաք բաղձանօք անսահման-
նելիդ ի սոյն հոտոտեալ, մինչ զի ուխտիւ անփո-
խադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյին
նահրաման պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ
քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարդաւորութի, զար-
մանս հրաշից լսողացն՝ առ ապառնեացն յուսադրութի.
Դուք օծութի ունիք զնբոյն՝ ասաց երջանիկն առաքե-
լութեց, մեկնեալ զնորհուրդն որ ի մեզ զեղեալ՝ յա-
ռաւելութէ կենդանարարիդ անպակաս բովանդա-
կութե։ Ուստի յաւէտ իմն յարմարաւոր և հանգու-
նատիպ՝ առ ի մանաւորն նմանութի լուսոյդ և հոգ-
ւոյդ սբոյ՝ այս կաթուած օրհնութե ի վերնոյդ բարե-
բաստութեց՝ անսպառաբար սրսկեցեալ ի մեզ, և ասի
լոյս, իբր զնախաթիւն գոլ ստեղծուածոց՝ և արարչու-
թեդ պատկերակից, որով զնաւար մթութե մեղաց
հալածես. իսկ հուր, զի յամ տարրս արարածոց հաւա-
սարապէս ունի զուդութի՝ ըստ էականին կշիռ բաշ-
խու-

խուԹԵ, ծածուկ և յայտնի, լռեալ և ծանուցեալ. և
եԹէ ոչ ԸՀարցի 'ի Հակառակէն, ոչ յինքնասաստ յՕ-
ժարմտուէ բաղձոյ բորբոքիլ։ Պարձեալ և օծումն,
զի արքայաքար որդեգրեալ՝ ընդ քեզ 'ի ժառանգուլի
Հօրդ մատուցեաս՝ ողորմութեդ ազգակցաւ նկարեալ
'ի մեզ՝ անեղծանելի 'ի Հանդերձեալ փառան փայլեաս-
ցուք. դարձեալ և Հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէ-
ուԹենն՝ որ 'ի բանասարկուէն ներդործուէ՝ նորոգ փը-
փոխմամբ Հոգւով և ճշմարտուԹիւն՝ Հօրդ երկնաւորի
երկրպագեսցուք, բևեռեալ ընդ քեզ յուսոյն Հա-
ւատովք՝ ամենապարգև։

16 ԶՀա արդարև յաւէտ խնայեաս՝ իւրոյ այս լու-
սապատար խնկալեր՝ վերնականիդ սիրոյ տեսուի։
Զորոյ և պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառ դՕՀա-
բանուԹեն՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք Հանդերձ
'ի քո յիս՝ ածէ, որ և կնքեաց զմեզ՝ և ետ զառՀատատ
չեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր. և դարձեալ մի՝ ասէ,
որոմեցուցանէք զՀոգին սբ ոյ, որով կնքեցարուք յաւ-
ուրն փրկուԹ։ Պատկառելի և անվանելի օծումն
յորՀորդուի՝ իբր 'ի նորումն՝ յաւէտ քան 'ի հնումն.
քանզի բանն դաւԹեան սաղմոսին՝ զտիրական տնՕ-
րինականացդ սկզբնաւոր էրիցդ խորՀուրդ՝ ճշմարտա-
բար վերասահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք
ժողովրդոց՝ վասն տն և վասն օծելոյ նր։ Պարդարէուի
մեծ սպաւորեալ զանարբեալն արեանդ պարտիս՝ Հրէա-
խումբ չար մոլեգնուԹենն՝ որ 'ի արդ յանդգնուԹի,
ոՀէ որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տն՝ և քաւեսցի. քանզի ԹէՀև յաղագսոյն սպանաւ սաւուղ, այլ
ոչ խապաւ մերժեցան յամօԹ և 'ի նախատինս աղգայ

օտարաց , մինչև արեանդ ոյ հաղորդեալ գոան։
Զ. ռաւական մեծ յիշատակի ապագայիցն ժառանգու-
թիւն՝ աղօթանուէր աղերսարկուն ասել սաղմոսիւն, վա-
դաւթի սիրելոյ քոյ՝ մի դարձուցաներ զերեսս քո յՕ-
ծելոյ քումմէ . և դարձեալ, նայեա և տես յերեսս Օ-
ծելոյ քոյ , և արա ողորմութիւն ընդ օծելոյ քոյ։
17 Զեռինդ քո՝ քո՛ , երկրպագեալ պարդևատուին՝
այս հիւթ լուսակիր . քանզի ոչ այլ մեծ բարձրուն
յարքայութենն Հոխուէ՝ ասէ մարգարէն 'ի դիմաց քո
ո՛ր , քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ , և իւղով սրբ
բուլ իմով օծի զնա։ Ուստի կիրթ իմն յիշատակաւ՝
զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն՝ ո՛ր յա՛ քո , ծա-
նիցուք զքեզ անփոփոխ մշանջենաւորութիւն , թէ դու
ես ամ՝ և յամի միոյն թագաւոր թագաւորութեց . և
Հնմարիտ օծեալ իւղելոց , փառաբանեալ երկրպագու-
թիւք , երէկ և այսօր։ Զանգի զոր օրինակ պատրոյկ
թացել 'ի Հարպում՝ ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մին-
չև հուրբ լուցեալ վառիցի , այնպէս և այս օծութիւն
լուսոյ առ 'ի մեզ հեղեալ՝ 'ի հանդերձեալսն ջահա-
ւորի։ Ա՛յս է կերպարանին մեկնաւոր բացերևաւի ,
'ի նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմա-
րութիւ՝ հրաշապայծառ երանգաւ դունեալ։
18 Ա՛յդ՝ այսոցիկ պատճառ վերադոյն մասանց կե-
ցուցչաց Ճշմարիտանաց՝ արարչութեդ հարազատաց ,
առանց որոյ ոչէ գոյիլ քնեան , և ոչ նաղովրեցի ան-
ուանիլ , և ոչ յիշատակիլ յորդիս յուդայի , և կամ
խրախոյս բառնալ յանուն ոյ յակոբայ։ Ա՛յս հիւ-
թականութի օրինութեն ձիթոյս , յորում՝ ոչ երբորդութիւդ
խառնեցեալ միաւորի , Ճառագայթ շնորհաց . շուք մե-

ռոց

բոց դիմաց. նկարագրուի երեսաց. բարեձևուի պա-
տահմանց. լուսաւորութի աչաց. անագրուի բբաց.
վայելչութի ոյտից. զարդ կերպարանաց. պահպանարան
շրթանց. հանդերձիչ կրօնից. յարմարիչ վարուց. շաղ-
կապ հաւաքմանց. ղօրութի անձանց. ուժգնութի դի-
մեցմանց. խափանիչ յուութից. քոկիչ հմայեկաց.
նահանջիչ ձեռնածուաց. խայտառակիչ կախարդաց.
դադիչ աղանդից. բռնախոյեան դիւաց. փարատիչ ցա-
ւոց. կատարիչ կնքեցելոց. տեղեանք երախայից. ան-
ընդնին արտաքնոց. հիացումն հեթանոսաց. նախանձ
արիւ անհաւատից. մերկացուցիչ գաղտնեաց. յար-
գանք յեռանոց. փառք սարկաց. պճնումն կանանց. ա-
ճեցումն տղայոց. հրճուանք ծերոց. ձեռնադրիչ նը-
ւիրելոց. զգուշութի մաքրոց. պատակ թագաւորաց. ճո-
խութի աղքայից. յառաջադրութի կայսերաց։ Բանդի
զոր օրինակ ասան ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներ-
նայնոցն մեծադնութե, նոյնպէս բարձրութի շնորհին
'ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քո՝ ա՛ծ ա՛ր յա՛ք,
վայելչական իմն առաւել ծանուցեալ նշանակի ի սկ
անունն խակոյն անդասին 'ի նոյն յորջորջեալ կոչ-
մամբ, ըստ հոգելից արանց խմաստնոց՝ որ յեգիպտա-
ցւոց անսի սկսեալ, 'ի դէմս ածելով զերին կերպա-
րան՝ ահաւոր խորհրդոց պատկեր։

Սակս արքայոյս էջոյն Դաւանի։

19 Բանդի մեռանս այս օրինաբանեալ, զոր մարդա-
ընէն կանխաւ լոյս աչաց՝ դրեթէ զսոյն աղեր
սեալ խնդրէր, ըստ քերթուածն բառի, որ ըստ խաբ-
բութենն հոմերոսի թարգմանեալ խանսի, ինձ մայր.
այս-

այսինքն է՝ առ ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զՁուրց լուծականութիւն՝ առ աւազանին լուսաւորութիւն։ և իբրև զգեղ՝ մածուցիչ կաթին՝ ի նոյն ինքն յեղանակել ըղ ցնդէլս իմ վայրագութիւն, և զաղբերց հեղեղել մշտահոսութիւն։ Իսկ մառնամուտ՝ որ և այս միւռոն, ՚ի այլում բառի ցուցանի։ այսինքն է՝ մթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական։ որ և սոյն կոչումն դիմառութիւն՝ չէ օտարայեղ, քանզի արդարև յիրեն անտի անուանն նշանակի։ վասն զի անքննելի է այս խորութիւն յաւէտ՝ քան զամ սրբութիւն նոցա։ Զի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութիւն ըղ սիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութիւն՝ ի մաստունս ազգողականացն անօրինապէս անագրի։ սակայն անհասութիւնն վերնականաւ՝ և զանուանն ունի անքննելի։ Բանզի ոչ՝ ածխակ և խակ՝ ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութիւն՝ յեղանակաւ իմն անբաւութիւն՝ ի խաւար անդնելի ծածկել իմանի, փակեալ արտաքուստ՝ ի ձեռնարկութեց մերոյ իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ՝ ի լեզուաց ոմանց ճարտարաց՝ ի ճահ ճեմութեց՝ գրականապէս անուանագրութիւն մայլ առ ձայնի՝ վասն ոչ զօրելոյ երկրածին բնութիւն զիսկին գիտելոյ։ Իսկ զերկաքանչիւրս ածականացն՝ անդատին յինքեան հարստաբար տիրապէս ունի։ քանզի՝ ի կոչումն անուանն բարձրելոյն նմանակերպել՝ կըրկին մեծանայ խուզս այս նուիրել ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ։ վասն զի ածմերՀուր ծախիչ է, ըստ մովսէսի։ և դարձեալ՝ լոյս է, ըստ յովհաննու։ ուստի և եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, եղիցի՝ ասէ, լոյսն

20 Արձէլ՝ այլ իմն կերպացուցանելով զբանս՝ առ
'ի նոյն պատկերը յայտնուէ իրի. վա՜ զի ո՛չ մոռանամ
զնմն նողկութի՝ որ 'ի դիտութէ մեծիդ քաղցրացաւ՝
վերստին դովեստիւ օրհնել. քանզի՝ մեռայ, որ է դառ
նութի, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւորի
կրից տաժանմանց, որ և միւռոն ստուգաբանել մեկ
նապէս ըստ մեզ՝ մեռելութե ազգականութի. Քանզի
այսու օծմամբ հոգևորականաւ՝ խղեալ կամ հատեալ
'ի անոտիաեր մահակերպարան տաղտկազաղջութի հեշ
տութեց հակառակողին, որ օդախոնաւ մեղկութիւ
զքնարս ձայնատրական՝ և կամ զարկուած վերածած
կուէ մշնարհեստ ուժգնաբարբառ խրոխտաձնչական
կազմուածոյ թմբկիս դործականութի՝ ջրացիր իմն
դիջուք՝ անվայելուչ թուլաթաշնակեալ՝ 'ի ստորև կը
րատեն քարշեալ զորինակ մերս դոյութի, կապիմք յուսով
վերստին դարձել ի անճառ խորհրդոյ խաչի քո՝ քո՛ւ,
մկրտեալք 'ի մահ կենդանութիւդ՝ անվախճան կենաց
սովաւ հաղորդիմք, 'ի քեզ իսկ ա՜ծ համայնիւ խրա
խուսեալ՝ իսպառ ամենևին անհասանելի.

21 Այս իւղ՝ զդրոշեալն քառակուսեան յանուն քո
յա՛՝ նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ. շնորհ
ընձեռեալ զուգափառ և նմանատիպ արեան կեցուցչի՝
նոյն անվանելի փառաւք պսակել մեծացուցանէ.
Փայտ անուանի իւղոյ օրհնութիւ, ըստ մարգարէին
կանխաձայնութի, զի հասարակաց կազմեցեալ բուսոց
անտառաց զօրաւոյս ուղղեալ՝ 'ի խակութի չարին ար
կածիցն և օտար կարծեաց՝ 'ի ստեղծողդ վերաբերեալ
առ նոյն նիւթս կենաց՝ հասուն ներդործէ. Զի
և որ 'ի մեզ մոլեցն պատուհանաց մշտաբաղձիկ թափան

իբ ցան

ցանցութիւք՝ յանուն մեծուն աշխարհիդ զօրուն՝ ի
խոհական իմն համեստութիւն քև՝ ենադրեցեալ առ ի
յբղձակերտ օթեվան հոգւոյդ՝ անազդելի պատրա-
նաց չարին՝ խաւարահողմ խարդախողին՝ այսու լու-
սով զպեալ ամիսիմբ ի նուռ ադ գոհութիւն երեկո-
ւեան պաշտաման՝ ընդ երկնայնոցն զամբարաց. առ օ-
րինակ վառման շնորհիդ՝ որ ի մեզ, ի սոյն յիշատակ
փրկուն բարեացն՝ սուլաւ տնկեցեալ ծագի, և ծաղ
կաւէտ եղեալ պաղածնի. ի սպաս ընթրեցն պատրաս-
տութիւն յեանում գիշերի՝ ի մեծիդ գալստեան, ահա
զայս լոյս ճրագի համարեալ ի կիր արկանեմք։

22 Զարձեալ՝ ըստ գծագրացն գումարուն՝ քսան և
չորիցն շարագրուն որ յալփաբետայ անտի վե-
րաթօնի մինչև ի քսաներորդ երկրորդն կարգի, յո-
ւում զայս խորհուրդ խորութիւն անտուստ թարգմա-
նեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին՝ ջամբել պատ-
ասխանեմք ամենակազմ յարմարութիւն. քանզի յութանե-
ւորդն անտի գրոյ՝ ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝
ստուգաբանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան՝
նիւթ ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմ-
բոյ՝ յինքն բերողի զանազանածն զօրեղապէս. որ ոչ
սակաւն ի յոլովէն պարագոյի, քան թէ ի նոյն իրն
դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամ
առ ինքն վերաբերեալ աճեցուն առնէ։

23 Սոյն իւղ հեզուն՝ միշտ համբարձման և խոնար-
հուն, օրինակ և նմանութի, առ ոմն կակուղ պա-
տառաւ մատուցեալ ջամբի, հարթակշիռ և բարե-
յարմար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծակա-
նաց՝ հոսանուտ և ստորածորելի նիւթից՝ գերափառ
վե-

վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի
և յաման ինչ մոլթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձևոյ
և կամ ջրոյ թացուբ՝ մեղկէ, այլ 'ի սահման պատշա-
ճին պահէ։ Լ. յապէս ընկալեալ զքոյոցդ բարեաց
անհաւատար առաւելութի՝ որդի՝ այ կենդանւոյ,
զարբանուբեր այս օծելութի՝ 'ի ճակատ դիմացս ա-
ռեամբ քո գրեմք. և 'ի բնութի շնչոյս՝ հոգւով քո
տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ
յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ
ծայրարձակութբ՝ 'ի տարածումն յոգնատեսիլ զարմա-
նահրաշ ընդարձակութբ՝ պտուղ իւղոյ ընծայել զլոյս՝
'ի փառս տպառնեացն հանդերձելոցն։ Լ. յս ճարպ
հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ 'ի դէմս երեսաց իմ
պատկերի՝ քումդ նշանաւ ջահաւորեսցի՝։

24 Լ. ու քանզի՝ էբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ
զօրութի՝ արագ սլացմամբ 'ի թեւս թեթեւս մտաց
պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝ անհուն
հեռաւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ իս-
պառ որոշել, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կը-
ցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութբ. ոչ սահմա-
նեցաւ ձևակերպութբ. ոչ կշռեցաւ ընկերին չափով,
այլ ահա ընդ ածեան խաչիդ նշանի՝ հաւասարութբ ա-
ռեան կեցուցչիդ՝ հոգիապէս գերազանցեցաւ։ Լ. ու
արդ՝ օրհնեա զմեզ ա՛ր սովաւ և 'ի սոյն. և ս և անուանդ
քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր,
'ի գովեստ փառաց անձառից մաքրակրօնիկ՝ բուրվա-
ռաւ խնկեալ, ա՛ռ՝ ա՛ռ, անքննին, անապատում, բարձ
րեալ, ողորմած, վեր երդեալ՝ ճշմարիտ, բարերար և
ա՛ռ, արա՛ սովաւ փրկութի. տո՛ւր և քաւութի. պար-

դեսն

գեւեան բժշկուն։ Հանդերձաւորեան շնորհ. առատա-
ձեռնեան երանուն։ Յօժու�ն այս ձիթոյ՝ երկնանձրև
լուսոյ՝ անարատ գաւոյց. յիւղելս այս թեզան բանաւո-
բական՝ մի մոցէ և մի դրաւեսցէ տխրականուն աղ-
տոց մեղանաց՝ շաղախեալ երբէք զոգւոյս կերպարան։
Լղեցի՛ սոյն ինքն որոց մատչին օծանիլ սուրբ՝ Հարսնա
պաճոյճ պանծանօք պճնեալ գեղայօրէն աբ վայելչուն
երջանկապէս յոգի զարդարեալ։ Լղեցի՛ հուրս այս
լուսափառ և ածաձիր՝ մերձեցելոցն ի սոյն ընտրուն
մուխ կրկնեռաց և բարեփափաք ջերմուն ոյլ յօրին-
ուածոյ, որով ամենապատրաստ պնդութեամբ ի
կարծրականուն անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ
արձանացայց՝ ի քեզ հաստատեալ անեղկմտելի։ Լեցի՛
նշանակ վերնամրցանակ այսր պարգևի սուրբ վառե-
լոցն, ոչ ողողել ջուրբ. ոչ այրիլ հուրբ. ոչ ցրտանալ
ի սառնուէ. ոչ վնասակար հողմով շեջանիլ. ոչ աղտե-
ղել յուրուական ինչ պղծուէ. ոչ զպահեալն՝ ջարին
մատնել, և ոչ ի սորև ելիցն՝ զվթերս դանձուն կե-
նաց՝ յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատսպար մը
նալ ի թևոց քոց օգնականութէ, և ոչ զէացեալն ի
մեզ օծուի՝ անմաքրապէս ի բաց մերկանալ։ Լ.ալ է
զեցուք քեզ ի սոյն հրացել. սովիմբ պարարել. սուրբ
լուսաւորեալ. այսու արդարացեալ ազատացեալ պա-
կեալ և թագաւորել։ Լ.ուքեզ միայնոյ միայն օծելոյ՝
յամենեցունց օրհնութիւք երգոց, աղերուք լեզուաց,
հնչմունք ձայնից, յաղթանակութիւք գովեստից, բարե-
բաստութիւք շնորհաց, սրբաբանութիւք սաղմոսաց, Ի Հօր
և Հոգւոյդ աբ՝ յաւիտեան յաւիտանից. ամէն։

Լ.յս էր՝ յեռանուրեան՝ ի սրբոյն, և այս արքանագրոյն՝ ի սրբոյն
Ռէանցն սրբոյնէ։

Ա. Երեսին յաւելուածք կրկին հեծուելիք՝ նորին հոգի, ապա նոյն աղերս մաղթանաց բանիւ։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աչս։

* Բան. Ղ.։

1 Յն յաւիտենական. բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք ի մահու, և լոյս ի խաւարի. յոյս ակն ունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութիւնքդ՝ դարձուցանես յայդ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն, քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տրութիւնքդ՝ խաւար գիշերոյ։ Որում կրկնի ծունր երկրպագութեան ամ եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. որ լսես զշեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա. աստուա՛ծ իմ և թագաւոր իմ. կեա՛նք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. յիսո՛ւս քրիստոս ամի. սուրբդ հանգուցեալ ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամ յառաջ քան զլինել նոցա. առաքեա՛ զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և ի դիւէ ջրէ. Ապ զի զմիշատակ սոսկալի և սբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ի բոլոր սրտէ։

2 Այս ի դրոշմ խաչի քոյոյ նշանիդ, զոր ածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և ի նոյն շնորհ որդեգրութիւն զմեզ մկրտեցեր, և ի փառս պատկերի

քո նկարեալ յօրինեցեր այսու պարդևօք ՝ ածակա-
նօք , ամաչեսցէ՛ սատանայ . քակտեսցին մեքենայքն .
բարձցին որոգայթքն . պարտեսցին մարտուցեալքն .
պակասեսցին զէնքն սայրասուրք . մերժեսցի՛ մէգն .
փարատեսցի՛ խաւարն . մեկնեսցի՛ մառախուղն : Լա-
ղուկ քո հովանասցի , և աջ քո կնքեսցէ՝ . վա՜ զի դը-
թած ես և ողորմած , և անուն քո կոչեցեալ է ՝ի վը-
ծառայից քոց : Լու՛ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝
փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ա՛ երոպին յաւէլուածք էրէին հէծուրէ՝ նորին հոգէ , առ նոյն
աղերս նաղիանաց բանի՝ ՝Ի խորոց արուէց խօսք՝ ընդ ՝ն :

✻ Բան . Ղ՛ . :

1 Ա՛ ռեգակն արդար . Ճառագայթ օրհնեալ . լու-
սոյ կերպարան . փափաք անձկութիւն . բարձ-
րեալ անքննին . զօրեղ անպատում . բար-
ւոյ բերկրութիւն . յուսոյ տեսութիւն . գովեալ երկնա-
ւոր . թագաւոր փառաց . քո՛ արարիչ . խոստովանեալ
կեանք : Լու՛ արդ՝ զթերութիւն վերպանաց բազմասը-
խալ ձայնի եղկելոյս՝ ամենաողորդ բանիւ լցեալ մա-
տուցեալս յաղերս հաճութիւն հօր քում բարձրելոյ :
Որ վասն իմ ՝ի փորձ եկիր անիծից , կերպարանեալ
զիմ նմանութիւն՝ ամենեւին կենաց օրհնութիւն ,
վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից :
Զ՝ի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ ՝ածն և
՝որդ բոլորեցուն , ՝որչափ հաճեացիս առաւել և այժմ
վասանգաւորս կրից կարեկցել , ընդ իմ պարտաւորիս
միշտ

միշտ աղօթելով աղաչեալ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝
առ Համապատիւդ քո Հայր։

2 Եւ վասն արեանդ պատուական միշտ մատուցելոյ
'ի Հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձցին վանդք
մեղուցեալ դատապարտելոյս. թողցին պարտիքն.
ապաքինեսցի՝ ամօթն. մոռասցին պատկառանքն. բա-
րեգործեսցին դատակնիքն. սատակեսցին որդունքն.
վերասցի՝ լալն. հանդարտեսցէ կրճումն ստամանցն.
սպառեսցին ողբքն. հատցին արտասուքն. մերժեսցի՝
սուգն. հալածեսցի խաւարն. վատնեսցի հուրն տատ-
կուէ. հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք։

3 Դիկեսցէ՛ն գթութիւք կամողիդ և պարգևողիդ կէ-
նաց ամենից. ծաղեսցի՛ լոյսդ. արադեսցէ՝ փրը-
կուիդ. հասցէ՝ օգնուիդ. ժամանեսցէ՝ այցելուիդ.
կանխեսցէ՝ ցօղդ ողորմութիւն, յառաջեսցէ՝ արբուսցէ՝
զանդաստանս պաղքեալ՝ անկեալ ոսկերացս թշուա-
ռութիւք 'ի վիճն մահու. ծաղկեցուսցէ՝ պտղաբերեսցէ՝
բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս իբ-
նամեալ աւուրն լուսոյ, որ անծախուպէս միշտ պա-
տարագի յիշատակ կենաց փրկուէ հոգւոց ննջեցելոց։
Օ՛ի ամի՛ մահացեալ հոգիս մարմնոյս մեղաց՝ շը-
նորհօք քո՝ գլթած, 'ի քեզ զօրացեալ քև նորոգէ-
ցայց, զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութիւք 'ի յա-
յրուէն արդարոց, հօր քումմ օրհնեցեալ։ Ընդ որում
քեզ փառք, և հոգւոյդ Սրբոյ բարեբանութի՝ վայելչա-
կան գոհութիւք, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

ՎԱԽԱՆ։

✻ Յիշատակարան Մատենի Դրոշակեան։

Բաստ Հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութիւն, որ ըստ լրապատարն նշուլադեղն արփիաճաճանչ լուսակիրն օրակշիռն մղտափարատն ակնապարար՝ ականն արևու՝ ստեղծականն աբուսեկի, որ համբարե հոլովէ կուսէ ամաց յոլովութի 'ի ջափս դարուց՝ շնչասպառ և կենդանանորոգ առուղեկան յաւիտենից, 'ի յաւարտումն կնրման ինն ներբեակ յոբելինին, 'ի սկիզբն պսակելոյ մաի տանեկին՝ Յաբեթական տոհմիս տուամարի։ յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեն՝ 'ի կայս և 'ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝ յաղթօղ և մեծ կայսերն հռոմայ Բասլի, յորժամ ընդարձակ և մակադաւիթ կանոնաւ ըստիւ տարածէր՝ լիասահման և անխորոց 'ի ստուարակարկառ կութողս կարծր արձանաց՝ 'ի ձը գումն ձեռին՝ և յանկղելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց՝ խմբից աշխարհաց 'ի ծոց իւր։

Ընդ՝ 'ի յայնմ անդորրուն միջոցի, յորում եղերեալ ընդոստնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտութի միագոյ իրի՝ զբազմաստեղնեան դրոշագս դրութիւն այսմ սուիերի արգասաւորի, ես Դրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց, և կրտսեր վարժապետաց, գործակցութիւն եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ նա-

նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իբրև զմի մարմին բանական՝ 'ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով. ոչ միայն հարազատք, այլև միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց՝ առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք։ Զոր՝ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ՝ յոգեօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սերն սիրով 'ի միտս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեն։

✻ Յիշատակ վարուց հոգեւոր հուսաստի Տէրն Գրիգորի։

Մենափայլ նշողիւք ճառագայթից շնորհաց հոգւոյն Յ. Լուսապատար պայծառազարդեալ՝ Հրշեղն 'ի մարմնի Տէն Գրիգոր՝ էր յանձնաձեռեալ դաւառէ վասպուրական աշխարհին. որդի Տն Խոսրովու անձնացեալ եպիսկոպոսի. 'ի ժամանակս կայսերութեանն յունաց Լ. ասլի և Կոստանդեայ. յաւուրս Հենեքարիմայ հայոց արքայի. և 'ի Հայրապետութեանն Ս. ահանայ կթղիկոսի։ Որ սնեալ 'ի կարգ կրօնաւորութեանն 'ի վանս Ս. արեկայ, որում և եղև առաջնորդ, ուստի և հռչակեցաւ Ս. արեկացի։ Այն սա երկնահանճար վարդապետութեամբ գերարփայլեալ՝ մեկնեաց զերգն երգոց Սաղոմոնի. Գեղգեղեաց զճառ Խաչին, և զներբողեանս 'ի Ն. ծածինն, 'ի համօրէն գունդս առաքելոց, և 'ի Տն Յակոբ մծբնայ. և զքարոզս դանձից։ Այս բանապաճոյճ պերճաճ-

ՀԱՄԱՆՈՒԹԻՒ ԴՐԵԱՑ ՁԱՅՆ Զ ՂԵ ԲԱՆՍ ԱՂՕԹԻՑ 'Ի ԻՆԴՐՈՅ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ, ՁՐ ԹՈՂԵԱԼ ՄԵՂ ՎԵՐՋԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԱՆԱՊԱՌ ՄԹԵՐԻՑ՝ ՓՈԽԵՑԱՒ ՅԱՍՏԻ ԿԵՆԱՑ՝ ՎԱԽՃԱՆԵԱԼ ՅԵՐԻՍԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ, 'Ի ԹԻԼԻՆԻս ՀԱՅՈՑ՝ ԴՁԾԾԲ. ԵՒ ԱՄԻՈՓԵՑԱՒ 'Ի ՆՈՅՆ ՎԱՆՍ ՆԱՐԵԿՈՅ։ ԻՍԿ ՅՈՐԺԱՄ ՍԵՆԵՔԱՐԻՄԱՐՔՈՅ ՓՈԽԵԱՑ ՁԱՐՈՒԼԻՆ 'Ի ՓՈՔՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՊԱ ԵՒ ՄԻԱՆՁԱՆՑՆ ՆԱՐԵԿՈՅ ԴԻՄԵԱԼ ՄԵՐԺ 'Ի ԿՈՂՄԱՆՍ ՔԱՂԱՔԻՆ Ա.ԿՆՈՅ ԵՒ Տ.ԻՒՐԻԿԵՈՅ, ՇԻՆԵՑԻՆ ՎԱՆՍ ՅԱՆՈՒՆ Ն.ԱՐԵԿՈՅ, ՈՒՐ ԲԵՐԵԱԼ ՀԱՆԴՈՒՑԻՆ ՁԱՅԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆ, ԹԷԵՒ ԱՅԺՄԷ ԱՒԵՐԱԿ, ԵՒ ԿՈՉԷ ՈՒԽԱՍ Ա.ՐԱԿՈՅ, ՅՈՐՄԷ ԼԻՆԻՆ ՆՇԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵՆ 'Ի ՓԱՌԱՍ Ա.Յ. ՈՐՈՅ Ա.ԾԱԽՍՈՍ ՄԱՂԹԱՆԱՑ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՆ ԱՐԺԱՆԱՑՈՒՔ ԶՄՅԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԵՆՆ Ա.Յ. ՈՐՈՒՄ ՊԱՏԻՒ ՓԱՌԱՑ ԾՆԵՐԱԴՐԱԿԱՆ ԵՐԿՐՊԱԴՈՒԹԻՒՆ ՅԱՒԻՏՆՍ. ԱՄԷՆ։

ՍԲԻՈՆ ՊՈՐԻԳՈՐԻ ՆԱԲԷԼՅՈՅ՝ ՆԵՐԲՈՂԷԱՆ ՍՈՒՆ Ա.ԾԾԻՆՆ։

Պ ՈՒՄԱՐՔ ԽՄԲԻՑ ԴԱՍՈՒՑ ԵՐՋԱՆԿԱՑՆ՝ ՊԱՏՈՒԱՍԻՐԵՆ ԲԻՒՐԱԲԵՂՈՒՆ ԲԱՆԻՒՔ ԳՈՎԵՍՏԻ՝ ՁԵՍԿԸՊԵՂՆԱԼՅԱՆ ԿԵՆԱՑ ԴՈՅԻՑ 'Ի ԿԻՑՍ ԲԱՆԻՑ ԸՂՃԱՅՆՈՒԵՑ. ԵՒ ՈՉ ՓՈՂՈՎՔ ՏԱՒՂՈՔ ԵՒ ՔՆԱՐԻՒՔ ԶԱՅՍԱԿԱՆ ՍՐՏԻ՝ ՇԱՐԺԵԱԼ ԶԳՈՐԾԻ՝ ԶԳԵՐԱԶԱՆՑԵԱԼՆ 'Ի ԼՅՍ ԱՆՄԱՏՈՅՑ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԴՐՈՒԱՏԵՆ։ ԱՒ ԶԱՆՁԱՌԱՐԱՐՋՈՒԹԻՒՆ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԱՄԵՆԱՍԱՏԵՂԾՆ ՏՐՈՒԻ ՕՐՀՆԵԼՈՎ, ՊԱՏՃԱՌ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԻՍԿՈՒԹԻՒՆ ՀԱՍՏՋԻՆ ԶՀԱՍՏՈՒԱԾՈՅՍ ԱՌՆՈՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ. ՈՉ ԵՒ ՀՇՄԱՐԻՍՆ ԲԱՆ ՑՈՒՑԱՆԷ, 'Ի ՍՏԵՂԾԱՆԵԼՆ ԻՆՁ ԶՍՅՍ ԱՄ, ԲՈՅԼՔ ԶՕՐՍՑ ԴԱՍՈՒՑ ԵՐՋԱՆԿԱՑՆ ՕՐՆԵՑԻՆ ԶԻՍ ՄԵԾԱՃԱՅՆ,

ԵՒ

և ամ հրեշտակք իմ դովեցին զիս։ Այս արդ՝ եթէ հրափայլ և երադընթացն փառաբանչաք՝ վերնաթռիչ պատգամաւորաք՝ հոգիանիւթ և անեղծական կենդանեաքն նոքա օրհնաբանի. որ թէպէտ և նոքա վեհք են բնակութիւն կայից ստորիցս, և նշոյլ երկրորդ՝ լուսոյ առաջնոյն. այլ սակայն յոյժ անտեսաբար տպաւորութիւն առ բնութիւն բարի բանին բարձրելոյ՝ բարեզարդաբար բերկրանաք բերին. և որ գոհաբանի առ 'ի նոցանէ նոքա ածութիւնն՝ լայնաձիգ հեռաւորութիւն և ընդարձակ միջոցաւ յաւէտ անչրպետ նշուլիւքն ծածկի 'ի նոցունց։ Այս զայն՝ որ զանհան հրեղինաց 'ի հողեղէն յարկն պարունակեաց. և զանճառն 'ի սերովբէից զգալի մարմնոյ յօդիւն պատեաց. և զվերակ ըիչն դասուց հրեշտակաց՝ կաթնաստուն ստեամբքն դիեցոյց, որ երգ պատկանագիր 'ի ճահ գովեստից օրհնեալ պատուհասցէ։ Զ մարմնարանն անտեսին՝ և զշեմարանն մեծին. զառաջաւարն տիրական՝ և զխորանն ածական. զնաւնարանն ճաշակման՝ անապական խրախճանութիւն. զսրբարանն մաքրութիւն՝ և զընդունակն զգաստութիւն. զնպատակն կուսութիւն՝ և զբնակն երանութիւն. զհարսնարանն անլուծանելի՝ անժամանակականն փեսայի. զբնակարանն հաճութիւն՝ կամաց անեղն ածութիւն։ Զ այսքան փառազարդ շնորհաց ընդունակն, և ոչ նոքին ածութիւնն օրհնառաք հրեշտակացն պարք՝ ոչ պարան է պատուհել ժպրհին, թող թէ մարդ երկրային 'ի կշիռս չափոյ բերանոյ հոգաղանգուածս հիւթոյ մեղկս մարմնոյ. քանզի անճառութիւն անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկնայինք զարարչին անհաս

հաս տնօրէնութեան զանազանին ծնօղ՝ արժանապէս վե-
րաբարողել։ Քանզի թէ ըստ առաքելական ձայնին
պօղոսի, մարդն անձնայեալ ոչ յումեքէ պատմի, ապա
որ զլրութիւն բանին էութիւնն ճաշութիւնն յղացեալ կը-
ութեաց 'ի մարմնի՝ զիարդ զննեսցէ շարժութիւն շրթանց
լեզու մարմնեղէն զնա ճանաչել։

Օ՛ի թէ դասք պետութեաց անմահից վերնոյ
բնակութեան՝ եկեղեցեաւս 'ի յայս խորհուրդ խո-
րին յառեցան. ապա յայտ է, թէ մեծ է առ նս հիա-
ցումն սքանչելի գործոյս այսորիկ, քան զհասումն երկ-
բաւորացս բանից պատմութեան։ Բայց սակայն երդեսցէ՛
բանս որքան զօրեսցէ 'ի բաղձանաց սրտի փափագման՝
նմին ընծայ օրհնաւաք փառաց տեսչութիւն. նա զի թէ
երկինք՝ փառացն ոյ լինին պատմաբանք՝ և յանդրէն
դարձ տարագրելոյ տոհմին յուդայի՝ ժողովք ժողո-
վըրդոց տեսին զփառս անեղին, ապա այժմ յերևիլ
բանին 'ի մարմնի և լինիլ մարմին ադամեան կերպին,
հմրկ է յոյժ ճահողապէս ոչ միայն անմարմնոցն՝ այլ և
զգայնոցս արժանաբար ըղձականութիւն հնչել զձայն բերկ
բանաց բարբառոյ բանից օրհնութեաց։ Քանզի խոնարհս
այս երկիր՝ եղեալ տիրակիր՝ դասաւ լծակից ընդ ճաճ-
կիր երկինն վերին. վասն որոյ խրախուսեալ հոգևո-
րականն հրճուանօք երկուցն դասուց 'ի մի խումբ պա-
րու՝ տօնս տարեկանս փրկչին փայլման կատարեն. ըզ-
գայական սեռս եղկանաց, և անմարմին դասք հրեշտա-
կաց. յերուսաղեմս տեսականաց, և յիմանալիսն ծածկե-
ցելոց։ Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի դուս-
տը վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք
հոգեպէս տարփմամբ՝ երդեալ քեզ ընդ երկնայնոցդ
ձայն սրբասաց։

Ամենասուրբ արարչենակալ տիրուհի և Աստուածածին. որ զանտանելին երկնի բարձրութիւն և երկրի լայնութիւն, ծովու խորութիւն և անդնդոց անհասութիւն, զի քէն մարմնացեալն խակութիւն էութիւն, յորովայն անձուկ սրդ քումն սենեկի կրել զօրեցեր։ Զոր որ հայեցեալ երջանկին յօբայ՝ պատուաբանեաց զի ձև առակաց՝ զանբաւութիւն մեծին սքանչացուցեալ. յումեմն դիմաց ասելով, եթէ չունիմ զնա. և զայլմէ, թէ էի ընդ ինեն։ Որում երգակցեալ վեհին յովհաննու զի բանն յայտնութիւն ասէ հիացմամբ, փախեաւ երկին և երկիր զի մի սասանութիւն զի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարոն յաւէտ անձկութիւն ամիտ փին զի բերումն բովանդակութիւն արարչական բանին հանգստեան։

Ասկ դու ընտրեալ զարմէ և զանգուածոյ մարքուր զաւակի սբ Աստուածածին. տարար զնա զի քեզ աղորժ հանգստեամբ կամացն հաճութիւն, եղեալ երկիր անձնական՝ բանական բուսոյն. և զգայական անդասան՝ կենացն հայի. և վառարան բորբոքման՝ անշէջ կայծական. և վայր դալարաբեր՝ հայրական ծոցածին ծաղկին. և ծառ երկնուղէշ՝ անթարշամ ճանծորին. և գործարան գոյութիւն՝ լուսատու մարգարտին. և լեառն արձանունակ՝ երկրալեր վիմին. և սյգ արքիասկիզբն՝ աստեղն առաւօտին. և յարկ դիտապետին՝ բանական հօտին. և արքայարան լուսակերտ՝ անմահ թագաւորին. և մայր կաթնամատոյց՝ բնաւից ստեղծողին. և հարսն սրբուհի՝ հօրն քի։

Ընդ՝ և ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհնութիւն, քումդ երանութիւն բանագովութիւն. խրախայիր և ձայնիւ

նիւ ողջունի դաբրիելեան աւետեացն՝ բերկրեալդ 'ի կանայս. բնակարան արժանաւոր բանին խոնարհութեան. տընկասաղարթ մարմնոյ ածութեն խառնարան. իւ ղարան օծելութեն քահանան անուանադրութեն. որ նախ քան զծնանիլ բանին առ 'ի քէն՝ անթերի լրականութեբ հրեշտակական թեւոցն սքօղմամբ՝ ցանդ արկեալ ոպահելիր անաղտ անբծութեբ։ Լ՚ս որ հաճեալ հաստատութեբ երրորդական փառք ածութեն՝ ճանապարհ ապրարհանդատեան. քանզի հոդին աբ եկն 'ի քեզ՝ յօրինօղն անախտ սրբութեն. և բարձրելոյն հօրն զօրութի՝ մօրդ հովանացաւ. որդւոյն պատրաստեալ դքեզ ընդունակ։ Լ՚ս որ բնակեցաւն էակիցն հօր բարձրելոյ՝ էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով 'ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էութեն նախ քան զարուսեակ. ուստի և զյօդաւոր մարմինն միակ, խառնեաց ընդ ածական բնութեն իւր անքակ. և սեպհականեաց զաթոռն հօր իւրոյ դաւթի յաւիտեան. թագաւորեալ տանս աշխարհի և երկրիս քաղաքի. արկեալ սոցա ուղղանապարհի զփայտակերան գործի՝ հանել 'ի կամարն երկնից տաճարի. և կանգնեաց զխորանն կործանեալ ադամեան մարմնոյն՝ 'ի նորոգութի շինութեբ քահանան ուխտին դաշնաւորութեան։

Լ՚ըդ՝ այսպիսեաց բազմաթիւ և բարձրագոյն բարեաց ընդունակ և մատակարար՝ միայն դու մաքուր կուսութեբ էին խնկարան տիրուհի օրհնեալ աբ ածածին. քանզի իբրև զնշումն խառնուեբ խնկոց կընդերկի և զմեսի ընդ տաշխին և կասիայի՝ բորբոքեալ հրով մաքրութեբ բարդեցեր զծուխս բուրման անուշահոտ սրբութեբ 'ի հոտոտելիս այ և հօր հաճութեբ։

վա-

վարուք մաքրեալ, բարութիւն լցեալ, հեզութիւն արձանացեալ, առաքինութիւն կատարեալ, քաղցրութիւն աղբիւրացեալ սբ. ածամայր։

Լինդա և ուրախ լեր յարկ մանաւոր ծնելոյդ 'ի քէն անեղդ այ. որ 'ի նմին յորդւոյն քո խնամոյ՝ հրաշալ զարդ փառաց ամբարձար 'ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապս. և թեւաց թեթեւութիւն հոգւոյն սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր 'ի կայանս հանգչիլ Աստի և զանհասանելին իշխանակաս խմացման՝ զանկապտելին զդայութիւն սրտի նկատման՝ զվայելս անտեսիցն՝ անձնապէս հոգիագրկեալ, զանեղծին փառաց ճոխութի՝ քեզ սեպհականեցեր սբ. ածածին։

Երբողեալ ես մաքուրդ փայլումն, կրօղ արարչին առաքինութիւն. որ պանչելարուն ես հրաշիւք ներդործել քեզ 'ի մեզ զնոփոխումն մեծ արգասեաց փառացն ը փոքուն յեղանակեցեր. քանզի զանհայրն մանուկ՝ մայրդ որդեպս գերագոյնեցեր. և ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկաց՝ զանպարագիրն էակ մարդացեալ՝ 'ի համբոյր հպելոյ մատուցման շրթանցդ ողջագուրեցեր. որում դասաց մեք ժառանգակիցք՝ աբբայ հայր զածս առ ձայնել՝ 'ի ձեռն քումդ միջնորդութեան սուրբ ածամայր։

Արեհամբաւեալ ես մաքրութիւն շաւիղ նախընթաց կուսից. որ զլրութիւն ունօղն գոյից՝ կարօտաբար կայթամբ լցուցեր. և աչաց մարդկութիւն զանտեսն՝ 'ի մարմնի եռուր նկատել. վասն որոյ զամ բերան գոհութեամբ՝ ստացաւ քեզ օրհնաբանս՝ անձկով տարփման սուրբ ածածին։

Բրանեալ ես դու 'ի լեզուս ամբիծս ընտրական շրթանց

թանց ծաղիկդ յեսսեայ պտղոյն մեր կենաց. որ 'ի դը
ռուէ խառնուէ քառից յեղանակեալ տարերաց՝ անկը
ցորդ մնացեր 'ի մասնէ հողածնելոցս հատարակաց. ո՛չ
բերօղ ծանրութիւն բնակակիր համաստեղծս կարեաց,
այլ քերովբէօրէն հրաբերան բղխօղ նշուլից։ Ուստի
երագ ընթացիւք հետոց հեռացեալ 'ի վայրն անմա
տոյց, յարփին վերին ընծայեցար ՝ե՛ ՝ածամոյր.
Սրախացիր յաւէտ հրճո՛ւանօք բերկրեալդ 'ի կա
նայս. որ դժո՛ւարընտել դաստիարակաւ խաչին
վարժեալ կրթեցար, որդւոյ քոյ կցորդակցութիւն,
միաւեակն ժուժկալութիւն՝ կրելով զերաշխէպ վշտաց
ծնիցելոյդ 'ի քէն ՝ե՛ն. մշտաչարչարն մեռելութիւն անձ
նատուչոր տօթով խորտակեալ. իբրև զորոջ անարատ
քահանայական նո՛ւիրմամբ 'ի վերոյ սիրոյ սեղանոյդ
մատեար՝ ասրաբոյս և ստեւադիսակ դեղմնաբարձ մա
քուր պատարագ. 'ի ՝ճգնաւորական վարս ողջակիզել,
քան թէ 'ի սրոյ հանդէպ խողխողեալ։ Ա՛ այսորիկ
'ի նո՛ւէր քոյ զենման՝ հրեշտակացն զարք պաշտպա
նեալ, ընդ առաքելոցն դումար դասակցեալ՝ զմիայն
արժանիդ պատո՛ւեալ դովէին ՝ե՛ ՝ածածին.
Սրախացիր համայն տարփանօք բերկրեալդ 'ի կա
նայս. որ 'ի կոյս և յանարօր արդանդէ բան բեղմնա
ւորեցեր. ցաւոց անիծից՝ արմատ օրհնութիւն. հօրն
ադամայ՝ որդի բերկրութիւն։ Ա՛ որոյ շնորհ ունե
լով քեզ օրհնեալքս 'ի յորդիդ քո փրկիչ աշխարհի,
երանեմք քեզ ՝ե՛ ՝ածածին.
Սրախացիր անբաւ բերկրանօք հարան լուսոյ, ոսկե
զարդ զգեստուք պաճուճեալ. որ յօրէնս երկրայինս
աղցաւոր կրից, զերկնայինն ածեալ մատուցեր. և

զան

զանազանն նմանեաց մնազանդութեան ազգի մարդկու-
թեան՝ 'ի չափ հասակի դեղոյ՝ դեղեցիկ զատերն վայե-
լուչ 'ի լիբանանէ մեղ պարգևեցեր։ Ուստի զպատ-
կեր նախահօրն 'ի քէն ստացեալ նորոգ հաստատեալ՝
գոհաբանեմք զուրբ տիրամայրդ։
Որ խոցեցիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւո-
րին՝ տմարար սրբափայլ. որ լուսով ճշմարտանա-
ւոռճացեալ լցար. և երկրաւոր մարմնով՝ երկնայնոյն
աթոռ կազմեցար. և արեգակնապէս հոլովմամբ՝ առ
արուսեակն երագ ընթացար։ Զ՝ասն որոյ բացեալ
զբերան պատաւոյն՝ ամլածին որդւոյն՝ օրհներ զորհ-
նեալդ 'ի կանայս՝ սուրբ ճշմարտին։
Զ՝ա և դու լցեր զտունն զաքարիայ բարբառովն գո-
հութիւն. յօրինակ հանրական եկեղեցւոյ՝ որ է քո
միշտ օրհնաբան. զի երանեն ասա յոյնմ հետէ քեզ ամ-
ազգք՝ ըստ բանի ճշմարտակից քումդ դաւանութեան.
սկզբնարար կուսից անարատութիւն. 'ի բերկրեալ լե-
զուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ սուրբ
ճշմարտին։ Զ՝անզի արդ եկեղեցի դասուց անդրան-
կաց՝ զ'ի քէն մարմնին 'ի բանէն անանջատ՝ համապա-
տիւ հոր փառաւորեն յերիս սրբասացս. առ որ հպա-
ւոր քո դողով ահաւոր խորհրդոյդ տեսօղ՝ զանձառն
ուրախութիւն յաւէտ վայելես։ Զ՝ի զոր նոքա թեւաս
քօղելով դիմաց ծածկութիւն 'ի բացուստ ակնարկեն,
դու յաւէտ համարձակ նմին կաթնաձիր մայր ցու-
ցեալ ծանուցար. և 'ի մէջ դասատակաց ձեռաց՝ ոգի ըզ-
մանուկ զծերն տին աւուրց դգոնանօք ընկալար. ե-
ղեալ կառք անձնաւոր կայից՝ բազմելոյն յաթոռ քրուբ-
էիից։ Զ՝ զի ոչ ընդ քեզ միայն, այլև 'ի քեզ. ոչ

միայն փարեցաւ բազմեալ, այլև բնակեցաւ տաղաւարեալ. ոչ միայն միացաւ 'ի զանգուածս մարմնոյ, այլև մարդացաւ, առեալ զկերպարան 'ի քէն սկսելոյ. ոչ միայն մի զոգեցաւ քո յերկուց դոյութեց, այլև ընկղմեցաւ յանապական անսօսր էութիւն՝ մարմնոյն վերբերումն. ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հողոյ միաւորեցաւ դիմակ տեսակաւ, այլ եռամասն խառնեալ էութիւնք միաւորեցաւ անշփոթելի։ Այ որդի մերովս բնութիւնք՝ յաթոռ հօրն իւր աջոյ՝ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ։

Յաղագս որոյ և մեք երկրաւորքս՝ զմատակարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ՝ երանեմք ըղձական երդօք զանժամանակն էութիւն երջանիկդ ծնօղ. որ զամի և ամենեցունց պատկերաւն՝ հոգեշունչ երդօք 'ի քեզ ընկալաւ. ոչ 'ի մանէ, այլ 'ի լրութիւն. ոչ հատմամբ, այլ հաստատութիւն. ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ փոխատրութիւն. ոչ 'ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ 'ի սենեակ լայնատարդ ոգւոյ։ Քանզի զբերրոցն 'ի կշիռ ձեռին զերկիր և զերկին՝ տարար յարգանդի. և ոչ միայն 'ի տես նկատման աչաց նայեցար 'ի նա, այլև շօշափմամբ ձեռացդ ծանեար. ոչ միայն ողջունեալ զանհուպն շրթանց, այլև ըմբռնեալ. ոչ միայն զնեալ զհասարակաշէն խաղրան մարդացեալ բանին, այլև անուանեալ կոչմամբ յա զքանն այ. ոչ միայն ստեամբդդ անուցեր զանժամանակն ըստ աւուրց, այլև աճման հասակի զնոյն ընծայեցեր։ Օ որ խոստովանի հանրական եկեղեցի ըզծնեալդ 'ի քէն՝ ՀԾ Ճշմարիտ, ընդ նախեղակ դոյակն միացեալ, 'ի տեսութիւնէ իմաստից քննութիւնք մեր փակեալ։

կեալ։ Որոյ տիպն ապացուցի խաբօղն յակոբ՝ ըմ-
բռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս. և զան-
խուլ խորհրդովն զաւծատեսն անուն ընկալաւ։
Այսպէս և որ 'ի քէն ծնեալդ մարմին՝ 'ի յարդանդ
սրբոյդ սենեկի՝ ընդ ա՛ծ խառնեցար. և խաբեալ զե-
դոմն մարդկան թշնամին՝ մարմնով դերապանց նմին
բարձրացար. վա՛ն որոյ ո՛չ տեսօղ ա՛յ, այլ՝ ճշմարիտ ա՛ծ
անո՛ւանեալ, զամենեսեան յիսրայէլ անուն փոխա-
դրեաց։ Սակս որոյ լի՛ բերանով զպաշտպանդ փրը-
կութե՛ այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ
սուրբ ա՛ծածին։
Որոյ տեսչութե՛ն ա՛յ՝ նախագիծ 'ի ծոմէ քարն պատ-
ուական հրաշալի՝ և սպիտակ մարդարտին մաքուր
կերպարան գոյացեալ ցուցաւ. "Ի՞անդի արդարև՝
դու ես ակն պատուական յաշխարհիս ծոմէ ընտրու-
թե՛, որ զա՛ծայինն հրոյն տարար կերպարան։ Ո՞վ՝ որ-
քան մեծ է 'ի քեզդ աւարտեալ խորհուրդ՝ սրբբու-
հի. զի թէ առաջք մարդարէիցն հոգեկիր յղացմամբ՝
իսրայէլի ծնօղք ասացան. ապա դու որ զբանն ա՛ծ
անձնաւոր՝ հայրենի բնութե՛ն հպաւոր՝ 'ի սենեկի
քումմաքրականի՝ մարմնապա՛ս բացա՛ծանուցեր, զմը-
պիսի արժանապատի՛ւ գովութիւնս ո՛չ ընդունիցիս։
Ո՞վ շնորհաշուք գեղով արփաւոր ծածկութի՛ն՝ յան-
մատոյց գեղեցկութէն պաճոյճ փաղփաղեալ. ո՞վ հա-
մեստ հեզութի՛ խոնարհ անբծութի՛ կերպասիւք լու-
սոյ 'ի հոգւոյն պարապօղեցեալ. ո՞վ զարդուք երկ-
նայնովք ոսկեզօծ սրբութի՛, արծաթափայլ մաքրու-
թի՛, ականակապ պսակ քեզ փառաց զբարձրելոյն հռ-
վանի՝ 'ի գլուխ ընկալեալ. ո՞վ քառեակ մանեկաւ նը-

շուլափայլ մաքուր ուլանոցն յեռմամբ՝ ոյ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ 'ի մի էութիւն երկոցն հիւսմամբ 'ի յորդւոյն՝ լանջք սբ. քո շնորհաց առ լցեալ։

Որոնեալդ միայն 'ի կանայս՝ շրթամբք քահանայուհոյ մօր մարգարէին յովհաննու փառաւոր. և 'ի դասուց համազարմ նմանացեղիցս՝ ցանկալի երդոք ներբողական տաւղաց։ Զ 'ի թէ բանականս մարդոյ դրյութիւն՝ 'ի պատկեր ոյ 'ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծողին ջնորհս կալաւ. ապա և առաւել քեզ պարտական եմք երկրպագութիւն ունել շնորհ տիրամայր. որ ոյ 'ի ծառայի՛ կերպարան ստեղծման եղեր պատճառ. առ որ 'ի լրումն աւարտման՝ մարգարէական կտակն հասանիւր. այն զոր ասէ, եղեցի՛ 'ի վերայ առն ձեռն քո, և աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ 'ի քեզ խրախուսելոյ։ Զ և կարողութիւն և բազմութիւն հօր միածինն 'ի քեզ հանդուցեալ, և զամ որդիս մարդկան՝ վկայս. և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Զոյն նկարագիր՝ և կերպարանն հօր դոյութիւն 'ի քեզ բնակելումն՝ սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեաց։ Զայս յերուսի արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք սուրբ ածածին։

'Ի մարգկային զարմն՝ հրեշտակ երկնային. յերկնականաց սեռիցս՝ անմահ սերովբէ. 'ի հողային նիւթոյ՝ ոսկի սուրբոյ. 'ի ծովային բերմանց՝ շնորհալոյս մարգարիտ. 'ի յեռասեանն բուսոյ՝ քաղցրապտուղ ծաղիկ. 'ի հաւուց նախնեացն՝ ճիւռ օրհնութիւն. ցողոյն հանդարտի՝ սմբ անձրևաձիր. արևուն ծագման՝ ակն արբխակալ. մերկացելոյ այդոյն՝ աստղա-

ռա-

ռաւօտի · դիշերոյին մթոյն՝ խոսնակ բերկրանաց · օրինի ստուերին՝ տառ ճշմարտաճառ։ Սակս որոյ իբր զնիւթ դործանեայ այպանեաց բարեաց օրհնեա՛լ ես դու 'ի կանոյս · նախաստեղծին մերկացելոյ՝ փառք անկապտելի · վշտացելոյ անիծապարտ մօրն՝ սփոփիչ քաւութիւն · որդւոյ նոցին խռովութիւն՝ խաղաղութիւն ձայնատու։ Լու՛ սրդ՝ ո՛ր բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիւդ լեցի կարօղ դերասդ՝ ելբարչին մայր · անհասին ծնօղ · անբաւին դրկարան · ամենակալին յանձանձիչ · փառազարդողին զգեցուցիչ · վերօրհնելոյն գրդիչ։ Ո՛հ՝ յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի՝ յիրաւի՛ տացուք քեզ երանի մայրդ յիսուսի։ Ոնիրհելի դիտմամբ լուսալիր աչօք նկատեալ տեսակ · կտակ մակագիծ , անեղծ պայմանաւ արձան հաստատեալ · սահման յարակայ՝ մեծութեն կցորդուն · երկուց միութեն անայլայլականի՝ կապ պատկանակիր · վերին պատկեր կերպիւ կշռորդեալ · թեթև պարզուն , հիւթիւ բաղկացեալ · տառ տարբերակն , տողիւ ձևացեալ · տումար տենչալի , անսխալ դրոշմեալ · մատեան մեծուն , շնորհիւ նկարեալ · նամակ ընտրութեն , բանիւք բարդեցեալ · արձան անձնական , իմաստիւք զօդեալ · կնիք մատանւոյ , տերամբ կերպադրեալ։ Ո դեստ լուսանիւթ , երկնից արքայն · օթոց սրբութեն , անմահ բնակողին · յարկ վայելչութեն , անեղ շինողին · առիթ մարդկութեն , բանի ունեղին · դորձի մարմնութեն , վերին բնութեն · պատճառ պատշաճից , անպատկառ ճգնութեց · օրինակ ուղղութեն , անայլայլակ վրիպութեն · անպակաս ատճելութեն , լրման թերութեն · իսկուհի երկնային ,

կենդանեաց դաւառին. մանակից շնորհելոյ, հայ-
բական դթութեան. անպարտակիցն աղդակցութեամբ,
երկնիչ վերստին. անժամանակն արդանակի ծանու-
ցող ծննդեան։

Զոր զհօրն լուսոյ զորդի հարազատ՝ 'ի սաղմինս կոյս
աշխարհի՝ մայրենի կաթամբ ջամբեալ դիւցուցեր. և ոգի թեւովք խնայական պահպանութեամբ զպարուն-
կօղն պարփակեցեր։ Զոր զկենցաղոյս ընթացս՝ ընդ
լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր. և ըստ նմանութեան
արագման օդային թռչնոյ՝ 'ի յանցաւորաց աստի փո-
խեցար. և 'ի մէջ դասուց հրեշտակաց՝ ունօղ ոյժ յայտ-
նեալ ծանուցար։ Զոր լուսարփի ամպով առ 'ի նոցա-
նէ պատուհեալ համբարձար. և հողեղէն հասարակ՝
'ի քրովբէից աղի հանդուցար. և 'ի կանանց աղանցն
կերպիւ՝ արուսեկին տեսակաւ տեսար. և զնեալն բը-
նութեամբ մարդկայնոյ՝ յանճառաշնորհ խորհուրդ ծած-
կեցար. և 'ի ստեղծողէն քո և համայնից՝ հպատակօրէն
ձևով պաշտեցար. և հաստողին ծադաց աշխարհի՝ մայր
օրինակ անուամբ ձայնեցար. և մեղուցելոյ կնոջն ա-
ռաջնոյ՝ առանց յանցանաց զաւակ գովեցար. և ամ-
անբծաց ընտրութեամբ՝ պսակ սրբութեան դու դաւանե-
ցար. և իբրև զհանդարտ երինջ անարատ՝ արարչա-
ւանդ լծոյն մատուցար. և իբր յաւանակ կամաց ան-
բաւին՝ ճծութեան հեռեցար. և 'ի խորոց ծովէ աշ-
խարհի՝ շուշանական շաւղաբ ամբարձար. և իբր 'ի
դժնեայ փշոց խաստուեց յաշխարհիս զբաղմանց ծաղ-
կեցար. և իբր 'ի դառն արմատոց երկրի՝ քաղցրաճա-
շակ պտուղ յայտնեցար. և երրորդութեան անտես թաք-
նութեամբ՝ խորհրդակից սիրոյ կոչեցար. և ծածուկ հա-
ւաք-

լաքման բանին՝ իբր լուսատու ձորձոլ պատեցար. և անքակ էին տերութիւն սահման սկսման վերակարդեցար. և 'ի սրբանեալ միջոց քո ստեանց՝ զանկէտն 'ի տաշնին ծրար թաքուցեր. և 'ի կուսական քում բարունակէ՝ զանմահարարն ոսկեայզ հասուցեր. և միջնորդ կենաց երկոցունց՝ սքանչելապէս համարձակեցար. և համոզիչ 'ի խաղաղութիւն՝ մրրկածուփ շարժմանց կացուցար. և խրախակից վերնոյն բարձրութիւն՝ անկապտելի անուամբ պատուեցար։

Ա՛ռդ՝ յայրքանս, և 'ի սոյնպիսիս, և յեւ ընտրելական երգս բանահիւսից դերահռչակեալ ես. վսեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ աբ ածածին։ Ա՛ զի ոչ երևեալն 'ի քէն միածին անդրանիկ բնութեն հօր՝ սկիզբն ասի հետևման խաշունակ մնհակիր ճգանց. այսպէս երանեալդ և բարեբանեալդ, գերօրինակ ցուցման տեսակի ածակրօն կարդաց ծագեցար։ Եւ զանմատոյց հուրն կիզանօղ՝ անապական ծաղբմամբ ծախեցար. քև զարագեալն 'ի թեւս օդոյինս՝ 'ի քառընթաց կենդանիս տեսաք. քև զանկրցորդն տեսականաց, 'ի մարդկայինն կերպ նկատեցաք. քև զգովեալ բարձօղն մեղաց, իբր զգառն ճաշակ ընկալաք. քև դատելոյն 'ի չարագործաց, ոչ այլ ճշմարտի երկրպագեցաք. քև զանծանօթն հօր էութիւն, աղաչակցապէս օրհնաբանեցաք. քև զմուրհակ պարտուց անիծիցն, 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք. քև զանտեսն աչաց հրեշտակաց, աղայական տիրաք գգուեցաք. քև զանսահման բանին բնութիւն, 'ի հասարակաց ծին տիպ համբուրեցաք. քև զաղամն նոր հոգեղէն, 'ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քև զարեգակն արդա-

դարուէ, կենցաղակից մեր կցորդ ստացաք. քև զան-
ժամանակ բանին էուԹի, սկսեալ 'ի դաւԹայ պատ-
մեցաք. քև զանհամեմատն մարդոյ պատկերի, մեզ նը-
մանատիպ գործով գրեցաք։ Ա.ՐԴ՝ այսպանեաց սը-
բազնական մասանցս Ճառեցելոց՝ դու միայնակ պատ-
Ճառ՝ անարատ կուսից նպատակ կրօնից՝ տիրամայր
սբ ԱԾԱԾԻՆ։ Բանզի ԹԷ էր 'ի քէն ամենեալ ու-
ղէշն երկնային, ոչ էր պտղաբերեալ զանձաշակելին 'ի
շրԹանցն մեր հաղորդուԹի. և ԹԷ էր երևեալ հօրն
արդարուԹի 'ի յերկնից, չև էր սկսեալ ճշմարտու-
ԹԻՆ 'ի յերկիր. և ԹԷ էր յղացեալ յանփորձականդ
քումարգանդի, ոչ էր մարմնացեալ. և ԹԷ էր յայտ-
նեալ մերով բնուԹեամբ, ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ
անհասն իմաստից. և ԹԷ էր կրեցեալ 'ի դիրկ բար-
ձողաց հողեղէն բազկաց, ոչ էր ծանուցեալ. և ԹԷ
էր համբուրեալ երկրաւոր շրԹամբք՝ ոչ էր ճառե-
ցեալ. և ԹԷ էր հետևեալ 'ի մարդկան ընԹացս, ոչ
էր քարոզեալ էակն 'ի յէից. և ԹԷ էր Թափեալ
իւղն անապական 'ի վերհագուստն, ոչ էր զմեզ օծեալ.
և ԹԷ էր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մը-
կըրտեալ. և ԹԷ էր խրախուսեալ մարդն 'ի յերկ-
նայնումն, ոչ և էր սրբեալ. և ԹԷ էր խոնարհեալ
բարձրն 'ի յընտանի փառացն, ոչ էր վերացեալ 'ի ըս-
տորնայնոցս առեցեալն։ Բայց մարմնացաւ, որքան
մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ որումՄ ծանու-
ցաւ. աւետարանեցաւ, ուստի փառաւորեցաւ. իսկ
մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և
վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ.
իսկ անանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդե-

ցաւ,

ցաւ , որով պաշտեցաւ . իսկ երկրպագեցաւ , որով
խոցեցաւ . իսկ կենդանացաւ , որով թաղեցաւ . իսկ
պատուեցաւ , որով պատժեցաւ . իսկ ամաչեցոյց , ո՞
րով պատկառեաց . իսկ բերկրեցոյց , որով տրտմեցաւ .
իսկ զգեցոյց , որով մերկացաւ . իսկ ողջացոյց , որով
բևեռեցաւ . իսկ կանգնեցաւ , որով վտանգեցաւ . և
սլացաւ ոգի վերնային , թռեաւ ոգի հոգեղէն . ծածկ
եցաւ ոգի զանքննին . փախեաւ ոգի զանհաս . 'ի յամպս
երկնից եդ զգնացս . դովեցաւ որպէս միածին . բո՞
սորաբուղխ կայլակաւք ներկեաւ . անկից վերացն խո՞
ցով հարցաքննեցաւ . 'ի վերից անմահ հրեշտակացն
հաւատացաւ . յաղթօղ մրցման և մարտի փառաւորե՞
ցաւ . դատաւոր արդարակշիռ յամ աղգաց վերապատ
մեցաւ : Բանզի 'ի քէն հիմնադրեաց զսկիզբն մար՞
դեղութիւն անեղն իսկութի . և յընտրեալ անպատում
ընտրէ՝ զայս ամ անփոխանորդելի պարգևական ձիրս
ընկալաք : Լաւ քեզ ամ այս պատրաստութիւն բարեբաս
տութիւն բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հան՞
դերձեցաւ : Լաւ զամ փառս երանական լուսոյ նը՞
շուլից՝ վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոց , բաղ
մագովեստ պայծառ յօրինման նոր արարածոց անճառ
շինուածոյ աբ երկեղեցւոյ , 'ի քէն ծնիցելոյ կերպիս
մերոյ և բարձրացելոյ անուանն յի , ծնկովք կրկնե՞
լովք մատուցանեմք : Ուստի և քեզ բերկրեցելոյդ՝
զսովորականն օրհնաբանութի բանիս երկրպագեմք :
Օրհնեալ ես դու 'ի կանայս , գլուխ նոցին պանծա՞
նաց և պայծառ պսակ : Պսակ կուսութիւն , մա՞
քուր հարսնութիւն . պսակ ընտրութիւն , անփորձ դո՞
վութիւն . պսակ անեղծութիւն , լուսոյ նմանութիւն . պսակ

շնորհանորոգ, էին ծնեալք. պատկ երանելեան, բանին հօր մայրութիւն. պատկ աբ պարծանաց, կենացն բարձրութիւն. պատկ պայծառափայլ՝ վարուց խնամատութիւն. պատկ տիրապատուաստ՝ երկնահանձարն գիտութեան. պատկ պիտանական՝ եկեղեցւոյ դեղեցկութեան. պատկ պաշտելութիւն՝ սիրելի նորոյ զարդարման. պատկ յոգնանկար՝ յարփիւց եօթանց փայլատակման. պատկ առաջնորդական՝ վերնոցն ազգակցութիւն. պատկ անբծութիւն՝ շաւղաց արդարութիւն։

Ընդ՝ ամենեցուն վերակարդելոց թոռոցս այսոցիկ՝ բնակարան բաղձալի և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին, զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորաստեղծականն ադամայ. որոց անհամար և անթիւ ազանց՝ ամրական և պահպանական պարիսպ կառուցար։ Բանզի յարժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութիւդ միշտ ապաւինեալ, մնամք 'ի հաստատութիւն. խնամեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ աստուածնիդ։

Պատուար պճնայօրէն, 'ի զանազան մաքրազարդ ականց յարմարեալ. պատուար հրապարփակ, անմատոյց ընդդիմղացն հինից. պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց. պատուար ամենահրաշ ըստ եզեկիէլի, որ աղխեալ զմուտքո՝ ճշգրտապատում գրեաց. պատուար շրջապարիսպ ըստ դաւթայ, որոյ հիմն անշարժութիւն 'ի բարձրելոյն հաստատեցաւ. պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ պօղոսի, որում զհանուրս բնակիչս արարեր։ Բանզի զաստ ծնար 'ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր

ւոր սիոնի՝ որդիս արարեր վերնումն հոգևորին։ Որոյ աղաղաւ օրհնեցաւ արդարդ քոյ կուսութի՝ ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնաւորն և տաճար հօր իսկակցին։ Որով արդարացեալս՝ ի քեզ ընծայեալ բան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի՝ յուղխից հեղեղաց յաւուր անձկութեան։ Մաքրութի կուսից, և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութե հաստատութե եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին այ։ Զ քեզ յաւէտ օրհնութիւն միշտ պատկերեմք՝ ի նոր իրեալ տեղիս սրբութեան քումդ տաճարի, և ի թեւս պահպանութե լոյնատարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս մերս ի սմն տարածեմք։ և անդերկեայ յուսով հաւատամք ազրիլ։ Զդդ աղաչեմք՝ ընկալ զերդաբան օրհնութի մերում լեզուի։ և հաճեալ տացես սմն ըզձիրս շնորհաց սիոնի և բեթղեհեմի։ Ասի արժանասցուք ընդունել մասն փրկութե՝ յաւուր դալըստեան մեծի յայտնութե՝ փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն այ, ոն յի։ Զ,ս իբր զպատճառ սկզբնաշաւիղ այպքանեաց բարեաց, ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուհասցուք՝ անժամանակ էին բարձրացեալ ծնող։

Զ,ՈՐԻՆ ՎԵՐՈՒՆ Ի ՎԵՐՈՅ ԵՐՈՅ ԱՆՈՒԱՆ ԻՐՈՅ։

Ներազանց ջանից կշռման երկնային բնութե, և քրովբէականն նախադասութե եղեալ վեհական, սրբուհի պայծառ առագաստ փրկչին քի։ և նորուն իսկ տեսաւորիչ վա՜ մեր։ ծուռնը կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի։ Հայցեա՛ վա՜ մեր առ ծնեալդ՝ ի քէն ա՜ծ՝ ի մարմնի։

Ոսկէից յոգնաթիւ մասանց բերկրութիւն՝ ազգաց և
ազանց արմատ օրհնութիւն. 'ի ծագմանէ փառացն
երկնայնոյ՝ անստուեր նշոյլ տարփալի շողեալ 'ի ստո-
րինս տեղի. անորիշ հպմամբ՝ մերձաւոր անմատոյց
լուսոյ՝ անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ. 'ի մա-
հու պարտեացն զերծո՛ զառ քեզ ապաստան ծառայ
քո քումդ որդւոյ։

'Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուց՝ երկ-
նայնոցն կրօնից եղեր հպաւոր. մնրիամ առիթ
տեսութեան նոցին զանգնինն որդւոյն կերպարան։
Ուստի տեսին զանկէտն՝ սկսեալ, և երանեցին զար-
մատդ և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութի
կենաց. և պաշտպան զսիրամօրդ ձեռնտո՛ւութի։

Զնշանաւորեալ այսօր 'ի քեզ զնմանալեացն փարթա-
մութիւն. որ սլացեալ հասեր 'ի բարձունս երկնից.
իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման.
յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու. և ցու-
ցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին.
սո՛ւրբդ տիրամայր՝ արդահատեա՛ միշտ զողորմութի
որոց պանդխտիմք 'ի վիհս ներքին։

Ունօղ հրճո՛ւանաց անթիւ խրախուեց ա՛ծային ան-
կէտն խոստմանց 'ի բուրաստանս անդաստանաց տի-
րական անկոյն. որոյ ստեղուկք շառաւիղացն՝ երկ-
րային հնարից դերազանց. անդր մուծցես զքո դաւա-
նողքս սբ տիրուհի մայրդ յի։

Ոտեմք 'ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղցրալուր
գրաւ աշխարհի. միայն երանեալ և բարեբանեալ.
հօրն հաճութիւ հոլանաւորեալ. որդւոյն ծնօղ. հոգ-
ւոյն վերընդունօղ. երրորդութիւն փառացն տարօղ.

վերանկարեա զառ յաւազանէն անախտ արդանդէ ըղ-
կարդացեալս անուն՝ 'ի դիր մատենի վերնուն դրոշ-
մոցիդ։ Եւ զերդագրութի սակաւամասնեայ այսր դո-
վեստի, արձանն հաստատեա միշտ անկործան սրբոյդ
առաջի. ընծայեալ մարմնոյս՝ զմրաշարս գիծ, և ըղ-
գայական շնչոյս՝ զպատկեր բանիս։ Օ՛ի իբր 'ի գոյից
երկուց զուգելոց 'ի մի խառնութի միոյ կենդանւոյ,
միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութիւն, ոչ անեղծ
պաշտօնէիցդ օրհնաբանութիւն։ Որերևս 'ի ձեռն զո-
րեղ քոյին հայցուածոց, լիցի մեզ անդատապարտ հա-
մարձակութի՝ յատենի մեծ և ահաւոր սուրբ դատա-
ւորին։ Եւ գտցուք արժանի՝ անբիծ վարուք և ու-
ղիղ դաւանութիւն հաւատոցն հաստատութիւն՝ հան-
դիպել և անդանօր ընծայի բանից քումդ երանութիւն.
փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն՝ յանդիման դի-
մաց պաշտելի և պատկերի քում ծածկեալ և լուսա-
նշեալ մեծ պայծառութիւդ՝ զէութի անքակ և ան-
քննելի սբ երրորդութիւնն՝ 'ի միում տրութիւն և ա-
ստուածութիւն։ Որում վայելչական պատիւ և գովեստ
անդադար երգոց. այժմ և միշտ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

Հանուռ-ծոռ-Լիւն աղջկից Եռաձիի և փաջ վարդապետի դիլ-
նաբաց գոշի խոստիրն ծգնաւորի և բանիբուն հռետորի՝
ասացեալ 'ի սուրբ պատարագին։

ՏԷՐ, Ա՛Յ իմ յո՛ք բան հօր և կերպարան, կենդանի և կենդանարար, յոյս և փրկութիւն ամենեցուն՝ որ կարդան առ քեզ։ Որ շնորհես առաւել քան զարժանն. և սաս խնդրողացն՝ զպիտոյս կարեաց։ Զի ո՛չ միայն արարեր և ստացար՝ 'ի վերատին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քոյ. այլև միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան։ Ա՛ման որոյ՝ մեծ եղև մինչև յերկինս ո՛ղորմութիւն քո. և յա՛մ երկրի ցուցաւ փառք քո։ Լա՛ւ այնքան գերազանցեաց պարգևաց քոց նշանակ, մինչ զի ո՛չ միայն մարդկայինս հիանան աղաք. այլև՝ երկնային զօրքն, և առաւել մերձակայքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւ ասելով. Սո՛ւրբ՝ Սո՛ւրբ՝ Սո՛ւրբ՝ Տէր զօրութեանց. զորս և ուսեալ մեր՝ երգեմք 'ի ժամ անմահիդ զենման՝ կցորդելով անմարմնոցն երգանկաց։

Զի զառ մեզ զանճառն տեսանելով զհորհուրդ, ընդ մեր եղեալ՝ զօրինակ մահուն ճշմարտի, մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան։ Զի եթէ զօրինակն անդիտանան դուսանութեան՝ միայն զսուրբն կարդան զանուն, ուստի զերեսան ծածկեն և զոտսն։ Որք զոր ասասցուք զօրհնութիւն կամ զդոհութիւն։ Բայց միայն զքեզ օրհնեսցուք սարսափմամբ, և հաւատովք մերձեսցուք

յան-

յանտեսանելիդ և 'ի տեսանելիդ անճառութիւն։

Օրհնեմք զՀայր՝ զառաքօղ փրկողիդ։

Օրհնեմք և զՀոգիդ սուրբ՝ զկատարիչ և զսրբիչ զդալլսոյն օրինակի։

Օրհնեմք զանիմանալի զքո խոնարհութիւնդ։

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամդ։

Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո սուրբ շնորհեցեր մեզ 'ի քաւութիւն։

Օրհնեմք՝ որ հուր ածութեան քոյ՝ ոչ կիզու ըզ-բնութիւնս հողեղէն։

Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամ, այլ տանին նիւ-թական և նոճաստական եկեղեցիք։

Օրհնեմք՝ որ նստիս 'ի քերովբէս, և բազմիս 'ի սե-ղան սրբութեան։

Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին, և իննեակ դասք անմարմնոցն, բառնան մատուանք քահանայիցն։

Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելեօք մատուցանէր 'ի բերան մարդարէին. իսկ սատ ձեռամբ բաշխիս հողեղինաց և մասամբ մատչիս Ճաշակողայ։

Օրհնեմք՝ որ ոչ գարշիս յաղտեղութենէ մարմնական կրից, այլ մաքրեաս սրբութիւնք քով։

Օրհնեմք՝ որ զպէսպէս յանցանսն անտես առնես զազգի մարդկան՝ որք հաւատով ապաւինին 'ի քեզ։

Օրհնեմք՝ որ միջնորդութիւն կենարար մարմնոյ և արեան քոյ՝ հաշտեցուցանես զՀայր քո՝ ընդ օտարացեալս մեզօք, տալով վճիռ անստելի, ոչ ուտողացն և ոչ ըմպողացն՝ ոչ ունել կեանս. և ուտողացն և ըմպողացն՝ զենակիցն 'ի քեզ, և զքեզ 'ի նա։

Բանդ տիրապէս մարմին և արիւն քո սուրբ կա-

տարեալ արձակումն է և ազատութիւն 'ի կապանաց մեղաց։

Օ՛ի եթէ սուրբք ամառ հասարակ յիշին, և քոյոցդ բարեաց կարօտին, զիարդ և ոչ ես՝ անկեալս 'ի շնորհաց և ունայնս 'ի բարեգործութեանց։

Օ՛ի եթէ այժմ ոչ ողորմիս, յորում բացեալ ես զդուռն անձառ ձրից, երբ տայցես յայլում ժամու. քանզի անվրէպ յայսմ ժամու է առնուլ 'ի քէն ըղ-խնդիրս, որպէս և սուրբք 'ի քաղցրութեան ժամանակի։

Օ՛ի եթէ յորժամ ընդ հանուր երկինք և երկիր առ հասարակ բարեխօսեն՝ ոչ լսես, այլ յորհամ ժամու զամենեսեան ժողովեցիս։

Օ՛ի եթէ մինչ հիանան անմարմնոցն դասք ընդ առատութի պարգևաց քոց, և զօրհնութիս մատուցանեն, ոչ առնում. յորժամ 'ի կշիռ դնես՝ զիարդ ընկալայց։

Օ՛ի եթէ յորժամ դասք հրանիւթիցն դոչեն ասելով՝ ողորմեա՛ քո արարածոց, մասն ինձ ոչ տացի. ընդ որոց այլոց առիս։

Ա՛ղաչեմ զքեզ Տէր, մի՛ ունայն դարձուցաներ զիս յամենասուրբ երեսաց քոց, անչափ պարգևացդ իշխան։

Յորժամ յորդեալ է իբրև զգեաս 'ի լրութենէ ծովու մեծիդ պարգևք. ուստի և ինձ կաթիլ մի բաւական է։

Օ՛ի սակաւն քո՝ անչափ ունի մեծութիւն. և առաւելեալ է քան զլեռս ծովու։

Օ՛ի եթէ 'ի ծագիլ լուսոյ արեգականդ՝ ոչ լու-

սաւորիմ , 'ի դիշերի որպէս պայծառացայց ։
Եւ եթէ ձրի բժիշկդ մերձ ես , և զդեղդ կենաց ոչ տացես . այլ ուր գտից բժիշկ , զի բժշկեցայց ։
Եթէ յարուցչէդ պատահեալ մեռանիմ , և ո՞ զիս յարուցէ ։
Եթէ բնութիւնքս ճոխացուցիչդ զաղքատութիւնս ոչ բարձցես . առ այլ ոչ երթայց 'ի վարթամաց ։
Ընդ խաղաղութիւնս աշխարհիս՝ զոր շնորհես , տուր և ինձ խաղաղութիւն յամբոխից կրից , ընդ հաստատութեան եկեղեցւոյ , հաստատեա և զշարժեալ անձինս ։
Ընդ քահանայապետից՝ և քահանայից՝ սարկաւագաց և դպրաց՝ և ամ ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութեան , զօրութիւնքս քո և զիս ընդ հովանեաւ քով ամրացո ։
Ընդ թագաւորաց և իշխանաց , զօրավարաց և զօրականաց յաղթօղ և զիս 'ի վերայ աներևոյթ թշնամանն արասցես ։
Ընդ ննջեցելոցն հաւատացելոց յիշեա և զիս տէր զմեռեալս մեղաք . զորս 'ի խորոցն հաներ անդնդոց , ընդ նոսին հան և զիս 'ի ջրին բանդէ՝ միջնորդութիւնքս կենարար մարմնոյ քոյ և արեան , արժանապէս գոհանալ զողորմութիւնքս քումմէ ։
Գոհանամ զքէն Տէր՝ որ արժանի արարեր զիս տեսլեան սուրբ խորհրդոյ քոյ ։
Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուցաց զօրհնութեան ։
Գոհանամ՝ զի զանծախսութիւնքս քո լսել արժանացայ։
Գոհանամ՝ որ զհոգիս յուսով լցեր , և զսիրտս ուրիդ ըմբռնութիւնքս ։

Օ՜ որ օրհնութիւն կամ զգոհութիւն քեզ մատուցանեմ, ա՜ծ իմ յիսուս, զի արժանի եղէ կենաց հացիդ և անմահարար բաժակիդ։

Գոհեմ՝ զի ջուր է ինձ մերձենալն ջարեօք, և տապակուանք հեռանալն։ մանաւանդ զի՝ անսուտ սահմանեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում։

Ա՜հա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ, և քեզ է յարուցանելն։ զի փառաւորեցից զքեզ ընդ հօր քում ամենազօրի, և ընդ ամենասուրբ հոգւոյդ Հշմարտի։ այժմ և միշտ և յաւիտեանս։ ամէն։

Ամենակալ ամենախնամ Ա՜ծ՝ յամի օրհնեալ։ որ յամի ես և ամենեցուն անհաս, և բովանդակեալ պահես զամ արարածս, զհոգեղէնս և զհողեղէնս, զանանիւթս և զնիւթեղէնս, զի մահկանացուաց կեանք ես և անմահութիւն յարութեանցութեան։ Բաց զդուռն ողորմութեան քոյ՝ գլխաց, և ծագեա լոյս խաւարելոյս։ զծանրացեալս բեռամբք մեղաց՝ թեթևացո։ զսևացեալս աղտեղեալ կրիւք՝ սպիտակացո։ զսառուցեալս յաճային սիրոյդ՝ ջերմացո։ զմթացեալս անասնական սահեցմամբ՝ զդաստացո։ զըմբռնեալս 'ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա։ զմանրեալս 'ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենդանարարեա։ և զհոգիս խաւարեալ մեղաց՝ անճառ լուսով քով լուսաւորեա։ և միշտ առ քեզ հայեցո։ զգերեալ խորհուրդս 'ի գերողէն՝ առ քեզ դարձո։ զըմբռնեալ կամս 'ի խարդախողէն՝ զերծո։ զյօժարութիւն՝ քաղցրութիւն 'ի քեզ միացո։ զբանական մանն հոգւոյս՝ խոհեմացո։ զսրամտա-

կանն

կանն արիացո՛ . զցանկականն ողջախոհացո՛ , և առ քեզ դարձո՛ . զերիս մասունս՝ արդարութիւն ամրացո՛ . զնսեմացեալ միտս՝ պայծառացո՛ . զներոտրամադրեալ բնութիւն բանիս՝ հոգւով քո խառնեա՛ ։

Օ արտաբերեալս յօգուտ լսողաց՝ շնորհօք քո ներկեա՛ . զզայսաբանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո՛ . զզայութիւն պատուհանացս՝ ազդմամբ քո լցո՛ . տեսանելեացս՝ ցոյց զողորմութիւն քո . լսելեացս՝ լսելի՛ արա զձայն քո . ճաշակելեացս՝ քաղցրացին բանք քո . հոտոտելեացս՝ բուրեցի հոտ կենաց քոց . միշտ առ քեզ պաղատիլ և աղաչել և երկիրպագանել . բաղխմամբ կրծից , տարածմամբ ձեռաց , տատանմամբ մատանց , կականմամբ ձայնից , հառաչմամբ սրտից , հեծութիւն ողբոց , արտասուօք աչաց , յայտնութեամբ գաղտնեաց , խոստովանութիւն մեղանաց , և ՝ի քէն ընդունիլ թողութիւն սխալանաց , քաւութիւն յանցանաց , հանգիստ փառաց , և զուարճանալ տեսութեամբ աչաց , և վայելել ՝ի փառս երրեակ անձնաւորութեդ յաւիտենից յաւիտեանս . Ամէն ։

Տեր Աստուծոյ վարդապետի • ասացեալ Ներսէսեան 'ի սուրբ Գրիգոր Նարեկացին։

Արարիչ ամենայն լոյս երկնային • յաւ քո հօր միածին • լեր շնորհիւ քո անքննին • զսուրբ Գրիգոր Նարեկացին։

Բազմեալ աղբիւր անհիւթական • անձառ հոգւովդ աստուածական • մեղուացելոց յոյս փրկութիւն • յանցաւորաց ազգի մարդկան։

Զանձ անբասիր անապական • աննիւթ նիւթով շարադրական • զի որք առնուն փարթամանան • շաՀով երկնից արքայութիւն։

Գեղ խոցելոց 'ի բանսարկուէն • և անչափուն 'ի չար ախտէն • մեզ օգնական լինի և ղէն • ընդդէմ այսոց նեռաձգողէն։

Լրանելի ՀՐ սուրբ Գրիգոր • դուռն բացեր մեզ Հոգևոր • ռահվիրա ցուցեր մտաց մերոր • բանիւ քոյին արդիւնաւոր։

Օ արքայն երկնից աչքք տեսար • զՀոգին աստ սուրբ ընկալար • Հօրն լուսոյ ուռ կազմեցար • յորթին քո պատուհաստեցար։

Լին Հրոսին մաքրեցար • անտես բոցովն վառեցար • ընդ այ խօսակցեցար • մեղուացելոց ցուցեր դուռ ՀԱՐ։

Ընտրեալ ծաղիկս 'ի սուրբ դրոց • Հաւաքեցեր 'ի մի շարոց • դեղ կազմեցեր Հիւանդ Հոգւոց • պարգևեցեր ձիր մարդկայնոց։

Թախանձանաց բանս լալագին • բարբառեցար դու 'ի

'ի խորին • խորտակեցեր զժանիս չարին • զդիւացդ
դընդին լեգէոնին։
Յամենակալ յերին ցուցար • քան զառաջինսն
պատուհեցար • յերեկոյիս լոյս ծագեցար • քան ըզ-
միջօրեայ պայծառացար։
Իմաստութիւն քո անքննին • անբիծ վարուքդ իսկ 'ի
մարմին • եղեր պարծանք տանս արամին • ապքանազեան
հայկ արմենին։
Լուսաւորչին Համանրման • գրիգորիոս արթուն
անուն • զի որք նուվաս 'ի լոյս դարձան • ևս առա-
ւել քև ցնծացան։
Խաչեալ մարմնով ընդ քի • զօրհանապազ միշտ յա-
զոթի • գրիգորիոս լոյս գեբարփի • լուսաւորիչ
մեզ 'ի հոգի։
Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար • անմահութիւն հոտ
բուրեցար • գրիգորիոս ծառ ծաղկեցար • պըտուղ
կենաց պարգևեցար։
Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր • յուսահատից
յոյս կանգնեցեր • գրիգորիոս բանս երգեցեր • յան-
ցաւորաց կանոնս եդեր։
Հաղբն չարին անխըզելի • որ ընդ մարդկան պա-
տուտեսցի • գրիգորիոս սուր երկսայրի • սուրբ
աղօթիւքդ խորտակի։
Զայնիւ քոյին հրսկողական • սանդարամետքն ահիւ
դողան • գրիգորիոս դու աննըման • հողանիւթ-
եայ բնութեանս մարդկան։
Ղամբարափայլ ճառանչ փառաց • 'ի գաւառին ըռբշ-
տունեաց • քան զարեգակն ընդ աստեղաց • նայն-
պէս բան քո ընդ այլ կտակաց։

Ն՚ըրագ եղեալ յաշտանակի • ըստ հրամանի Տն յի •
գրիգորիոս մարմնով յերկրի • հոգւով 'ի դասս
հրեղէն գընդի ։
Ա՚շտահոսան հոգւովն անձառ • յարմարեցեր բանիւ
մեզ ճառ • գրիգորիոս մըտաք պայծառ • փարատե-
ցեր զմեղաց մըռայլ ։
Յանեղ լուսոյն լոյս կոչեցար • յաշտանակի մարմ-
նոյդ եղար • եկեղեցւոյ ջահ վառեցար • խաւար
հոգւոց դու լուսարար ։
'Ն՚ախանձաւոր հարանց վարուց • ճգնաւորաց նախ-
նի դասուց • գրիգորիոս ցանկ խրատուց • բանս
խօսեցար վասն նոցունց ։
Շ՚առաւիղաք ըաբունական • առեր շնորհս և դա-
ւազան • քարոզ լինիլ որդւոց մարդկան • կոխե-
լով զօձն անդընդական ։
Ո՚ւրախանան յաւէժական • ազգըս հայոց թորգոմա-
կան • յորժամ լսեն զքո խօսեալ բան • որ դեղ
կենաց է փրկութեան ։
Չարին յաղթեմք քոյին երդով • և զնա ուժգին
խոցոտելով • զլսպէս մեղաց մեր մաքրելով • քաղց-
րանուագ ոյսու դեղով ։
Պարուց վերնոցն հրակերպեան • եղեր մարմնով հա-
մանրման • գրիգորիոս կանգնեալ արձան • ըռըշ-
տունեաց ծովն յանդիման ։
Ջ՚նջեալ 'ի մէնջ զաղտս մեղաց • սուրբ աղօթիւք
քո յոտընկաց • գրիգորիոս տեղ պարծանաց • ակն
լուսոյ հայաստանեայց ։
Ռ՚ետին կենաց մեզ կազմեցեր • առաքապէս մեզ
բաշխեցեր • գրիգորիոս կոչ արարեր • զքաղցեալս
հոգ-

Հոգւով կերակրեցեր։

Սուրբ և մաքուր բանից քոյին. այլասեռից ազգ ցանկոյին. երեսփափագ սիրով եկին. և գծագրեալ առեալ գնացին։

Ա՛ղջուացելոց դու մելխիթար. և նեղելոց անդորրարար. տէր սուրբ գրիգոր Հայր բարերար. այսահարից դեղ և հընար։

Տաղանդ շնորհաց զոր ընկալար. բազմապատիկ զայն շահեցար. գրիգորիոս կատարեալ այր. ածութիւնն կամարար։

Բամից ստեղծչին դու խօսակից. ճգնաւորաց աղօթակից. վարդապետաց հանուրց վարժից. գրիգորիոս պետ բաղձալից։

Ցնծան մանկունք սուրբ հաւատոյ. ընդ լուսակիր աղօթքս քո. գրիգորիոս դու սիւն լուսոյ. Հայաստանեայց եկեղեցւոյ։

Լինանդ հոգւոցքս մարդկային. բարեխօսեա՝ ան յիսուսին. սուրբ աղօթից քոց կցորդին. բանք տիրամօր ածածնին։

Փայտն կենաց սրբոյ խաչին. և ձայն սրբոյ կարապետին. ստեփաննոսին՝ սուրբ գրիգորին. յորդիս լուսոյ զմեզ ծընողին։

Ո՛Ռև ըզ քո փառաբանեմք. ընդ հօր հոգւով երկրպագեմք. երրորդութեն փառս վերերգեմք. ածութիւն մի դաւանեմք։

Բայց ընդէր Հաւատարանչացն ասէր՝ Յարուցցուցէ՞ Նէրգալ զմեռեալսն։ Զի բժշկումն դերոյ Տի։ Յիսուսանչէր զբեղէց գլխոսորեալսն առ այսր, ըստ գրեալսն ի Բուժումն հոգոյ և մարմնոյ։

Սրբոյ Աւետարանն Յիսուսի Որ Ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւն՝ և զամենայն ախտս ի ժողովրդեանն։ Եւ եկն լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորւոց. և մատուցին առ նա զամենայն հիւանդս, որ նեղեալ էին ի պէս պէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի գալիլէէ և ի դեկապոլեայ և յեղէմէ և ի հրէաստանէ և յայնկոյս յորդանանու. և բժշկեաց զնոսա։

Այլ երբ էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի երկիր պագանէր նմա և ասէր. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Զգեաց զձեռն իւր և հասոյց ի նա յա՝ և ասէ՝ կամիմ սրբեսց. և վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւն։ Եւ ասէ ցնա յա, զգոյշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո զպատարագն՝ զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա։

Եւ

Եւ մնել 'ի կախառնու

ուն մեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի կայ մեր և քո յա՞ որդի՞ այ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին՝ եթէ հանես զմեզ ասի, հրամայեա՛ տուր մեզ երթալ յերամակ խոզից։ Եւ ասէ ցնո՝ երթայք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամ երամակն ի դարէ անտի ի ծով. և մեռան ի ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան. և երթեալ ի քաղաքն պատմեցին զամ, և զիրս դիւահարացն։ Եւ ահա՛ ամ քաղաքն ելեալ ընդառաջ յի. իբրև տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ ի սահմանաց նոցա։

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս և եկն ի քաղաք իւր։ Եւ ահա՛ մատուցին առ նա անդամալոյծ մի՝ որ դնէր ի մահիճս. և տեսեալ յի զՀաւատս նց՝ ասէ ցանդամալոյծն, Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա՛ ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս՝ Հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ յի զխորհուրդս նց՝ ասէ ցնո՝. ընդէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։ Զ՞ինչ դիւրին է, ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ արի՛ և շրջեա՛ց։ Այլ՝ զի գիտասջիք՝ եթէ իշխանութի ունի որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս։ Յայնժամ ասէ ցանդամալոյծն՝ արի՛ ա՛ռ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր։ Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւորեցին զԱստուծ զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան։

Ընդ որոմ նա զայս խօսէր ընդ նոսա՝ ահա՛ իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր, դուստր իմ արդ եւս վախճանեցաւ, այլ եկեալ դիցես զձեռն

քո

քո 'ի վեր նը, և կեցցէ։ Յարեաւ յն՝ և գնաց զկնի
նը աշակերտաւքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռա-
տեսն երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ
'ի դրաշակ հանդերձի նը։ Քանզի ասէր 'ի մտի իւ-
րում, թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նը փրկիմ։
Իսկ յն իբրև դարձաւ և տեսեալ զնա՝ ասէ քաջալե-
րեսց դուստր՝ հաւատաց քո կեցուցին զքեզ։ և փրկե-
ցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ։ Իբրև եկն յն 'ի տուն
իշխանին, և տեսեալ զփողարսն և ամբոխս յոյժ, ասէ ցնս
'ի բաց գնացէք։ զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ
ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրև էլ ամբոխն
'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նը և յարեաւ աղջի-
կն։ Եւ էլ համբաւս այս ընդ ամ երկիրն ընդ այն։
Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յն՝ զհետ եղեն նը
կոյրք երկու։ աղաղակէին և ասէին, ողորմեա՛ մեզ
որդի դաւթի։ Եւ իբրև եկն 'ի տուն, մատեան առ-
նա կոյրքն։ և ասէ ցնոսա յն։ հաւատայք եթէ կա-
րօղ եմ առնել ձեզ զայդ։ ասեն ցնա՝ այո՛ տը։ Յայն
ժամ մերձեցաւ յաչս նց և ասէ, ըստ հաւատոց ձե-
րոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նց։ և սաստեաց նոցա
յն և ասէ՝ զգ՛ոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։ Եւ նոքա
ելեալ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդ այն։
Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա
այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւ՝ խօսե-
ցաւ համրն։ և զարմացան ժողովուրդքն և ասեն, թէ
և ոչ երբեք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլ։ Իսկ
փարիսեցիքն ասէին՝ թէ իշխանաւն դիւաց հանէ
դա զդևս։
Եւ շրջէր յն ընդ ամ քաղաքս և ընդ գիւղս՝ ուսու-

ցանէր 'ի ժողովուրդս նոցա. և քարոզէր զաւետարանն
աղբայրութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւն
'ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն դիտացաւ 'ի նոսա, զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձքն բազումք են՝ և մշակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զնս և բժշկել զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւն։

Եւ գնացեալ անտի յն՝ եկն 'ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր դօսացեալ էր. հարցին զնա և ասեն, եթէ պարտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնս, ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու, մի թէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն, ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց, և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս՝ խորհուրդ առին զնմանէ թէ որպէ՞ս կորուսցեն զնա։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր՝ և բժշկեաց զնս. զի զհամրն և զկոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին. մի թէ սա՞ իցէ քոյն՝ որդի դաւթի։ Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ բի՛ւրք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ բէեղզեբուղաս իշխանաւն դիւաց։

Եւ ելեալ անտի յն՝ գնաց 'ի կողմանս տիւրոսի և

սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նոցա, ելեալ աղաղակէր և ասէր, ողորմեա՛ ինձ տէր որդի դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։ Եւ նա ոչ էառ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նո՛ր աղաչէին զնա և ասէին, արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր։ Եւ պատասխանի եառ և ասէ, ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր, տէր օգնեա՛ ինձ։ Պատասխանի եառ նմա և ասէ, ոչ է բարո՛ւք՝ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ Եւ նա ասէ, այո՛ տէր. քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տէրանց։ Յայնժամ պատասխանի եառ նմա յի՛ և ասէ, ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ ո՛նդ և կամիս. և բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։

Եւ գնացեալ անտի յի՛ եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց. և ելեալ 'ի լեառն նստէր անդ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս կաղս՝ կոյրս՝ համրս՝ միակողմանիս, և այլս բազումս, և ընկեցին զնոսա առ ոտս նորա, և բժշկեաց զնոսա։ Մինչև զարմանալ ժողովրդոցն, որ տեսանէին. զի համրքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բըժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւորէին զԱծն իսրայէլի։

Եւ իբրև եկին 'ի ժողովուրդն, մատեաւ այր մի, 'ի ծունր իջանէր և ասէր, տէր ողորմեա՛ որդւոյ իմում. զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազումանգամ անկանի 'ի հուր՝ և երբեմն 'ի ջուր։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել։

Պա-

Պատասխանի եւ յն և ասէ , ով ազգ անհաւատ և թիւր . մինչև ցերբ իցեմ ընդ ձեզ . մինչև յերբ անասցցեմ ձեզ . ածէ զնա առ իս . և ածին զնա առ յն։ Եւ սաստեաց 'ի նա յն . և ել 'ի նմանէ դեւն , և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ ։ Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն և ասեն ցյն , մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա ։ Եւ նա ասէ ցնս՝ վասն թերահաւատութեանդերոյ . ամէն ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ , ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեսցց աստի անդր և փոխեսցի . և ոչ ինչ անմատչելի լինիցի ձեզ ։ Բայց այս ազգ ոչ ելանէ , եթէ ոչ աղօթիւք և պահօք ։

Եւ յելանելն նց յերիքովէ , գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք ։ Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն . իբրև լուան թէ յն անցանէ՝ աղաղակեցին և ասեն , ողորմեսց մեզ յն որդի դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն . և նոքա եւս առաւել աղաղակէին և ասէին , տէր՝ ողորմեսց մեզ որդի դաւթի ։ Յ տեղի առ յն . կոչեաց զնոսա և ասէ՝ զինչ կամիք զի արարից ձեզ ։ Ասեն ցնա՝ տէր զի բացցին աչք մեր ։ Եւ գթացեալ յն մերձեցաւ յաչս նց , և վաղվաղակի տեսին և գնացին զհետ նր ։

Սրբոյ Աբեթարանէս Յն Տրն Ու Բնաստուրեան ։

Տերամբ մերով Յն Տրն ։

Եւ մնանէն 'ի կափառնաում , և խակ և խակ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա ։ Եւ զարմանային ընդ վարդապետութի

նոյ

նը, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութիւն, և ոչ
ոպ դպիրքն։ Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի՝
յորում այս պիղծ դոյր 'ի նմա. որ աղաղակեաց և ա-
սէ։ Թո՛յլ տուր, զի կայ մեր և քո՝ յիսուսնազովրեցի, ե-
կիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ո՞վ ես սրբդ այ։
Սաստեաց 'ի նա յիսուս և ասէ, կարկեա՛ց և ել 'ի դմանէ։
Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց 'ի ձայն
մեծ, և ել 'ի նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մինչ-
և հեծել ընդ միմեանս և ասել. զի՞նչ է այս նոր վար-
դապետութիւն. զի իշխանութիւն և այսոց պղծոց սաստէ
և հնազանդին սմա։ Եւ ել լուր նորա ընդ ամ կողմն
գալիլեացւոց։
Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն եկն 'ի տուն
սիմոնի և անդրեայ՝ յակոբու և յոհաննու հանդերձ։
Եւ զքանչ սիմոնի դնէր ջերմացեալ. և վաղվաղակի
ասեն ցնա վասն նր։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ
զձեռանէ. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնս։
Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն՝ բե-
րէին առ նա զամ հիւանդս և զդիւահարս։ Եւ էր
ամ քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց
բազում հիւանդս 'ի պէսպէս ախտից. և դեւս բազու-
մս՝ եհան. և ոչ տայր խօսիլ դիւացն, զի գիտէին
զնա թէ քրիստոս է։
Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գը-
նաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գը-
նաց զհետս նր սիմոն՝ և որք ընդ նմայն էին։ Եւ իբ-
րև գտին զնա, ասեն ցնա թէ ամենեքին խնդրեն
զքեզ։ Եւ ասէ ցնս. եկա՛յք երթիցուք և յայլ մե-
տաւորս դիւղաքաղաքսն՝ զի և անդ քարոզեցից. զի

յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա
ընդ ամ գալիլեացիս , և դեւս հանէր։ Զայս առ նա
բորոտ մի՝ աղաչէր՝ 'ի ծունր իջանէր և ասէր . եթէ
թէ կամիս կարող ես զիս սրբել։ Իսկ յս դթացեալ
ձգեաց զձեռն՝ մերձեցաւ 'ի նա և ասէ ցնա , կամիմ
սրբեաց։ Եւ իբրև ասացն ցնա , վաղվաղակի գնաց 'ի
նմանէ բորոտութիւն՝ և սրբեցաւ։ Եւ սաստեալ նը
մա՝ էհան զնա արտաքս վաղվաղակի , և ասէ։ Զ գոյշ
լեր մի՝ ուստեք ինչ ասիցես . այլ երթ ցոյց զքեզ քահա
նայիս . և մատո վասն սրբութեանդ՝ զոր հրա
մայեաց մովսէս 'ի վկայութիւն նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ
քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն , մինչ ոչ
եւս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել ,
այլ արտաքոյ յանապատ տեղիս էր . և գային առ նա
յամ կողմանց։

Եւ մտեալ դարձեալ 'ի կափառնաում յետ աւուրց։
Լուր եղև եթէ 'ի տանէ . և ժողովեցան բազումք՝
մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն , և խօսէր
նոցա զբանն։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ
մի բարձեալ 'ի չորից։ Եւ իբրև ոչ կարէին մերձե
նալ առ նա յամբոխէ անտի , քակեցին զյարկն ուր
էր յս . և բացեալ զառաստաղն՝ իջուցին զմահիճն
յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ զՀաւատս
նոցա ասէ ցանդամալոյծն , որդեակ՝ թողեալ լիցին քեզ
մեղք քո։ Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի , որ անդ
նստէին՝ և խորհէին 'ի սիրտս իւրեանց։ Զ ինչ է
այս՝ որ խօսի սա զՀայհոյութիւն . ո՞վ կարէ թողուլ զմ
մեղս՝ եթէ ոչ՝ մի ած։ Եւ գիտաց յս յոգի իւր՝ թէ
այնպէս խորհին 'ի սիրտս իւրեանց , և ասէ՝ զի՞ խոր

հիք զայդ 'ի սիրտս ձեր։ Օ՜ ինչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ ա՛ռ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Այլ զի դիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերս երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն՝ քեզ ասեմ՝ արի՛ ա՛ռ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Այս յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճն՝ եւ առաջի ամենեցուն։ Այ՝ինչև զարմանալ ամենեցուն և փառաւորառնել զԱստուած և ասել, թէ այսպիսի ինչ երբէք ո՛չ տեսաք։

Այս եմուտ միւսանգամ 'ի Ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Այս սպասէին նմա եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ։ Այս ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր, արի՛ անց 'ի մէջ։ Այս ասէ ցնոսա, զինչ արժան է 'ի շաբաթու՝ բարի՛ ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել. և նոքա լռեցին։ Այս հայեցեալ յի զնոքաւք լի՛ ցասմամբ՝ տրտմեալ վասն կուրութեց սրտից նոց, ասէ ցայրն՝ ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նր։ Այս ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա, թէ զիարդ կորուսցեն զնա։

Իսկ յն աշակերտաւքն իւրովք գնաց 'ի Ծովեզրն. և բազում ժողովուրդ 'ի գալիլեացւոց երթային զհետ նր, և 'ի հրէաստանէ, և յեղէմէ, և յայնկոյս յորդանանու, և որք 'ի տիւրոսէ և 'ի սիդոնէ, բազում ժողովուրդ իբրև լսէին որչափ ինչ առնէր՝ գային առ նա։ Այս ասէ ցաշակերտսն իւր՝ զի նաւակ մի պատ-

բաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա։ Զանազի զբազումս բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ, զի մերձեսցին առ նա՝ որք ունէին ախտս ինչ։ Եւ այսպէս պիղծք յորժամ տեսանէին ըզնա՝ անկանէին առաջի նը, աղաղակէին և ասէին. Թէ դու ես որդին այ. և նա յոյժ սաստէր նոցա՝ զի մի՛ յայտնի առնիցեն զնա։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նը 'ի նաւէ անտի՝ պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ։ Որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք և ս կարէր կապել զնա։ Զի բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա։ Զանազի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև տեսեալ զյն 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա։ Աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ, զի կայ իմ և քո յն որդի այ բարձրելոյ երդմնեցուցանեմ զքեզ յն՝ ծ, մի՛ տանջեր զիս։ Զանազի ասէր ցնա՝ ելանայդ պիղծ 'ի մարդոյ այսի։ Եւ հարցանէր ցնա թէ զինչ անուն է քո, և ասէ ցնա լեգէոն անուն է իմ. քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնս արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ։ Աղաչէին զնա ամ դևքն և ասեն, առաքեա՛ զմեզ 'ի խոզսն՝ զի մըտցուք 'ի նս։ Եւ հրամայեաց նց. և իբրև ելին այսպէս պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դա-

ըմ՝ անտի 'ի ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձ
նուին 'ի ծովուն։ Եւ խոզաբաձքն փախեան, և պատ-
մեցին 'ի քաղաքին և յագարակս. և ելին տեսանել
զինչ իցէ՝ որ գործեցաւն։ Եւ առ յս և տեսա-
նեն զդիւահարն զի նստէր զդեցեալ և զգաստացեալ որ
ունէր զլեգէոնն, և զահի հարան։ Եւ պատմեցին
նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զինչ եղև այսահարին, և
զինչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի
սահմանաց նոցա։ Եւ իբրև ելաւ նա 'ի նաւն՝ ա-
ղաչէր զնա դիւահարն զի ընդ նմա իցէ. և յս ոչ եաւ
նմա Թոյլ, այլ ասէ ցնա՝ երթ 'ի տուն քո առ ընտա-
նիս քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ՝ արար
քեզ, և ողորմեցաւ քեզ։ Եւ ելաւ և սկսաւ քարո-
զել 'ի Դեկապոլիսն, զոր ինչ արար նմա յս, և ամենեքին
զարմանային։

Եւ իբրև անց յս միւսանգամ յայն կողմն, ժողովե-
ցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզեր-
բն։ Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր, որում
անուն էր յայրոս. և իբրև եռեսն զնա՝ անկաւ առ ոտս
նր։ Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նր մերձ
է 'ի մահ. զի եկեալ դնիցէ նմա ձեռն. ապ զի ապրեսցի, և կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողո-
վուրդ բազում զհետ նր, և նեղէին զնա։ Եւ կին
մի էր 'ի տեռատեսութէ արեան զերկոտասան ամ և
յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց. և ծախեալ զինչս
իւր զամ՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայ-
րացեալ։ Իբրև լուաւ զյսմ՝ եկն 'ի մէջ ամբոխին յե-
տոյ՝ և բռնն եհար զհանդերձն նր։ Քանզի խոր-
հէր 'ի մտի, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նր,

փրը-

փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր ա-
րեան նորա, և գիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ
'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց յն-
յանձն իւր զզօրութիւն որ էլ 'ի նմանէ. դարձաւ յամ-
բոխն և ասէ, ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ա-
սեն ցնա աշակերտքն. տեսանես, զի ամբոխդ նեղէ զզ-
քեզ, և ասես թէ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ
շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն արար։ Եւ կինն
զարհուրեալ և դողացեալ վասն զաղտն արար, քանզի
գիտէր զինչ եղև նմա. եկն անկաւ առաջի նր, և ա-
սաց զամ իրն ստուգութիւն։ Եւ յն ասէ ցնա՝ դուստր
հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութի, և
եղիջիր ողջ 'ի տանջանաց քոց։ Մինչդեռ նա զայն
խօսէր՝ գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին և ա-
սեն, թէ դուստրն քո մեռաւ՝ զի՞ և զս աշխատ առնես
զվարդապետդ։ Լսէ յն իբրև լուաւ զբանն ասացեալ,
ասէ ցժողովրդապետն, մի՛ երկնչիր՝ բայց միայն հա-
ւատա։ Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ. բայց միայն
զպետրոս՝ և զյակոբոս՝ և զյովհաննէս զեղբայրն յա-
կոբայ։ Գայ 'ի տուն ժողովրդապետին՝ և տեսանէ
ամբոխս յայժ և լալականս և աղաղակ յայժ։ Եւ մտեալ
'ի ներքս ասէ ցնս՝ զի՞ խռովեալ էք և լայք. մանուկն
ոչ է մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նր
հանեալ արտաքս զամենեսեան՝ առնու ընդ իւր զհայր
մանկանն և զմայրն, և զնս որ ընդ նմայն էին, և մտանէ
ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն
ասէ ցնա՝ տալիթա կում. որ թարգմանի՝ աղջիկ դու,
քեզ ասեմ արի՛։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և
գնայր. քանզի էր ամաց՝ իբրև երկոտասանից. և զար-
մա-

մոցան մեծաւ զարմանալեաւք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ՝ զի մի՝ ոք դիտասցէ զայն, և ասաց տալ նմա ուտել։

Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ։ Եւ իբրև ելին 'ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծանեան զնա առաքն տեղւոյն այնորիկ։ Եւ ընթացեալ ամենայն զանդր ընդ ամ դաւառն, սկսան մահճաւքն բերել զհիւանդս՝ ուր լսէին թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր 'ի գեւղս կամ 'ի քաղաքս՝ կամ յագարակս՝ 'ի հրապարակս դնէին զախտաժէտս՝ և աղաչէին զնա զի դոնէ 'ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս տիւրոսի և սիդոնի. և մտեալ 'ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել։ Զի՞ւաւ կին մի զնմանէ՝ որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առՀջն նոր։ Եւ կինն էր հեթանոս փիւնիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդևն հանցէ 'ի դստերէ նորա։ Եւ յն ասէ ցնա Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչէ բարւոք առնուլ զՀաց մանկանց և արկանել շանց։ Պատասխանի ետ և ասէ. ա՛յո և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Եւ ասէ ցնա՝ վասն այդր բանի երթ, ել դևն 'ի դստերէ քումմէ։ Գնացեալ 'ի տուն իւր՝ և եդիտ ելեալ զդևն, և զդուստրն զի անկեալ դնէր 'ի մահճին։

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն տիւրոսի և սիդոնի, և եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի դեկապօլիս։ Եւ բերին առաջն նոր խուլ մի և համր, և աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վրայ նորա։

Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդականջս նոցա և եթուք անդր. և կապաւ զլեզուն նորա։ Հայեցաւ յերկինս՝ յոգւոց երկնից՝ և ասէ Եփփաթա՝ որ է բացիր։ Եւ նոյն ժամայն բացան լսելիք նոցա և լուծան կապանք լեզուի նոցա և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին։ Եւ ևս քան զևս զարմանային և ասէին, զամ ինչ բարւոք գործեաց սա. զի խլեաց լսել տայ և համրոց խօսել։

Եւ ելանէ ի բեթսայիդա, և ածեն առաջի նոցա կոյր մի, և աղաչէին զնա զի մերձեսցի ի նա։ Եւ առեալ զձեռանէ կուրին երկնից արտաքոյ շինին, եթուք յաչս նոցա և ձեռն եդ ի վերայ նոցա, և հարցանէր զնա թէ տեսանիցէ՞ ինչ։ Բացաւ և ասէր, տեսանեմ զմարդիկս զի շրջին իբրև զծառս։ Եւարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նոցա, երեաց և տեսանէր. ողջացաւ և տեսանէր համարձակ զամ։ Լրձակեաց զնա ի տուն իւր և ասէ, ի շէնդ մի՛ մտանիցես. այլ երթ ի տուն քո. և յորժամ ի շէնն մտանիցես, մի՛ ումեք ասիցես ի շինին։ Եւ ելեալ առ աշակերտսն տեսին ամբոխս շուրջ զնոքօք. և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի ամ ժողովուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան. և ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային նմա։ Եւ երկարայ ցնա, թէ զինչ վիճէիք ընդ նոսա։ Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն և ասէ, վարդապետ՝ ածի՛ զորդի իմ առ քեզ զոր ունի այս համր։ Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. և փրփրէ և կրճատէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն

ցեն, և ոչ կարացին հանել զնա։ Պատասխանի եւ
նոյ և ասէ, ով ազգ անհաւատ՝ մինչև յերբ լցեմ առ
ձեզ. մինչև ցերբ անասցեմ ձեզ. ածէ՛ք զնա առ իս։
Եւ ածին զնա առ նա. իբրև եռեաս զնա այսն՝ վաղ-
վաղակի շարժեաց զնա. և անկեալ յերկիր թաւալէր
և փրփրեայր։ Եհարց ցհայր նոր և ասէ. քանի՞ ժամա-
նակք են յորմէ հետէ այդ եղև դմա. և նա ասէ՝ 'ի
մանկութէ։ Բազում անգամ 'ի հուր արկանէ զդա,
և 'ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝ եթէ կարող ինչ ես,
օգնեա՛ մեզ՝ որ գթացեալ 'ի վերայ մեր։ Եւ յա՛ ասէ
ցնա՝ ասացեր թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր
է այնմ, որ հաւատայն։ Եւ վաղվաղակի աղաղակեաց
հայր մանկանն և ասէ. հաւատամ ե՛ս՝ օգնեա՛ անհա-
ւատութեան իմում։ Իբրև եռեաս յա՛ եթէ կուտի ժո-
ղովուրդն 'ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ,
համրդ և խուլ այս, ես տամ հրաման, ել 'ի դմանէ և
այլ մի՛ ևս մտանիցես 'ի դա։ Եւ աղաղակեաց և յոյժ
լլկեաց զնա և ել. և եղև պատանեակն իբրև զմեռեալ.
մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ։ Եւ յա՛ կալաւ
զձեռանէ նոր՝ յարոյց զնա և կանգնեցաւ։ Եւ իբրև
եմուտ նա 'ի տուն, աշակերտքն առանձինն հարցին
ցնա՝ մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա։ Եւ ասէ
ցնոսա. այդ ազգ ոչ ի՛ւիք ելանէ, եթէ ոչ պահօք
և աղօթիւք։

Եւ գան յերիքով. և ընդ ելանել նոր յերիքովէ աշա-
կերտաքն՝ և բազում ժողովրդով, որդի տիմէի բար-
տիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհին։
Իբրև լսեաւ թէ յա՛ նազովրեցի է՝ սկսաւ աղաղակել
և ասել, որդի դաւթի յա՛ ողորմեաց ինձ։ Եւ սաս-
տէ-

տէին նմա բաղու�՝ զի լուեսցէ։ Եւ նա առաւել եւս աղաղակէր ՝ որդի դաւթի ողորմեա՛ ինձ։ Յետոյ տեղի առ յս՝ և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն և ասեն ցնա, քաջալերեա՛ արի՝ կոչէ զքեզ։ Եւ նա՝ ընկեցեալ զձորձն իւր՝ յարեաւ և եկն առ յս։ Պատասխանի ետ նմա յս և ասէ՝ զինչ կամիս թէ արարիցէ քեզ. ասէ՝ ցնա կոյրն՝ ռաբբունի՝ զի բացայց։ Եւ յս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նր՝ ի ճանապարհին։

Սրբոյ Աբեղայեանց՝ Ի՞՝ Որ Ի՞պ Պ՞ոիսոս։
Տէրն մեր Յս՝ Քս։

Եւ էջ՝ ի կափարնայում՝ ի քաղաքն գալիլեացւոց՝ և ուսուցանէր զնոսա՝ ի շաբաթն։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա՝ զի իշխանութիւն էր բան նր։ Եւ էր՝ ի ժողովրդեանն այր մի՝ զոր ունէր այս դիւ՝ ի պղծոյ. և աղաղակեաց՝ ի ձայն մեծ և ասէ՝ թուլացո՛, զի՝ կայ մեր և քո յս նազովրեցի. եկիր կորուսանել զմեզ՝ գիտեմք զքեզ՝ ով ես սուրբդ ՝ի՝։ Սաստեաց՝ ի նա յս և ասէ՝ պապանձեա՛ց և ել՝ ի դմանէ. զգետնեաց զնա դևն՝ ի միջի անդ, և ել՝ ի նմանէ. և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք՝ ի վր ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին, զինչ է բանս այս՝ զի իշխանութիւն և զօրութիւն սաստէ այսոց պղծոց և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամ տեղիս շուրջ զդաւառաւն։ Եւ յարուցեալ՝ ի ժողովրդենէ անտի՝ եմուտ՝ ի տունն սիմոնի. և զքանչ սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ.

Ֆաւ. և աղաչէցին զնա վա՛ղ ՝ի նոր։ Եկաց առ նմա, ասաց
տեաց Ջերմանն, և ելթող զնա. և վաղվաղակի յարեաւ
և պաշտէր զնա։ Եւ ընդ արևուն մտանել՝ որոց էին
հիւանդք ՝ի պէս պէս ցաւս՝ բերէին զնա առ նա։ Եւ
նա իւրաքանչիւր ումեք ՝ի նոցանէ դնէր ձեռս և բը
ժշկէր զնա։ Եւլանէին դեւքն ՝ի բազմաց՝ աղաղակէին
և ասէին, եթէ դու ես որդի աստ. և նա սաստէր՝ և ոչ
տայր նոցա թոյլ խօսիլ, զի գիտէին զնա թէ քանի է։
Եւ եղև ՝ի հասանելն նոր ՝ի մի քաղաքացն, ահա այր
մի լի բորոտութիւբ իբրև եռեաս զայր, անկեալ ՝ի վրայ երե
սաց աղաչեաց զնա, և ասէ. տէր եթէ կամիս, կարող
ես զիս սրբել։ Զդեաց զձեռն իւր՝ հասոյց ՝ի նա և
ասէ, կամիմ սրբեաց. և վաղվաղակի գնաց ՝ի նմանէ
բորոտութիւն։ Եւ նա պատուիրեաց նմա մի՝ ումեք
ասել. այլ թէ՝ երթ ցոյց զանձն քո քահանային, և
մատո պատարագ վասն սրբութեան քոյ. ոչ և հրամայ
եաց մեվէս ՝ի վկայութիւն նոցա։ Եւ յորդէր առաւել
բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք
լսել և բժշկել ՝ի հիւանդութենէ իւրեանց։ Եւ նա
խոյս տայր յանապատս տեղիս, և կայր յաղօթս։
Եւ եղև ՝ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և
փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որ
ժողովեալ էին յամենայն քաղաքաց դալիլեացւոց և հրէ
աստանի և երուսաղէմի. և զօրութի տն էր ՝ի բժշկել
զնս։ Եւ ահա արք բերէին մահճաւք զայր մի՝ որ էր
անդամալոյծ. և խնդրէին զնա մուծանել ՝ի ներքս
և դնել առաջի նոր։ Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ
որ մուծանիցեն զնա ՝ի ներքս վասն ամբոխին, ելին ՝ի
տանիս, և ՝ի ցուռոցն կախեցին զնա, և իջուցին մահ

ձեռքն Հանդերձ 'ի մէջ առաջի յի։ Եւ տեսեալ զՀաւատն նոցա՝ ասէ ցնա, մարդ դու՝ թողեալ լեցին քեզ մեղք քո։ Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն և ասեն. ո՞ է սա որ խօսի զՀայհոյութիս. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստ։ Իբրև գիտաց յիսուս ըզխորհուրդս նոցա, պատասխանի եառ և ասէ ցնոսա, զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրագոյն է ասել թողեալ լեցին քեզ մեղք քո, եթէ ասել արի՛ և գնա։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն, քե՛զ ասեմ՝ արի՛ ա՛ռ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։ Եւ առ ժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրև յորոյ վրայ անկեալ դնէր, գնաց 'ի տուն իւր՝ և փառաւոր առնէր զաստուած։ Զարմանք կալաւ զամենայն, և փառաւոր առնէին զաստուած. լի եղեն ահիւ և ասեն,

եթէ տեսաք այսօր նոր նշան։

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա, 'ի ժողովուրդն և ուսուցանել. և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիքն՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ՝ զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն որոյ ձեռնն գօսացեալ էր, արի՛ անց 'ի մէջ. և նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա յիսուս՝ Հարցիցս ինչ զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթուն, բարի՞ ինչ առնել, եթէ չար գործել. ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։ Եւ Հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրադին, ասէ ցնա՝ ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց. և Հաստատեցաւ ձեռն նո՝ իբրև զմիւսն։ Եւ նոքա լցան յիմարութի՛ւն, և խօսէին

ին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն յիսուսի։
Եւ ի՛ջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափարակ.
և ժողով աշակերտացն նոր, և բաղմութիւն յոյժ ժողո-
վրդեանն, յամենայն հրէաստանէ և յեռէմէ և յայնմ
կողմանէ և 'ի Ծովեղերէն տիւրոսի և սիդոնի։ Որ
եկին լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հիւանդութենէ իւ-
րեանց. և նեղելքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամ-
ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա, զի զօրութիւն
բաղում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։
Եւ իբրև կատարեաց զամ բանս իւր 'ի լսելիս ժո-
ղովրդեանն, եմուտ 'ի կափառնաում։ Հարիւրապե-
տի որումն ծառայ ջարաչար հիւանդացեալ՝ մերձ
էր 'ի վախճանել՝ որ էր նմա պատուական. իբրև
լուաւ զյնէ, առաքեաց զծերսն 'ի հրէից, աղաչէր զը-
նա զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա։ Եւ
նոքա եկեալ առ յիսուս աղաչէին զնա ստէպ՝ և ասէին,
թէ արժանի՛ է՝ որում զնորհս զայս առնես. զի սիրէ
զազգս մեր. և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։
Եւ յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչ ինչ կարի հեռի էր
'ի տանէն, յղեաց առ նոսա հարիւրապետն բարեկամս,
և ասէ ցնա, տէր՝ մի՛ ինչ աշխատ լինիր. զի չեմ բա-
ւական եթէ ընդ յարկաւ իմում մտանիցես։ Վասն
որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ.
այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ։ Քան-
զի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութիւն. ունիմ
ընտանի զինուորս. և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այ-
լումն թէ՝ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա՛ զայս,
և առնէ։ Եւ իբրև լուաւ զայս յիսուս զարմացաւ. դար-
ձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա և ասէ՝
ամէն

ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յիշելի այսչափ հաւատս գը-
տի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն,
և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
Եւ եղև ի վաղիւն երթայր ի քաղաք մի, որում
անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք
նր և ժողովուրդ բազում։ Իբրև մերձ եղև ի դու-
ռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միա-
մոր մոր իւրոյ. և նա էր այրի, և ժողովուրդ բազում
քաղաքին էր ընդ նմա։ Իբրև եսես զնա տէր՝ գթա-
յաւ ի նա և ասէ, մի՛ լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ
ի դագաղն. և որք բարձեալն տանէին՝ զտեղի առին.
և ասէ՝ պատանի դու՝ քեզ ասեմ արի։ Անդնեցաւ
և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել, և եհաս զնա ցմայր
իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին և փառաւոր առնէին
զՏէր և ասէին՝ թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ի միջի
մերում. և թէ այց արար Տէր ժողովրդեան իւրում
ի բարութիւն։ Եւ ել զրոյցս այս ընդ Տամ հրեաստան
վասն նորա՝ և ընդ Տամ կողմանս աշխարհին։
Եւ պատմեցին յովհաննու աշակերտքն իւր վասն
նոցին այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմա-
նս յաշակերտացն իւրոց յովհաննէս. առաքեաց առ
Տէր և ասէ, դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն
կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա ասեն՝ յովհաննէս
մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ՝ դո՞ւ ես որ
գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։ Եւ ի նոյն
ժամու բժշկեաց զբազումս ի հիւանդութենէ և ի
հարուածոց և յայսոց չարաց. և կուրաց բազմաց շը-
նորհեաց տեսանել։ Պատասխանի եառ նոցա և ասէ՝ երթ-
այք պատմեցէք յովհաննու զոր տեսիքդ և լուայք,

զի կոյրք տեսանեն, և կուղք գնան, բորոտք սրբին,
խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարա-
նին։ Եւ երանի՛ որ ո՛չ գայթակղեսցի յիս։
Եւ նաւեցին ի՛ջին յաշխարհն Գերգեսացւոց որ է
յայնկոյս Հանդէպ գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նո՛ր 'ի
ցամաք՝ պատահեաց այր մի 'ի քաղաքէն յորում էին
դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝
և ո՛չ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ
զյի՛սուս, աղաղակեաց և անկաւ առաջի նո՛ր, և ասէ մեծա-
ձայն. զի՞ կայ իմ և քո յի՛սուս որդի՝ այ բարձրելոյ, աղա-
չեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրաման տայր
այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բա-
զում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապեր 'ի
շղթայս և պահեր յերկաթս. և խզեր զկապանսն՝ և
վարեր 'ի դիւէն յանապատս։ Հարց զնա յի՛սուս ա-
սէ, զինչ անուն է քեզ. և նա ասէ՝ լեգէոն. զի դեւք
բազումք մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի
մի՛ հրաման տայցէ նոցա երթալ յանդունդս։ Եւ էր
անդ՝ երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերի-
նըն. և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել
'ի նո՛ս. և հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն յառնէին՝
մտին 'ի խոզեանսն. և դիմեաց երամակն 'ի գահէ ան-
տի 'ի ծովակն և հեղձաւ։ Իբրև տեսին խոզարածքն
զերան որ եղեն՝ փախեան. և պատմեցին 'ի քաղաքին
և յագարակսն։ Եւ իբրև ելին տեսանել զգործսն,
և եկին առ յի՛սուս, և գտին զայրն ուստի դեւքն ելեալ
էին՝ զգեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտսն յի՛սուսի,
և երկեան։ Պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ
զինչդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա՝ զամ

բազմութիւն շուրջ զկողմամբքն գերդեսացւոց, դնալ
'ի սահմանաց նոցա. քանզի ահիւ մեծաւ տագնապէին,
և նա մնեալ 'ի նաւ դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա
այրն ուստի դևքն ելեալ էին շրջել ընդ նմա։ Բ.Ը-
ձակեաց զնա և ասէ. դարձ 'ի տուն քո և պատմեա զոր
միանգամ արար քեզ Աստուած։ Գնաց 'ի քաղաքն՝ և քա-
րոզէր զոր ինչ արար նմա յիսուս։
Եւ իբրև դարձաւ անդրէն յիսուս, ընկալաւ զնա ժո-
ղովուրդն, քանզի ամենեքեան ակն ունէին նմա։
Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր յայրոս. և նա
էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն յիսուսի, աղաչէր
զնա մտանել 'ի տուն նորա։ Զի դուստր միամօր էր
նոր, ամաց իբրև երկոտասանից. և էր մերձ 'ի մահ. և
ընդ երթալն նոր՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին
մի էր 'ի տեառատեսութեանէ արեան՝ ամաց երկոտասա-
նից. որ 'ի բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր. որում
ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ։ Մատուցեալ յետ
ոտ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նոր, և նոյնժա-
մայն եկաց բղխումն արեան նոր։ Եւ ասէ յիսուս ովք
որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային,
ասէ պետրոս՝ և որք ընդ նմա էին. վարդապետ՝ ժո-
ղովուրդք պնդեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ յիսուս ոմն
մերձեցաւ յիս. քանզի գիտացի եթէ զօրութիւն ել
յինէն։ Իբրև եսես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի
նմանէ, եկն դողալով և անկաւ առաջի նոր. թէ վասն
որոց իրաց մերձեցաւ 'ի նա, պատմեաց առաջի ամ ժո-
ղովրդեանն. և եթէ որպէս բժշկեցաւ առ ժամայն։
Եւ ասէ՝ քաջալերեսց դուստր. հաւատք քո կեցու-
ցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութիւն։

Եւ

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա, մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատառնէր զդա։ Լսակ յա՛ իբրև լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա՛ և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ո՛չ զոք եթող մտանել, բայց միայն զպետրոս և զյակոբոս և զյովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նր։ Այլն ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ՝ մի՛ լայք, զի չէ՛ մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա. զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նր հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նր՝ բարբառեցաւ և ասէ, արի՛ կա՛ մանուկ դու։ Եւ դարձաւ ոգի նր և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել։ Եւ զարմացան ծնօղքն նորա. և նա պատո՛ւիրէր մի՛ ուրեք ասել որ ինչ եղեւն։

Եւ եղև 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա՛ այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ, վա՛ՐդապետՍ աղաչեմ զքեզ Հայեա՛ց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա՛ այս հարկանի 'ի նմա. և յանկարծ դոչէ. և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ. և հազիւ մեկնի 'ի նմանէ խորտակեալ զնա։ Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ո՛չ կարացին։ Պատասխանի ետ յա՛ և ասէ, ո՛վ ազգ անհաւատ և թիւր. մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անասցեմ ձեզ, մասո՛ այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն և շարժեաց։ Սաստեաց յա՛ այսոյն պղծոյ և բժշկեաց զմանուկն և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան 'ի վրա

մեծամեծացն այ։ և 'ի զարմանալ ամենեցուն 'ի վերայ
ամի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր։ Դիք դուք 'ի
լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի մարդոյ մատ-
նելոց է 'ի ձեռս մարդկան։

Եւ հանեալ դև մի համր։ և եղև յելանել դիւին՝
խօսեցաւ համրն։ և զարմացան ամ ժողովուրդքն։
Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն՝ բէեղզեբուղաւ իշխա-
նաւն դիւաց հանէ դա զդևս։ Եւ այլք փորձէին և
նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ։ Իսկ նոքա գիտացեալ
զխորհուրդս նոցա, ասէ ցնս։ ամ թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն՝ աւերի։ և տուն բաժանեալ յանձն՝
կործանի։ Եւ եթէ և սատանայ բաժանեցաւ յանձ-
նէ, զիարդ կայցէ թագաւորութիւն նր։ զի ասէք զինէն
թէ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա
զդևս։ Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդևս,
որդիքն ձեր ի՞նչ հանիցեն։ վասն այդորիկ նոքին եղիցին
ձեզ դատաւորք։ Իսկ եթէ մատամբ այ հանեմ
զդևս, ապա հասեալ է 'ի վրայ ձեր արքայութիւն այ։ Յոր-
ժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, 'ի խաղաղու-
թեան են ինչք նր։ բայց եթէ հզօրագոյնքան զնա 'ի վրայ
եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինուին հանէ յոր
յուսացեալն էր, և զաւար նր բաշխեսցէ։ Որ ոչ է
ընդ իս՝ հակառակ իմէ։ և որ ոչ ժողովէ ընդ իս,
ցրուէ։ Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ
անջրդին տեղիս։ խնդրէ հանգիստս։ և իբրև ոչ գտա-
նէ՝ ասէ, դարձայց անդրէն 'ի տուն իմ ուստի ելի։
Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ Յայնժամ
երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝
և մտանէ բնակէ անդ։ և լինի յետինն մարդոյն այնո-

ըիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս՝ ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի՛ է որովայնին որ կրեացն զքեզ՝ և ըստեանցն որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ասէ, նա՛ երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն։

Եւ ուստուցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթս։ Եւ ահա կին մի զոր ունէր այս հիւանդութեան ութուտասն. և էր կարկամեալ և ոչ կարէր ամենևին 'ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա յն կոչեաց առինքն և ասէ ցնա, կին դու՝ արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի վերս նոր ձեռն. և առ ժամայն ուղղեցաւ և փառաւորէր զԱստուած։ Պատասխանի եւ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի շաբաթու բժշկեաց յն. և ասէ ցժողովուրդն վեց օր է՝ յորս արժան է գործել. յայսոսիկ եկայք բժշկեցարուք, և մի՛ յաւուր շաբաթու։ Պատասխանի եւ նմա տէր և ասէ, կեղծաւորք՝ խրատաքաջիւրդք 'ի ձէնջ 'ի շաբաթու ոչ արձակէ զեզն խուր կամ զէշ 'ի մսրոյ և տանի տայ ջուր։ Իսկ այս դուստր աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւադիկ ութուտասն ամ, ոչ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Եւ զայս իբրև ասէր, յամօթ լինէին ամենքին որ հակառակն կային նմա։ Եւ ամ ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամ փառաւորութեանն՝ որ գործէին 'ի նմանէ։

Եւ եղև 'ի մտանելն նոր 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց՝ և նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր ումն էր անդ ջրդողեալ առաջի նոր։ Պատասխանի եւ յն և ասէ ցօրինաւորս

և ցփարխեցին՝ եթէ արժան էր ի շաբաթու բժշկել. և նոքա լուռ եղեն։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց։ Եւ ասէ ցնա՝ որոյ ուրուք ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ

ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

Եւ եղև մինչ երթայր նա յեղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ սամարիայ և գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ, որք կացին ի հեռաստանէ. բարձին զձայնս և ասեն՝ յիսուս վարդապետ՝ ողորմեաց մեզ։ Եւ իբրև ետես զնոսա՝ ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. և եղև իբրև գնացին առ ժամայն սրբեցան։ Եւ ոմն ի նոցանէ իբրև ետես եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն մեծ փառաւոր առնէր զաստուած։ Եւ անկաւ առ ոտս նորա ի վերայ երեսաց իւրոց՝ և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի։ Պատասխանի ետ յա՛ և ասէ, ոչ տասն սրբեցան. իսկ արդ ինուանքն ո՞ւր են։ Զի ոչ գտան դառնալ տալ փառս աստ, բայց միայն այլազգիս այս։ Եւ ասէ ցնա. արի՛ գնա՛ զի հաւատք քո կեցուցին զքեզ։

Եւ եղև ի մօտել նոր յերիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։ Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ զինչ լիցէ այն։ Եւ պատմեցին նմա թէ յա՛ նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց և ասէ՝ յա՛ որդի դաւթի՝ ողորմեաց ինձ։ Եւ որ առաջի երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա և առաւել աղաղակէր որդի դաւթի՝ ողոր-

մեաց

մեռց ինձ։ Օ տեղի էառ յա՛ և Հրամայեաց աճել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա՝ Հարց զնա և ասէ, զինչ կամիս դու զի արարիցք քեզ. և նա ասէ՝ ո՛ր զի բացցին աչք իմ, և տեսից։ Այլ յա՛ ասէ ցնա՝ Հայեա՛ց, Հաւատք քո կեցուցին զքեզ։ Այլ առ ժամայն ետես. երթայր զՀետ նորա և փառաւորէր զաստուած. և ամ ժողովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն ա՛յ։

Սէրն մեր Յ՚ՔՐ Ու Բ՚ՈՒ ՅՈՀԱՆՆՈՒ։

Այլ յետ երկուց աւուրց՝ ել անտի և գնաց 'ի գալիլեայ։ Օ՚ի ինքն իսկ յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ յորժամ եկն նա 'ի գալիլեայ. ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ էին զամ նշանան, զոր արար յԵրուսաղէմ 'ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին 'ի տօնն։ Եկն դարձեալ 'ի կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի։ Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նը հիւանդ կայր 'ի կափառնաում։ Եւ իբրև լուաւ եթէ յիսուս եկեալ է 'ի հրէաստանէ 'ի գալիլեա, եկն առ նա. և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա՝ քանզի մերձ էր 'ի մեռանել։ Ասէ ցնա, եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանիցք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն, ո՛ր էջ մինչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա յա՛, երթ որդին քո կենդանի է. և հաւատաց այնմ բանին զոր ասաց նմա յա՛ և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր՝ ընդառաջ

եղեն

երկեն նմա ծառայքն նորա. աւետիս եառուն և ասեն՝ թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա՝ երէկ յեօթնեերորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նոր՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա յիսուս թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամ տուն իւր։ Այս դարձեալ երկրորդ նշանս արար յիսուս՝ եկեալ 'ի հրէաստանէ 'ի գալիլեա։

Յետ այսորիկ տօն էր հրէից, և եկ յիսուս։ Լու էր յերուսաղեմ 'ի պրօպատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդայ՝ հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց. կուրաց՝ կաղաց՝ գօսացելոց՝ որ ակն ունէին ջրոցն յուզելոյ։ Լու հրեշտակ ամն ի ջնէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրս. և որ նախ 'ի շարժումն ջուրցն ինքնէր յաւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութիւն։ Լու անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութիւնս իւրում։ Զնա իբրև տեսս յիսուս զի անկեալ դնէր, և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա՝ կամիս ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն. տէր ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզեցին, արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յաւաջագոյն ինքնէ։ Ասէ ցնա յիսուս, արի՝ առ զմահիճս քո և դնա։ Լու ողջացաւ այրն. և յարեաւ առ զմահիճս իւր և գնաց։ Եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն հրէայքն ցբժշկեալն՝ շաբաթ է և ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա և ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ զմահիճս քո և դնա։

գնա։ Հարցին ցնա և ասեն, ոչ է այրն՝ որ ասաց
ցքեզ, առ զմահիճս քո և շրջեաց։ Եւ բժշկեալն ոչ
գիտէր թէ ո՞վ լցէ. քանզի յո՛ խոյս եւ վասն ամբո-
խին 'ի տեղւոջէ անտի։ Յետ այսորիկ գտանէ զնա յո՛
'ի տաճարին, և ասէ ցնա. ահաւադիկ ողջացար, մի՛ և-
ս մեղանչեր, զի մի՛ չար և-ս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն
և պատմեաց հրէիցն, եթէ յո՛ էր որ բժշկեացն զնա։
Եւ վասն այնորիկ հալածէին զյո՛ հրէայքն, զի զայն
առնէր 'ի շաբաթու։ Եւ յո՛ պատասխանի ետ նոցա՝
հայր իմ մինչև ցայժմ գործէ՝ և ես գործեմ։ Վասն
այնորիկ առաւել խնդրէին հրէայքն սպանանել զնա,
զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլև հայր իւր կո-
չէր զնա՝ և հաւասար առնէր զանձն՝ աստ։
Եւ մինչդեռ անցանէր ետես այր մի կոյր 'ի ծնէ. և
հարցին ցնա աշակերտքն նո՛ր և ասեն. ռաբբի՝ ո՞յր
վնաս է. սորա՞, թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի։
Պատասխանի ետ յո՛. ոչ դորա վնաս է, և ոչ հօր և մօր
իւրոյ, այլ զի յայտնի լեցին գործքն աստ 'ի դմա։ Եւ
ինձ պարտ է գործել զգործս այնորիկ որ առա-
քեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ գիշերն, յորժամ
ոչ զք կարէ գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս
եմ աշխարհի։ Այս իբրև ասաց, եթուք 'ի գետին.
և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի վրա՛ աչաց
կուրին։ Եւ ասէ ցնա՝ երթ լուսա յաւազանին սե-
լոամայ՝ որ թարգմանի առաքեալ. գոգաւ լուսացաւ,
եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր
զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր, ասէին՝ ոչ սա
էր որ նստէրն և մուրանայր. էնքան ասէին նա՛ է.
այլքն ասէին՝ ոչ՝ այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ
ես

ես եմ։ Լսեն ցնա՝ իսկ զնիրդ բացան աչք քո։ Ցա
ետ պատասխանի՝ այր մի՝ որում յանն ասեն, կաւ արար
և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս՝ երթ ՝ի սելոամ և
լուա։ Հոքայ լուացայ՝ և տեսանեմ։ Լսեն ցնա՝ ուր է
նա։ ասէ ցնա՝ ոչ գիտեմ։ Լծին առ փարիսեցիսն զնա՝
որ երբեմն կոյրն էր։ Լաւ էր շաբաթ յորժամ զկաւն
արար յա և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցա-
նէին զնա փարիսեցիքն՝ թէ զնիրդ տեսանես։ և նա
ասէ ցնոսա՝ կաւ եդ ՝ի վերայ աչաց իմոց, և լուացայ
և տեսանեմ։ Լսեն ոմանք ՝ի փարիսեցւոցն։ ոչ է
այրն այն յայ՝ զի զշաբաթս ոչ պահէ։ Կէսքն ասէին,
իսկ զնիրդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս
առնել։ և էին հերձուածք ՝ի մէջ նոցա։ Լսեն դարձեալ
ցկոյրն՝ դու զի՞ ասես վասն նր՝ զի եբաց զաչս քո։ և նա
ասէ՝ թէ մարգարէ է։ Լաւ ոչ հաւատային հրէայքն
զնմանէ՝ եթէ կոյր էր և բացաւ, մինչև կոչեցին
զծնօղս բացելոյն։ Հարցին ցնա և ասեն։ սո՞ է որդին
ձեր, զորմէ դուքն ասէիք թէ կոյր ծնաւ, արդ՝
զնիրդ տեսանէ։ Պատասխանի ետուն նոցա ծնօղքն
նր և ասեն։ գիտեմք՝ զի սա է որդին մեր և զի կոյր
ծնաւ։ բայց զնիրդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք։
կամ թէ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք։ ցդա՛
իսկ հարցէք։ ինքնին ՝ի չափ հասեալ է՝ ինքն իսկ
խօսեսցի վասն իւր։ Զայս ասացին ծնօղքն նորա,
զի երկնչէին ՝ի հրէից։ քանզի ուխտ եդեալ էր հր
ըէից, եթէ զոք խոստովանեսցի զնա քն՝ ՝ի բաց կացցէ
՝ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ասացին ծնօղքն
նր, թէ ինքնին ՝ի չափ հասեալ է՝ ցնա իսկ հարցէք։
Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն

էր,

էր , և ասեն ցնա , տուր փառս այլ , մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է ։ Եւ նա ասէ , թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ ։ բայց զայս գիտեմ՝ զի կոյր էի՝ և արդ տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա ։ զինչ արար քեզ՝ զիարդ եբաց զաչս քո ։ Պատասխանի ետ նոցա , այժմ ասացի ձեզ և ոչ լուայք՝ զի՛ կամիք միւսանգամ լսել ։ մի թէ և դուք կամիք աշակերտել նմա ։ Նդեա հայհոյէին զնա և ասէին ։ դու լիջիր նոր աշակերտ ։ մեք մովսէսի աշակերտք եմք ։ Այ՝էք գիտեմք զի ընդ մովսէսի խօսեցաւ Աստուած ։ զսա ոչ գիտեմք ուստի՛ իցէ ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնա՝ այդ խակ են պանէլիք ։ զի դուք ոչ գիտէք ուստի՛ իցէ՝ և զիմ զաչս եբաց ։ Գիտեմք՝ զի Աստուծոյ ոչ լսէ ։ բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամս նոր առնիցէ , նմա լսէ ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնեալ կոյր ծնելոյ ։ Եթէ ոչ յայ էր այրն այն , ոչ կարէր առնել ինչ ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա՝ ի մեզ խակ ծնեալ ես ամենեին ։ և դու վարդապետ լինիս մեր ։ և հանին զնա արտաքս։ Լուաւ յս եթէ հանին զնա արտաքս ։ և իբրև եգիտ զնա , ասէ ցնա՝ դու հաւատաս յորդի այ։ Նդա պատասխանի ետ և ասէ , տէր՝ ովքէ զի հաւատացից ի նա ։ Ասէ ցնա յս ։ և տեսեր զնա , և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է ։ Եւ նա ասէ ,

հաւատամ տէր՝ և երկիրպագ

նմա ։

ЧИР
№ 11,384